



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՎԱՐՍՈՒՆԱԿԱՆ ՔՒԱԿԱՆՆԵՐ

Դարագլուխ. — Ազգային Սահմանադրութեան բացումն. — Մկրտիչ Աղաբօն եւ Սերվիլեն Էժէնթի. — Հայ Առաջադէմ մատուցանութեան *credo*-ն. — Ռուսահայեր եւ քիւրահայեր. — Լօրիս-Մէլիֆօլ Կ. Պօլսում. — Կովկասեան թղթակցութիւններ. — Պօլսահայ մամուլը եւ Հայաստանը. — Այսեղ հանդէսներ ու իրախնանք, այնեղ՝ արցունք ու նահասակութիւն. — Հայ վեժի արձագանքները պօլսական մամուլի մէջ. — Քսենեգուցիչ ռիւրներ եւ կառավարական անհոգութիւն. — Ջէյթունի ապստամբութիւնը (1862 թ.). — Պատճառներ. — Ջէյթունցու նկարագիրը ըստ Լանգուաի. — Դուռը կուզէր քարոզանդ անել հայ արժիւնների բոյնը. — Ազիզ փաշայի ամօթալի նահանջը. — Ջէյթունի անցները պօլսահայ մամուլի մէջ. — Ապստամբութեան անդրադարձումները ազգային կացութեան վրայ — Հայ ժողովրդական ցոյց՝ Կ. Պօլսում. — Սահմանադրութիւն. — Նրա դրական եւ սուերային կողմերը. — Զարկ կրթական առաջադիմութեան. — Եւրոպայի Տասեան եւ Հաֆսահաուզէն. — Սահմանադրութիւնը եւ հայկական գաւառը. — Ողորմելի պալլիասիվ. — Իմացական եւ ռազմական մեակոյթ. — Եղերական հակասութիւնը երկուսի միջեւ. — Օսմանեան մակեալէլիզմ. — Սահմանադրութիւնը, իբրեւ դիվերսիօն. — Աղէտաւոր պատճառներ. — Մի անազան ազդարարութիւն.

1860 — 70 տասնամեայ ժամանակամիջոցը մեր ազգային վերածնութեան ամենաեռուն, ամենաշանակալի շրջաններից է՝ Նշանակալի՝ թէ կողկասեան և թէ օսմանեան հայութեան համար, թէ այնտեղ և թէ այստեղ՝ դա մի ճշմարիտ գարագլուխ էր:

Մտաւոր ու հոգեկան ազատագրութեան ալիքը անցնում էր — ողողելով ու վարակելով — Արևմուտքից դէպի Արևելք, գնում էր բաղխելու համառուսական մեծ Ջնգանի դռներն ևս, ազատելու բազմամիլիոն աշխատաւոր ընդհանրութիւնը միջնադարեան աւատապետութեան մի քանի արատներից, ազատելու գէթ մասամբ խօսքն ու մամուլը սարկութեան դարաւոր կապանքներից, ստեղծելու մտաւորականութեան մի հզօր ու գիտակից փաղանգ և նրա հետ մի հոյակապ շարժում — գրական, քննական, բարոզչական — վերածնութեան մի շարժում գրեթէ բոլոր ցարահայտակ ազգերի մէջ:

Նոյն կործանիչ և շինարար ալիքը, որ գալիս էր 1789-ի, 1830-ի և 48-ի պարիզեան ակունքներից, հասել էր — «Եւրոպական միջամտութեան» հարթած ճամբաներով — և Քիւզանդի ալեոր մայրաքաղաքին, խորտակել էր զառամեալ ռեժիմի օրհասական դիմադրութիւնը և Հատար Հիւմայունի մեծաբառառ յօդածներով պահանջում էր վերանորոգումն օսմանեան կայսրութեան...

Վաթսունական թւականներում է, որ թիւրքահայ ազատամիտ մտաւորականութիւնը նետում է կեանքի լայն ասպարէզ, նոյն Հատար Հիւմայունի հոչակած հիմունքներով (1856 թ.) և փորձում է իրականացնել արևմտեան յեղափոխութիւններից փոխ առած գաղափարները:

Վաթսունական թւականներում է, որ հայոց տարտամ լո վաշանոտ իղձիրը կերպարանաւորում են «Սահմա-

նադրութիւն» կոչւած օրինական հաստատութեան մէջ... Ցարածում է խինդ ու բերկրանք, բայց և շուտով ամենադառն հիասթափութիւն ողջ թիւրքահայ աշխարհի մէջ, — հիասթափութիւն, որ բղխում էր Սահմանադրութեան խաբեպատիր, բաղաբականապէս անդամալոյծ ու ամուլ էութիւնից...

Վաթսունական թւականներում է, որ սկսում են մերձեցումի շատ թէ բիչ լուրջ աշխատանքներ հայութեան կզղիացած հատուածների մէջ, մերձեցում մի կողմից՝ Պօլսի և Կովկասի, միւս կողմից՝ Պօլսի և թիւրքահայ գաւառի միջև: Հայաստանցու ցաւերն ու գանգաւները սկսում են, վերջապէս, արժանաւոր տեղ գրանել օսմանեան մայրաքաղաքի հայաբառառ մամուլի մէջ:

Վաթսունական թւականներում էր, որ գաւառից Մշոյ դաշտից Պօլիս կոչեց, պատրիարքական պաշտօնով, հայ ժողովրդի «Հայրիկը», հայ վշտի ու բողոքի գաղափարական անձնաւորումը, և նրա հետ միասին Հայկական խնդիրն ևս Հայաստանի դժոխքից ճանապարհեց դէպի Բօսֆօր, ու պէս զի այնտեղից մեկնէ դէպի Եւրոպական դիւանատները:

Վաթսունական թւականներում էր, վերջապէս, որ բռնկեց Զէյթունի յիշատակելի ապստամբութիւնը, որով մի բուռն բաջամարտիկ լեռնցիները ասես կուզէին հրահանգ տալ Մեծ Հայքի միլիօնաւոր բազմութեան, փոքր ինչ յոյս ու խրախոյս ներշնչել լքած, սարկամիտ զանգւածներին, ցոյց տալ նրանց միակ ելքը օսմանեան արիւնալի տարտարոսից...

*

Այո, հազազիւտ օրեր էին թիւրքահայոց Սահմանադրութեան ծանուցման օրերը: Աե՛հ էր, պատկառելի տեսարանը Բացման Ժողովի, որին նախագահում էր Մկրտիչ Աղաթօն:

Այսուհետեւ, ասում է նա իր բացման ճառի մէջ, միտքերը կը լուսաւորէին, գաղափարները կը նորոգւէին, սիրտերը կ'արիանան... Զմայլելի տեսարան. իրաւամբ հայոց զարագուելին է այսօր. պէտք է որ ամեն հայ ասնէ հանդիսիւ այս օրը, այս մեծ օրը. ամեն հայ մէկ մէկու շնորհաւորեն, ամեն հայ ուրախութեան ու սիրոյ համբոյրներ մատուցանեն իրարու, և հայոց պատմութիւնը շարունակող ախուր ու վհատեալ զրիչը սփոփի ու սրտապնդի...

Ճառը, «Մասիսի» ի ասելով, ահագին ապաւորութիւն գործեց և ժողովականներից շատերի աչքերը լցւեցին ուրախութեան արտասուքով...

Ընարւում է մշտական դիւան, և ատենապետ Սերվիլէէն էֆէնտի հետեւեալն է ասում իր փոքրիկ և հրահանգիչ ճառի մէջ.

Մենք պաշտօն ունինք ոչ միայն ՚ի նախնեաց մեզի աւանդւած կրօնքնիս պաշտպանել, այլ և ամեն պարագայի մէջ բոլոր խնդիրները միեւնոյն նպատակի ծառայել տալ, այն է ազգային ոգւոյ զարգացումը. ոգի մը, որ միս մինակ միջոց է ազգը կենդանացնելու և զոր պիտի ուշխատինք համաձայնեցնել տալու նախ դարոյս ոգուն ու բնութացքին հետ և երկրորդ՝ մեր բարեխնամ տէրութեան հանդէպ ունեցած ազգային պարտաւորութիւններու հետ, օտար միջամտութիւն չընդունելով...

Այդ հակիրճ սոցերի մէջ արտայայտւած է այն ժամանակայ թիւրքահայ առաջադէմ մտաւորականութեան credo-ն, հաւատաւորը կրօնը աւանդական մի ժառանգութիւն է, մի ստացւածք, որ կատարել է իր որոշ

դերը. բայց կրօնը չէ, որ կենդանութիւն է տալիս ազգին, կրօնը չէ, որ ազգ կըստեղծէ և կը պահպանէ: Ազգայնութիւնը մշակելու և յարասե պահպանելու համար գերագոյն միջոցն է— ըստ Սերվիլէէն էֆէնտի — ազգային ոգու, ինքնագիտակցութեան զարգացումը, որի վրայ և պարտաւոր ենք կենտրոնացնել մեր ճիգերը: Սակայն, ազգային ոգի, գիտակցութիւն մշակելու համար՝ պէտք չէ որ մեկուսանանք, փակւինք մեր ցեղային դարաւոր նախապաշարմանց մէջ— ինչպէս որ հրահանգում է թիւն, շօվէն ազգասիրութիւնը ամենուրեք— այլ պարտաւոր ենք ընդօրինակել աւելի բարձր ժողովուրդներին, իւրացնել եւրոպական բողաքակրթութեան արդիւնքները, պարտաւոր ենք «համաձայնեցնել» մեր ազգային նկարագրի զարգացումը ժամանակի առաջադէմ ոգու հետ, ազատութեան ու ռամկավարութեան պահանջների հետ... Այս կորովի յայտարարութիւնները արւում էին բազմաթիւ կղերականների ներկայութեամբ:

Հետաքրքրական է և ատենապետի վերջին խօսքը, որով կը մերժէ «օտար միջամտութեան» սկզբունքը: Ճակատագրական մի պահանջ թիւրքահայոց այն ժամանակայ խիստ դժւարին, անպատրաստ կացութեան... Բայց այդանգ, անտարակոյս, դեր էր խաղում և այն հանգամանքը՝ որ թիւրքիոյ բոլոր քրիստոնեայ ժողովուրդների մէջ ամենէն աւելի կապւած էր օսմանցիութեան, թիւրքութեան հետ՝ հայ տարրը: Բոլոր սթափաւոր քրիստոնեայ ժողովուրդները սոգորւած էին անջատական ձգտումներով և կոչ էին անում եւրոպային. հայը ձուլ էր բացառութիւն:

Հանրային ցնծութիւնը մեծ էր, անկեղծ, ինքնայոր-
դոր: Այն, ինչ որ ուրիշ ազգեր նւաճում էին զէնքով,
արիւնով հայութիւնը վաստակում էր խաղաղ ճանա-
պարհով, առանց մի կաթիլ արիւն թափելու, սոսկ
„հայրախնամ սուլթանի“ մի ժեստով, նրա արտակարգ
ղվեհանձնութեամբ... Մասամբ և, անշուշտ, այդ պատ-
ճառով էր, որ „ազգը“ իր ձեռնհաս մատուրական ներ-
կայացուցչի բերնով յետ էր մղում արաբին միջա-
մտութիւնը և ապաւինում էր „օսմանցիութեան“ դա-
ւաններին:

Հարկաւ, միմիայն աւանդական սարկամաութիւնը չէր,
որ թելագրում էր մի այդպիսի տակտիկ: Արտաքին մի-
ջամտութիւնը այն ժամանակայ պայմաններում հազիւ
թէ կազմակերպէր Հայաստանից մի մեծ Լիբանան, այլ
ամենայն հաւանականութեամբ պիտի նետէր հայկական
վիլայեթները Ռուսաստանի գիրկը, պիտի սանդղէր
նրանցից մի նոր „Հայկական Աշխարհ“, մի աւելի ծա-
ւալուն „Արմեանսկայա Օբլաստ“, ուրիշ խօսքով մի նոր
ռուսական նահանգ, նման Արարատեան նահանգներին...
Իսկ հայոց հարցի այդօրինակ լուծումը ցոյց էր աւել
արդէն իր աննախանձելի հեռանկները Պասկեվիչի օրե-
րից ի վեր և թիւրքաց հայութիւնը մի խուլ հակա-
կրանք ունէր դէպի ռուսական ռեժիմը, դէպի „Պօթ-
ժենիէ“ի, „Դոնօս“ի ու „Դօկլադ“ի մասնութեան ու
գաւաճանութեան, մատուր ու բարոյական չլածանքի
քաղաքականութիւնը, որի պողպատեայ ձիթաններում
հայութիւնը տարրալուծւում էր, կորցնում իր ազգային
կերպարանքը... Անգամ մեծ աղետներից յետոյ թիւր-

քահայ մատուրականութիւնը երկար ժամանակ կատա-
ղորէն ընդդիմանում էր „ռուսական գրաւումի“ ծրա-
գիրներին, ո՛ւր մնաց՝ այն ժամանակ...

Այնուամենայնիւ, պօլսահայ հասարակութիւնը պատ-
րաստ էր սիրով շահագործելու քրիստոնեայ հզօր դրացիի
հմայքը, նրա թշնամական դիրքն ու մշտաբորբոք ախոր-
ժակները թիւրքիոյ հանդէպ, նրա quasi-հայապաշտպան
միտումները... Թիւրքահայ հասարակութիւնը պատրաստ
էր ձօժելու Բ. Դրան սարսափահար աչքերի առջև
ռուսական թեւարկութեան ասեղ խրտուիլակը, որ արդէն
մի քանի անգամ շանթահարել էր մահմեդական
արեւելքը հայազգի զօրավարներին որոտա-
ձայն շեփոններով...

Հասկանալի է, որ այն ժամանակ (գրեթէ վաթսու-
նական թւականների արշալոյսին) Լօրիս Մէլի-
քօվի մուտքը Պօլիս ողջունեց թիւրքահայերի կողմից
այնքան բուռն ու ցուցարար խանդավառութեամբ: Հայ
մեծանուն զինւորական ուղեորութիւնը պաշտօնական
հանգամանք ունէր: Կա եկել էր (1859 ապրիլ) Ալէք-
սանդր 11-ի և Փոխարքայի հրահանգով այցելելու
նորընտիր Մաթէոս կաթողիկոսին: Մեծ ուրախութիւն
ազգային երեւելիների շրջանում: Կերուխում, կենացներ,
ճառեր: Լճիրայական հոսհոսութիւնը կողքէր անպատ-
ճառ „հայ հայրենասերի“ ծիրանի հագցնել ցարական
պատախրակին:

Լաւ առիթ էր ներկայանում՝ թէ շեշտելու երկու
հայկական հատւածների մտերմութիւնն ու մերձեցումի
անհրաժեշտութիւնը և թէ միանգամայն դէմօծսարատիվ

ձևով ցուցադրելու յաչս օսմանեան վարիչների այնպիսի կարևոր մի իրողութիւն, որպիսին էր այն ժամանակ հայ ազգեցիկ բարձրաստիճան զինւորականների ներկայութիւնը ռուսական ծառայութեան մէջ *)...

Չեզի պէս ազգասէր իշխանը փառք մըն է... մեր ազգին համար... որով կրնանք պարծիլ և մեծարել յօգուտ ազգայն... —ասում է իր բաժակաճառի մէջ ամիրաներից մէկը:

Ահա և Լօրիսի պատասխանը.

Ամիրայք,

Յորմէհետէ ազգս հայոց վայելէ զպաշտպանութիւն օսմանեան և Ռուսիոյ մեծագոր տերութեանց, գովելի հաստարձութեամբ իւրով արժանի եղեալ է վստահութեան և համակրութեան նոցա: Չանասցուք ուրեմն պահել միշտ ևս առաւելու զայս պարծանք ազգիս, հաւատարիմ կալով իսպառ դուք ձերում ի ազաւորի և մեր մերումն, և այսպէս

*) Միջանկեալ նկատենք, որ գրեթէ բոլոր հայազգի հրամանատարները, հոգով արդէն իսկ ռուսացած, աւելի վնասել են հայութեան դատին (անգիտակցաբար, մեծ մասամբ), քան նպաստել: Վերջին ռուսութիւրքական պատերազմից յետոյ շղթայագերձուած մահմեդական բարբարոսութեանց մէջ քիչ դեր չխաղաց այն հանգամանքը՝ որ աշխարհակալող բանակի գլուխ էին կանգնած հայ մարդիկ... Հայ տարաբախտ ու տրորած ժողովուրդը կարող է և իրաւունք ունի պարտենալու, որ Մագաթովի, Լազրովի ու Լօրիսի պէս անվեհեր զինւորականներն ու հանձարեղ ռազմագէտները իր մտից ու արիւնից են, բայց, դժբախտաբար, այդ պարծանքի ու հիացումի մէջ բնաւ տեղ չկայ երախտագիտութեան զգացումի համար... Նոյնը կարելի է ասել այն բոլոր տաղանդաւոր հայերի մասին, որոնք ստեղծել են փայլուն, մեծահոգի կարիեր օտար միջավայրում — Եգիպտոս, Ռուսաստան, Ռենգարիա և այլն:

կատարելով զպարտաւորութիւն մեր, յառաջողիմենցուք ընդ շաւիղ քաղաքակրթութեան վարուս...

Մի այլ անգամ, ի պատիւ նշանաւոր այցելուի՝ «ազգային ճաշկերոյթ» են սարքում Օրթագիւղի և այլ տեղերի ամիրաները. հրաւիրում են և ռուսահայ խոշոր առևտրականները: Նոյն ուրախ, բանկեսային արամադրութիւնը, նոյն իղձերը երկու մեծ ազգային հաւաճների բարօրութեան համար... Ամիրաները բաժակ են բարձրացնում ի պատիւ «զօրապետ Լօրիս-Մէլիքեանի և ամենայն Ռուսիաբնակ ազգայնոց». և ապագայ Ռուսաստանի գոռոզ, ամենակարող Դիքտատօրը այդտեղ ևս շռայլում է իր «հայրենասիրական լիրիզմը» խանդավառուած ու գինովցած ամիրաներին, պատասխանելով.

Ի պայծառութիւն ազգիս հայոց և ի զարգացումն սգւոյ ազգայնութեան, — այն սգւոյն, որ ժողովել է այսօր զմեզ շուրջ զսեղանովս...

Լօրիս-Մելիքովի ուղևորութեան մէջ ոմանք կասկածեցին գաղանի նպատակներ: Օղեսոսայի մի թերթ հաղորդեց, որ իբր Լօրիսի նպատակն է ի միջի այլոց՝ միացնել տալ Էջմիածնի և Աղթամարայ կաթողիկոսութիւնները: Այդ գաղտասուքները ստիպեցին հայ զօրավարին հրապարակ գալ հերքումով. նա մի երկար նամակ ուղղեց վերոյիշեալ լրագրին, որի մէջ ասում էր ի միջի այլոց.

... Այս անհիմն լուրերը, պարոն խմբագիր, իմ հաւատակից եղբարցս սրտի մէջ զանազան կասկածներ պիտի ձգեն թէ հոս, Ռուսաստան և թէ Տաճկաստան... Ես ամենևին յօժարութիւն չունիմ ամենափոքր անհանգստութեամբ և եմ հաւատակիցներուս...

Անցած տարի ես, իբրև լուսաւորչական հայ, ուղարկել էի Կ. Պօլիս ընդառաջ և յուղեկցութիւն ի Կովկաս նոր- ընտիր կաթողիկոսին ամենայն հայոց... Իսկ այս տարի գնացի հոն մեր երկրէն փոխադրող շէրքեզներուն գործերը կարգի դնելու համար *)...

Այդպէս վերջացաւ Լօրիսեան այցելութեան այդ great event-ը, որ այնքան աաքացրեց մեր ամիրաներին: Այնուհետև յաճախ չենք տեսնում նման ցոյցեր: Բայց արդէն 60-ական թւականներից սկսւում էր մերձեցումը ռուսահայերի և պօլսահայերի միջև: 1862-ին սկսում են ապել «Մասիս»-ի մէջ Ալէքսանդր Երիցեանի Կովկասեան թղթակցութիւնները: «Մասիս»-ը տպւում է սիրով և աէկլամով: Երիցեանը ուզում է ծանօթացնել թիւրքահայերին «Կովկասահայ ազգայնոց վիճակի հետ» և ազդարարում է նոյն վերածնութեան շարժման սկզբնաւորութիւնը Կովկասում...

Ահա 4—5 տարի է, որ միանգամայն բոլոր Ռուսիայի մէջ հայք մի շարժողութեան մէջ են, սթափւած են իրեանց ցայտօրւայ դանդաղ թմրութիւնից, սկսել են մտածել, գործել և առաջ երթալ, և գոցա բոլորեցունց շարժառիթը ևս ազգային ուսումնարաններն են **)...

* * *

Մենք ասացինք, որ նոր-նոր միայն, վաթսունական թւականների սկզբներում, պօլսահայ թերթերը — մասամբ, անշուշտ նպաստաւորւած քաղաքական համեմա-

*) «Մասիս», 11 օգոստ. 1860 թ.:

**) «Մասիս», 8 դեկտ. 1862 թ.:

աբար բարեյաջող մթնոլորտից — սկսում են ապել մի քանի թղթակցութիւններ գաւառական հարստահարութիւնների մասին և նոյնիսկ հակազդել, բողոքել:

Հարստահարութիւնների մի հազարերորդ մասն անգամ չէր արձանագրւում, բայց այն ինչ որ արձանագրւում էր, այն մի քանի իրողութիւններն իսկ բաւական էին յաականչելու պատկերը:

Այն ժամանակ, երբ Կ. Պօլսի հայ հասարակութիւնը անսովոր գինովութեան մէջ տօնում էր Սահմանադրութեան ծանուցումը (1860 թ. մայիս), երբ «Մասիս»-ը բերկրանքով գրում էր, որ «այդ օրը հայկական տարեգրութեանց մէջ ոսկեղէն տառերով նշանակելու օր մըն է», երբ ամբողջ հասարակութիւնը, գրեթէ ամբողջ մտաւորականութիւնը, «սգւորւած ազատ ու օրինական գործունէութեան հետապատկերով, երազում էր դրախտ դարձնել Հայաստանը, — նոյն այդ ժամանակները գաւառների այլ և այլ անկիւններից, անգամ Պօսին կից հայաբնակ վայրերից, տեղում էին հակահայ ոճիրների քսամենցուցիչ նկարագրութիւններ...

Յիշենք միայն մի քանիսը.

Ալաշկերտի մօտ, Իւչ-Քիլիսէի վանքի միաբաններու կողմէ ազգային պատրիարքարանը եկած մի նամակ հետևեալն էր գրւում.

Աւագ չորեքշաբթի գիշեր բազմաթիւ ջիւղեր վանքի բանդւած պատից ներս են մտնում, վանահայր ծերունի Միսէօն վարդապետի վրայ յարձակւում և կտոր-կտոր յօշտում: Ապա կողոպտում են վանքը և ձուտակայ մի քանի ևկեղեցիներ:

Կառավարական մամուլը շտապում է բացատրել իր ձևով այդ քստմենի դէպքը: Իւչ Քիլիսէի վանքը, ասում

է նա, շրջապատած է մեծ ու ամուր պարիսպներով, գուրսէն ներս մտնել անհնարին է, ապա ուրեք... վա- նահօրը գազանաբար յօշոտել են նոյնիսկ արեղաները... (Պատիսս, 28 ապրիլ 1860 թ.):

Պատիսս, մի ուրիշ անգամ ցուցադրելով եղեռնի մանրամասները, աւելացնում է մեղամաղձօրէն.

Այսօրւան օրս տ ա ն ջ ա ն ք ըսւած բանը կայսերական բարեխնամ կառավարութեան կամացը ուղորովին հակառակ է տիրութեան օրինայն ալ դէմ ըլլալով, վանքին միաբան- ներն այդպէս անխնայ ծեծող շարշարող, վերջապէս անոնցմէ երկուքը այս կերպով մեռցնողները անգատապարտ չեն մնար: Աւտի, տարակոյս չունինք, որ կայսերական բարեխնամ կա- ռավարութիւնը իր անաչառ արդարասիրութեամբը... յան- զաւորներուն արժանի պատիժը պիտի տայ:

Այլ դէպք. (Պատիսս, 29 սեպտ. 1860 թ.):

Թէքիրտաղի այգիների մէջ թիւրք պահապանը սպանում է 18 տարեկան մի անմեղ հայ պատանի: Ապա մեկնում է և հանդիպելով մի հայ հողագործի, ստում է նրան. «Ի՞նչ պիր ազ ուղեկութիւր շուեաթան կեափուրա, վուրտում, կե- պերսին, կիթսին»... Թողթակիցը յայտնում է, որ կառավա- րութիւնը բնաւ անհանգիստ չբրաւ շարագործին:

Հայ թերթի խմբագրութիւնը դարձեալ հոլովում է իր միակերպ, ստերեօտիպ բաղձանքը, որ միանգամայն զաւեշտական կը լինէր, եթէ չլինէր ողբերգական.

Այսպիսի բարբարոսական անգթութեան գործ մը կայսե- րական բարեխնամ կառավարութեան մարդասեր կամացը բոլորովին հակառակ ըլլալով, անտարակոյս ենք, որ ի մ ա- ն ա լ ու ը լ լ ա յ ն է, ա ն պ ա տ ի ժ չը թողուր...

Այլ դէպք (Պատիսս, 8 նոյեմբ. 1861 թ.):

Թատերաբեմը թողաթն է: Ռուսիայից թիւրքիա գաղ- թող շերքէզները գողանում են մի մանկահասակ հայ աղ- ջիկ: Մեծ յուզմունք հայերի մէջ. դիմումներ, բնդհարումներ: Չէրքէզները ուժեղ են, կառավարութիւնը չի ուզում խիստ

վարել նրանց հետ... Եւ մի օր տեղի է ունենում հետեւեալ տեսարանը. նոյն շերքէզները, մի քանի հարիւր հոգի, մուլայի առաջնորդութեամբ յարձակում են հայոց առաջնորդա- րանի վրայ, աւերելու և շարժելու դիտաւորութեամբ. կա- պտում, ծեծում են քահանաներին և այլ հայերի, ջար- գում են առաջնորդարանի դռները, փնտրելով թագնւած առաջնորդին...

Չէրքէզները, ի հարկէ, յետ չուին առեանգւած հայ աղջիկը. նրանք բնաւ չպատժեցին և միւս ոճիրների համար Եւ մեր ազգային թերթերը շարունակում էին սրտառուչ համբերութեամբ հոլովել:

Այսպիսի բարբարոսական արարքներ մեր բարեխնամ կա- ռավարութեան կամաց հակառակ ըլլալով, վստահ ենք... և ըն

Այլ դէպք — Պրոսասյի մէջ, 1862-ի օգոստոսի վերջերին, գրում են այդտեղից Վ. Պօլսի Courrier d'Orient-ին.

Ասիից 5-6 օր առաջ Պապա-Սուլթան թիւրք գիւղի բնակիչներէն ոմանք զէն ի ձեռին Ենիճէ հայ գիւղը կոխե- ցին. զիւղին 2-3 խանութները կողոպտեցին, ոչխարները սպաննեցին, գտնւած ձխախտն ու սգելից բմպլինները յափշտակեցին, բազմաթիւ բնակիչներ խոշտանգեցին... Գե- ղէն դուրս ելլելուն՝ հայ կին մը տեսան... բռնեցին ու հետերնին տարան: Բայց շրջակայ արտերուն հնձողները բազմութեամբ վազեցին, դժբախտ կինը ազատեցին:

Ուրիշ օր մ'ալ քանի մը խեղճ հայեր բռնեցին ու Ե գ- ն Ե Ր Ի պ է ս կ ա ո ք ի մ ը լ ծ Ե լ Ո վ, քաշել տւին, մինչև որ ուժեղներն սպառեցաւ:

Քրիստոնեայի պարտաւորեցան գեղը ձգելու. ամեն օր կը փախչին ու հոս կուգան... Քննութիւն մը սկսեցաւ, բայց խիստ թոյլ կերպով: Մէկ խօսքով, ի շ խ ա ն ու լ թ իւ ն չը կ ա յ հ ո ս...

Այդ դեռ Պօլսի ժօտիկ վայրերում էր, կենարօնա- կան կառավարութեան քթի տակ: Որքան աւելի էք հեռանում կենարօնից, այնքան աւելի է ծանրանում

Թալանի ու սպանութեան ակտիւք: Ահա թէ ինչ տեսակ խժոճութիւններ էին կատարում չէրբէզները հեռուոր Արաբկիրում: Նոյն տարւայ 18 օգոստոս Թալանի «Մասիս» ի մէջ կարգում ենք բառացի հետեւեալը.

Փոքր Ասիոյ և Հայաստանի մէջ բնակեալ մեր խղճալի զաւայնոց բերդերէն, ովջառններէն և ուրիշ գաղանաբարոյ, ապստամբ բարբարոսներէ կրած հարստահարութիւնը որպէս թէ բաւական չէր, այս օրերս նոր հարած մ'ալ չէրբէզներն եղան:

Արաբկիրէն կը գրեն.

Ասիոց երեք-չորս ամիս առաջ 68 տուն չէրբէզ Արաբկիրու գիւղօրէից մէջ բաժնւելով, 3 անձէ և 2 ձիէ բաղկացեալ տուն մը չէրբէզ ալ Ծաֆ անուն 56 տնւոր հայաբնակ գիւղին բաժին կը հանուի: Գիւղացիք ալ յիշեալ անտանելի հիւրերուն ամեն ապրուստը անտրտունջ կը հոգային: Երկու ամիսի շափ անցնելէ ետև, Ազրին և Աղըն բուած երկու մեծամեծ տաճիկ գեղերը իրենց բաժին ինկած չէրբէզներուն հետ կուր բնելով, կը վաբնտեն: Չէրբէզներն ալ շիտակ Ծաֆ գիւղը կ'երթան կը նստին և իրենց աւարառու բնաւորութեամբը գիւղացւոց այգիները, արտերը, պարտէզները կը կողոպտեն: Վայ ան մարդուն, որ կը համարակի բան մը բսելու, անմիջապէս կըսպանուի: Գեղացիք կ'երթան Միւտիրին և այս անտանելի փորձանքը հասկըցնելով, պաշտպանութիւն կը խնդրեն: Միւտիրը պատասխան կուտայ, որ խարբերդու փաշային երթան: Խեղճ գեղացիք ալ առաջնորդին կը գիմեն, ան ալ բան մը չը կրնար բնել: Նոյն միջոցին բոլոր միւս գեղերուն չէրբէզներն ալ Ծաֆ գիւղը կը լեցուն 200 ձի և 400 մարդ և խեղճ գեղացւոց բոլոր հոգերը կը գրաւեն, ոչ արտ կը թողուն ոչ ցորեն, ոչ այգի, ամեն ալ կը չորցնեն և ծառի ճիւղ մ'անգամ չեն թողուր: Ասիոց զատ՝ կրսկին գիւղացւոց կանանցն և տղայոցը ետևէն ինչալ և զանոնք ալ բռնաբարել:

Միւտիրը փոխանակ գիւղացւոց գոյքն ու անձր պաշտպանելու 6 զինուոր կը դրկէ գիւղը և իրենց տուրքին վրայ յաւելածը կը պահանջէ որ անմիջապէս վճարեն: Գեղացիք տուններէն դուրս չեն կրնար ելնել չէրբէզներուն վախէն... ուտելու հաց չունին, ուրկէ՞ վճարեն այն տուրքը, մանա-

ւանդ որ արդէն խեղճերը 300,000 զուրուշ ալ պարտք ունին: Գեղին տասանորդը 6 0 0 0 զուրուշ հազիւ կը բանէ, իրենք մտեն տարի 1 3, 0 0 0 զուրուշ տասանորդ, 4500 զուրուշ սալիան և 4500 զ. զինւորական տուրք կը վճարեն: Գեղացիք յուսահատուած Միւտիրին ստբը, ձեռքը կ'իյնաը, կուլան, կ'ողբան, բայց ան մտիկ չ'ընեն, կըսպիպէ, որ տուրքն չուտով հատուցանեն:

Այդպէս էր ընդհանուր կացութիւնը — Թեքրիտաղից մինչև Արաբկիր, Բրուսայից մինչև Վասպուրական:

Լաց, փախ ու արհաւիրք, կամ գթութեան աղաղակներ, գետնաստարած խոնարհութիւն, քրիստոնէական անծայր համբերողութիւն ու համակերպում... Այդպէս — ամեն տեղ, Մեծ ու Փոքր Հայքերում, Անտառիոյ գրեթէ բոլոր հայաբնակ վայրերում:

Մի անկիւն կար, սակայն, այդ լայնարձակ հայ երկրի մէջ, որ չգիտէր սարկութեան այլասեռող արատները, որին խորթ էր երկիւղն ու արհաւիրքը, հառաչանքն ու աղերսանքը:

Մի անուն կար — յոյսի ու վրէժի անուն, կուր ու զիւցազնական յաղթանակի անուն — Զէյթունը, որ փոքր ինչ մեղմում էր այն ժամանակ թիւրքահայոց վրայ ծանրացած հնադարեան գերութեան անարգանքը, բարձրացնում էր սրտերը Օսմանեան Զնդանի մէջ, ներչնչում էր արիութիւն ու կորով, հաղորդում էր իւրաքանչիւր առողջ հայի՝ մի տեսակ ուղղական սարսուռ և անպայման հայրենասիրական հպարտութիւն...

Վաղուց էր այդ անունը սիրելի, նւիրական: Վաղուց էր, որ մի բուռն անընկճելի հայութիւնը, թառած

Տաւրոսի ապառաժոտ բարձունքներում, սովորել էր չափել լաճար ուժերի հետ, սովորել էր կուրծք տալ տասնեակ հազարաւոր բանակների և գիշատիչ բարբարոսների արեամբ ներկել իր հարազատ ժայռերն ու կիրճերը:

Ջէյթունն էր, հայկական Կօնստանդուպօս — հինաւուրց թագաւորութեան մի ուշագրաւ բեկոր, մի տեսակ պրիմիտիւ նահապետական հանրապետութիւն — որ մի շարք դարերից ի վեր, աշխարհագրական իր անսովոր գիրքերի մէջ աջողել էր պահպանել գրեթէ անկախ գոյութիւն, որ բանիցս ջարդելով յետ էր մղել մահմեդական ասպատակող հորդաները, միշտ աւելի և աւելի մարզել էր ռազմական դպրոցի մէջ, ժառանգել սերնդէ-սերունդ սուր ու հրացան բանեցնելու անհրաժեշտ արեստը, առանց որի չի կարող ապահովարար դարձնել մի ազգի ճակատագիրը:

„Ils manient le poignard avec une dextérité incroyable“ *)... Այսպէս է վկայում մի ֆրանսիացի գիտնական-տուրիստ, որ առիթ է ունեցել տեսնելու զէյթունցիներին:

Ահա թէ ինչպէս է նկարագրում հայ լեռնականներին վիկտոր Լանգլուա, որ 1852—53 թւականների իր ճամբորդութեան ընթացքում այցելել էր Կիլիկիան:

Այս հայ լեռնականները ընդհանրապէս խոշոր են, բարձրահասակ, բաջ և կորովի: Իմ բարեկամներից մէկն ասում էր, որ մի հազար զէյթունցիներ կարող են նւաճել ամբողջ Կարսամանին: Ես կը հաւատամ դրան: Իրերի ներկայ կա-

*) Նրանք վարում են դաշոյնը մի անհաւատալի ճարպկութեամբ:



Ջ Է Ս Յ Ո Ւ Ն

ցութեան մէջ, թող թող արւի մեզ բաղձանք յայտնել, որ Տարրոսեան հայերը լիակատար անկախութիւն ստանան: Լիբանանի մարտիաների հետ՝ նրանք արեւելքի Փրանսիացիներն են *)...

Եւ ահա, վաթսուներկան թուականների սկզբներում գարձեալ այդ հերոսական լեռնաստանի ձայնն էր, որ հնչեց յանկարծ խրոխա ու ոգևորիչ, նրա անունն էր, որ սկսեց հոլովել բոլոր գիտակից հայ շրջաններում:

1862-ի ամառը՝ Ձէյթունն ապստամբ էր: Ինչ էր պատահել: Չկային դեռ յեղափոխական կուսակցութիւններ, հայկական հարց ու աէֆօրմի պահանջներ: Բայց Ձէյթունն ինքնին արգէն յեղափոխականների, ըմբոսանների մի բոյն էր, որ գիտէր փոթորկել ու ծառանալ ամեն անգամ, երբ թեկուզ ամենաշնչին մի գիպած գալիս էր վիրաւորելու նրա հպարտ ինքնասիրութիւնը և ուղղական արժանապատուութիւնը **):

*) Victor Langlois. Voyage dans la Cilicie, exécuté pendant les années 1852—53. Էրատ. 1861 թ. Պարիզ:

Ինչպէս յայտնի է, Լանգլուան իր կիլիկեան ճամբորդութեան միջոցին, սաստիկ փափագ ունէր մտնել բուն իսկ Ձէյթունի մէջ: Սակայն, նրան հաւատացրին, որ այդ չի աւողւի, բանի որ գէյթունցիները չէին թող տալիս օտարներին ուր դնել իրենց սահմանների վրայ:

**) Ա. ի չգոյէ յեղափոխական կուսակցութիւնների, եղել են, սակայն, ըստ երևոյթին, անհատ-քարոզիչներ, որոնք 1860-ի մէջ Լիբանանում տեղի ունեցած նշանաւոր գէպքերի ազդեցութեան տակ, կամեցել են շարժում յարուցանել կիլիկիոյ մէջ, Փրանսիայի միջամտութեամբ հայկական Լիբանան ստեղծելու նպատակով: «Ձէյթունցի» ծածկանւան տակ թագնած պատկառելի ծերունին, որ ամփոփել է Ձէյթունի մասին ունեցած իր ընդարձակ ծանօթութիւն-

Պատահել էր մի սովորական դէպք: Մի վեճ քեթմանցի և պէշեցցի երկու թիւրքերի միջև: Մի սպանու-

ները երկհատոր աշխատութեան մէջ «Ձէյթունի անցեալն և ներկայէն» խորագրով, պատմում է, որ 1861-ի ձմեռը «Հաճընէն Ձէյթուն եկաւ Լեոն անուն մէկը, որ ինքզինքը իշխան կ'անւանէր, ու չորս ամսոյ չափ մնալով այնտեղ՝ հանրագրութիւն մը պատրաստեց Փրանսիայի վեհապետ Նապօլէօն III կայսեր ներկայացնելու համար: Հանրագրոյն իմաստը այն էր թէ՛

«Մենք, Տօրոս լեռանց մէջ բնակող հայերս 70,000 զէնք բունելու կարող մարդ ունինք, կր փափագինք, որ մենք մեզ կառավարելու առանձնաշնորհումն ունենանք. ստոր չամար կ'աղաչենք ձեր կայսերական կառավարութիւնը, որ հաճիք միջնորդել թիւրքիոյ կայսեր մօտ, որ մեր ցանկապաճ ազատութիւնը շնորհելով մեզ՝ հայ իշխան մը նշանակէ մեր վրայ իբրև կառավարիչ»:

Փարիզ գնալով, Լեոն ներկայացուց սոյն հանրագիրը Նապօլէօնին՝ որ կարևորութիւն տալով անոր՝ այս իմաստով հրահանգ ևս ղրկեց Պօլսոյ Փրանսական դեսպանին. սա ալ իր կարգին գիմէյ մեծ եպարքոս Ալի փաշային, որ այսպիսի անակնկալ միջնորդութեան մը հանդէպ չւարած՝ ճ ամիս պայմանաժամ խնդրեց... Խորամանկ եպարքոսը միտքը դրաւ մէջտեղէն վերցնել այս փոքրութիւն, բայց անհանգարտ տարրը և յատուկ այս նպատակաւ իբրև կառավարիչ Մարաշ ղրկեց Ալիզ փաշան...

Ագիտատոր Լեոնի մասին պ. Սարուխան գրում է իր «Հայկական Խնդիրն ու Ազգային Սահմանադրութիւնը» աշխատութեան մէջ, որ նա, այդ Լեոն «իշխանը» մեռել է 1876 թ. փետրարին Միլանում, որ նոյն տարւոյ մէջ վախճանւել է և իր իտալուհի կինը, թողնելով վեց երեխայ — բոլորովին կարօտ վիճակում — որոնք ընդունւել են այլ և այլ ապաստարանների մէջ: (Քաղ. «Revue de Constantinople»-ից, livr. du 1-oct. 1876):

Թիւն: Սպանւած թիւրքի ազգականները օգնութեան են կոչում պէշնի թիւրքերին, իսկ սրանք էլ դիմում են Ալաբաշ հայ գիւղի տանուաւերին: Աւերջինս—Տեղինակաւոր և ազդեցիկ ամբողջ շրջանում—մի խումբ հայերի հետ գնում է մարդասպանի դատը տեսնելու, բայց ճանապարհին յարձակումն է կրում քեթմանցի թիւրքերից և սպանւում է հայերից մէկը: Այդ մէկ հայի սպանութիւնն արդէն փոթորիկ է հանում Ձէյթունի մէջ: Մի խումբ զէյթունցիներ, իրենց իշխանի առաջնորդութեամբ սլանում են դէպի Քէթման և դիմադրութեան հանդիպելով, կոտորում են մեծ թւով թիւրքեր:

Ահա մեծ դէպքի շարժառիթը: Գուրի ծաւալման և հայ լեռնականների ընդհանուր ապստամբութեան բուն պատճառը աւելի խոր էր, հարկաւ Ձէյթունը վաղուց աչքի փուշն էր թիւրք կառավարութեան: Իր անկախ գոյութեամբ և պարբերական ըմբոստացումներով նա վաղուց դարձել էր անհանդուրժելի և անհաշտելի թիւրքական ռէժիմի հետ և Գ. Պօլսի մէջ ծրագրել էին՝ տալ վճռական մի հարւած ու իսպառ բնաջինջ անել հայ արծիւների այդ անհանգիստ ու վաանգաւոր բոյնը:

Ապասում էին յարմար առթի, որ և հասաւ: Գոտորւած թիւրքերի արիւնաթաթաւ շապիկները գիշերանց փախցրին, տարան Սարաշ, ուր նստած էր այն ժամանակ մի դաժան, բարբարոս սիպ—Ազիզ փաշան: Տիրեց յուզմունք, իրարանցում: Բարձրացաւ վրէժխնդրութեան մի ահաւոր ոռնոց: Ահաւեցին արշաւանքի հապշտապ պատրաստութիւններ: Մի քանի տասնեակ հազարաւոր խաժամուժ—քիւրդ, թիւրք, արաբ, աւշար,

չէրբէզ ու բաշիբօզուկ — գրոհ աւեց Ազիզ փաշայի առաջնորդութեամբ դէպի հայկական բարձունքները:

Ձէյթունի օրհասն էր ասես Ոսթի է կանգնում մի բուռն հայութիւնը իսլամ խուժանների այդ ահագին բանակի դէմ: Իր նահապետական զէնքերով և երկաթէ կուրծքերով:

Ապցութիւնը չափազանց ծանր էր: Նման ճգնաժամ Ձէյթունը չէր տեսած: Ոսթի ելան անգամ ծերերն ու պատանիները և զէնք բռնելու կարող կիները: Ձէյթունի չորս իշխանները առաջնորդում էին ժողովրդին: Բահանները գիշերով հսկում էին կատարեցին, իշխաններն ու եկեղեցականները մարտական ճառերով ոգևորեցին հայ բանակը..

Թշնամին եկաւ մօտ 50,000 կամաւորներով և կանգնեց «Պուչախչնց բլուր» անւանւած սեղը, ուսկից բիշ յետոյ նրա մի մասը սկսեց բայլել դրօշակներով դէպի Ասաւածածնայ վանքը: 200-ի չափ շէյխեր ու դէրվիշներ բայլում էին եսեից, գոռալով, անիծելով զէյթունցիներին և օգնութիւն հայցելով Ալլահից: Անկարող լինելով վանքը մտնելու—բանի որ ներսից հայ կտրիճները գնդակահարում էին մօտեցողներին — թիւրքերը փորձեցին մօտ 1000 հոգով անցնել վանքի վերի կողմից և իջնել Ձէյթուն: Սակայն, այդ ճամբու վրայ դարանաժուտ սպասում էին 500 հայ քաջեր, որոնց պատուիրւած էր—հրամանատար իշխանների կողմից—փոքր ինչ կուելուց յետոյ յաղթւած ձևանալ և փախչել դէպի յետ, ուր սպասում էին ուրիշ հայ վաշտեր: Այդպէս էլ եղաւ. ուղղմագիտական հնուց աւանդւած մի մա-

նեօվր էր: Չէյթունցիք աստիճանաբար յետ նահանջելով, քաշեցին թշնամուն այնպիսի խորշեր, ուսկից ազատւիլը այլ ևս դիւրին չէր... Թողնենք, որ պատմէ ինքը սկանառես «Չէյթունցին»:

Գարանամուտը սպասեցին, մինչև մեր կտրիճներուն փախուստէն քաշուերևած, թիւրքերը խրոխտաբար անցան արևելեան ձորին կամուրջը: Չէրքեզներէն մէկը բռնեց պարտեզէն վերագարձող Մազլու անունով հայ կնոջ մը թեւէն... Իր փեսան, որ գարանամուտներէն մէկն էր, քարի մը ետեւէն հրացանը պարպեց և չէրքեզը վայր ինչպիսի գլորեցչաւ ձորը: Այդ բոպէին Չէյթունի մէջ սկսան գարնել կոշնակները: Գարանամուտը դուրս ցատկեցին իրենց թագատեան տեղերէն և շրջապատեցին թիւրք զօրագունդը: Այնպիսի աղմուկ մը բարձրացաւ, որ կարծէք երկինք ու երկիր գոռաց: Թընդանօթներուն որոտը, հրապաններուն ձայնը, կուռղներուն ազդակները, կոշնակներուն դողդիւնը, անասուններուն բառաչը իրար խառնեցան: Հայերը այնպիսի ճշտութեամբ կրակ կ'ընէին, որ հարւածներէն և ոչ մին կը վրէպէր իր նպատակէն և թշնամիներուն դիակները դէզ ի դէզ կը կուտակէին ձորին մէջ, որ այնուհետև կոչեցցաւ «Ատորածի ձոր», «Գըրզըն դէրէսի»: Թիւրք զօրքին այդ զօրագունտին մեծամասնութիւնը և ամենէն եռանդով կուռղները չէրքեզներն բլլալով, ամենէն շատ կորուստն ալ անոնք տւին, 756 դիակ թողլով ճակատամարտին տեղը իրենց 9 պէյերուն հետ, որոնց անունները գրւած էին իրենց սուրերուն վրայ: Այդ ջարդը այնքան սաստիկ ազդեց չէրքեզներուն վրայ, որ անոնք իրենց աղքատ թուրքերէնով առած մը յորինեցին, որ մինչ այժմ ալ կ'ըսեն. «Մարաշ տուրաղան, չէրքեզ վարաղան, Չէյթուն վուրաղան, ամա՛ն, ամա՛ն, փեաք եաման» (Մարաշը կեցեր է, չէրքեզ կը յարձակի, Չէյթունցին կը զարնէ, վա՛յ մեզ, վա՛յ մեզ, շատ անխիղճ են):

Մինչ արևելեան ձորի մէջ գարանամուտ Չէյթունցիները ջարդ էին տալիս չէրքեզներին, քիչ հետուն անդի ունէր մի յուզիչ տեսարան. քահանաները, մէկ ձեռքում զէնք, միւսում խաչ ու աւետարան, երգում էին.

Արի՛, Ասուած հարցն մերոց,
Որ ապաւենդ ես նեղելոց,
Հա՛ն օգնութիւն ծառայից քոց,
Լե՛ր օգնական Ազգիս հայոց:

Հերոսական մի բայր: Հսկումի միջոցին, մի հայ երկտասարդ, Մարկոս Եաշճեան մօտենում է աւագ քահանային. «Ցեր հայր, պիտի ելթամ թնդանօթաձիգն



Չէյթունցի մի խումբ կուռղներ

սպաննեմ»: Ասում է և անհետանում: Մերթ սողալով, մերթ բայլելով, մօտենում է զգուշութեամբ թնդանօթաձիգին, բաշում հրացանի բլթակը և գետին փռում մարդուն: Ինքն ևս անմիջապէս սպանւում է, բայց արդէն հասած էր նպատակին: Այդ յանդուգն բայլից յետոյ, Ազիզ փաշան — որին արդէն սարսափեցրել էր չէրքեզների մասսային ջարդը — որոշում է փախչել: Նրա ետեւից փախչում է և բանակը: Լքում, իրարանցում և

գահազէժ փախուսաւ... Շատերը, հալածելով զէյթուն-
ցիներէն, խեղդեցին Զահան գետի մէջ:

Այդ պատերազմին մէջ թշնամոյն յետ 2,000 սպանուած-
ներուն ու խեղդուածներուն դէմ մենք ունեցանք ընդամենը
77 կորուստ *): Թիւրքաց արձակած թնդանօթներու 41
ուսմբերէն միայն սեւ էլ մը սասկեցու, որ կ'արած էր Պստա-
նենց արտը և որ անմահացաւ Զէյթունի երգերուն մէջ:

Հազար ութ հարիւր վաթսուն երկուքին,
Յունական սգոստոս ամսուն երկուքին,
Չերքեզք ջարդեցան Գրրգընի բեօփրին,
Դիակաց կոյտեր թռչուններ վախցրին:

Ազիզ փաշան եկաւ թնդանօթ լարեց,
Քառսուն մէկ ուսմբ նետեց, մի էլ գլորեց,
Թաշճեան թօփչիին զարկաւ տասպալեց
Փաշան ալ սոսկումէն զգետին փուռեց:

Փաշային ծունկերուն կապը քակեցաւ,
Վախ ու սորսափէն լեղին պատուեցաւ,
Չերքեզաց գլուխը մէկէն ճգմեցաւ,
Քառսուն հազար զօրք՝ իսկոյն ցրեցաւ:

Սուլթանը կատաղած, որոշեց կրկնապատիկ զօրք հա-
նել Զէյթունի դէմ, — 100,000 հոգի: Ազիզ փաշան
պաշտօնանկ եղաւ: Նոր արշաւանքի ծրագիրը կարող էր
իրագործուել և թիւրքերը վերջ ի վերջոյ, հաւանօրէն,
կը տիրանային Զէյթունին... Արդէն իսկ մահմեդական
խաճամուժը, վրէժխնդրութեամբ վառուած, մորեխի պէս
ցրել էր Զէյթունի սահմաններում, հաղորդակցութիւնը
կտրուել էր արտաքին աշխարհի հետ և հայկական լեռ-
նավայրին սպառնում էր սով: Այդ վտանգալի կացու-

*) Զէյթունցի ռազմիկները թուով ընդամենը մի բանի
հազար հոգի էին:

թիւնը մտածել աւելց հայերին և նրանք որոշեցին դի-
ւանագիտական ճանապարհով առաջն առնել սարսա-
փելի աղէտի: Մնում էր դարձեալ դիմում անել Փրանսի-
ային, որի հմայքը զօրաւոր էր՝ այն ժամանակ
Արևելքում, Թիւրքիայում: Այդ ինիցիատիվը ներշնչողը,
ենթադրաբար, գմիւռնիացի և պարիզաբնակ մի հարուստ
վաճառական էր, Յոհաննէս Սալօյեան, որ այն ատեն
Կ. Պօլիս գտնւելով, թելագրում է գաղտնի զէյթուն-
ցիներին՝ զրկել մի հանրագրութիւն Նապօլէօն (||-ին *):
Ղրկուում է բողոք-աղերսագիրը պատւիրակութեան մի-
ջոցով—և նոյն Սալօյեանի ծախքով—Պարիզ, ուր միա-
նում է և տեղը գտնուող Արապետ եպիսկոպոս Շահ-
նազարեան: Նապօլէօն ||| ընդունում է հայ պատուի-
րակների բողոքը և անմիջապէս հեռագրում սուլթա-
նին, որ սա դադարեցնէ արշաւանքը Զէյթունի դէմ:
Սուլթանը համակերպում է, ասամները կրճառացնելով:

Մինչ հայկական պատւիրակութիւնը աշխատում էր
Պարիզի մէջ՝ Փրանսիական միջամտութիւն առաջ բե-
րելու յօգուտ Զէյթունի, — մի այլ պատւիրակութիւն
դիմում էր Զէյթունից Կ. Պօլիս՝ հրաւիրելու համար
պարտաբարանի և «ազգի» ուշադրութիւնը Զէյթ-
ունի վտանգուած կացութեան վրայ: Պատւիրակների
մուտքը Պօլիս անսովոր ուրախութիւն պատճառեց պոլ-
սահայերին, որոնք արդէն հիացմունքով ու խանդավա-
ռութեամբ լսել էին հայ լեռնցիների բաջագործու-
թիւնները: Ամենէն առաջ շտապեց այցելել պատուի-

*) Anatolio Latino. Gli Armeni e Zeitun II հատ.,
էջ 146:

բակներին բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշլեան,
որ լարւած հետաքրքրութեամբ ականջ դրեց հիւրերին,
լսեց հայկական դիւցազնամարտի հմայիչ մանրամասները
և... միւս օրն իսկ—իր մեղմանուշ լիբիզմը պահ մի
ընդհատեց — յօրինեց իր մարտաշունչ ու սրտայոյզ
»Դու զո՞վ խնդրես“ը... Զէյթունցի մեռնող վիրաւորը
յորդորում է իր մայրիկին՝ լինել արի ու սրտապինդ,
»անլաց աչով դիտել որդու արիւնահոս վերքերը“...

Թիւրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Վարմիր կալակը ցայտեն վերքէս,
Սակայն, մայր իմ, նայէ չորս դին
Արիւնը ուշտ թուրքերն տե՛ս
Հագարներով փռուած գետին.

Վերաւ զանոնք սուր մեր ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Մռնչեցին իբրև վիշապը
Ու մեր վրայ յարձակեցան
Ցնցեց Զէյթուն գլուխն ժայռուտ,
Իւր վհից մէջ թօթափեցան.

Վարմիր ներկաւ ձորք մեր ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ու ծափ զարկին մեր հարց ըսուերք,
Ձի չէ մեռած Հայոց կրակ,
Ու ցնծային այնչափ զոհեր,
Ձի լուծաւ վրէժ յարեան վտակ:

Խնդաղ Մասիս, մայր իմ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Զէյթունցի հերոսը արհամարհում է իր սեփական
մահը, իր վաղանցուկ գոլութիւնը, սիրայօժար զոհելով

այն՝ նւիրական հայրենիքին... Թո՛ղ ես մեռնիմ, Զէյ-
թունը կայ, Զէյթունը միշտ կ'ապրի...

Խա՛ջ մը անկէ վրաս ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն...

Իկան սև օրեր Զէյթունի համար: Լռեց յաղթական
պատերազմի որոտը. պահ մի լռեցին և ուզմի երգերը,
որ դարեր շարունակ հնչել էին այդ խրոխտ բարձունք-
ների վրայ՝ անկախութեան ու ազատութեան հպարտ
չեչաներով: Յոգնե՞լ էր արդեօք դիւցազնական լեռնա-
վայրը անդադրում ու արիւնահեղ կոխներից, թէ՞ մտա-
ծում էր, որ դարաւոր ոսոխը եւրոպական միջամտու-
թեան հաւանականութիւնից սարսափած, անկարող է
այլ ևս գործարել Զէյթունի դէմ ճնշողական բաղա-
քականութիւն. . . Այսպէս թէ այնպէս՝ զէյթունցիք
որոշեցին յօժարակամ անձնատուր լինել, այսինքն ճա-
նաչել թիւրքական իշխանութիւնը, ընդունել իրենց վրայ
նշանակւած թիւրք գայմագամը: Այդ կարճամիտ ու
աղէտաւոր որոշումի գրգիչ եղան և այն երեք հայ
պատւիրակները.— Շահին բէյ, Սարգիս էֆ. Աղաբէկեան
և Իսաուլ էֆէնտի—որ Կուռը հայ կաթօլիկ և լու-
սաւորչական պատրիարքների համաձայնութեամբ, զրկել
էր իբրև միջնորդ զէյթունցիների և սուլթանի կողմ-
վարութեան միջև և որոնք նենգութեամբ ու բոլոր
միջոցներով հարկադրեցին լեռնականներին՝ գլուխ ծռել,
յայտնել իրենց հպատակութիւնը սուլթանին:

1865 թւականին Զէյթունը տեսաւ առաջին անգամը
այդ անարգ հպատակութեան նիւթեղէն էմբլէմները.

1866-ին, Ջէյթուների հանդէպ, արևելեան գետի եզրին կառուցեցին երկու շէնքեր. մինը մզկիթ էր, միւսը՝ անշուք մի պալատ, ուր բնակութիւն հաստատեց թիւրք գայմագամը, սուլթանի պաշտօնական ներկայացուցիչը։ Ներքին վարչութիւնը մնաց ըստ առաջնւոյն հայ իշխանների ձեռքին, բայց Ջէյթուներ արդէն հարկադրւած էր տարեկան սուլթ վճարել օսմանեան կառավարութեան *)։

Սկսեց նոր շրջան, դարձեալ լի խռովութիւններով ու պարբերական ըմբոստացումներով։ Այրբների և խուժադուժ ցեղերի ասպատակութիւններին միացան կենսորոնական կառավարութեան սխաեմատիկ ինարիզներն ու ճնշումները...

ԱՆԴՐԱԿԱՆՍՏՈՒՄՆԵՐԸ:

Հայ իրականութեան տժգոյն ու խղճուկ շրջանակներում ապարդիւն չ'անցաւ Ջէյթուների այդ գեղեցիկ ըմբոստացումը։ Արդիւնքը այն չէր միայն, որ Յաւրոսի հայ քաջերը մի անգամ ևս առնաբար պաշտպանեցին իրենց ներքին իրաւունքներն ու առանձնաշնորհումները հանդէպ մի բարբարոս ու հայատեաց թշնամու, մի անգամ ևս շեշտեցին իրենց ռազմական հռչակը, խանդավառութիւն տարածելով իրենց հեռուոր ցեղակիցների աշխարհում ևս։

*) Aghassi, Zeitoun, depuis les origines jusqu'à l'Insurrection de 1895.

Ո՞վ գիտէ, թէ ինչ մասն ունեցան այդ զէյթուների կռիւները նոյնիսկ այն համեստ Սահմանագրութեան վերջնական նւաճումի մէջ, որ ոմանք տրամագիր են վերագրել մի բանի հայ գործիչների սոսկ խաղաղ, դիւանագիտական ճիգերին...

Յարակոյս չկայ, որ հայկական Մ'օնտէնէգրօի այդ անօրինակ թուիչքը այն ժամանակւայ պայմաններում լուրջ կերպով մտածել տւեց օսմանեան վարիչներին, ցուցահանեց նրանց զարհուրած աչքերի առջև մի նոր, «հայկական վտանգի» ուրուականը և մղեց Բարձրագոյն Դուռը դէպի զիջող, հաշտարար բաղաբակաւնութիւն...

Պալեանների և Ռուսինեանների ճիգերով Սահմանագրութեան սկզբունքը հռչակել էր 1860 թւականին ընդհանուր խանդավառութեան մէջ, հայ մամուլը ջատագովել էր այդ «ազատարար» սկզբունքը, հայ գրողները ցնծութեամբ փառաբանել էին նրա ծանուցման օրը, որպէս պանծալի մի դարագլուխ... Կուժարել էր մի բանի անգամ Ազգային ժողով։ Սակայն շուտով, հայոց ներքին անհամաձայնութիւնները պատրակելով, նոյն վեհանձն և հայրախնամ կառավարութիւնը գաղաբեցրիւ էր նիստերը և հրաւիրել վերաքննելու «Սահմանագրութիւն» մեծագործը անունը կրող կանոնագրութիւնը։ Իրօք ընդմիջու դադարեցնելու նպատակ ունէր՝ շուտափոյթ զղջման արդիւնք սուլթանական այդ հրամանը, որ առաջին հարւածն էր վարդաբոյն յոյսերով օրօրող պօլսահայ հասարակութեանը։ Այդպէս էր... որովհետև հայը միւս մի շարք ազգերի պէս չէր պա-

հանջում իր իրաւունքը զէն ի ձեռին, այլ հայցում էր, աղերսում... Բայց շուտով, 1863-ին, Սահմանադրութիւնը պիտի վերականգնէր: Սի անգամ ևս, հայ կեանքի այդ կարևոր, յուզումնալի շրջանի մէջ, արգարանում էր պատմական փիլիսոփայութեան անագորոյն նշանաբանը. «Առ.ճՎ միայն պիտի նւաճես իրաւունքդ», «ո՛յժն է միայն, որ կառաջնորդէ գէպի իրաւունքի իրականացումը»:

Սահմանափակ էր հայկական կռիւը (Ձէյթունի ապրտամբութիւնը), կղզիացած, հեռու բուն հայրենիքից— ուստի և աժգոյն ու հաշմանդամ էր նոյնիքը Ազգային նորանւաճ, վերականգնւած Սահմանադրութիւնը, արտատուր և անօրմայ — նրա ամբողջ եռութիւնը, կարւած Հայաստանի ժողովրդից, մեկուսացած Բօսֆօրի splendid isolation-ի մէջ, որպէս Ձէյթունը իր հեռուոր և անառիկ բարձունքներում...

Այո՛, ոյժ պէտք էր՝ նոյնիսկ այդքան թուլակազմ, սակաւարին մի ծնունդ լոյս աշխարհ բերելու համար — և այդ ոյժը հանդէս եկաւ ի դէմս հայութեան ամենաընտիր, ամենահերոսական բեկորի— Ձէյթունի:

1862 թ. յուլիս—օգոստոս ամիսներում Ձէյթունը պարզել էր ապստամբութեան դրօշը և նոյն 1862-ի օգոստոսի սկզբում բռնկւում էր Կ. Պօլսում հայ ժողովրդական ցոյցը պատրիարքարանի առջև՝ «կեցցէ՛ Սահմանադրութիւնը» կոչերով... Զուգագրիպութիւնը պատահական չէ: Ձէյթունը բարձրացրել էր ընկճւած բաերը, արիւթեան ու յանդգնութեան խօսքեր էր արուցել սարկի մինչ այն անխօս շրթներին, և ահա

նոյն այդ յիշատակելի օրերում, զէյթունեան գէպերի խանդավառող ազդեցութեան տակ, թիւրքահայ մամուլի մի օրգան — «Ծաղիկը» — որտում էր համարձակ (1862 թ. № 80).

Ձէ՛, չէ՛, ալ մեր համբերութիւնը հատու: Համբերութիւնն ու հլութիւնը չունին վարձք այս աշխարհիս վրայ. յանդգնութեամբ ու անվեհերութեամբ պարտ ենք կորզել դանդաղութեան, շարակամութեան մեզ զլացածր: Մինչև որ չի բողբենք, մինչև որ չբստիպենք և ի հարկին մեր բազուկը...

Եւ ցոյցը կազմակերպւում է: Օգոստոս 1-ին 1862 թ. խուռներամ բազմութիւնը հաւաքւում է պատրիարքարանի առջև և պահանջում է, որ Սահմանադրութիւնը վերածւի իրականութեան...

Եւ շատ շ'անցած, 1863-ի մարտի 17-ին, թիւրք կառավարութիւնը յատուկ ֆիրմանով վաւերացնում է հայ Ազգային Սահմանադրութիւնը, մացնելով իր կողմից մի քանի փոփոխութիւններ: Եւ այնուհետեւ սկսւում է, վերջապէս, հայ երիտասարդ մտաւորականութեան վաղուց փափագած կրթական ու ազգաշահ գործունէութեան շրջանը:

Սահմանադրութիւնը հաստատուց: Իր դրական և բացասական, իր լուսաւոր և ստւերային կողմերով: Անտարակոյս, ինքնին մեծ, նշանակալի մի իրողութիւն էր կուլտուրական այդ նւաճումը հայոց կեանքում: Հայը միակ ժողովուրդն էր թիւրքիոյ մէջ, որ սկսում էր ապրել իր ներքին—թէև թերի, պակասաւոր—սահմանադրական կեանքով, գծւած դեմօկրատիկ, ռամկավարական ուղղութեամբ, մինչդեռ յոյն, բուլգար և այլ ժողովուրդները

կառավարում էին ազնւագետական դրութեամբ: Եւ այդ հանգամանքն էր, որ առիթ էր ապիս հռչակաւոր գիտնական-տուրիստ շաքստ հառուգէնին յայտարարելու՝ որ հայերը Թիւրքիոյ միակ բրիտանաց ժողովուրդն են, որ ընդունակ են սօցիալական, ընկերային կազմակերպութեան:

Մի նշանաւոր և գնահատելի սկզբնաւորութիւն էր այդ ներքին կուլտուրական ինքնօրինութիւնը (*autonomie culturelle*), առաջագիծութեան մի ուժեղ խթան, շնայած իր բազմակողմանի թերութիւններին և ամենից առաջ ընտրական արատաւոր սխտեմին, որ գրեթէ իսպառ ժխտում է հայկական գաւառի իրաւունքը ի նպաստ մայրաքաղաքի *):

Թողնենք, որ խօսէ այդ կարևոր երևոյթի մասին

*) Քննադատութեան հարւածները այն ժամանակ ևս տեղում էին այդ շանհեթեթ սխտեմի դէմ: Իզմիլի «Արշալոյս Արարատեան»-ի մի քննադատը պարզում էր քանի մի տարրական ճշմարտութիւններ. Կ. Պօլսոյ կեդրոնական ժողովի կազմը, ասում էր նա, օրինաւորապէս ընդհանուր չէ, վասն զի Պօլիս բնակող 100,000 հայը կընտրեն 160 երեսփոխան, իսկ մնայեալ մէկ միլիօն 900,000 ժողովուրդը—60 երեսփոխան: Եւ այդ ժողովը կը վճռէ ազգային ընդհանրութեանը վերաբերեալ խնդիրներ...

«Մասիս» պատասխանում է. ի՞նչ արած... «Պօլիսը պէտք է ունենայ նախիջխանութիւն, քանի որ նախ՝ Տէրութեան մայրաքաղաք է, ապա ազգային վարչութեան կեդրոն է, պատրիարքը հոն է, ազգին երևելիայ մեծ մասը հոն է, ազգին ամեն յառաջադէմ և կրթուեալ մասը՝ հոն, մէկ խօսքով ազգին մեծ զօրութիւնը հոն է»: («Մասիս», 5 յուլիս 1861):

վաթսունական թւականների մի հայ կրթւած անձնաւորութիւն, իշխ. Մկրտիչ Տատեան.

Դա մի խոշոր անցք էր՝ թէ հայերի համար և թէ ընդհանրապէս Արևելքի մէջ—գրում էր նա Փրանսերէն իր մի յօդւածում — դա մի անլուր բան էր (*un fait inouï*). Իրաւ է, այդ Սահմանադրութիւնը կը կանոնաւորէր, կը գահացներ 3—4 միլիօն մարդկանց լոկ մասնաւոր, տնային շահերը, բայց նա մի պատիւ էր հայ ազգի համար, որը դրանով օրինակ էր դառնում թիւրք կայսրութեան միւս քրիստոնեայ ազգերի համար և որը ընդունակ էր տնօրինել իր ներքին կառավարութիւնը՝ համաձայն բնական սոցալութեան և իրաւունքի *):...

Մի առ մի չպիտի բնենք «Սահմանադրութեան» պարունակութիւնը: Դա մի սեսակ «հայկական իրաւունքների յայտարարութիւն» է (*Déclaration des droits*) 60-ական թւականներին, համեստ, սահմանափակ ծաւալով:

Ընդհանուր սկզբունքների յայտարարութեան մէջ ծանրակշիռ մի իրողութիւն է այն հանգամանքը՝ որ հայ ազգը Թիւրքիոյ մէջ ձեռք էր բերում իրաւունք՝ հիմնելու և կատարելագործելու իր սեփական դպրոցները, ինքնագլուխ վարելու իր կրթական գործը: Հաճութեամբ ենք արձանագրում վաթսունական թւականների արևելեան մառախլապատ աշխարհում հռչակած Սահմանադրութեան այն սկզբունքը, որ թելադրում է՝ աւալ ձրիաբար ընդհանուր կրթութեան բարիքները երկու սեռի երեխաներին, առանց խարութեան դասակարգի և հասարակական դիրքի: Այդտեղ է, որ երևան է գալիս

*) *La Société Arménienne Contemporaine. Revue des Deux Mondes, Juin 1867.*

Սոսմանադրութեան նախագրողիչ հայ գործիչների — Ռուսինեանների և Օսեանների — ուսովալարական ոգին:

Եւ յգ մեծ սկզբունքը, կարելի է ասել, Սոսմանադրութեան ծուծն է, նրա մեծագոյն, արդիւնաւորագոյն պատուը: Կարոցն է ազգային իմացական կառուցւածքի հիմնասրունը: Կարոցն է մտաւոր վերածնութեան խոշորագոյն ազդակը:

Եւ Սոսմանադրութիւնը առանձնապէս զարկ տւեց դպրոցին: Մի տենդային և շինարար գործունէութիւնս Հայ մարդը ցոյց տւեց այն օրերից ի վեր, որ իր մի շարք հիմնական արտանների հետ՝ ունի անվիճելի մի առաքինութիւն — գնահատել ուսումն ու գիտութիւնը, գնահատել դպրոցն ու առաջադիմութիւնը: Հիմնեցին ընկերութիւններ, գումարեցին դպրոցական, գրամական ֆօնդեր, թափ առաւ մասնաւոր բարեգործութիւնը, որ մինչև օրս էլ մեր հանրային գործունէութեան ախրապետող գծերից մինն է:

Իշխան Տատեան այսպէս է նկարագրում այդ կրթական և հայրենասիրական ընկերութիւններից մինը — «Անձնանէր» ընկերութիւնը.

Այդ բոլոր ընկերութիւնների մէջ ամենէն հայրենասիրականը Անձնանէրն է, հիմնւած մասնաւոր անհատների ջանքերով, որոնց նպատակն էր՝ տարածել կրթութիւնն ու լուսավորութիւնը մանաւանդ ժողովրդի մէջ: Աջողութիւնը սպասածից շատ մեծ եղաւ: Մշակներ, բեռնակիրհամայններ, մէկ շարքիւնայ յոյճեցուցիչ աշխատանքից յետոյ, գալիս էին կիրակիները՝ դաս լսելու եւ այսօր չգիտէք որով հիանալ, այն անձնագոհութեամբ, որ ցոյց են տալիս զանազան պաշտօնների բաղաբաղիներ, զհաբերելով իրենց լուծան ու ժամանակը կրթութեան գործին, թէ՛ այն ջեր-

մեռանդութեամբ, որ ցոյց է տալիս ժողովուրդը, ձգտելով օգտուել դասերից: Մշակները սովորում են կարգալի, դրել, սովորում են թւարանութիւն աշխարհագրութիւն, Ֆրանսերէն... Ընկերութեան ազդեցութիւնը ճառագայթում է մայրաքաղաքից դէպի դաւանն եւ: Այդ դպրոցի մէջ կազմակերպւած աշխատասէր վարժապետներ վերագառնում են ամեն օր իրենց գիւղը, տանելով այնտեղ իրենց ձեռք բերած գիտելիքները *)...

Թափ առան դպրոցի հետ և նիթական ու իմացական բաղաբաղութեան ուրիշ ձեւեր՝ ծարտարապետութիւն, գեղարւեստ, գրականութիւն, մամուլ, թատրոն: Հայ թերթերը մեծացրին իրենց հրատարակութեան շրջանակները. գաղափարների բաղխումը, բանակուիւր առաջ գնաց տւելի ազատ մթնոլորտի մէջ, ախրեց բոլոր ասպարէզներում մի անսովոր կենդանութիւն. որ ստիպում էր իշխան Տատեանին բացականչել ոգևորութեամբ, նոյն Ֆրանսիական հանդէսի մէջ.

— Non, l'Orient n'est pas condamné à une irrémédiable léthargie, à une éternelle immobilité! (Ոչ, Արևելքը չի դատապարտւած անդարմանելի մահամրափի, յաւիտենական անշարժութեան):

Պատրանքը ուժեղ էր 60-ական թւականների հայ գործիչների մէջ. նրանք դժուար կարող էին նախատեսել, որ շուտով պիտի վրայ հասնէր ծանր, դժոխային մի շրջան, համաշխարհային պատմութեան մէջ չտեսնւած բռնակալութեան շրջանը, ուր թագուկիր Չարսագործը, կատաղած հայկական խնդրի սպառնական

*) La Société Arménienne Contemporaine, La Revue des Deux Mondes, 1867.

Թատերամուտից և խրախուսած հայ տարրի անսահման կրաւորականութիւնից, նրա Ֆիզիկական դիմադրութեան գրեթէ կատարեալ անդամայուծումից՝ պիտի յետ մղէր հայկական և արևելեան պրոգրէսի անիւր մի բանի տասնեակ տարիներով, պիտի ջնջէր մասաւոր ու անտեսական առաջադիմութեան բոլոր ազդակները...

Պատրանք — այո, վաթսուներկան թուականների այն խանդավառ յոյսերը, Սահմանադրութեան ներշնչած ազգայնաշէն ծրագիրները... Արդէն իսկ թիւրքահայ գաւառի մէջ շատ թոյլ էր զգացւում Կ. Պոլսոյ ուրախութիւնների և ծափերի արձագանքը, գաւառի համար Սահմանադրութիւնը մնում էր գրեթէ մեռած տառ։ Եւ այդ հանգամանքն էր, որ գրգռում էր շրջահայեաց և սկստիկ Խրիմեանին՝ գրելու իր «Արծուի» մէջ այս պատկերաւոր ու հեզնախառն գարձաւորը.

Ահա Սահմանադրութեան տախտակները պատրաստ. այլ Մովսէս պէտք է, որ զանոնք Պոլսոյ կեդրոնական լեռնէն իջուցանէ Հայաստանի դաւառները...

Սկզբունքների յայտարարումը բաւական չէր. պէտք էին մարդիկ, պէտք էին գործադրողներ:

Վերջապէս — և այդ է էականն ու եղբրականը — Հայաստանի բնակիչը սիրա չունէր պոլսեցու պէս ցնծալ ու խրախուսել Սահմանադրութեան առթիւ: Հոյ գաւառը այնքան էր ձգված, խորտակւած գերութեան ռեժիմի տակ, հայաստանցին այնքան էր տառապում քրդի, սովի, տուրքի ու թշուառութեան ճիրաններում, որ Սահմանադրութեան հռչակած բարիքները մի շնչի՛ն պալլիտատիվ էին միայն, անզօր դարմանելու խոր, արիւնահոս վերքերը:

Խրիմեան իրաւունք ունէր: «Արծուի վասպուրականի» իրաւունք ունէր շեշտելու Սահմանադրութեան սկզբունքի ամուլութիւնը Հայաստանի համար: Այնտեղ ազգը հալոււմ, մաշոււմ էր օրէցօր մի գազան ու ազրուկ պաշտօնէութեան ձեռքում. այնտեղ տիրում էր — Սրուանձտեանի արտայայտութեամբ — միմիայն լաց ու հառաչանք, և դպրոցը չէր, որ պիտի վերջ տար այդ զարհուրելի և անյոյս թշուառութեան:

Թիւրքաց աղուէսաբարոյ կառավարութիւնը լաւ գիտէր այդ: Եւ պոլսական Հայ Ազգային Սահմանադրութիւնը նրա ձեռքում դիվերսիօնի մի գերազանց գործիք էր (*diversion*. շեղում, ուշադարձութիւն): Նա միջոց էր խլացնելու հայկական դժգոհութեան և բողոքի ձայները, ուղղելու մտքերը յեղափոխական վտանգաւոր ուղղութիւնից դէպի այլ ճանապարհ, դէպի լէգալ, օրինական, կուլտուրական աշխատանք: Այդ խարդախ քաղաքականութիւնը մի դիւալին սխտեմ էր. մի ձեռքով քաջալերել հայկական մտաւորականութիւնը, տալ նրան Կ. Պոլսում մի տեսակ պարլամենտ, համեմատաբար ազատ խօսք ու մամուլ, միւս ձեռքով բնաջինջ անել աստիճանաբար գաւառական հայութիւնը, աւերել բուն Հայաստանը, առանց յարուցանելու — ինչպէս միւս, ճնշւած, սլավօն ցեղերի մէջ — բողոքի ու ըմբոստացման շանթեր...

Եւ օսմանեան մակեալվելիզմը պսակեց աջողութեամբ նա կատարեց «դիվերսիօնը» արագօրէն, վարպետօրէն: Սահմանադրութիւն ու դպրոցներ պարգևելով, ներքին մի բանի մակերեսային առանձնաշնորհումներ ու ազատութիւններ շուալելով հանդերձ... նա դիւրութեամբ

առաջ տարաւ բնաջնջման քաղաքականութիւնը: Թերևս հոտառութեամբ նախազգացել, նախատեսել էր նա՝ եւրոպական թիւրքիոյ գալիք անխուսափելի անդամահատումը «գեալուրների» ձեռքով և կամեցել էր միջոցներ ձեռք առնել—արմատական, դրսևհօնեան միջոցներ — կանխելու գէթ Ասիական թիւրքիոյ անդամատումը, մարելու բողոքի ու զրժգոհութեան օձախները, «ջնջելով» հրապարակից դժգոհ կամ ապագայում անխուսափելիորէն դժգոհանալիք տարրերը... Սրբան հրահանգիչ է դառնում այդ հիպոթէզը ժամանակակից կացութեան պարագաների հանգէպ, երբ Օսմանի ժառանգները զրկւելով եւրոպական լայնածաւալ հողերից, յետ են մղոււմ, դէպի Ասիա և երբ նոյնիպէ այդ ասիական թիւրքիայի ամբողջութիւնը դրւած է մի զարհուրելի հարցական նշանի տակ, շնորհիւ զլիաւորապէս «հայոց հարցի» մշտադաւար ու արիւնոտ գոյութեան...

Դժգոհութիւնն ու բողոքը, հարկաւ, չմարեցին հայ տարրի մէջ, բայց նրանք շահ ուշ արծարծւեցին ու բռնկւեցին... երբ արդէն թալանի և ճնշման ուժով հասել էր իր զարգացման գագաթնակէտին, բամբկ էր ազգի — հայ աշխատաւոր զանգւածների — կենսական հիւթերը:

Այդտեղ է Ազգային Սահմանադրութեան պատմական վրիպումը, նրա ստուերոտ ու աղէտաւոր կողմը:

Նա ուժգին մղում տւեց հայ մտաւոր վերածնութեան, բայց արհամարհեց, բթացրեց, ժանգի մասնեց առանց այն էլ ոչ շատ փայլուն այն զէնքերը, որոնցով

ամեն մի ազգ հասնում է քաղաքական ու քաղաքացիական վերածնութեան:

Նա փնտրեց հայ ազգի փրկութիւնը դպրոցի, եկեղեցու, վանքերի, մամուլի, թատրոնի, հոետորական ճոռոմ ու պարապ մարզանքների մէջ և անուղղակի քաջալերեց հայութեան առանց այն էլ կրաւորական բնազդները, որով և մասամբ պատրաստեց նպաստաւոր գետինը ապագայ զանգւածային ջարդերի համար:

Նա հետևեց Ռուսինեանների ուլտրա-խաղաղասէր ու օրինապաշտ հրահանգներին և դրժեց առնական ինքնապաշտպանութեան այն փրկարար խորհուրդները, որ հնչում էին Վարագի արծուաքնակ մենաստանից...

Նա հաւատաց ու ապաւինեց թիւրք խարդախ քաղաքագէտներին և չունեցաւ տարրական կանխատեսութիւն հասկնալու, որ հայ քաղաքական հարցն ևս դրւելու է վաղ թէ ուշ, անպայման անհրժեշտութեամբ, որ օսմանեան կառավարութիւնը պատասխանելու է իր աւանդական ու նւիրական ձեւերով, իր բարբարոս ճնշումներով—ինչպէս եղել էր Յունաստանում, Պրէտէում, բալկանեան այլ երկրներում և հեռաւոր Լիբանանում—որ, հետևապէս, անհրաժեշտ է ուսման ու կրթութեան հետ փորը ինչ նաև առնական շունչ ու ոգի ներշնչել ստրկացած զանգւածներին և գէթ մասամբ պատրաստել նրանց՝ դիմագրելու ապագայում պայթելիք ազգայնաջինջ փոթորիկներին...

Եւ եղաւ անխուսափելին: Հայ քաղաքական խնդիրը հրապարակ դրւեց 1878-ին, երբ տակաւին սոււրն անգամ չկար հայ յեղափոխական կուսակցութեանց և

այդ սարսափելի թւականից յետոյ — Ջէյմս Բրայսի
հեղինակուոր վկայութեամբ — սուլթանն արգէն յղացաւ
հայկական զանգւածային ջարդերի ծրագիրը...

Չափազանց հրահանգիչ է կարգաւ տասնեակ տարի-
ներ յետոյ լոյս տեսած քննադատական ակնարկները Սահ-
մանադրութեան և նրա հետ կապած ազգային զուս-
տօրնական քաղաքականութեան մասին: Այդտեղ կը
հանդիպէք — նոյնիսկ թիւրքահայ մասնողների շարքե-
րում — տարբեր, հակամարտ տեսակետների Մինչդեռ,
օրինակ, պ. Հրանտ Ասատուր, հրապարակային իր մի
տեսնախօսութեան մէջ, անվերապահ, փոքր ինչ միամիտ
խանդավառութեամբ ջատագովում էր Սահմանադրու-
թիւնը, որի «ծրագրող և գործադրող վեհագի յեղա-
փոխականները Միռապօի թոռներն էին» և կը պաշտէին
«երեք սիրտկաթ ու լուսագիղ բոյրերը... Ազատութիւն,
Հաւասարութիւն և Եղբայրութիւն»... մինչդեռ պ. Հ.
Ասատուր հրճանքի ու գոհունակութեան խօսքեր միայն
ուշի այդ Ազգային Սահմանադրութեան մասին, որը
նրա կարծիքով «վերջ աւեց թշուառ վիճակին» *), — մի
ուրիշ հայ մտաւորական, վեղարուորների դասակարգից,
գրեթէ նոյն ժամանակները, 70-ական թւականների
վերջերին, հրատարակեց Կ. Պօլսի «Փոռնջ»-ի մէջ մի
ցաւոտ ու մեղամաղձոտ գրութիւն, համարեա մի ամ-
բաստանագիր, որի մէջ ցուում է թիւրքահայոց սահ-

*) Հրանտ Ասատուր. «Սահմանադրութիւն և Հայ ժողո-
վուրդն», Ճառ, ապագր. 1879-ին, Կ. Պօլսում: Չակերտների
մէջ հեղինակի խօսքերն են:

մանադրածին բաղաբականութեան յարուցած դառն,
անողոք յուսախաբութիւնը և մասնանշում է այն
ժամանակի և բողոք ժամանակների մեր հիմ-
նական ու մահացու վէրքը, — մարտական պէտքերի
լիակատար զանցառումը, Փիզիկական ինքնա-
պաշտպանութեան լիակատար արհամարհումը:
Ինչ որ չի տեսնում Ֆրանսիական գաղափարներով
կրթւած ու վառւած պօլսահայ գրագետը — տեսնում է
և սքանչելիօրէն ըմբռնում մի պարզ, համեստ վարդա-
պետ, որ Բերլինեան Վեհագիղի Նախօրեակին, 61-րդ
մեռելածին յօդւածը հռչակելուց երկու ամիս առաջ,
յուսահատ շեշտերով ողբում է արգէն դիմադէ շե-
րեփը», որով օսմանեան հայութիւնը գնում էր սա-
նալու միջազգային արեօպագից իր բաժին — հարիսան...

Ըմբոստ վեղարուորի այդ կոչ-յօդւածը այսօր ևս
տակաւին պահպանում է իր տխուր այժմեութիւնը.
մենք այն բերում ենք բաղաձայնար:

... Ո՛րչափ անհուն տարբերութիւն մեր և պուլղարաց
մէջ. զի մեր տւած զոհերը ազիտութեան զոհեր են, ան-
տարբերութեան զոհեր, հայրենաստեցութեան զոհեր...

Պօլսոյ դաղթական Հայն երբ տեսնէ. թէ իւր մեռելոց
գերեզմանատուն վտանգի մէջ է, իսկայն կը յուզուի... և
ամենքը մէկ շնչով միաբանելով, ամեն ճիգ կը թափեն իւ-
րեանց արդար իրաւունքը պաշտպանելու: Ինչո՞ւ արդ այս-
պէս չի շարժիր Հայն, երբ նոյնիսկ կենդանեաց գերեզմա-
նատուները վտանգի մէջ են... Ի՞նչն իսկ հայրենի հողին
վրայ... Մի՞թէ՞ Հայաստան այժմ չէ կենդանեաց գերեզմա-
նատուն...

Սակայն, Հայոց ազգ... սովորած է ոտկութեան... Իւր
անմիտ երկչոտութիւն մինչև այն աստիճան հասած է, որ
իւր թշուառ վիճակին վրայ խռովելու նշան անգամ չի
յայտնէր... Երբեմն իր յոյսը Սահմանադրութեան վրայ

գրած էր... Այսօր ալ իւր բոլոր ակնկալութեանց կեդրոն
բրած է դպրոցները և կրթական, որ դպրոցներէն գտնէ ազա-
տութիւն: Բայց միթէ՞ այսքան ժամանակներէ հետէ ազգը
դպրոց ունեցած չէր, որ շի կարաց ազատութիւն և մի ի ի է
գլխաւոր ուղի մէջ կը սորվի հայր արիւն-
ն ու շատ քիւրդի թուր ջախջախեալ...
Ի՞նչ պիտի ըլլայ ազգն... Ապիւ գուցէ իրպատ անհե-
տանամբ...

Եւ յօդածի հեղինակը ցոյց է առիտ փրկութեան
միակ ճանապարհը՝ Նա հրահանգում է՝

«Կաշտպանել ազգութիւնը... ինչ միջոցով ալ ըլլայ, եթէ
բարոյական ազդեցութեամբ, և թէ բաց ու թէ աստիճանի,
եթէ արիւն հեղու թե ամբ և և թէ յե-
ղատիս թե ամբ *), միայն թէ հայրենիք փրկի...»

Հայր կրնայ բազմակիթ, ճարտար, գործունեայ, բուս-
ւորեալ և սահմանազրական ազգ մ'եղած ըլլալ, բայց...
կրնա՞յ ասանց ամառելու հաստատել
թէ հայ ազգին կեանքն ապահովեալ է...

Արդ, բանի որ Ազգին հիւանդութիւնը բարոյական է,
մեր ձեռքն է ապա բուռն ճիգ մ'ընելով և
բնդ հանուր ցնցում մը տալով, ազա-
տութիւն մեր այս հիւանդ վիճակէն, որ կրնայ մահաբեր ըլլալ,
եթէ մեր անհոգութիւնը շարունակենք

Տաճկաստանի բարիան (patria) եղող հաւատարիմ հայր...
ո՞չ ապաքէն վայելց իւր հաւատարմութեան պատգամ, իւր
եկեղեցիները պղծուեցան, իւր կոյսերն խայտառակուեան,
ծեր և տղայ, այր և կին մէկ սրով հաւատար ինկան, փու-
շերն ու եղէգներն եղան օրօրան մանկանց, տունները կարտսի
և գրամ շի մնաց, շտեմարանները պարպուեցան, մտորներն
ու գոմերը դատարկեցան, միայն ահագին սով մը մնաց այն
ահագին աղետները կատարեալ գործելու. անշուշտ մտքն
այդ սովին լուրն ալ կ'առնեմք: Թող հայերը տակաւին ան-
հոգ նստելով, անտարբեր մնան իրեանց համարին եղբայրը
աղէտից և ողբոց և սպասեն, որ բրիտանական կամ Հիւսի-
սային երկրէն այցելութիւն ըլլայ իրենց: Իւր անձին

*) Ընդգծումները մերն են:

չ' ուղարկողն ինչպէ՞ս կարելի է ուրիշներէն
ողորմութիւն գտնէ. և ենթագրելով, թէ կը գտնէ, ի՞նչ
շահ... Արնայ այսօր կամ վաղիւ հարստահարութիւններէ
փրկուի, կրնայ այսօրուքն աւելի անգործ վիճակ մ'ունե-
նալ, բայց կրնա՞յ հայրենիք ունենալ
կրնա՞յ իր ցրիւ վիճակը կեդրոնացնել, կրնա՞յ ազգային միու-
թիւն մը կազմակերպել, կրնա՞յ իր ապագայ գոյութիւնն
երաշխատել և ինքնօրէնութիւն մը ձեռք բերել: Ահաւա-
սիկ ասոնք են... այն կէտերը, որոնք պէտք է հայոց բաղա-
րականութեան գերագոյն խորհրդանիշն ըլլան, եթէ կուզեն
ազգաց շարքին մէջ կարեորութիւն ստանալ *)...

Մեկնութիւնները աւելորդ են: 1878 թւականի տեղ՝
կարող էք դնել այդ յօդածի ճակատին 1913 թ. —
առանց որեւէ անպատեհութեան ծարիրները և տասնեակ
տարիները սահում, անցնում են արեւելեան երկնակա-
մարից, աշխարհը յեղաշրջում է, ժողովուրդները մին
միւսի ետեկից, պայքարով, ըմբոսացումով, խորտակում
են իրենց վրայ ծանրացած շղթաները, իսկ հայկական
աշխարհի մէջ, թիւրքահայոց գազը ու խեղդուկ մթնո-
լորտում՝ այդ բառերն ու յորդորները, այդ յուսահատ
ու մոլեգին կոչումները դէպի առողջ ու բանաւոր ազ-
գային ինքնապաշտպանութիւն, դէպի զգաստ ու շրջա-
հայեաց ազգային բաղաբականութիւն՝ պահպանում են
յաւերժօրէն իրենց ոյժն ու թարմութիւնը...

*) Այս ուշագրաւ յորդորականը հրատարակած է խմբա-
գրականի տեղ Կ. Պօլսի «Փուշ»-ի մէջ, 1878 թ. ապրիլ
29-ին: Ստորագրած է Եղիշէ վարդապետ Այվազեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԺԱԳՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԷՆ

Խրիմեանի չուն Մեոյ դաւսից դէպի Պոլիս. — Ժողովրդական «կեցցե-
 ներ» եւ յոյսեր. — Խրիմեան-պատերազմ եւ զաւառական հարստանա-
 բուքիւնների խնդիրք. — «Ժողովրդական հանրագրութիւն» — երկիւղ եւ
 Լաուս Ազգային Ժողովի մէջ. — Էթէնիսիների եւ ջօզերի ինքնագր. —
 Հայաստանցու զանգուսներ Ազգային Խորհրդանում. — Կորովի
 հաւեր. — 1870-ի Տեղեկագիրք. — Չարիճներ եւ դարձաններ. — Տուրքեր
 Թիւրքիոյ մէջ. — 1871-ի հոկտեմբերեան պատմական նիստք. — ըմբոս յայ-
 տարաւորութիւններ. — Ս. Փափազեան եւ Գր. Օսեան. — Ս. Փափազեան եւ
 Մարկոս Աղաբէզեան. — Գաղափարական փոխանակումներն եւ երկչոտ
 մեծամասնութիւն. — Հայկական հարցը զարնում է աղայական չկա-
 մութեան. — Անկերջ ձգձգումներ. — Խրիմեանի յուսանաւ մեւսերք. —
 Ըմբոս վեղարաւորներ. — Գաղափարական Ժողովը ընդդէմ ժողովրդական
 պատերազմի. — Խրիմեանի փորձերը Սահմանադրութիւնը վերանկենդանու-
 Յիասկո եւ հրաժարական. — «Երբայս բարեա՛ւ, Արմուրի».

Դեռ 1865-ին կազմուած «Տեղեկագիրք Բաղարական
 Ժողովոյ Կեդր. վարչութեան առ Ազգային Ընդհանուր
 Ժողով» փաստագրի մէջ կարգում ենք «Հարստահա-
 բութիւնք» խորագրի տակ.

Չանազան Հարստահարութեանց Լեթական են գլխաւո-
 րապէս Չարսանճախ, Քղի, Բաղէշ, Տիգրանակերտ, Վան,
 Մուշ, Մարաշ, Խարբերդ, Հաճին կայլն:

Չարսանճախի Հայոց բողոքները իսկզբան Չեր Տէր է-
 պէ կի ՚ն եր ու գործած անիրաւութեանց եւ արքունի
 սրոյց անիրաւ բաշխման վրայ էին... Մէկ կողմէն Չարսան-
 ճախի Հայր կր պնդէ, թէ իր վարած արտոր
 եւ այգին եւ նստած տունն ու խանութր իրն է, միս
 կողմէն Տէր էպէ կի ՚ն ի վաղուց անախ հողատէր զը-
 նուերուն արտօնութեան վրայ խոխտալով, արա, ալ յի,
 տունն եւ խանութ կր գրաւէ եւ կամ հարկի
 տակ կր ձգէ:

Բաղէշ, ստեպ բրդական արշաւախմբին ենթակայ ըլլալով,
 Ժողովուրդը միշտ ահ ու գողի մէջ եւ անձնական ապահա-
 վութեանց զուրկ է...

Տիգրանակերտ կր տագնապէր Ֆէթիմահ պէկ անուն բր-
 նաւորին ձեռքէն: Վանայ Ժողովուրդը Թիմուրիան պէկերուն
 լարած գաղտնի դարաններէն եւ ասոնց արտօման վճար
 համար անգագար կր թախանձէին...

Եւ միշտ Բ. Գուռը այդ պէկերու դէմ եղած ամ-
 բաստանեալների բնութիւնը կը յանձնէր տեղական
 իշխանութիւններին... այսինքն պարզապէս կը բնացնէր
 գործը:

Վրացոյց (երեխի շէրքէզների. Մ. Վ.) գողթականութեա-
 պատճառաւ... այլ եւ այլ հայաբնակ բաղարներէն անիրա-
 ւութեանց տեսարան եղած են Երզնկայ, Բինկեան, Չմառա,
 Եւգսկիա, Բարու կայլն:

Ապա նոյն փաստագրի մի բանի հակիրճ տողերի մէջ
 խտացրեւծ են անթիւ բողոքները տուրքերի ծանրո-
 թեան եւ կատարուող ապօրինութիւնների ու կամայա-
 կանութիւնների մասին...

Հայկական հարցը վախվեխելով ներս էր սահում
 Ազգային Ժողովի մէջ, օգտուելով այն հանգամանքից, որ
 օսմանեան կառավարութիւնը Սահմանադրութեան մի
 յօդուածով անուղղակի թոյլատրում էր հայ համայնքին:

ներկայացնել փանդատներ իր կրած հարստահարութիւնների առիթով:

Բայց հայոց հարստահարութիւնների ու պահանջների խնդիրը որոշակի հրապարակ գրեց և արծարծեց միայն այն օրից, երբ պատրիարքական գահ բարձրացաւ Խրիմեան (1869 թ.):

Ժողովրդական մեծ քարոզչի անակնկալ թատերամուտը — իր հօտի գերագոյն ղեկավարի պաշտօնով — ինքնին արդէն մի ահագին սէնսասիօն էր: Ժողովուրդը ոգևորւած կեցցէներով ճամբեց նրան Տարօնից — «Հայրի՛կ մեզի չմոռնաս» գոչելով — նոյն ժողովուրդը գրկաբաց և անխառն ցնծութեամբ դիմաւորեց իր Հայրիկին սուրբաբանիստ մայրաքաղաքում... «Կեցցէ՛ Խրիմեան» — հնչում էր անդադար գաւառական հազարաւոր մշակների կողորդներից, սրտերը տրոփում էին, յոյսերը թեւաւորում — և ժողովրդական խանդավառ միամտութիւնը երազում էր, թէ ահա հասել է վայրկեանը, երբ ազգի սիրեցեալ հովիւը, նրա վշտերի ու գանգատների ամենահարազատ թարգմանը, պատրիարքական աթոռից պիտի լսեցնէ կառավարութեան ազգի ձայնը, պիտի պահանջէ ու սաանայ բարենորոգումներ, դարմաններ...

«Վասպուրականի Արծիւը» Պօլիս գաղով, երկու հիմնական մտահոգութիւն ցոյց տւեց սկզբից ի վեր.

1. Վերաքննել Սահմանադրութիւնը, լայնացնել, յարմարեցնել այն գաւառական պահանջներին, վերակազմել հիմնականապէս այդ դժբախտ մեքենան, այդ «բառակուսի անիւը», որ չէր կարող առաջ սահել, այլ շա-

րունակ ճարձատում էր, հրաւիրելով պարբերաբար թշնամու ուշադրութիւնը, որ արդէն երկու անգամ տաս տարւայ ընթացքում մեկնել էր իր բիրտ թաթը և խափանել:

2. Բայց մանաւանդ ժողովրդական պատրիարքի անդիմադրելի տենչն էր՝ ուղղել Պօլսի հայութեան, Ազգային ժողովի և կենտրոնական կառավարութեան աչքերը դէպի Հայաստան:

Ուշագրաւ է արդէն պատրիարքութեան առաջին ակար, որ եղբրակատակի բնոյթ ստացաւ:

Իս ուխտ կրնեմ ազգին ծառայելու — գիմում է Խրիմեան Ազգային ժողովին — դուք ալ հետս պէտք է ուխտ բնէք... Մշոյ դաշտի և Վանայ ժողովուրդը իր վիճակի թեթեւաշուք կրսպատէ, ես խոստացած եմ նրան, պէտք է աշխատիք...

Եւանը, անհաճոյ տեսարան: Սկեպտիկ պատրիարքը, որ շատ էլ, ըստ երևոյթին, հաւատ չունէր Ազգային ժողովի մեծամասնութեան ժողովրդասէր տրամադրութեան վրայ, կրկնում է իր պահանջը. «ուխտեցէք գործակցել ինձ»... Իսկ ժողովից առարկում են, թէ Սահմանադրութեան մէջ չկայ օրէնք, որ թելադրէր Ազգային ժողովի անդամներին ևս ուխտ անել:

Իմ վրաս Պօլսոյ պատրիարքի պէս մի նայիք. ես Հայաստանի ցաւոց պատկերն եմ: Զք գիտեմ, թէ իմ նախորդքս ի՞նչ կերպով միջնորդած են Տէրութեան՝ այս ցաւոց զարմանք խնդրելու համար, բայց ես ազգու միջնորդութիւն մը պիտի բնեմ...

Եւ ահա շուտով սկսում են թափուիլ Ազգային ժողովի հասցէին այսպէս կոչւած «ժողովրդական հանրագրութիւնները»: Սահմանադրութիւնը հիմնւելուց ի վեր՝

առաջին անգամն էր, որ հրապարակ էր գալիս այդ նոր տարրը, «ժողովրդական հանրագրութիւնքը», որ կազմուում էին գլխաւորապէս պօլսաբնակ հայաստանցի մշակների ձեռքով (գուցէ յաճախ նոյն խրիմեանի թեւաբուրումներով), նկարագրում էին երկրի մէջ կատարուող հարստահարութիւնները և աղիողորմ շեշտերով դարձան էին խնդրում:

Ալէկոնուում է Ազգային ժողովը: Կողմ է ընկնում անգամներից շատերի մէջ: Խրիմեան պահանջում է, որ ժողովրդական հանրագրութիւնները կարգացնին Ազգային խորհրդարանում: Մի մասը հակառակում է, դիտելով այդ «վտանգաւոր» թղթերի ընթացումը, իբրև բացարձակ ըմբոստացում տերութեան դէմ:

Եւ սկսում է խրիմեանի պատրիարքութեան ծանօթ քօսուր: Էֆէնիները բոլոր են անում Ազգային ժողովն ու պատրիարքը, մեծամասնութիւն յաճախ չի լինում և նիստերը չեն կայանում: Գառնացած և յուսահատ՝ խրիմեան մի օր բացականչում է.

Ձիս նաւապետ կոչեցիք ազգային ալէկոնեալ նաւուն և նաւն ինձ յանձնելէ ետև ամենքնից ալ փախչելով, զիս միայնակ թողուցիք. կը նայեմ չորս կողմս, բայց նաւաստի մը չեմ գտներ: Եթէ դուք կը փախչիք, միթէ՞ ես չեմ կրնար. իմ թւերս աւելի ազատ են. վարդապետ ինչո՞ւ եղեր ենք. ազատութեան համար...

Վերջապէս, երկար ձգձգումներից ու վարանումներից յետոյ, Ազգային ժողովի ջոջերը բերան են բաց անում «մահու և կենաց խնդրի» մասին, հայկական խնդրի մասին: Որոշում են կարգաւ պօլսաբնակ հայաստան-

ցիների հանրագիրը, ուր ի միջի այլոց ասուած էր.

Արբաղան տեր. Մեր գաւառաբնակ հայրենակից եղբարց տաւապեալ վիճակը մեր սրտին մահացու խոց մըն է... Անտարակոյս, Չեղի հետ մէկտեղ բոլոր կրօնի և ազգութեան պատուոյն նախանձտինդիր սրտերը այդ անլուր և անօրինակ եղեռնագործութիւններէն կը ճմլուին: Ուստի կը խնդրենք, որ այս աղէտից անմիջապէս դարձան մը տարուի:

Չայներ կային, որ ասում էին, թէ Անգլոսոստեր ժողովի քննելիք բան չէ այս: Ուրիշները գանգատում էին, թէ ինչո՞ւ այդ հանրագիրները չեն ուղղում քաղաքական ժողովին: Ուրիշները խորհուրդ էին տալիս սպասել, մինչև որ ստացնին տեղեկութիւններ գաւառներից: Այս կամ այն ձևով կամենում էին ջուրը գցել հայկական հարցը...

Գտնւեցան, այնուամենայնիւ, շիտակ ու արի հայ քաղաքացիներ, որոնց չէր իսպառ անգամալուծել աւանդական երկչտութիւնն ու սարկամաութիւնը և որոնք համարձակ ձայն բարձրացրին հարստահարութիւնների ցաւոտ խնդրի առթիւ:

Յիշատակենք երկու խօսքով մի քանիսը այդ կորովի ու մեզագրական ճառերից *).

Իփէքճեան էֆէնտի.

Միթէ՞ ուրիշ մասնաւոր բողոքագիրներ ալ եկած չէին վարչութեան և միթէ՞ Բ. Գրան հաղորդուած չէին: Ընդհանուր մասնաւորներէ կը բաղկանայ. մասնաւոր եղելով թիւններու առթիւ եղած բողոքները գոհացուցիչ վախճան մը չեն ընդունած և ասկէ ծագած է ասա այս հանրական բողոքի գաղափարը...

«Խնդրէն կը շեղիք» — միջամտում է ուլտրա-խոհա-

*) Տես Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ. նիստ 25 հոկտ. 1870 թ.:

կան ատենապետը, տեսնելով վերջին բառերի մէջ բողոք ընդդէմ կենտրոնական կառավարութեան:

Զաւեշտական է Խփէքճեանի ըէպլիկը.

Գաւառներէն եկած բողոքները հաղորդուած են Բ. Դրան և Տէրութիւնն ալ հոգ տարած է, բայց գաւառներէն դադարա՝ չեն երէքը հարստահարեալ ժողովրդեան հեծեծումները:

Խրեմիա եպիսկոպոս.

Ստիպուած եմ իմ խղճիս պարտք, հայրենեացս պարտք, մարդկութեան պարտք կատարել, առանց ինչ երկիւղի և տարակուսանաց, զի պիտոյ համառօտիւ բացատրել մեր եղբարց վրայ ծանրացած աղէտալի հարուածներ ու հարստահարութիւնը...

Եւ յայտարարում է, որ հայաստանցին երկու կերպ կը հարստահարուի. նախ ներքին անմիաբանութիւնից, մասնիչ ու դաւաճան հայերից, ապա և արտաքին թըշնամիներից: Արտաքին բռնաւորներն են — քիւրդերը. հռչակաւոր պէյեր... Յիշում է Խզնայ շէյխ Սապատուլ-լահը և նրա որդի Զալալ Բեգի նը:

Հոն բռնաւորաց խումբ մը կայ — ասում է մի այլ երեսփոխան — քիւրդն է անի, որ մեզի պէս հպատակ չէ տէրութեան, որ սուրբ շտար, այլ թշուառ հայը կը կեղեքէ և կ'ապագատակէ զէն 'ր ձեռին...

Միջամտում է ինքը պատրիարք-Խրիմեանը և տալիս է իր մեկնութիւնը չարիքի պատճառների մասին:

Բան մը կայ, որ պիտի բացատրեմ վարդապետներն: Հոյսատանի մէջ հարստահարութիւնը միշտ կայ և պիտի շարունակէ, քանի որ հոն երկու եղբայր, երկու ժողովուրդ կը բնակին, որոց մէկի ձեռք աւետարան և միւսին ձեռք դուրան կայ... Անկարելի է, որ քիւրդն ու հայը իրարու հետ հաշտուին, մանաւանդ որ մէկը սուր ունի և կը հարուածէ, միւսն աւետարան ունի միայն և կը շարձարտի...

Եւ Խրիմեան մէկ էական դարման է առաջարկում. այն՝ որ քրիստոնեայ և մահմեդական հաւասարապէս պաշտօնեայ լինին:

Երբ հաւասարութեան սկզբունքն ի գործ շրուի և քիւրդը տեսնէ, որ քրիստոնէին մէջքն այ պաշտօնական թուր մը կայ կախուած և Ալուսակալի պաշտօն կը բարձրանայ, այն ատեն կը մբռնէ օրինագրքի ոգին:

Պատրիարքը այդ իմաստով էլ դիմումն պիտի անէ օսմանեան կառավարութեան:

Քիչ յետոյ, 27 նոյեմբերի նիստի մէջ (1870 թ.) նա նորէն ծանրանում է այն պատճառների վրայ, որոնք — Խրիմեանական արտայայտութեամբ — „ազգը բարակացաւ ի մէջ դրած են“: Այս անգամ ծանրանում է ներքին պատճառների վրայ, գիտակցութեան, ինքնաճանաչութեան պակասի վրայ, ժողովրդի սոգիտութեան ու անշարժութեան վրայ, որ պատուազանն են հայոց ստրկութեան...

Ժողովուրդն անմուռն ոչխար մը դարձած, ոչ իւր իրաւունքներն կը ճանչէ, ոչ պիտոյքները կրկնայ և ոչ օրինաց տեղեկութիւն ունի... Աշխարհի արդի գրութեան համեմատ՝ սկիզբն է, պիտի բռնաբարուի և լոյսը միայն ապատութիւն վայելէ...

Վիճաբանութիւնները քանի գնում տաքանում են: Հին, պատկառելի գործիչներից մի քանիսը, որ եղած էին Ազգային Վերածնութեան, Սահմանադրութեան սիւները — Ռուսինեան, Սերվիչեան և այլն — պահպանում են խոհեմ, զգուշաւոր լուծիւն այդ հանգիսաւոր նիստերի մէջ և մեծ մասամբ նոր դէմքեր են, որ անվախ, համարձակ բեմ են նետում իրենց կծու բնա-

դատութիւններով ընդդէմ թիւրք-քիւրդական այլանդակ ուժերի:

Ահա և երիտասարդ Ներսէս եպիսկոպոսը ամբիօնի վրայ, — ապագայ վարժապետեանը.

Օսմանեան տէրութեան սկզբնաւորութեան ատեն հարբստահարութիւն չկար (sic), զի զուրանի ոգին ճշտիւ կը մեկնուէր... Բայց ի վերջոյ վարդապետութիւնը այլ իմաստ մեկնած է զանի...

Հարստահարութիւններու գլխաւոր պատճառն է մէկ կողմէ գաւառներու պաշտօնատարաց անձեռնհասութիւնը և միւս կողմէն մերազնեից տգիտութիւնը... Ի ն չ ո շ ա յ ը ի բ ը բ ա ղ ա ց ի ա մ ե ն պ ա ը տ ու չ մ ա ս ն ա կ ց ի և ի ր աւ ու ը ն ք ն եր է ն զ ու ը կ մ ն ա յ ի ն չ ու ա յս վիճակը տէրութեան ուշադրութեանը չի ներկայացուի:

Եւ Ներսէս առաջարկում է Քննիչ Յանձնաժողով ընարել և հանդիսաւորապէս ներկայացնել խնդիրը Բ. Գրան:

* * *

Չափազանց հետաքրքրական է այն արիւննոտ պատմական փաստաթուղթը, Հայաստանի այն առաջին Տեղեկագիրը, որ կազմուեցաւ 1870-ին, Ազգային Ընդհանուր Ժողովի հրահանգով և նրա ընտրած Յանձնաժողովի ձեռքով:

Նա կազմած էր այն մի շարք մասնաւոր տեղեկագիրների հիման վրայ, որ եկել էին — նոյն Ազգային Ժողովի յանձնարարութեամբ — Հայաստանի այլ և այլ գաւառներից: Նա ամփոփում էր և մի մասը այն հարուստ նիւթերի, որ տասնեակ տարիներից ի վեր դիզուել էին Հայոց Պատրիարքարանում: Նա, այնուամենայն,

նայնիւ, դեռ չէր տալիս լիակատար պատկերը թիւրքահայոց դժոխային գոյութեան, չէր բնաւ ներկայացնում հայ ժողովրդի հսկայական դատապարակը... Գեռ դժգոյն էր և վեհերոտ այդ առջին հանդիսաւոր Յիշատակագիրը, դեռ չէին էլ հասել հայ Քննիչ Յանձնաժողովի ականջներին բոլոր գաւառների հարստահարութեանց արձագանքները. մի շարք վայրերի հայ առաջնորդները — զարհուրած վրիժառութեան ահաւոր հեռապատկերից — աղաչում էին չհրատարակել այն արիւննուշա գազանների անունները, որոնք իբրև մի մի ինքնակալ, միահեծան տէրեր, դարձել էին պատուհաս հայ խաղաղ ժողովրդի համար: Իսկ մի շարք գաւառներ — Իզմիր, Բուսսա, Աղթամար, Սեբաստիա, Քիւթահեա, Յիվրիկ, Բալու չէին էլ ղրկել ունե տեղեկագիր — նոյն երկիւղից, անտարակոյս:

Բայց և այնպէս, այդ կիսատու երկչոտ փաստագիրն անգամ ահագին լոյս էր սփռում երկրի կացութեան վրայ, մերկացնում էր նրա էական ու մշտնջինաւոր վերքերը: Յանձնաժողովը, Ներսէսի նախագահութեամբ, աշխատեց եռանդով Չարիքները, նրանց հիմնական պատճառները որոշած են, դասակարգուած (classé):

Առաջին անգամը տրուում էր Հայաստանի կացութեան շատ թէ քիչ լուրջ անալիզ, — վերլուծումն այն բոլոր պատուհասների, որ կրժուում ու լափում էին հայութեան օրգանիզմը:

Առաջին անգամը, մասնաւոր, տուրքերի բարդ ու ոճրանիւթ մեքանիզմը հրապարակ էր դրուում շատ թէ քիչ լուսաբանած:

Առաջին անգամը ցուցադրուում էր հայ ձեռքերով բրդական աւատապետութեան էութիւնը, այն սոսկախի խարազանը, որ ամենից աւելի էր կորացրել հայաստանցու մէջքը, որ ամենից աւելի էր ցամաքեցրել նրա կեանքի ու ապրուստի աղբիւրները:

Վերջապէս, առաջին անգամն էր, որ հայկական խնդիրը, իր հրատապ պահանջներով, ամրապնդած հազարաւոր աշաղակող փաստերով, պիտի երթար բաղնիկու օսմանեան կառավարութեան դուռը, պիտի ներկայացուէր սադրազամին և սուլթանին:

Տեղեկագիրը ասում է, որ ամենից շատ ասպատակութեան ու հարստահարութեան ենթակայ են էրզրումի և Դիարբէկիւրի վիլայէթները, այն է՝ Վան, Քղի, Դերջան, Բաղէշ, Սուշ, Չարսանձաք, Տիգրանակերտ, Սղերդ, որ այդ գաւառները հարստահարող աւազակների անուները ծանօթ են յականէ յանւանէ և նրանց արարքները տեղեկագրած... որ «այնպիսի եղելութիւններ կան, որ ընթերցողին սոսկում կուտան»... որ Սահմանադրութեան շնորհած ազգային գաւառական մարմինները անցոր են այդ սանձարձակ կամայականութիւնների դէմ, որ «եպիսկոպոսները չեն կրնար միջնորդել այդպիսի ցաւոց», որ պաշտօնեաները ծաղրում են նրանց ու յետ մղում, «ձեր տեղը եկեղեցին է» ասելով... Տեղեկագիրը յայտարարում է, որ Բ. Դրան միջնորդութեամբ հայերը յաղոջած են զուտ կրօնական բնոյթ ունեցող հարցերի մէջ միայն, որ բոլոր միւս պատրիարքական թագրիւնները, թւով 529 (մինչև 1870 թւականը). մնացել են անհետեանք, որ այդ թագրիւնների

նիւթ են եղել՝ կառավարական պաշտօնեաների զեղծումները, կանանց և մանկանց բռնի իլլամացումը, ապա և աւազակութիւններ, առեանփութիւններ, սպանութիւններ, «եկեղեցեաց շինութեանց և կոչնակահարութեանց արգելում»... ննջեցելոց յուղարկաւորութեան և կրօնական հանդիսից արգելում և այլն. ապա բանի թագրիւններ բրիտտոնէի վկայութեան չընդունելու մասին, հարկերի բաշխման ու հաւաքման վերաբերմամբ և այլն և այլն *):

*) Թիւրքիոյ մէջ իշխող հարկային սիստեմի դեռ պատում է իր բանադէտ պատմիչին Չկայ շատ թէ քիչ ընդարձակ ու ձեռնհաս մի աշխատութիւն, որի մէջ նկարագրած լինի այդ ինքնատիպ սիստեմը իր բոլոր արտաուց «բարեմասնութիւններով»:

Իրօք «սիստեմի» մասին խօսք էլ չի կարող լինել — այնտեղ ուր տիրում է պաշտօնեաների անսանձ կամայականութիւն և նրա հետեանք — ք ա ս ս ր :

«Տուրքերը չեն հաւաքում համանման ձևով կայսրութեան բոլոր մասերից, նրանք տարբեր են գաւառից-գաւառ և միակ կայսրն տարբերն են՝ «խ ա ր ա ջ ր» և « ա շ ա ր ր (տասանորդ) » — այսպէս է գրում Աիկտօր Լանդլուա իր «Աիլիկեան ճամբորդութեան» մէջ (Voyage en Cilicie :

«Խարաջը՝ կամ գլխահարկը ծանրանում էր միմիայն ապրախի, քրիստոնեայի վրայ: Դա գերազանցապէս սարկութեան հարկ՝ էր, որ Խրիմի պատերազմից յետոյ ջնջւած հրատարակեց Հատտի-Հիւմայունով... սակայն երբ հասաւ քորձնական իրականացման ժամը, թիւրք կառավարութիւնը յետ նահանջեց: Խարաջը վերացնելով, ապա մահմեդականի հետ հաւաստարապէս պէտք է մտնէր զինուորական ծառայութեան մէջ — մի բան, որ երկիւղ էր ազգում իշխող

եւ Քննիչ Յանձնաժողովը արիաբար եզրակացնում է, որ Բ. Դրան Տրամանագիրները չանբաւական եղած

ցեղին... Աշխենում էին, մի գուցէ այդ քրիստոնեայ ազգութիւնները մինչ այն հպատակութեան ու ստրկութեան մէջ ապրած, ոխ ու վրէժը սրանքի մէջ, գէնքի վարժակերպ՝ մի սր այդ զենքն ուղղէին նոյնիսկ կառավարութեան դէմ: Բացի այդ՝ երկրի պաշտպանութեան իրաւունքը միւս ժողովուրդների միջև բաժնելով՝ կը նշանակէր խոնարհեցնել իշխող ցեղի մինչ այն բարձր, տիրապետող դիրքը...

Այդպէս էր արամաբանում տաճիկը:

Պէտք է նշատել, սակայն, որ նոյնիսկ քրիստոնեաներից շատ-շատերը գերադասում էին զինւորի փոխարէն՝ զինւորական տուրք տալ: Նրանց վախեցնում էր մ'եր ձեց ու մ'ը թիւրքերի հետ նրանք թերևս բնագոյրէն գարշում էին այդ մերձեցումից և կուզէին, որ իրենց ու իւրամ աշխարհի միջև յաւիտենորէն կանգուն մնար անջրպետը... Հասկանալի ժտահող է թիւն՝ որ իր վնասակար հետեանքների հետ ունեցել է և գուցէ յայտնի դրական արդիւնք, քանի որ, անշուշտ, — ի շորս այլ գործունների — այդ հանգամանքը արգելք է եղել դարերի բնթայցում՝ ցեղի ձւլման, տարրալուծման՝ մահացականութեան գանգաւածների մէջ...

1871-ի յիշատակելի վիճաբանութեան ընթացքում — զինւորագրութեան առիթով — Խրիմեանն ևս, թէև ընդունում էր սկզբունքը, բայց վաղաժամ էր համարում զինւորագրութիւնը հայոյ համար: Ժողովուրդը դեռ պատրաստ չէ, ասում էր նա, անհրաժեշտ է երկ'որ պը պաղանդ:

«Մեր ժողովուրդը երբ լսէ թէ նրանց է եկեր զինուորագրութեան՝ միջնու սահմանագրութիւն կը փայտի»...

«Խարաջ»ի հետ ուրիշ մի շարք տուրքեր ևս ծանրանալով գլխաւորապէս կամ բացառապէս «նայա ի վրայ», աւելում էին նրա տնտեսութիւնը: Այդպէս՝ է մ'լ ա բ և թ է-

են՝... և որ, հետևաբար, պէտք է փոխել թագբիրների սովորական ձևը և գիմել արտակարգ մի

Մ է թ թ ի ւ կողած տուրքը (կալածների և վաստակի վրայ տուրք): «Տեղեր կան — ասում էր յիշեալ Տեղեկագիրը — ուր իրենց պիտոյքն արուեստող կանանցմէ անգամ թէմէթթիւ կը պահանջուի... Աղքատին անհրաժեշտ կահ կարասիքն ու գործիքը բռնի ծախելու և զանոնք բանտարկելու խստութիւններ ի գործ կը դրուին»:

Պատուհաս էր և ի լ թ ի գ ա մ ր (վարձակալութիւն):

Գանդապները միաբերան կը հաստատեն, թէ եղած գեղ-ծումները այն պէյերէն կամ կառավարութեան ժողովոյ այն անգամներէն են, որոնք օրինաց հակառակ չգործելու համար, իրենք վարձակալութիւն չեն բներ, այլ իրենց տղայքը կամ սպասուորները կամ այլ ծանօթները: Այդպիսով... աղքատը անիրաւութեան մը համար պիտի բողբէ զինքը հարստահարողին:

«Աղքատը կը կեղեքեն չափազանց գներ դնելով անոնց բերքին վրայ... Այսչափ ցորեն կամ բամբակ կուտայ այս արտը, այսչափ դրամ պիտի տաս — կ'ըսեն: Եթէ բերքի տէրը դրժկամակի, մի լթէգիմը բերքը երեսի վրայ կը թողու (զի մինչև տասանորդը չ'ասնուի, բերքը իւր շտեմարանը չբարձուիր)... ապա առջի ուլած տասանորդին կրկնապատիկը կը պահանջէ և կ'առնէ (արդէն վնաս ու ծ բերքից):

«Տան պիտոյից համար տան պարտեղի մէջ շանուած բերքին վրայ ալ տասանորդ կը պահանջուի:

«Միւլթէգիմները (հարկահաններ) հնձոց ժամանակ չեն գար... Բերքը երեսի վրայ կը մնայ ու կը փտի. և հուսկ ուրեմն կուգան և այն վնասեալ ու փտեայ բերքերուն համար ողջ ի արժէք ո վ դրամ կը պահանջեն:

Չմբան ժոտ և երբեմն ի մէջ ձմբան միւլթէգիմներուն ի գիւղերէս ելնելէն խիստ վնասակար արդիւնքներ յառաջ

միջոցի. Բ. Գուլը, սովորական հրամանագիրներէն դուրս, պէտք է ուրիշ եղանակի մը դիմէ: Յանձնագո-

կուգան: Գիւղացին պարտաւոր է ձրիաբար կերակրել միւլթէզիմն և անոր գործակալները, որչափ ժամանակ որ հիւր մնան իրենց գիւղը... Արբեմն այ կր ծեծուին և երբեմն ալ կանանց պատիւը կ'արատաւորուի:

Փոխառութիւնը մեծ պէտք մ'է մանաւանդ հողագործաց համար. առանց անոր՝ մշակութիւնը կրնայ դադարիլ և հողագործին կեանքը փճանալ: Օրէնքը չի կրնար ներգործել ասոր, զի փոխատուն ազատ է, շտար... Այս մասին գաւառաց գանգատը մեծ է և ընդհանուր... Աշխար արքունի տրոց, վարձակոյտը և ուրիշ տեսակ հարստահարութեանց մէկ հետեւանքն է և ասոր ալ հետեւանքը՝ գիւղացուց իրենց ստացուածքներէն անջատուիլը կամ տարիներով ի Պալիս կամ այլուր դաղթականութիւնն է և ասոր ալ հետեւանքը՝ բազմապիսի տառապանքներ թէ գաղթողաց և թէ մնացողաց, անբարոյականութեան աղբիւր, ժողովրդեան նուազում և ին և ին:

... Արքունական շինութեանց համար գրամ և մարդ կը պահանջուի... Չէրբէզներու և զօրաց փոխադրութեան համար ստակ կ'առնուի... Ազգային և անհատական կալուածներ կամ բռնի գրաւուել են կամ պաշտօնատարաց սեփականեալ... Արնոյ և Աարոյ բերգորէից շինութեան համար հարիւրաւոր գործաւորներ կը տարուին 70—80—100 ժամերու հեռաւորութեամբ տեղերէ, օրական վճարելու խոստամբ, բայց չեն վճարուիր... Տեղն ու տեղն ալ այսպիսի արքունական շինութեանց անունով նոր տուրք կ'աւելցնեն... Թնդանթները փոխանակ անասնոց քաշել տալու, երբեմն մարդոց քաշել կուտան:

Ճանապարհաց շինութեան մասին ալ զեղծումներ կան: Հաստատեալ օրինաց հակասակ 4 աւուր տեղ՝ 10—20 օր կը բանեցնեն աղքատները և այս պարտ-

ղովը իր կողմից ցոյց է տալիս մի քանի դարմաններու նա նկատում է, որ տուրքերի խնդրի մէջ գաւառացիք առանձնապէս գանգատուում են միւլթէզիմներից, հարկահաւաքներից:

Արնանք բռնել, որ եթէ ժողովուրդը 100 դուրուշ կը վճարէ, կէսը միայն և թերեւս աւելի նուազը կը մտնէ արքունի գանձը... Այս հրէշաւոր կեղեքումների շնորհիւ, աշխատանքի գլխաւոր աղբիւրը, երկրագործութիւնը միւլթէզիմներուն ձեռք հոգեվարք եղած է:

Ժողովուրդը ազիտողում գանգատուում էր նաև զինւորական տուրքի առթիւ («Ասկէր պէտէլիէ»): Բաւական չէ, ասում էր նա, որ այդ տուրքը ինքնին արդէն մի հրէշաւոր ապօրինութիւն էր (քանի որ ամեն մի արու զաւակ, նորածինից մինչև զառամեալը որոշ տուրք պիտի վճարէր, շուրջ 28 դուրուշ), այլ և ազգահամարի

գայիս մէջ ստորին պաշտօնատարը գիւրութիւն ունին աղքատէն ստակ կորզելու և շտուսը հեռաւոր տեղեր և աւելի օրեր աշխատեցնելով՝ պատժելու... Այս առթիւ զապտիւններու տունը մտնիլ և եկեղեցիներ կոխելն ալ պատահած է... Այս պատճառաւ շատեր օրերով, ամիսներով իրենց մշակութիւն երեսի վրայ թողած են... գործի տուն:

Չապտիւնները գիւղերը հարկ ժողովելու կամ հրաման մը տանելու գաղած ատենին՝ խիստ ամարդութեամբ կը վարուին և գիւղացիները կեղեքելով, իրենց համար ալ ստակ կը կորցնեն խեղճերէն:

Եւայլն, և այլն և այլն:

Ահա անիրաւութիւնների և բռնութիւնների այն հսկայ ու սճրագործ մեքենան, որ ընկած էր հայ աշխատաւոր ժողովրդի վրայ, մաշում ու հալեցնում էր նրա տնտեսութիւնը, նրա կեանքը:

ճշտութիւնը չլինելով մեռնողների, գաղթողների տուրքն ևս մնացեալներից էին պահանջուում... Աւստի յաճախ կրօնափոխ էին լինում, որպէս զի ազատին պակասողների փոխարէն վճարելուց...

Պաշտօնեաների զեղծումները վերացնելու համար, Յանձնաժողովը թելադրում է, որ կառավարութիւնը կօնսուլ սահմանէ նրանց վրայ...

Ապա թելադրում է.

1. Զինաթափ անել բրդերին, չէրբէզներին և այլ նօմադ ու թալանչի լեռնականներին, և կամ հայ տարրին ևս իրաւունք տալ զինելու:

2. Զինւորական տրոց փոխարէն—զինւոր տալ... 25⁶, մենք էլ քաղաքացիներ ենք, ասում են Տեղեկագրի խմբագրողները, պատրաստ մեր արիւնը թափելու մահ-մեղապան հայրենակիցների հետ, ընդհանուր հայրենիքի համար...

Նախ բան կառավարութեան ներկայացւիլը. Տեղեկագիրը պիտի անցնէր «հայկական պարլամենտի» բննութեան բովից, պիտի գար Ազգային ժողով:

Գիտակ վայրկեանի լրջութեան, ժողովրդի ծանր, տագնապալի կացութեան՝ Ազգային ժողովի պարտաճանաչ, գաղափարական փորձամասնութիւնը ամեն կերպ աշխատեց, որպէս զի վիճարանութիւնները համազգային ամենացաւոտ խնդրի շուրջը մնան պատշաճ բարձրութեան վրայ, որպէս զի խնդիրը արծարծէր ընդարձակութեամբ ու խորութեամբ, առանց հրկշոտ և անարժան վարագորութեան ու վերապահումների:

Եւ տեղի ունեցաւ 1871-ի հոկտեմբեր 22-ի պատ-

մական, հանդիսաւոր նիստը: Գուցէ երբէք Ղալաթայի հայկական խօսարանը չէր ունեցել այնքան հմայք ու հրապոյր, ինչպէս այդ օրը, երբ հռետորները—գրեթէ բոլոր խաւերի ու կարծիքների ներկայացուցիչներ—մին միսի ետևից բեմ էին գալիս իրենց շահեկան դատողութիւններով հայրենիքի կացութեան մասին և իւրաքանչիւրը առաջագրում էր իր դարմանները: Լսեցին այդտեղ հուժկու քննադատականներ ու ժողովի դէմ, բուռն, ըմբոստ յայտարարութիւններ, սիրուն ու յուզիչ ֆիլիպպիկաներ, որոնց կարգալիս զգում էք ձեզ ազատ Ամերիկայի մի հայկական միտինգի մէջ...

Յիշատակենք մի բանի գծեր այդ անմուսնալի ժողովից *):

Ահա Ստ. Փ ա փ ա զ ե ան ը, որ մոլեռանդ պաշտպան էր հայերի զինւորագրութեան.

Զինւորագրութիւնը—ասում է նա—բարոյապէս պիտի գրաւորէ հայ ժողովուրդը և զգացնէ, որ ինք ալ երկրին տէրն է... համահասարակ պարտաւոր իր օսմանցի հայրենակիցին հետ իր ծառայութիւնը մատուցանել երկրին: Այժմ որ մահմետական ժողովրդեան հետ իբրև ծառայ ընդ տեսան կր վարուի, ան ատեն պիտի փոխուի... Այն խեղճ հայր, որ այժմ իր կնոջ առեւանգութեանը կամ զաւակին յափշտակութեան առջև մորմորած, թեւերը ծալած կը կենայ սոսկումէն կամ աղետարշ որ սով կը խոնարհի յ'աղերս, որպէս զի ի գութ շարժի բնաւորին սիրտը... այն ատեն այդպիսի տխուր և սրտաճմրկ պարագայի մէջ չպիտի թուլնայ, զի ստրկութեան պաղափարն այլ ևս զինքը չպաշարէր, այլ սոյն պիտի առնու և ինքզինքը պաշտպանելու փորձն րնել պիտի ճգնի կ ա տ ա ղ ի մ ո լ է գ ն ու լ թ ե ա մ բ, ս ր տ ա պ ի ն յ ը ա ն զ ը ի լ ր տ ն պ ի տ ի կ ո ու է ի ա ն ո Ր հ ե տ և ը ա ջ ու լ թ ե ա մ բ ի ը պ ա տ ի լ ն ու կ ի ն ը կ ա մ զ ա լ ա կ ը պ ի տ ի ա զ ա տ է ա ն օ Ր է ն ի ն ձ ե ո ը է ն և զ ա ն ի վ ա ն է...

*) Տես Ատենագրութիւնը Ազգային ժողովոյ, 1871 թ.:

Հոետորը միշտ աւելի և աւելի յափշտակուում է, տոնը բարձրացնում և զգում էք, որ զինւորագրութեան պատրւակի տակ իրօք մարտական, յեղափոխական պրօպագանդ է անում Ազգային ժողովի բեմից.

Զէնքը ներկայ ժամանակիս մէջ պատուոյ, բնչից և կենաց պահպանութեան հարկաւոր պիտոյք մ'է: Ասիէ զատ, եթէ քննենք, թէ որչափ պանդուխտ ունինք այժմ, ստոնց պատճառաւ որչափ երկիր անմշակ մնացած է, որչափ զաւակ տարուէ տարի կը կորսնցնենք, որչափ պանդուխտ օտարութեան մէջ կը կորսուին հայն հայն, այն ստան լաւ կը հասկնանք, թէ զաւատացիք փոխանակ կեանքն ամբողջ հողագործութեամբ անցնելու, եթէ անոր մէկ մասը վասուօք գործածելու, սուր շարացնելու նսւխըն, իրենց քրտանց արգիւնքը պահպանելու ճիւղակի շահու առաւելութիւն մը երևան պիտի գայ...

Ահա Գրիգոր Օտեան, որ թողնում է ատենապետի բազկաթուղ և իր հերթին մի *harangue* է ուղղում վարանոտ Ազգային ժողովին.

Զինուական տուրքը մեր տկարութեան տուրքն է: Հայր, ինչպէս ուրիշ ոչմահմեղական ազգեր, հայրենեաց հասարարին թափելու իրրե թէ անկարող զէնք գործածելու, բոլոր երկրին պաշտպանութիւնը մէկ ազգ մը վրան առած է և այս պաշտպանութեան փոխարէն միւս ազգերը հարկ մը կը վճարեն... Այդպիսի դրութեան մէջ հասարարութիւնն անկարելի է... Արք գինւորին յատուկ եղած պատուոյ զգացումը զարգանայ մեր մէջ այ, այն ատեն. հայր պիտի գտնէ իր նախնի նկարագրի բոլոր, զոր պիտի վերականգնէ գլորման սուսականութեան վիճակէն, ուր բնկած է *)... Գարեբով գերութեան վիճակի

* (Օտեան ևս համարում է նախայեղափոխական շրջանը «գլորման ու ապականութեան վիճակ», մի կատարեալ *chute, déchéance*... Ի՞նչ կ'ատեն իրենց մեծարած կուսքի դէմ

հետեանք... Յայտնենք աշխարհին, թէ մենք ալ մարդ ենք և արիւթեան բնդունակ...

Բեմ է ելնում նշանաւոր Մարկոս Աղաբէգեանը, որ ուզում է սառը ջուր ցանել այդ տաք, բարձրասլաց յափշտակութեան վրայ... արտասանելով ընկերաբանական փոքրիկ ու զւարճալի մի տրակտատ.

Ասի ծանր խնդիր մ'է և խիստ փափուկ... Զինւորատուութիւնը դարման մի կարծէք հարստահարութեանց. գուցէ այդ դարմանն աւելի վատթար լինի մեր ժողովրդեան համար:

Ամեն տէրութեան մէջ տարբերքներ, ժողովրդական կարգեր կան, ինչպէս են՝ արիւթ օքրասի, պուստուսակի և այլն, որ Աւրպիոյ ազգերը կը կազմեն, Գաղիա, Գերմանիա և այլն: Տաճկաստանի մէջ այս տարբերքը կազմողը հայն է: Հայերն են, որ կը կազմեն գիւղականը, շինականը և այլն. մէկ խօսքով Տաճկաստանի հասարակութիւնը կազմողը հայն է: Տաճիկն ալ կը բաժնուի իր մէջ շատ մը յեղերու, որք են՝ Ղզլլաշ, Չիչկեան է, Քիւրդ և այլն, այլ ստոնք հասարակութեան կարգ շին մտնար... Հայաստանի մէջ... ո՞ր շուկայ, ո՞ր վաճառատուն որ մտնէք, պիտի տեսնէք, որ բոլոր խանութներուն մէջ հայերն են նստած. առևտուր բնողը հայն է, արհեստաւորն ալ հայն է, ուստի հայր բանած և ժողովրդեան առաջին տեղը, այսինքն հասարակութիւնը: Տաճիկը շուրի բնկերակնութեան վիճակ և իր երկիրը ինոպած է անմշակ և ամայի: Արք գիւղ մը մտնէք, աքլորի և կոչնակի ձայն տոնուր, ուր մարդագետին, ծառեր և պարտեզներ ձեր աչքին առջև տարածաին, ուր աղջկանք աղբիւրներէ ջուր բերեն, մէկ խօսքով, երբ բնկերակնութիւն նշմարէք այդ գիւղի մէջ, գիտէք, որ հայուն է այդ գիւղ բնկակառակն, երբ գիւղ մը մտնէք, ուր ոչ պարտեզ կայ, ոչ ծառ,

մեր այն իմաստուն իգէլոգները թիւրքահայ և ուստահայ — որնք ցաւով ու կարօտով երանի տին այդ հին բարի ժամանակին և անինայ բարկոճեցին յեղափոխականներին, որ եկան փոթորկելու ապականութեան ու անանացման այդ մթնոլորտը...

լուս, ամայի և չոր, գիտցէք, որ տաճկին է այդ գիւղը: Աերջապէս տաճկի վիճակ աւելի գէշ է և վատթար: Տաճիկն աւելի աղքատ է, քան զհայ:

Ըսածներէս կը հետեցնեմ (քնաւ չի հետեւիր. Մ. Ա.), որ զօրք տալ մեր գործին չի գար, զի հայն իր ընկերական վիճակէն հեռացուցած կըլլանք. տուրք տանք, բայց պայմաններ դնենք ..

Արոջ ճշմարտութիւն կարող է լինել Մարկոս Աղաբէգեանի սփեեստութիւնների մէջ: Հնարաւոր է, որ շնայած անօրինակ կեղեքումներին ու հարստահարութիւններին՝ հայ ժողովուրդը դարձեալ, այնուամենայնիւ, իբրև աշխատող ու արտադրող տարր, ընդհանուր առմամբ աւելի բարձր է եղել իր նիւթական բարեկեցութեան մակարդակով, քան մահմեդական դրացիները, քիւրդը և թիւրքը: Սակայն, «Կռունկ»ի մեծարգոյ խմբագրապետը չափազանց խոշոր թռիչք է անում, համեմատելով թիւրքաց հայութիւնը եւրոպական Արիսթօքրասիի և Պոլսեական ճեմարանի հետ, նկարագրելով հայ պարիաների կացութիւնը գրեթէ նախանձելի գոյներով: Ստեփան Փափազեան կուղղէ իսկոյն այդ վրիպումը իր սուր ու շանթոս ուկրիկով:

Մարկոս էֆէնտի կ'ըսէ, թէ գաւառի հայոց վիճակը աւելի երջանիկ է, քան մահմեդականաց վիճակը: Ասիկայ ապացուցանելու ենք պարտաւոր, և մինչև ցարդ մեր ամենուս դիտցածը այդ բնութիւնը ընդհակառակն է. վկայ են այսքան տարուան հրատարակութիւնները, որոնք գաւառացի ազգայնոց աղետալի վիճակին նկարագրիչներով լի են: Ասոր հակառակը կը հաստատեն մեզ վերջին անգամ գաւառներէն դրիւած 54 կտոր առաջնորդական ընդարձակ տեղեկագրերը և պատրիարքարանի 20 տարուան թագրի բնութիւնը բովանդակութիւնը: Աբլորին ձայնը և գառնուկներուն մայրիւնը միմէ՞ր բուական են հաստատելու, թէ հայոց վիճակը աւելի լուս է, քան մահմեդականաց. այո, ես ալ կը

հաստատեմ, թէ հայ գիւղօրէից մէջ աբլոր ալ կայ, գառնուկներ ալ, եղներ ալ. առանց ատոնց ինչպէ՞ս կրնային ապրիլ այդ գիւղացիք: Բայց ցաւալին սա է, որ իրենց ապրուոտին և վայելմանը համար քրտամբ և տառապանօք պատրաստուած այս հարստութիւնները՝ հայ գիւղացիք պարտաւոր են բաժնելու նաև մահմեդականաց հետ, որոնց մէջ աշխատութիւնը իրենց դրից շնորհիւ, տիրողութեան գաղափարով այնքան յարգի չէ և գիտեն թէ միշտ որ հայաբնակ գիւղը մտնեն, կարող են անկէ ստանալ ուղածնուն շափ աբլոր, հաւ, գառն, եզ, իւղ, պանիր և այլն:

Ան որ կ'աշխատի, ի հարկէ, առաւելութիւնը ունի, բայց երբ աշխատողն իր աշխատութեան արդիւնքը լիովին վայելելու և պահպանելու անկարող է, մենք ինչպէ՞ս նիւթական և բարոյական յատաշարի մութիւն կրնանք յուսալ, երբ բոլոր ունեցածնիս ապահովութեան մէջ չեն, մինչդեռ ամեն բանէ յառաջ ապահովութիւն պէտք է, որ մայրն է ամենայն բարեաց:

Գառնալով անոնց, որ կրտեն իմ արիւն չթափուի՝ կը պատասխանեմ, մի՞թէ քիչ արիւն կը թափուի այժմ: Այժմ կենաց, պատուի և ստացուածոց պահպանութեան համար արիւն թափել պէտք չկայ, ինչո՞ւ համար ողորմելի անձի մը պէս քարոզին առջև արիւն թափէ հայր և պատերազմի դաշտին վրայ չթափէ: Քուրդը կամ ուրիշ իշնամին վաշելու համար՝ ինչո՞ւ աղերսէ իր մահմեդական հայրենակցին և ինքը չգործէ...

Արժէ և գերազանցապէս այժմէական է՝ կորդալ ու կրկնել այս կորովի և բանական ճառերը ն երկայ Ազգային ժողովի *ultro* խոհեմ և թուլամորթ մեծամասնութեան, որի ուղեղի մէջ «ինքնապաշտպանութիւն» բառն անգամ մի սարսափելի և անհասկացելի պատուհասի բնոյթ է առնում...

Գարձեալ պիտի ստենք. *tempora non mutantur!* Այն ժամանակ ևս կար նոյն խոհեմ, աստուածալախ և սուլթանալախ մեծամասնութիւնը, որ ամեն կերպ ձգ-

տում էր արգելք լինել գաղափարական և կորովի փոքրամասնութեան ծրագիրներին: Մեր ազգային ջոջերին հաճելի չէր գաւառական հարստահարութիւնների, «հայկական խնդրի» արծարծումը Ազգային ժողովի մէջ, հաճելի չէին մանաւանդ այդ ըմբոստ ճառերը թիւրքական ուէժիմի այլանդակութիւնների դէմ. հաճելի չէր այն ամենը, որ գալիս էր վրդովելու հայ բուրժուայի, պոլսահայի անդորրութիւնը:

Եւ ահա Յանձնաժողովի Տեղեկագիրը զարնւեց նոյն աղայական ապիկարութեան, չկամութեան, խրիմեան և ժողովականների մի մասը յորդորում էին շտապել ներկայացնել Տեղեկագիրը կենտրոնական կառավարութեան: Իսկ ժողովի մեծամասնութիւնը դիտմամբ ձգձգում էր, ուշացնում, շարունակ հանդէս բերելով նոր, աննշան, երկրորդական խնդիրներ, թաղային, առաջնորդական, կաթողիկոսական, Ասի, Աղթամարի, Երուսաղէմի և այլն:

1872-ի փետրուար 18-ի նիստի մէջ խրիմեան, ճարահատեալ միջամտեց փոքր ինչ միապետական ձևով և ուղղեց իր ուժերն յորդորը ժողովին.

Իբրև դիտող և հովիւ, պատրիարքութեան բարձր գահէն, կը համարձակիլ ասել, ես ձենէ առաւել կը տեսնեմ Ազգին վերահաս վտանգները: Թողէք, սերնձ, և այդ իրաւունքը շորհեցէք ինձի, թէ ո՞ր խնդիրն է կարևոր, ո՞ր նախագահելի... Աւստի իբրև ներքական պարտք, պէտք է ի բաց ինչպէս այն խնդիրներ, յորոյ յապաղմանէ ոչինչ վնաս չեմ տեսներ և միայն այն խնդիրներ վարեմ յառաջ, որոյ լուծումը ժողովրդեան ներկայ աղէտները կը բառնայ... Ժողովրդեան համար ամեն բան պէտք է զոհել, զի ժողովրդեան ձայնն ամենէն բարձր կ'ելնէ (ձափահարութիւն)...

Ապա մի ցասկոտ յորդոր կարգաց նաև Երեմիա եպիսկոպոսը.

Ես որ Հայաստանի ամեն անկիւնները շրջած, ախանաես ելած եմ միլիոնաւոր հոյ ժողովրդեան կրած զրկանաց, ցաւաց և նեղութեանց, կը խնդրեմ ու կը պաղատեմ, որ ով որ խիղճ ու գութն ունի իր սրտի մէջ, գաւառական հարստահարութեանց խնդիրն որոշէ ընել նախագահ, դերագահ և յառաջագահ... Անձնական շահեր շտա անգամ այս խնդրոյն արգելք հանդիսացան, որոյ դէմ ես յաւիտեան պիտի բողոքեմ... Այսան զի այդ անձնական շահերու դէմ (աղաներին է ակնարկում. Մ. Ա. հայութեան սգին դառնապէս կը բողոքէ և երկիր կը սարսի ձափեր...)

Թողումը կրօնական կերպարանոր շարեայ անտի վէճերն ու կրիւնները. այդ վէճերն էին, որ զմեզ 36 միլիոնէն ավել մը ժողովուրդ մնայաւ շափ սպառեցին. Աթմ ողիկոսութիւն, պատրիարքութիւն, եպիսկոպոսութիւն, Ախիտ և այլն, ամենայն կարգ ու պաշտ նի խնդիր իրենց շտանակութիւնը կը կրօնցնեն ժողովրդեան աստապանաց խնդրոյն բով. վասն զի այն ամենայն ժողովրդէն կը ծնանին, ժողովրդեան համար են և ասանց անոր բան մը չեն արժեր .

Զօջերից մէկը, Պէկեան Էֆէնտի — Նշանաւոր Պէկեանը, որ յետագայում (1878-ին) այնքան պիտի զբաղեցնէ և լալէկոծէ Ազգային ժողովն ու պատրիարք վարժապետեանին խայթւածի պէս միջամտում է.

«Մեր եկեղեցականաց զպայտը մենք ալ կրգգանք»...

Եւ առաջարկեց մտցնել մի քանի փոփոխութիւններ Տեղեկագրի մէջ այն է՝

1. Գորա գցել «մոլեռանդութիւն» բառը (մահականների վերարերեալ) և դնել «կրօնական խարութիւն»:

2. Ապա՝ Տեղեկագրի մէջ ասած է. «կամ քրդաց ձեռքէն զէնքն առնուի և կամ հայոց ձեռքը զէնք տրուի»...

Այս ի սրբ բնաին աղէկ չէ — ասում է Պէկեան Էֆէնտի — կարծեմ միայն քրդաց ձեռքի զէնքն առնուի բռնիք՝ բռնական է... Իսկ հայոց ձեռքը զէնք տրուի բռնիք ծանր է և ես պառշաճ չեմ համարիր...

Այս երկու դիտողութիւնները սքանչելիօրէն յատկանշում են այն ժամանակեայ և բոլոր ժամանակների հայ-պահպանողական մտայնութիւնը *)...

Ստեղծւել էր մի ծանր, անշնչելի մթնոլորտ հայկական անդամալոյծ պարլամենտում: Այս ամենից աւելի ծանր էր այն՝ ժողովրդի ցաւերով տառապող պատրիարքի համար: Նա թողել էր իր Ցարոնն ու Վարագը, եկել էր պատրիարքութեան, որպէս զի բիշ-շատ նպաստել կարողանայ գաւառացոց վիճակի բարւոքման: Բայց չորս տարւայ պատրիարքութիւնը ոչինչ արդիւնք չտւեց այդ հիմնական և շարաքախտ խնդրի շուրջը: Խոչընդոտները գալիս էին ոչ միայն թիւրք կառավարութիւնից, այլ և նոյնիսկ հարազատ, ցեղակից աղաներից, որոնց գծուծ ինտրիգները և եսամոլ ու յանցաւոր անտարբերութիւնը աւելի ևս քաջալերում էին սուլթա-

*) Աւելորդ է յիշատակել, որ գաւառական հարստահարութիւնների Տ ե ղ ե կ ա գ ի բ ը այնքան բուռն վէճերից ու տենդային աշխատանքներից յետոյ, դատապարտւած էր... վիժելու: Քաղաքական ժողովի մկրատուծներից ու փոփոխումներից յետոյ, նա ներկայացւեց կառավարութեան: Ընտրւեց վերջինի հրահանգով մի խառն Յանձնաժողով, որ տեղն ու տեղը բնութիւն կատարելով, երևան հանեց Տեղեկագրի մէջ փաստուած զեղումներն ու ապօրինութիւնները: Մակայն... այդ արիւնոտ զօկումները գնացին այնուհետև հանգստանալու տաճկական մուխ, անյատակ արշիվներում: Այ մի սանկչիտ չհետևեց կառավարութեան կողմից, ոչ մի փորձ՝ սանձահարելու ոճիրներն ու սճրագործները:

նական կառավարութիւնը իր հայասպան տակտիկի մէջ...

Այդ հողի վրայ և՛ միշտ աւելի ու աւելի արծարծւեց ընդհարումը խրիմեանի և Քաղաքական ժողովի միջև:

Խրիմեանի էական առաջարկն էր— փոխել Ազգային Սահմանադրութեան մէջ տիրող վարչական ձևը, սահմանել աշխատանքի բաժանումն, զատել Պօլսոյ և գաւառի գործերը, ըստ կարելոյն արագացնել գործավարութիւնը... Որովհետև, ասում էր նա, անհնարին է և վնասակար՝ կենտրոնացնել ազգային բովանդակ ճակատագրի տնօրինումը՝ Պօլսի մէջ, ի դէմս մի ժողովի, որ բնաւ չէր ներկայացնում Ազգը՝ նա կուզէր լայնացնել պատրիարքի իրաւասութիւնը, առանց սեղմելու ժողովի իրաւունքները: Նա առաջարկում էր— յքանի որ 140 երեսփոխան գտնելը խիստ դժւարին է և այդքան բազմութիւնը գործ չի կրնար տեսնել— իջեցնել երեսփոխանների թիւը մինչև 50-ի, բայց դրանցից 10-ը միայն եկեղեցական, իսկ մնացածը՝ հաւասար թւով գաւառացի և պօլսեցի (20-ական հոգի):

Երկար ու ապարդիւն պայքարեց խրիմեանը Սահմանադրութեան վերաբնութեան համար. հակառակորդները անդրդւելի էին: Քաղաքական ժողովը յամառել էր իր անհաշտ ընդդիմութեան մէջ, հռչակել էր խրիմեանին «հանգստահարական» և մինչև իսկ փորձեր էր անում գրգռելու ժողովրդին խրիմեանի դէմ: Պատմութիւնը արտասանել է արդէն իր անողորմ դատավճիռը այն կուրացած խմբակի դէմ, որ զեկավարում էր այդ տխուր, հակաժողովրդական դաւը և որի անդամներից էր, տարաբախտաբար, Մատթէոս Խզմիրլեան:

Խրիմեան սահմանադրական ծնած է... Խիստ դժուարին է
զանի հակասահմանադրական ամբաստանելու Եւ Սահմանա-
դրութիւնը գրկել կուզեմ, բայց չեմ ուզեր զանի այնչափ
ճշտել ու սեղմել մինչև գրկիս մէջ մեռնի...

Այսպէս էր պատասխանում Աւարագի Արծիւ Սահ-
մանադրութեան ֆորմալիստ տառամոլներին, որոնց աւելի
հետաքրքրում էր կանոնադրութեան *արտա-* ի մի ստո-
րակէտը, քան գաւառացի միլիոնաւոր հայ ժողովրդի
հեծեծանքը:

Պայքարը չէր կարող անվերջ շարունակելու Խրիմեան
ստիպեց ի վերջոյ հրաժարելի (1873 թ. օգոստոս):
Հրաժարեց—ինչպէս ինքն էր ասում իր հրաժարական
նամակում—ձանձրոյթից և յուսահատութիւնից:

... Թոյլ տւէք այս ամսուէն երեսմ... Թոյլ տւէք, եթէ
իբրև պատրիարք չկրցայ, իբրև Խրիմեան վարդապետ գոր-
ծել... Երման բարեալ, Արծուի, ասացէք: Գնա՛ գտիր Աւ-
րագ, քո սիրած խուցն ու գրիչ և սակաւիկ մի թանապուր,
հոն մեծացիր, զի նաև խոսվեալ փութայ ի ն սահանգիստ...

Ժողովուրդը հանրագրութեամբ դիմում է Ազգային
ժողովին. «մեր սիրելի Հայրիկի հրաժարականը չըն-
դունելի՛»... Բայց արդէն ուշ էր:

Այդպէս փակեցու մեր նորագոյն պատմութեան
ամենատխուր և ամենայուզիչ գրագն՝ իրից մինը: «Հայ-
կական խնդիրը՝ ծնունդ առաւ և իր առաջին բայլերի
մէջ իսկ՝ զարնեց ծանր, ահաւոր խոչընդոտների...

III

Ն Ե Ր Ք Ի Ն Ո Ս Ո Ւ Ը

Հ Ա Յ Կ Ե Ղ Ե Ք Ի Զ Տ Ա Ր Ր Ե Ր Ը

Ազգ, տարած, վախառու.— Գիւղական ամուսներն և զանազան
պաշտօնեաներ — Լրօս, մասնիչ, դասանան. — Հայ ունեւոր դասակար-
գելը օսմանեան ռէվիւի ատկ — Կղեր և վանաւապանութիւն. — Մօրից
Վազնի վիպոյթի ներք. — Հայ բարեմազական ազատագրական պայ-
քաբի հանդէպ. — Պատմական դասանանութիւն. — Բրիտանացի պատաս-
տանք. — Հայկական շարժումը չ'երտ ազգային, այլ ժողովրդային. —
Անտիքի պղտար և նպաստար կողմեր. —

Հայ աշխատաւոր ժողովուրդը սաստկապէ՛ս տառա-
պել է նաև այդ ներքին ոստի շահատակութիւններից
ու դաւերից, և երբ մենք գրում ենք հայ շարժման
նախապատմութիւնն ու պատմութիւնը, երբ ուզում ենք
ուրուագծել այն դարաւոր հարստահարութիւններն ու
զուլումները, որ կրել է իր վտիտ թևերի վրայ այդ
հալածական ժողովուրդը՝ քրդի, տաճկի, զափտիէի, միւլ-
թէզիմի, վաշխառուի և բոլոր գիշատիչների միջավայ-
րում, երբ փորձում ենք իցոյց դնել և այն թոյլ ու
վեհերոտ ազատագրական ճիգերը, կուէի, ըմբոստացման

այն աղօս նշոյլները, որ այդ ժողովուրդը հանդէս է բերել իր ցաւոտ, եղբրական պատմութեան մէջ, իր բազմաթիւ ու բազմապիսի թշնամիների դէմ, երբ փորձում ենք անդրադառնալ այն անհաշիւ ու անյաղթելի խոչընդոտների վրայ, որ ցցւել են ճակատագրական նզովքի պէս ազատութեան այդ դժնդակ պայքարի ճանապարհին, — մեր միտքը ակամայ սահում է դէպի այն սե կատէգորիան, այն հարազատ ու համարիւն լեգէօնը, որ իբրև անգիտակից կամ գիտակից մի ազդակ, ահագին տեղ է բռնում հայկական մարտիրոսութեան պատճառների շարանի մէջ, որ այնքան յաճախ ու առատօրէն ջուր է թափել բռնակալութեան հայակործան ջրաղացի վրայ, նպաստաւորել, զիւրացրել է նրա շարաշուք ծրագիրները, դարբնել և կռել է հարազատ ժողովրդի գեղութեան շղթաները, մերթ իբրև դուռճան, մատնիչ օտարի մօտ, մերթ իբրև շահախնդիր հակառակորդ բոլոր ազնիւ դատերի, անուղղակի ստատարող ազգայնաջինջ ծրագիրների, մերթ իբրև բացարձակ պարագիտ, ազլուկ, կեղեքիչ հայ-ժողովրդական վաստակի, բրտինքի ու արիւնի...

Հայ ցեցերի անիծապարտ «դասակարգը»...
 Նա չի ներկայանում, իբրև համատարր, միապաղաղ մի կատէգորիա. այդտեղ կայ վաշխառու, կայ կղեր, աղա, ջոջ ու չորպաճի, սեղանաւոր ու սարրաֆ, կառավարական այլ և այլ պաշտօնեաներ, մեծ մասամբ այլասեռած, իսպառ զուրկ ազգային ու մարդկային նկարագրից: Ամենէն նւազ հակակրելին այդ բազմապիսի սարրերի մէջ գուցէ «ամիրայ» կոչւած հայ արիստօկ-

րատներն էին, բայց նրանց տիպարն էլ բնորոշեցինք արդէն մեր նախորդ էջերի մէջ: Փաշաների գրամափոխներ էին, նրանց հըու կամակատարներ. յաճախ նոյնիսկ կատարում էին միւլթէղիմի, հարկահաւաքի դեր և կեղբում իրենց հարազատ ժողովրդին *)...

Գուցէ երբէք, ոչ մի ուրիշ երկնքի տակ, տանջանքի և պայքարի ոչ մի այլ միջավայրում՝ բացասական այդ լեգէօնը չի մատնել այնքան ցինիզմ ու աներեսութիւն, այնքան կոշտ ու արհամարհոտ անտարբերութիւն դէպի արիւնակից ժողովրդի դատը, ինչպէս այդտեղ:

Դիտեցէք, թէ ինչպիսի թունոտ կատաղութեամբ են խօսում մեր ազգային երեսփոխանները այդ ներքին ոսոխի մասին 70-ական թւականների խռովայոյց նիստերի մէջ, երբ քննում էր գաւառական հարստահարութիւնների խնդիրը:

Գաւառաց մէջ իշխան անունով խել մը բռնաւորներ կան — ստում էր երեսփոխաններից մինը, Մազլըմեան էֆէնտի 1870 յայտմբեր 21-ի նիստի մէջ — կան նաև անխիղճ առաջնորդներ (ներեցէք, որ այսպէս անւանեմ զանոնք): ասոնց ազդեցութիւնը ջնջելու և ազգային պաշտօններէ զիրենք հեռու պահելու միջոցները խորհելու է:

Նոյն Մազլըմեան էֆէնտի յաջորդ նիստի մէջ որոշում է «ներքին բռնաւորների» տիպը. դրանք չօրպաճին երեսն, որ «ժողովրդեան վրայ անողբասպէս ծանրացած, զանի կը կեղեքեն և կը ճնշեն»:

Մի այլ երեսփոխան, Օգսէն էֆէնտի, դասակարգելով հարստահարութիւնների մայր-պատճառները, նոյն-

*) Ubicini, Lettres sur la Turquie II vol.

պէս յիշատակում է արտաքինի հետ և ներքին դահիճ-
ներին, որոնց բաժանում է երկու տասի.

1. Ազգային անպաշտօն մարդիկ (չօրպաճի, լրտես և այլն):
2. Ազգային պաշտօնական մարդիկ (կառավարական գործակալներ):

Երեմիա եպիսկոպոսը, խօսելով հայաստանցու կրած հարստահարութիւնների մասին, յիշատակում էր, իբրև չարիքներից մին, հայտրու «ներքին անմիաբանութիւնը, մատնիչ ու դաւաճան հայիրը»:

Վաշխառութեան և նրա արդիւնք — աւերածի ու թշւառութեան մասին սարսափեցուցիչ տեղեկութիւններ էր տալիս ինքը պատրիարք Խրիմեան.

... Վաշխառութիւնը ստոյգ է, զի 100-ին 40 վաշխ կառնուի... Եւ այնպէս տեղեր գտնուեցայ, որ մեռնող մարդուն համար բոճի մը կանգուն կտաւ չի գտնուեցաւ և քիչ մը խոտի մէջ պատեցին խեղճ մարդն ու թաղելին: Գուք տեսնէ՞ր 1ք այնպիսի խեղճ կին, որ իր զաւկին պատանք չը գտնայ և իր պատուասած հայրաստէն կտոր մը պատուէ ու զաւակը պատասէ: Այ տեղին պատմեմ ձեզի. տեսած եմ Ս կարտպեաի վանույց մէջ, որ 20-էն աւելի զայր կը շարունակէր անջնալ և անջնալ եղանակին մերկ ու գողգոջուն: Ռուսիայէն եկած ուխտասորներ կը հանեն շապիկներ կուսան տեսց *):...

Ինթադրենք նոյնիսկ թէ Խրիմեան գիտմամբ խտացուում էր գոյները... Ո՛վ չգիտէ սակայն, որ վաշխառութիւնը հայկական իրականութեան ամենաահաւոր պատուհասներից միւնն է եղել միշտ և ամեն տեղ, թիւրքիայում, թէ կովկասում և որ նա գործում է իր սանձարձակ աւերածը մասնաւորապէս բռնապետական ռեժիմի մթնոլորտում, ուր վաշխառուն զգում է ինքզինքը:

*) Ատենագրութիւնք Ազգ. Ժողովոյ 1870 թ.:

որպէս ձուկը ջրի մէջ: Ո՛վ չգիտէ, որ մակաբոյծների այդ նողկալի և գերազանցապէս կօսմօպօլիտ տեսակը իր ահարկու հպելիքներով ցանցապատել է հայ գիւղը և անգամ զուլումի ու ժողովրդական հոգեվարքի օրերին անխնայ ծծել է հայ բազմատանջ աշխատւորի հիւթերը:

Մի այլ պատուհաս — գիւղական տանուտէրներն էին և այլ մանր կառավարական պաշտօնեաները: Գրեթէ ամեն տեղ, ուր հայ մարդը առել է իր վրայ պաշտօնական որևէ տիտղոս ու համազգեստ, գրեթէ միշտ նա ապազգայնացել է, զրկել մարդկային կերպարանքից, ճշմարիտ մակաբոյծի պէս յարմարել է տիրող ռեժիմին և մահմադական պաշտօնեաների հետ թև թևի աւած ծառացել է իր հարազատ ժողովրդի դէմ: Զարմանալի չէ, որ վերջին բառորդ գարու ազատագրական կուրի ընթացքում հայ տերրօրիստի մանգաղը ստիպւած էր եղել այնքան առատ հունձ անելու այդ մարդկանց միջավայրում:

Վեր հանելով միւլթէզիմների աւերիչ շահատակութիւնները հայկական գաւառի մէջ, նոյն 1870-ի Ցեղեկագիրը չէր մոռանում յիշատակելու և գիւղական տանուտէրների մեղսակցութիւնը, նրանց յօժարակամ աջակցութիւնը միւլթէզիմներին.

Այս պրագային մէջ, գիւղացի և ասպետները ինքնաբերաբար առան տեսակ տառապանաց կ'ենթարկուի, դատի կը քաշուտուի, կը տրտուի, կը բռնադատուի...

Վերջապէս, Ներսէս Արժապետեանի նախագահութեամբ կազմած նոյն բննիչ Գանձնաժողովը իր գե-

կուցման մէջ շեշտում էր, որ թիւրք կառավարութեան պաշտօնեաները օգտուում էին գաւառացի «բնիկ մեծատանց ազգեցութենէն», հայ ժողովուրդը շահագործելու և հարստահարելու նպատակով:

Այդ նոյն մեծատուները կամ գաւառական հայ աղաները, իրենց դրամի զօրութեամբ ձեռք բերելով հոչակ ու ազգեցութիւն, լինելով վալիի, մութէսարըֆի, գայմագամի բարեկամներ, սովորութիւն ունէին յաճախ նոյնիսկ հերքելու այն լուրերն ու տեղեկագիրները կատարուող զեղծուածների մասին, որ հայ ժողովուրդը լալով ու ազերսելով ներկայացնում էր իր պատրիարքին և որ վերջինը ներկայացնում էր բարձր իշխանութեան...

Ահա բնիչ Յանձնաժողովի վկայութիւնը.

... Բ. Գրան հրամանագիրը կ'երթայ վալիին, անկէ ալ մութէսարըֆին և գայմագամին և ի պատասխան... տեղեկագրով մը կ'ը ստուի կը հերքուի)... Գ ժ բ ա խ տ ա բ ա բ, հ ա յ ն ա լ կ ը ս տ է զ ա յ ն, կ ա մ ա ո ա կ ն կ ա լ ու ի թ ե ա ն, ի ն չ պ է ս կ'ը ն ե ն գ աւ ա ո ա կ ա ն ի շ խ ա ն ու թ ե ա ն ց մ օ տ գ ը տ ն ու ո Ղ ա Ղ ա ն ե բ ը, կ ա մ երկիւղի, առ ինչպէս կ'ընէ ժողովուրդը...

«Մասիս» լրագրի 1871 թ. սեպտ. 10-ի համարում զետեղած գաւառական մի նամակ (Վանայ Յոսպ գաւառից) նկարագրում է հայ չօրպաճիների, ազգային ջոջերի և կղերի կեղծքուճները.

Սահմանադրութեան լսի անուն մը կայ, սակայն, դժ ախտարար, ինքը չկայ... Վասպուրականի անձնուէր պէյերը և էֆէնտինները դպրոցայ համար ճիգ թափելէ կը զլանան, այլ եկեղեցւոյ ստակը հատարելոյ համար (ժողովրդից Մ Վ.) աշխոյժ ու հուանդով կ'աշխատին, բոտ որում իրենց քսակ կ'իջնայ այդ հանգանակութիւնը...

Ահաւասիկ ներքին հայատիպ ոստի մօտաւոր պատկերը: Հալածանքը ազգային էր—այո՛ Սուլթանական լուծն, այո՛, միացած իսլամական կրօնի այլամերժ հաւատամքի հետ, հալածում էր հային ընդհանրապէս, իբրև որոշ ցեղի և կրօնի պատկանող էակի, և երբ հնչում էր կոտորածի շեփորը՝ Սահմեղի հաւատացեալները խտրութիւն չէին դնում հարստի ու աղքատի միջև, զարնում էին հային, լինէր նա մեծատուն կամ մուրացիկ, աշխարհական կամ քահանայ:

Սակայն, անշուշտ, սխալ կը լինէր ենթադրել, թէ օսմանեան ոէժիմը, թալանի և սպանութեան դարաւոր քաղաքականութիւնը հաւասարապէս ծանրացած է եղել հայութեան բոլոր դասակարգերի վրայ: Քաղաքական ճնշումը և տնտեսական աւերածը ահեղ թափով ծանրացել է բուն ժողովրդի, երկրագործ ու արհեստաւոր զանգւածի վրայ, այն ինչ բարեկեցիկ տարրերը կարողացել են ընդհանրապէս յարմարել և տեղ-տեղ նոյնիսկ աճեցնել իրենց հարստութիւնը ժողովրդական համատարած թշւառութեան մէջ... Անգամ ջարդի խուճապների օրերում, այդ տարրերը կարողացել են յաճախ իրենց դրամի ու կապերի շնորհիւ իսկ ազատել իրենց կեանքն ու ստացւածքը. իսկ նօրմալ, «խաղաղ» շրջաններում հայ ունեւոր դասակարգը—բանիցս արդէն սկնարկել ենք մեր տեսութեան նախընթաց էջերի մէջ— ունեցել է տնտեսապէս բաւական նախանձելի դիրք, թէ մայրաքաղաք Պոլսում, թէ ծովեզերիայ այլ քաղաքներում և թէ բուն Հայաստանում:

Ինչպէս որ պօլսական ամիրան, բանկիրը, սարրաֆը,

փառանքներն ու այլ կարգի մեծերին հնչիւն դրամ փոխ տալով, վայելել են նրանց հզօր հովանաւորութիւնը, այնպէս և հեռաւոր գաւառներում, հայ ունեւորը, մեծառունը—մի խոշոր առևարական, մի հարուստ կարաւանապետ—աչողել են միշտ դրամով ու այլ տեսակ ծառայութիւններով սիրաշահել տեղական իշխանութիւնները, բարեկամանալ վալիների հետ և դրա շնորհիւ միշտ աւելի ու աւելի մեծացնել իրենց գործի ծաւալը և հարստութեան չափը:

Բազմաթիւ էին դրամի այդ իշխանները հայ կորած ու լքած գաւառի մէջ և թւում է թէ ըստ ամենայնի անդունդ կար չքաւոր ու տառապող հայ ժողովրդի և այդ անաբոյս դրամատէր իշխանների միջև...

Մ օ ր ի ց Վ ա գ ն ե ր, 40-ական թւականների ճանապարհորդ-գիտնականը, իր ծանօթ աշխատութեան մէջ *) մի քանի անգամ ընդգծում է հայ խոշոր և ազդեցիկ դրամատէրերի ներկայութիւնը Թիւրքաց Լալաստանի մէջ: Եւ դեռ 1828-ի ռուսական արշաւանքից յետոյ ահագին թւով հայ հարուստ վաճառականներ թողել էին էրզրումի վիլայէթը և անցել էին Վոլկաս Միւս մասը—թերևս ամենէն անվախ, համարձակ և ձեռնարկու աարբերը—գերադասել էին մնալ երկրում և շարունակել իրենց արդիւնաւոր—թէև վտանգալի—ձեռնարկները կարաւանների մեծ ճամբու վրայ... Ներկայացնենք երկու խօսքով և Մօրից Վագների բա-

*) *Reise nach Persien und dem Lande der Kurden* (Ուղևորութիւն Ղևկի Պարսկաստան և Ղևկի բերդերի երկիրը)

ներով—այն ժամանակայ *) հայ աիպիկ գաւառական իշխանին: Դա մի նշանաւոր կարաւանապետ է:

Վարաւանը, որի հետ եւս Հասան Ապէլով գնում էի Պարսկաստան, գտնում էր մի հարուստ հայի հրամանատարութեան տակ: անունն էր Արապեօզ և մեծ հոշակ ուներ էրզրումի մէջ: Ըմեն տարի նա էրզրումի վալիին նւեր էր բերում դարաբաղական ցեղի մի սիրուն ձի: Վարդը խոշոր գիրք էր վաստակել, ամեն տեղ մտնում էր, փառայի բոլոր ստորագրեալներին, պաշտօնեաներին առատ առատ բախշիչ էր տալիս: Ընդ հանգամանքն այնպէս էր սիրաշահում տաճիկներին, որ Արապեօզի «գիւպուր» լինելը բարբոթին մտնել էր տալիս և զիրար թեւաք կատարում էին նրա ցանկութիւնը, այսինքն միջոյններ էին տալիս՝ կարաւանը հովանաւորելու... Նա կրում էր Վարաւան բաշի հպարտ անունը...

Վարաւանը բաղկացած էր 360 ձիուց, որոնց կէսը Վարապեօզի սեփականութիւնն էր: Մնացածը պատկանում էր մեծ ժառանգ դարձեալ հայերի:

Զինւած էին — ասում է Վագներ — այդ ահագին կարաւանն առաջնորդող բազմաթիւ հայերը և ամեն անգամ երբ ընդհարում էր տեղի ունենում քրդերի հետ, նրանք — հայերը — քաջաբար պաշտպանում էին... Իսկ քրդական յարձակումները սովորական երևոյթ էին. «Վարաւանների անցուղարձներին—շարունակում է Վագներ — ամենուրեք, հայոց Այպերի կիրճերի ձու թափառում էին քրդերը իրենց նախիրներով և պատրաստ էին գայլի ունոցով յարձակում գործել ճամբորդների վրայ **):

Վագների յիշատակած Վարապեօզը միակը չէր, հար-

*) 40-ական, 50-ական թւականների

**) *M. Wagner, Reise...* էջ 284:

կաւ իր տեսակի մէջ: Վարագեօզները լէգէօն էին: Հընչուն գրամը, որ առատօրէն գիզում էին նրանք իրենց հեռաւոր և ընդարձակ առևտուրի մէջ, գնում էր կաշառելու: հօրնների սրտերը և գրամի շնորհիւ նրանք իրենք դառնում էին մի մի իշխաններ իրենց ցեղային միջավայրում:

Խոնարհ, ստրուկ երկրպագու մահճեղական զօրաւորների առջև—նրանք դաժան ու ամբարտաւան էին իրենց հարազատ ցեղակիցների հանդէպ: Նոյն հոգեբանութիւնը տեսանք արդէն Վ. Պօլսի ամիրանների մօտ: Նոյն այլասեւեռած մտայնութիւնը—և այն ժամանակէլ հայ կղերի մէջ: Լսեցինք արդէն նոյն վագների խարանող ածականները իր տեսած և ուսումնասիրած հայ լուսաւորչական կղերի մասին:

Kriechend, demüthig, bettelhaft gegen europäische Reisende. — herrschsüchtig, hartherzig und geizig gegen ihre Heerde, besonders gegen ihre ärmeren Glaubensgenossen...

«Ստորաբարշ, նուստ ու մուրացիկ եւրոպացի ճամբորդների առջև — նրանք (հայ վանականները) գոռոզ են, բռնակալ, կարծրասիրտ, ժլատ իրենց հօտի և մանաւանդ չքաւոր հաւատակիցների հանդէպ»...

Չափազանցութիւն չկայ այդ հակիրճ և վշտառիթ բնորոշման մէջ:

Այդպէս է եղել հայ կղերի դասակարգային էութիւնը յընթացս ամբողջ պատմութեան, այդպէս է եղել և հայ ազալութեան դասակարգային պատկերը սկզբից մինչև մեր օրերը: Են հատական բացառութիւններ եղել են, անշուշտ,—նրանք եղել են

գրեթէ բոլոր դասակարգերի ու հասարակական խաւերի մէջ: բայց ընդհանուր, հաւաքական պատկերի մէջ տիրապետել է միշտ վերոյիշեալ բացասական գիծը:

Եւ գո՛հ էին, բնականաբար, այդ կիսով չափ ապագա-գայնացած տարրերը իրենց պատմական ու սօցիալական միջավայրում. գո՛հ էին վարագեօզները, գրամի բոլոր իշխանները, որ վայելում էին տոանձնաշնորհօթներ, հոշակ, պատլ և խորխտաբար առաջ էին մղում առևտրական իրենց ձեռնարկները, բիւրդ ու այլ աւազակների ժշտական սպառնալիքների մէջ, պահպանելով յարաբերութիւն փաշաների և օտար հիւպատոսների հետ, արհամարհելով իրենց գրամական լեռների բարձունքներից հայ աշխատաւոր, չարբաշ, մերկ ու անօթի ժողովուրդը, որ անբում էր թիւրք-բրդական խարազանի տակ:

Գո՛հ էին իրենց վիճակից, միջնադարեան ֆէօդալ-բռնապետական ռէժիմից՝ այն գաւառացի և հայազգի մեծատունները, որոնք Քննիչ Յանձնաժողովի արտայայտութեամբ «ստում էին», բացասում հայ ժողովրդի տանջանաց յիշատակագիրները, ժխտում էին այդ ժողովրդի ամենատարրական իրաւունքները, անգամ խընդրելու, աղբրսելու իրաւունքը:

Գո՛հ էին, լա՛ւ էին զգում իրենց լարած սարգոստայնի մէջ քիւղապետներն ու վաշխառուները, դաւաճաններն ու ազգութաց յրտեսները և բոլոր երկոտանի սողունները, որոնց համար բռնակալութիւնը միակ ընդունելի ռէժիմն է և խաւարը՝ միակ շնչելի միջնորոտը:

Գո՛հ էին Վ. Պօլսի ամիրանները, որ գարշելով գար-

չում էին հայ-ժողովրդական ցոյցերից, ժողովրդի ու մասնորականութեան միջամտութիւնից ազգային գործերի մէջ... Գո՛Տ էին և տրամադիր յաւերժացնելու իրենց բռնաւոր խնամակալութիւնը ժողովրդի վրայ, իրենց կատային դրոշմը հայկական ճակատագրի վրայ:

Գո՛Տ էին 50-ական ու 60-ական թւականների «խաւարեալները», որ կատաղօրէն մարտնչում էին Սահմանադրութեան ու «լուսաւորեալ» տարրերի դէմ և թըշնամու ձեռքն էին մատնում հայ ազատամիտ երիտասարդներին:

Գո՛Տ էին 40-ական թւականների վեճափայլ ջոջերն ու «ազգասէր» ազաները, որ Ազգային ժողովի մէջ յօրանջելով էին ունկնդրում գաւառական հարստահարութիւնների զեկուցանողներին, որ բնաւ չէին ուզում «հայկական խնդիր» հանել, կառավարութեան աչքին կասկածելի երևալ և որ այնքան աշխատեցին վիժեցնելու Յեղեկագիրը, հակառակ ժողովրդասէր պատրիարքի թախանձապին յորդորներին:

Գո՛Տ էին նոյն ջոջերը և նրանց հետ ամեն կարգի շահագործող «կուշտերը» 80-ական և 90-ական թւականներին, երբ նրանք ցինկօրէն մերժեցին հայ ըմբոստ երիտասարդութեան մեկնած ձեռքը, լքեցին այդ երիտասարդութիւնը բախտի կամքին և ապա անխող, անկարեկիր հանդիսատես եղան ժողովրդական զուլումներին, նետելով պատասխանատուութիւնը ոչ թէ իրենց դաւաճան անտարբերութեան, այլ նոյն ըմբոստ, յօշոտւած ու անձնագո՛Տ տարրերի վրայ, որոնք չէին կարող հանգիստ դիտել մի ժողովրդի աստիճանական բնաջնջումը:

Գո՛Տ էին և գաւառական հայ տուգերն ու ազաները, որ յեղափոխութեան շրջանի մէջ, ժողովրդածին ըմբոստների օրհասական կուռի ընթացքում, միացած կառավարական գործակալների հետ որսախուճապ էին կազմակերպում յեղափոխական գործիչների դէմ... Ով չի յիշում նրանց քստմեղի սխրագործութիւնները Վանում, Մուշում, Հայաստանի գրեթէ բոլոր անկիւններում... ժողովրդի և նրա հետ տանջող ու նահատակող անձնուրացների դէմ:

Գո՛Տ էին և այդ դժբախտ ժողովրդի *porte-parole*, ներկայացուցիչները—վեղարաւոր և անվեղար—որ անգամ Նւրուպայում գուժարած հանդիսաւոր արեօպագի մէջ չէին կարող հանդուրժել հայոց հարցի արծարծումը և շտապում էին հեռագրով հասկացնել բաղաքակիրթ մարդկութեան, որ Նւրուպայի հայ գործիչները «մանգա» չունին, որ թիւրքաց Հայաստանը գանգատ չունի, որ նա լաւագոյնն է բոլոր հնարաւոր աշխարհներից...

Ա՛հ, և ինչո՞ւ այս բոլորը արձանագրելու հարկի մէջ ենք, ինչո՞ւ հայ դժբախտ գրողին վիճակած է իր դժուարին խուզարկումների մէջ այսքան աղմուտ իրողութիւններ բրբրել, այսքան խոշից ու խորխորասներից քայլել, ուր նա յաճախ ստիպւած է ամուր խցկել բիթ ու պոռնկը, անտանելի գարշահոտներից խուսափելու համար...

Ը՛յո՛ւ մեր ունեւոր և ազդեցիկ դասակարգերի անտարբերութիւնը ազգի է՛ն կենսական, հրամայական հոգսերի հանդէպ՝ ծանրացած է մեր սցաւոր պատմութեան վրայ, որպէս անջնջելի և անբաւելի մի տրամա-

Գանգատներ ունի հայ ժողովուրդը ոչ միայն հայ բռնաւոր աղաների, պորտապարար կղերականների, տգրուկ վաշխառուների, մատիչների, դաւաճանների և բոլոր ճշմարիտ ցեցերի դէ՛ս, այլ և իր արգիւնաբերող ու առևտրական դասակարգի, որ աւել է անցելու և նորագոյն ժամանակներում այնքան շիտակ ու սրտցաւ հայրենասէր տիպարներ, ճշմարիտ ռահվիրաներ ազգային վերածնութեան:

Ի՞նչ են, սակայն, փոքրամեծ անհատները հայկական Արպագօնների և Պլիւշկինների այդ ահագին դասակարգի մէջ, որի գոյութեան բարեւէլի վրայ այնքան խիտ ու ծաւալուն են սոււերները, որի սիրտը բնաւ երբէք ներդաշնակ, à Funisson չբարախեց կուող ու մեռնող ժողովրդեան սրտի հետ.— մի դասակարգ՝ որ նորագոյն պատմութեան ամենավճռական վայրկեաններում, ամենացաւոտ ու մահացու գրեւորների հանդէպ ցոյց տւեց անօրինակ, ազգադաւ անտարբերութիւն — թէ Թիւրքիայում, թէ Ռուսաստանում ու հայկական գաղութների մէջ:

Ձուր չեն մեր գրեթէ բոլոր նորագոյն մատենագիրները այնքան ցասկոտ ոճերով խարանել հայ փողատէր դասակարգը:

Ձուր չէր նաև մեր վշտատանջ, անմխիթար քրիստաֆօրը իր «Պատմական Ձարիք» խորագրով Գրօշակեան յօդաւածաշարքի մէջ այնքան թոյն ու մաղձ թափում հայ դրամատէր դասակարգի այդ բացառիկ մտայնութեան վրայ:

«Հայ բուրժուազիան, հաւառարիմ իր մշտական սկզբունք-

ներին, յօգայի հարցի չափ անգամ կարևորութիւն չէր տալիս այնպիսի մի հսկայական խնդրի, ինչպէս էր հայկական դատար...»

Ազգային համերաշխութիւնը օրինակելի էր Յունական Յեղափոխութեան բունկուսից յետոյ, ջնջել էին դասակարգերը համազգային բաղաբական դատի առջև, հարուստ ու աղքատ թեթեւի տւած՝ կազմակերպում էին զինուորումն ու դիմադրութիւնը: Թոյն հարուստներն էին մատակարարում կոււի պաշարը, ռազմամթերքը: Եւ հրապարակ էր գալիս ամենախոշոր հարուստներից մինը, Լազար Կօնդուրիօտիս, որ յայտարարում էր.

Երեսուն տարուց ի վեր ես ամբարել եմ գանձեր—և բախտաւոր կը լինէի, եթէ նրանք այսօր ծառայէին իմ երկրի ազատութեան... Յուսով եմ, որ միւս հարուստներն ևս կուենան նոյն զգացումները. եթէ ոչ, դարձեալ մի՛ վհատէք, ևս նաւատորմի ամբողջ ծախքը կը հոգամ մենակ...

Հապա մե՞զ մօտ... թողնենք դարձեալ, որ խօսէ «Դաշնակցութեան» ու Յեղափոխութեան մեծանուն քարոզիչը:

Վերջին տասնամեակում հայ-տաճկական յարաբերութիւնները կեանքի ու մահուան խնդիր ստեղծեցին մեզ համար, առաջ բերին մի տագնապալի, բացառիկ, անօրինակ վիճակ: Ի՞նչ կարող է աւելի պարզ լինել քան այն, որ բացառիկ դրութիւնը պահանջում էր նաև բացառիկ եռանդ, բացառիկ գործունէութիւն, բացառիկ ճիգեր: Բայց «Վ հետևեց այդ պահանջին՝ բացի ինտելիգենտ կամ զուտ ժողովրդական երիտասարդութեան համեմատաբար մի աննշան փոքրամասնութիւնից:

Ահա մի բանի գծեր:

Հազարաւոր անհատներ կարելի է գտնել հայերի մէջ,

որոնցից իւրաքանչիւրը կարող էր ամբողջ նահանգներ զինել Տաճկահայաստանի մէջ: Գուրու եկան գոնէ մէկը: 1895 թիւն, պատմում է Մակկոյր (Սուլթաննեթիւններ)՝ «Սուլթաննեթիւններ»՝ Տայիկան կառարածների տպարարութեան տակ:

«Մի ա ն գ լ ի ա ց ի, իր քաղաքական համոզմունքներով պ ա հ պ ա ն ո ղ ա կ ա ն, յայտարարեց, որ եթէ մեծ պետութիւնները, իրենց մեծագոր սկզբունքներով, արիւթիւն չունեն սուլթանի սփռագործ կատարութիւնը սանձահարելու, ուրեմն Հայաստանում գիւանագիտութիւնը առնուազր կարող է փոխարինել ի ն ք ն ա յ ս ժ ա ր ջ ա ն ք ե ր ս փ, ինչպէս այդ եզրա յունական անկախութեան կուրի ժամանակ, և իր կողմից նա ա ա ջարկեց 5000 Փ. սա. 25,000 Փրանկ, որ գ է ն ք գ ն ի անօգնական քրիստոնեաներին բաժանելու համար Տաճկաստանի այն տեղերում, որոնք մտաշէլի են ծոփի կողմից»:

Իսկ մե՞նք, հայեր... Բաւական է յիշել, որ ամենաշախտըր գումարը, որ ամբողջ հայութեան մէջ մի հատիկ մարդ նւիրել է զէնքի գածին, այդ եղել է ընդամենը 25,000 Փրանկի չափ մի ծախս... Բայց միաժամանակ բանիշքանի անձուկեր և փորձած գործիչներ, քանի՜ բանի գաւառներ կրթան, հայուցին միմիայն և միմիայն տարիների ընթացքում և ամենարարելաջող հանդամանքներում գէ՛նք, գէ՛նք ու գէ՛նք սպասելու և վերջի վերջոյ շտամալու պատճառով...

Հազարաւոր նիւթապէս ապահով հայեր Հնդկաստան, Ղնդլիա, Ամերիկա, Աֆրիկա, ջհաննամ են գնում ով գիտէ ինչ գծախային միջոցներով՝ իրենց ունեցածը աւելացնելու համար, բայց և ոչ մէկը չզտնեց, որ այսպիսի մի անսովոր պատմական դժբախտութեան օրերում տեղիցը շարժւէր հասարակօգու սեւէ ձեռնարկի համար: Եւ այս ոչ միայն հին սերունդի ներկայացուցիչների մէջ, այլ և երիտասարդ գրամատերերի շրջանում, որոնք ունեն և՛ տառւ, և՛ գարգացում ու երբ սխում են խօսել հասարակական գործունեութեան և ժողովրդի շահերին ծառայելու անհրաժեշտութեան վրայ, Կլադատոններ ու Լաստալներ պէտք է գերեզմաններից կանչւեն նրանց հետ մրցելու համար...

Քաղաքակիրթ աշխարհում էլ ժողովուրդ չմնաց, որ այս կամ այն չափով արձագանք չտար հայկական՝ թշուառ վի-

ճակին: 1894 թուականից սկսած՝ անգլւացիք, ֆրանսիացիք, հոլանդացիք, ամերիկացիք, գիւյերիացիք, նոյնիսկ գերմանացիք հայերին սղնտութեան ձեռք մեկնեցին՝ երկրի մէջ հայ ժողովրդին գրամ հոյ և երկրագործական անասուններ բաժանելու կամ սրբացած մանուկներին խնամելու և կրթութիւն տալու հասարակ ինչ արին իրենք հայերը: Մենք ունենք հազարաւոր հայեր, որոնցից իւրաքանչիւրը կարող էր նոյնքան մարդ կերակրել, նոյնքան սրբանոցներ հիմնել, սրքան այդ արեւց մի բանի ազգերից՝ ժողոված գրամներով, բայց գո՞ւրու եկաւ այդպիսի մէկը: Յայտնի է, որ միակ մի ջանչեան, ծագումով միայն հայ, իսկ կրթութեամբ կես վրացի, կես սուս, իր անձնական աշխատանքով աւելին արեց հայ մանուկների համար, բան մեր ազգասէր հարասաները:

Իրաւացի՛ է, հիմնաւոր է ԲրիտաՓօրի գանգաւոր Հայկական բուրժուազիան իր թշուառ, եպերելի հոգեբանութիւնը ցուցադրեց ոչ միայն յեղափոխական շարժման հանդէպ, ուր նա ունէր իր գլուխարգարացուցիչ յպատաճանները՝ երկիւղ, անվստահութիւն յեղափոխական ուժերի նկատմամբ — այլ նա ցոյց տուց իր բացարձակ անտարբերութիւնը նաև հայկական դատի հետ կենդանի առնչութիւն ունեցող գուտ լէգալ, օրինական ձեռնարկների վերաբերմամբ, որոնց անհրաժեշտութիւնը յաճախ են փաստարանել նոյն բուրժուազիայի իդէոլոգները:

Ընծո՞ւ պատրւականներ էին՝ թէ երկիւղը (թիւրք ու սուս կառավարութիւնից) և թէ մանաւանդ «անվստահութիւնը», թերահաւատութիւնը դէպի յեղափոխական ուժերը: Ընգամ խոշոր, հանդիսաւոր վայրկեաններում, երբ այդ ուժերը աջողում էին ստեղծել երկրի մէջ յեղափոխական կացութիւն, երբ նրանք կազմակերպում էին ժողովրդական դիմադրութիւն ամբողջ ամիսներով

Զէյթունի և Սասնոյ լեռներում (1895—96 թ. և 1903—904 թ.), երբ հայկական խնդիրը լուրջ յուզմունք ու իրարանցումն էր յարուցանում գիւանագիտական աշխարհի մէջ, — անգամ այդ հերոսական վայրկեաններում հայ կրեսոսների դասակարգը մատնում էր իր կատարեալ անզգայութիւնը, ռիսկ չէր անում բաց անել արիւնտուող ժողովրդի առջև իր ամրակուռ սընդուկները: Կա մնաց միշտ օտար ու խորթ այդ ժողովրդի ամենախնտիմ բաղձանքների և ամենասուրբ իրէալների համար...

Եւ այդպէս, ճակատագրի մի դժբախտ անօրինութեամբ, սկզբից ի վեր—դեռ 70-ական թւականներից, երբ սաղմնաւորում էր հայ քաղաքական դատը և երբ անցքերի հրամայական թելադրութեան տակ կամացկամաց կերպարանաւորում ու բեմ էր գալիս, թէ մամուլի և թէ ազգային հաստատութիւնների մէջ, մարտական շունչով տոգորած երիտասարդութիւնը—պառապետութիւնը, խոր, անհաշտ հակամարտութիւնը, ցայտուն կերպով հրապարակ եկաւ ազգի երկու հատուածների միջև. մի կողմից՝ այդ մարտաշունչ գաղափարական փորձամասնութիւնն էր—ձուլւած մեծ մասամբ բուն ժողովրդական տարրերից—որ ստանձնեց հայոց վերանորոգող պատմութիւնից ամենածանր, ամենադժնգակ բեռը, որ լծեց՝ ուրախ ու սիրայօժար՝ հայ քաղաքական վերածնութեան դժարին, պատասխանատու աշխատանքի մէջ, որ թափեց ճիգ ու եռանդ՝ ազատութեան գաղափարը արծարծելու և կեանքի

մէջ մտցնելու համար, իսկ վայրկեանը հասնելուն պէս առաջ նետեց *à corps perdu*, մի յուզիչ ու հերոսական անձնուրացութեամբ դէպի փոթորկի ամենամույլ խորշերը, դէպի շարժման ամենայորձանուտ կէտերը... միւս կողմից՝ ազգի ահագին մեծամասնութիւնն էր, կազմւած բարեկեցիկ ու շահախնդիր տարրերից, որ ոչինչ չզոհարեց իր հանդերձ, ստանձնեց ազգի գերագոյն խնամակալի պաշտօն, անողոք բնագոտի, դատախազի պաշտօն, հալածեց շարունակ նոյն գործող փորձամասնութիւնը իր գոռոզ և թունոտ արհամարհանքով, իր շինծու պատճառներով ու պատրուկներով և հասցրեց նրան լքման ու յուսահատութեան այնպիսի անդունդների, որ ի վերջոյ... իր դէմ յարուցեց յեղափոխականի բուն, ահարկու առելութիւնը, նրա մոլեգին և վրիժառու շանթերը...

Ազգային չ'եղաւ հայ ազատագրական շարժումը, այն իմաստով, ինչ իմաստով ըմբռնել և մղել է այն՝ ուրիշ, աւելի առաջադէմ երկրներում, Իտալիայում, Ռուս գարիայում, Լեհաստանում, Իրլանդիայում և նոյնիսկ Յունաստանում, — հաւաքական ու համերաշխ ճիգերով, ազգի բոլոր դասակարգերի միահամուռ գործակցութեամբ, ժողովուրդն էր, հայ տրորւած ու գաղազած ժողովուրդը, հայ աշխատող և տառապող ընդհանրութիւնը — գիւղացի, արհեստաւոր, պրօլետար, մանր, համեստ առևտրական — որ միացած իր հարազատ գաղափարական մտաւորականութեան հետ՝ տարաւ իր մաշւած ուսերի վրայ շարժման լուծը. ժողովուրդն էր, որ աւեց և՛ գաղափարի քարոզիչներ և՛ յեղափոխութեան

իդէօլոգներ և՛ առաջամարտիկ զինւորներ, հռչակաւոր խմբապետներ, ժողովուրդն էր, որ լցրեց միշտ անձնէրների շարքերը, որ անուցեց և յեղափոխական գանձարանը իր դժւարին վաստակից նւիրաբերած լուսմաներով:

Ժողովրդային — ոչ ազգային: Եղբրական անտիթեզ, չարաշուք հակօրինութիւն... Այդպէս է անշուշտ, եթէ մտածենք, թէ ինչքան լուրջ պատկառելի ծառայ կ'առնէր այդ շարժումը, եթէ ցեղի բոլոր ուժերը համագրւէին ու օգտագործէին սկզբից ի վեր նոյն ուղղութեամբ, նոյն էական և անհրաժեշտ նպատակով — կ'ազմակերպել հաւաքական դիմագրութիւնը և նւաճել նրա միջոցով ազգային գոյութեան ու առաջագիւժումը և անհրաժեշտ երաշխիքները...

Հայ մարտական կուսակցութիւնը իր 25-ամեայ գոյութեան ընթացքում շատ ճիգ թափեց՝ ուժերի այդ բաղձալի համագրութիւնն իրականացնելու: Նա գիտէր, որ դա յաղթանակի պոստուլատն է, անպայման, անհրաժեշտագոյն պահանջը. նա գիտէր փորձից, պատմութիւնից, որ բարեկեցիկ դասակարգերը, լինելով հանդերձ ընդհանրապէս պահպանողական, տարբերելով ժողովրդից և նրա ղեկավար արմատական մտաւորականութիւնից, իրենց մտածումով, բնազդներով ու իդէալներով, այնուամենայնիւ պատմական որոշ վայրկեաններում — ընդհանուր, աւերիչ, ազգակործան ոստի դիմաց — համերաշխութեան ձեռք են մեկնել այդ տարրերին և հզօրապէս սատար եղել նրանց պատմական թուխք:

ներին: Նա գիտէր, որ դա նօրմալ բնականոն ընթացքն է պատմական էօլիւսիօնի, որ այդ համերաշխ գործակցութեան մէջ չկայ ոչինչ անօրմալ ու վարկաբեկիչ կուսակցութեան արմատական դաւանանքի համար, ուստի և չէր վարանում շարունակաբար կոչ անելու հայ բուրժուազիայի աջակցութեան: Ապարդիւն անցան բոլոր ճիգերը, ապարդիւն — բոլոր պերճախօս յորդորներն ու գործնական փորձերը: Եւ այսօր — քսանեօինգ տարւայ այդ յամառ ճիգերի ողբերգական ֆիասօփի հանդէպ, այսօր, երբ տակաւին հին պատակտիչ որդը շարունակում է կրծել հայկական օրգանիղմը, երբ տակաւին յարատեւում է խրամառը «հայ հասարակութեան» և հայ մարտնչող տարրերի միջև, ջլատելով հաւաքական դիմադրութիւնը, լցնելով բոլոր զգայուն սլտերը կատաղութեամբ ու ցասումով, այսօր, երբ ժողովուրդը քսանեօինգ տարւայ իր յուսահատ գալարումներից յետոյ էլ՝ դեռ մնում է կղզիացած, մերկ ու անզէն բռնապետական մշտաճարակ հիւրայի դէմ, մինչդեռ նրա ճակատագրի գերագոյն խնամակալները, հայկական հասարակութիւնը, արհամարելով ինքնապաշտպանութիւնն ու այլ նման «ցնորքները», ըստ նախնի սովորութեան կառչել է դիւանագիտական ֆէտիշին և դարձեալ նրանից է ակնկալում փրկութիւնը... այսօր, ասում ենք, այդ «խրամատի», անտիթեզի, ազգային այդ անդամանելի պատուհասի հանդէպ մեզ մնում է միթիարել գէթ նրանով, որ այդ ցաւագին անտիթեզի մէջ*) մեր շարժ-

* «Ժողովրդային» շարժում — և ոչ ազգային:

ման թուլութիւնը չէ միայն ծրարած, այլ և նրա ոյժը:

Քանի աւելի առաջ գնանք, այնքան աւելի շեշտելու է այդ ոյժը, որ հէնց շարժման ժողովրդական բնոյթի մէջ է, նրան ազնւացնող ու շնչաւորող դեմոկրատիկ սկզբունքի և դեմոկրատիկ կազմակերպութեան մէջ... Եւ հայ բուրժուազիայի պատմական դաւաճանութիւնը մի աւելորդ խթան կը լինի հայ գործօն, գաղափարական մտաւորականութեան համար՝ կանգուն մնալու իր ժողովրդասէր ուղղութեան մէջ, գրկելու Աշխատանքի և նրա միջնուար բանակի դատը և անորինչու ազգային ճակատագիրը համաձայն միջազգային աշխատաւորութեան ու ընկերավորութեան նշանաբաններին...

IV

Ք Ր Դ Ա Կ Ա Ն Պ Ա Տ Ո Ւ Յ Ա Ս Ը

Պետերբուրգի մէջ պետական. — Երկու խորագրով. — Բրգական գրացիութեան պետական հանգամանք. — Պետական. — Տեսական. Բազմական և կրօնական — Երկու սարքեր կենցաղանէ. — Նասպեպի և Եօմպի նախագահական թաղանթ. — Պարսպունքի գրոսի գեղային թարգմանի վրայ. — Քիւրդութեան ընդհանուր պատկեր. — Յիւրան համայններ՝ սուսնց սեւէ ազգային գիտական և Զովուական պարսերչանի առաջինները. — Գեոգրոսի և Արարոսի մասնակներու. — Հայ մեղայի կարծիքը երկու արիւթեան մասին. — Բամբի վկայութիւններ. — Քիւրդ երկրագործ դասակարգ. — Աւերթներ. — Մարդագոյն ներպոյն տեսիլք. — Թէմիսի պատմականութիւններ. — Թիւրանական բազմականութիւնը երկու հանդէպ. — Գերբլայթի. — Բեյրութի թախք և նետանք. — Նոր նովեր. — Քիւրդ որպէս գաղանակ հայ ազատագրական շարժման դէմ. — Հայ երգական թարգմանութիւններ. — Խափիրութիւն. —

„Հոն բունաւորաց խումբ մը կայ—Քիւրդն է անի, որ մեզի պէս հպատակ չէ Տերութեան, որ տուրք չը տար, այլ թշուառ հայը կը կեղծքէ և կ'ապստամկէ գէն 'ի ձեռին“...

Ըստպէս էր բնորոշում այդ սոսկալի պատուհասը Ազգային ժողովի հրեւոյնականներէ մինը 1870 թ.

նոյեմբեր 21-ի նիստի մէջ, Խրիմեան պատրիարքի նախագահութեան տակ

„Քանաւորաց այդ խումբը“ իր քսամնելի պատկերով այնքան ծանօթ ու ընտանի է... մանաւանդ հայ յեղափոխականին: Այնքան ճնշող ու եղերական է նրա խաղացած դերը հայ ազատագրական շարժման հանդէպ... Ա՛յ չգիտէ, որ վերջին քառորդ դարու ընթացքում հայ ֆէդային, գաղափարական բարոզիչը իր ծանր, տաժանելի առաջխաղացութեան մէջ զարնել է ամեն բայլափոխում քրդական այդ ահեղ ու անխուսափելի պատուհասին...

„Զինուած է, տուրք չը տար և հայը կը կեղեքէ ու կ'ասպատակէ“...

Արքան ժամանակ է տեւել այդ դժոխային վիճակը: Ամբողջ դարեր:

Հայոց հարցը հայ-քրդական յարաբերութիւնների հարց էր, իր իրաւական ծագման մէջ: Իրաւապէս, *de jure* այդ հարցը հրապարակ դրեց 70-ական թւերին միայն, բայց իրապէս, *de facto* նա գոյութիւն է ունեցել դարերից ի վեր:

Այ մի այլ տարր պատմական Հայաստանի սահմաններում այն աստիճան չի վնասել հայութեան ֆիզիկական և կոլտուրական գոյութեանը, ինչպէս բիւրդը: Այ մի ուրիշ ժողովրդից—թիւրք, թաթար, պարսիկ եւն— ոչ իսկ գուցէ սանձարձակ բռնապետական կառավարութիւններից, հայը չի կրել այնքան հարւած ու տառապանք, այնքան խորունկ և աւերիչ հարստահարութիւն ու կեղեքում, ինչպէս քրդից: Իր դարաւոր, ար-

հաւալի գոյութեան մէջ հայ ժողովուրդը, թիւրքահայը գուցէ յաճախ չի էլ նշմարել օսմանեան կառավարութեան ներկայութիւնը — մի կառավարութեան՝ որ ստէպ անզօր է եղել իր հեռաւոր կենտրոնից իշխելու լայնատարած կայսրութեան այլապաղաղ ծայրերի վրայ, յարգել ապուռ ամենուրեք իր կամքն ու օրէնքը—բայց հայը ամեն վայրկեան զգացել է ներկայութիւնը մի ուրիշ կառավարութեան, Քրդական Պէրէբէյի, որ չէի եղել հպատակ, չի վճարել տուրքեր, այլ յարժամ կեղեքել է, ասպատակել իր ճորտերին, իր ֆլային“... Հայը ամեն օր և ամեն վայրկեան զգացել է ծանրութիւնը այդ երկրորդ լծի, այդ վայրագ, անօրինակ ֆէօդալիզմի, որ ոչ միայն դարեր շարունակ կեղեքել է նրա աշխատանքը և աւերել անտեսութիւնը իր քմահաճ տուրքերով ու աւազակային անդադրում արշաւներով, այլ և, իբրև Հայաստանի գլխաւոր տէր, տանջել է, մորթել, բռնաբարել „ֆլային“, նրա բոլոր սրբութիւնները անպատիժ ոտնահարել:

Պետութիւն—մէջ պետութեան: Մի կրկնակի և ահունելի լուծ, որի դաժան պատկերի նմանութիւնը հազիւ թէ գտնւի երկրագնդի որևէ այլ անկիւնում, մարդկային պատմութեան որևէ այլ էջի վրայ:

Դժւար է, արդարև, համեմատել երկու լուծը — թիւրքականն ու քրդականը—դժւար է ասել, թէ որն է եղել աւելի կամ նւազ ճնշող ու հարստահարիչ հայութեան համար: Երկուսը իրար լրացրել են, երկուսն էլ ասես մի նզովելի ճակատագրականութեամբ, կոչւած են եղել իրարու թև ու թիկունք ծառայելով՝ ճարակել

...ստիճանաբար փոքրաթիւ հայ ժողովուրդը, որ այնքան դարերից ի վեր ձգւած է, իբրև միակ քրիստոնեայ օվագիս, մահմեդական ամենակուլ ովկիանի մէջ:

Ինչո՞վ է արդեօք այդ քրդական դրացութիւնը այն աստիճան աղէտաւոր ու աւերիչ եղել հայութեան համար, ո՞րն է այն հիմնական պատճառը, որ այնքան խոր, անվերածելի անտագոնիզմ է ստեղծել երկու արիական ժողովուրդների՝ քրդի ու հայի միջև:

Մեր նախընթաց էջերում արդէն իսկ շօշափեցինք այդ ծանր կնճիռը: Պատճառները շատ են. կայ բազմաթիւ գրդիչը, որ օսմանեան վարիչների ձեռքում ձգտել է միշտ սարկական հնազանդութեան մէջ պահել քրիստոնեայ դուրսը՝ «ին, կայ կրօնը, որ նոյնպէս, անտարակոյս, իր դերն է ունեցել, ինչպէս արդէն բանիս շեշտած ենք, սակայն, իսլամական զգացումն ու հաւատամքը առհասարակ զօրաւոր չեն եղել քրդի մէջ. կրօնը եղել է մի ահաւոր խարազան՝ օսմանեան գերիշխող տարրի ձեռքում... Կայ մի այլ հիմնական, առաջնակարգ պատճառ, որ պահել է երկու դրացի ցեղերը մշտնջենաւոր հակամարտութեան մէջ, — դա տնտեսութեան (economie), մշակութեան, կամ, ասենք աւելի պարզ խօսքով, պարապմունքի տարբերութիւնն է երկու պատմական գրացիների մէջ:

Անյիշատակ ժամանակներից ի վեր քիւրդը միշտ մնում էր էսպէս հովուական, խաշնարած ժողովուրդ, մինչդեռ իր քրիստոնեայ դրացին նւիրւած էր երկրագործութեան, արհեստի ու առևտրի:

Ցնանութիւնը արատորում է և պատշաճ, համապատասխան կենցաղաձև: Հողագործ ժողովուրդները նստակեաց են, իսկ խաշնարած համայնքները — նօմադ, թափառական: Առաջինները անարար են, յամառ, չարքաշ աշխատաւոր, ընդհանրապէս հարստացող ու բարգաւաճող և ուրեմն կուլտուրայի, քաղաքակրթութեան ամբարոզ: Վերջինները զուրկ են այդ շինարար, արդիւնաբերող ու քաղաքակրթող ճիգերից և ձիբքերից: Ցաւարած ու վագարօն՝ նրանք չուում են արօտից-արօտ, տնկելով իրենց շարժական վրանը այսօր այս ինչ աղբրի մօտ, վաղը այս ինչ ուրիշի. ոչ մի տեղ չեն կանգ առնում, ոչ մի հարուստ, խոտաւէտ դաշտավայր, ոչ մի զով ու հրապուրիչ գետեզերք չի շղթայում այդ անհանգիստ, կապրիզոտ, յաւերժօրէն առաջ սլացող նօմադների ուշադրութիւնը...

Այդպէս է եղել քիւրդը երկար դարեր շարունակ: Հերկել ու աղօսել, արիւն-բրտինք թափել դժւարին ու արդիւնարար աշխատանքի մէջ, սովորել արհեստ, վաճառականութիւն, սովորել մանաւանդ գիր, դպրութիւն, տուն դնել, հարստանալ, ստեղծել, մի խօսքով, կուլտուրական արժէքներ ու բարիքներ, այդ բոլորը դուրս է մնում նախրապան և վագարօն ժողովրդի մտահոգութիւնից:

Այսօր, անշուշտ, մի յայտնի փոփոխութիւն կատարւած է այդ վայրենի, նախապատմական կենցաղի մէջ: Նստակեաց և հողագործ տարրը աճում է հետզհետէ. անշուշտ, քիւրդ հողագործներ եղել են և հնում, անգամ Հերօդոտի ու Ստրաբօնի ժամանակներում, սա-

կայն, երկրագործութիւնը դիտուել է միշտ իբր երկրորդական, արհամարհւած մի զբաղմունք. դա նստակեաց գոյութիւն չէր, այլ կիսաթափառական. տարւայ դաժան եղանակներին քիւրդը մեռւմ էր մի ուրիշ տեղ, հողը հերկոււմ, իսկ ամառը իր հօտերով քաշոււմ էր դէպի լեռը, ձուլոււմ իր արիւնակից, իսկական նօմադների հետ և պարապոււմ խաշնարածութեամբ: Այսօր ևս դա տարածուած մի երևոյթ է: Գարեբը, այո՛, մինչև մի յայտնի աստիճան փոխել են բրդերի վիճակը, բայց և այնպէս, այսօր տակաւին քաղաքների մէջ հազւագիւտ է քիւրդ ազգամասկութիւնը. քաղաքից՝ ասես բնազգօրէն գաբընում ու փախչում է քիւրդը... որովհետև քաղաքն է կուլտուրայի որորանը, այնտեղ է, որ զարգանում է առևտուր, արհեստ ու արդիւնագործութիւն, այնտեղ է, որ յղկւում են կամաց-կամաց վայրենութեան ու բարբարոսութեան բնազդները և ուղղւում դէպի աւելի մարդավայել բարք ու կենցաղ:

Պարապմունքը դնում է իր դրոշմը՝ և ցեղային բնակչութեան ու բարքի վրայ խաշնարածութիւնը, վագարօն, թափառական կեանքը զարգացնում է արկածասէր ու աւազակային հակումներ, որոնք սերունդէ սերունդ մարզելով ու զօրանալով, ստեղծում են ցեղի մէջ մի բոլորովին առանձնայատուկ և չարաչուր նկարագիր... Ահա թէ ինչու նօմադների դրացութիւնը եղել է միշտ խաղաղ, նստակեաց և երկրագործ համայնքների համար — անէծք ու պատուհաս: Այդ դրութիւնը չի թող աւել, որ խաղաղ համայնքը զար-

գանայ. առաջագիմի, հանգիստ սրտով նւիրելի կուլտուրական պրօգրէսին:

Հոփուական շրջանը բռնում է մարդկային էւոլիւսիօնի ստորագոյն աստիճաններից մինը — և այդ շրջանում ապրող ժողովուրդները մասնում են սովորաբար վերոյիշեալ գծերը. աւազակային ու աւարատենչ բնազդների հետ՝ նրանք ցոյց են տալիս առ հասարակ մի դաժան անգթութիւն դէպի իրենց նմանները, դէպի բոլոր նրանք, որոնց հանդիպում են իրենց անդուլ թափառումների ու արշաւների մեծ ճանապարհին: Հասարակական գիտութիւնը բացատրում է, թէ ինչու առնտեսական և ընկերային էւոլիւսիօնի այդ հեռաւոր շրջանի մէջ՝ ցեղերը, աւելի ճիշտ, հօրդաները այնքան քիչ յարգանք ունին դէպի մարդը, նրա ստացածքը, նրա պատիւը, թէ ինչու նրանք այնքան դիւրութեամբ կոտորում են իրենց նմաններին: Բարոյական հասկացողութիւնները և նրանց մէջ ամենամեծը, կենտրօնականը — յարգանքը դէպի մարդկային անձնաւորութիւնը, որ լաւագոյն չափանիշն է քաղաքակրթական առաջագիմութեան — բարոյական հասկացողութիւնները մի ցեղի մէջ ունին սերա կապակցութիւն տնտեսական գործօնների, մարդկանց արտադրական, ստեղծագործ կարողութիւնների հետ — նոյն այդ ցեղի սահմաններում: Քանի դեռ ցեղը մեռւմ է հին, նահապետական կացութեան մէջ, իր աշխատանքի խոպան, ողորմելի գործիքներով, արտադրելու, ստեղծագործելու իր շնչին կարողութեամբ, — նրա հաւաքական գիտակցութեան մէջ, նրա իւրաքանչիւր անդամի գիտակ-

ցութեան մէջ դժուար կը ծագէ՝ թէ սեփական արժանապատուութեան ու իրաւունքի զգացումը և թէ ուրիշի իրաւունքները յարգելու գաղափարը: Թէ վայրենի և թէ նրանից մէկ աստիճանաբար բարձր կանգնած բարբարոսի աչքում՝ մարդը ոչինչ է, մի սոսկ իր է, մի անարգ գրաստ... Եւ իրօք այդպէս էր այն հեռաւոր ու խաւար ժամանակների մարդ-էակը, միջին մարդը.—մի ողորմելի երկոտանի, որ խաղալիկ է բնութեան ձեռքում, մասնւած նրա ամենազօր տարրերը—ներին և անզօր հակազդելու աւերիչ ուժերի դէմ, անզօր ստեղծագործելու կոչւող արական արժէքներ: Զարմանալի չէ, որ այդ վայրենի ու բարբարոս աշխարհների մէջ թագաւորում է այնքան պաղ ու դաժան անզգածութիւն դէպի մարդկային կեանքը և որ այնտեղ մարդը զարնում, ոչնչացնում է իր նմաններին, որպէս անբան գրաստների:

Քիւրդութիւնը մի դժբախտ մնացորդ է այն հինաւորաց աշխարհի, մի հարազատ բեկոր է այն նախնական մարդկութեան:

Ո՛չ մի հետք չկայ նրա մէջ ազգային կամ ցեղային գիտակցութեան, չկայ նոյնիսկ մեր օրերում քիւրդ-ցեղային միութիւն, ամբողջութիւն, այլ այդ աասնեակ և հարիւրաւոր ցեղերը կամ աոհմերը (*tribus, Stamm*)—Շիկակցի, Հասնանցի, Զէլալցի, Հայդարանցի, Ռըշքօտանցի, Արափցի, Պալքցի, Մօականցի, Միլանցի, Խարզանցի, Բագրանցի և այլն—ապրում են իւր տարբեր, յաճախ իրար թըշ-ղամի համայնքներ, ուր առկա ին իշխում է հինաւորաց վենդետոսն, արիւնի վրէժխնդրութիւնը, ապրում

են նահապետական սկզբունքով, իրենց շէյխի, նահապետի միահեծան իշխանութեան տակ, կոյր ու հլու հնազանդութեամբ... Շէյխը ցեղի ազնւագոյն աոհմից է և աիրում է ժառանգբար, սերնդէ-սերունդ, լուծում է ցեղի մէջ ծագած վէճերը, առաջնորդում է իր մարդ-



Ք Ի ւ ր Կ Ե Լ Յ Խ

կային նախիրը դէպի կռիւ, աւազակային արշաւներ... Ո՛չ մի հետք ընդհանուր բրդական համերաշխութեան, այլ միայն անծայր, անկերպարան, բարբարոսային մի քօսու:

Քիւրդութիւնը՝ թէ հայկական լեռնադաշտում և թէ իր բնիկ հայրենիքի մէջ, Քիւրդիստանում՝ պահ-

պանելով հանդերձ նախնի հովուական ժամանակների մի բանի դրական գծերը, պահպանում է և այդ շրջանների առաքինութիւն համարած բացասական, աշխարհասասան բնազդները, ամենից առաջ՝ աւազակութեան ընազդը: Գրեթէ բոլոր աուրիստներն ու գիտնական հետազոտողները միաբերան վկայում են, որ քրդական բնաւորութեան մէջ պահպանւած են միջնադարեան ասպետական գծերը, որ քիւրդը վեհանձն է ազնիւ, հիւրընկալ և պատւասէր: Էլիզէ Ռեկլիւ ասում է, որ քիւրդը իր բոլոր արատներով հանդերձ աւելի ազնիւ է, բնաւորութեամբ աւելի շիտակ, անխարդախ, քան իր բոլոր դրացիները: Բաֆֆին որ այնքան ատում էր քիւրդ տարրը, իբրև հայութեան անգիտակից ու մահացու թշնամի, Բաֆֆին ևս խոստովանում է, որ

„Քիւրդը... շատ հանգամանքներում հպարտ է և ազնիւ... նա իրան չէ ստորայնում, պատերազմելով իրանից թող արարածներ հետ... Քիւրդը խարբերայ չէ, նա հաւատարիմ է իր խոստումը կատարելու մէջ“, և այլն:

Զպէտք է, սակայն, չափազանցնել քրդական առաքինութիւնները, մանաւանդ հիւրասիրութեան ու ասպետական վեհանձնութեան գագացումները, որոնք, ինչպէս բոլոր նախնական, արիւնի վրէժխնդրութեամբ ապրող ցեղերի մէջ, չեն կրում երբէք լայն, մարդկային աւարուխտական դրոշմ: Նոյն Բաֆֆին, որ այնքան երկար ու մօտիկից ուսումնասիրել էր քրդերին, ասում է մի այլ տեղ.

Քուրդը իր չադրի մէջ հիւրասէր է, որպէս Արրահամ, բայց նա չի խնայի կողոպտելու նոյն հիւրին, եթէ նրան հանդիպէ մէկ մղոն հեռու իր չադրից *):

*) Բաֆֆի, Տաճկահայք. — քրդական Միութիւն:

Քրդերը բնականից քաջ են ու հիւրասէր — ասում է ամերիկացի յայտնի ճանապարհորդ Գրին — և նման շատ ուրիշ ստիական ցեղերին, նրանք պահպանում են պատուի որոշ գագացում, թէև բիրտ ու դաժան: Բայց այն ժամանակից, երբ թիւրքերը խորտակել են նրանց իշխանութիւնը, աւերել նրանց գղեակները, քարտել նրանց շէյխերին, այն ժամանակից ի վեր մեծ մասամբ անհետացել են այդ նուրբ յատկութիւնները, այդ ասպետական գագացումները: Շատ վայրերում նրանք այլասեռել և դարձել են վայրենի և անօրէն աւազակների մի հօրդա, գողոց, նենգ և անգութ: Իրենց վաղեմի դիրքի ու իշխանութեան անդուլութիւնները սնուցանում են նրանց մէջ ատելութիւն դէպի թիւրքը, որ պատճառ է նրանց անկումի և նախանձ ու արհամարհանք դէպի բրիտանեան, որ եղել է դարերից ի վեր նրանց ճորտը և որի առաջադիմութիւնն ու բարեկեցութիւնը քիւրդը հանդուրժել չի կարող *):

Աւազակային ու թալանչի բարքերը նոր չեն, սակայն, քրդերի մէջ. նրանք նոյնքան հին են, որքան ցեղը Աւազակային և աւարատենչ բնազդը կատարում էր իր խօլական թռիչքները դեռ Քրիստոսից դարեր առաջ, նրա մասին տեսնում ենք վկայութիւններ յունական պատմագիրների մօտ: Ստրաբօն մի քանի անգամ յիշատակում է քրդերին և անւանում է աւազակ ցեղ: Քսենօֆօն **), հռչակաւոր „Ցաս Հազարի Նահանջի“ մասին իր գրած պատմութեան մէջ երկարօրէն խօսում է „պատերազմաւոր, քաջ ու բարբարոս կարգիականների“

*) Fred. Daris Greene. The Armenian Crisis and the Rule of the Turk. էջ 49:

**) Քսենօֆօն, յոյն պատմագիրը և միանգամայն զորավարը, ծնւել է մօտաւորապէս 430 թ. և մեռել 352 թ. Ք. Ա.: Ինչպէս յայտնի է, նա ուղեկցել է Տաւ հազարի նահանջին, Պարսկաստանից դէպի իր հայրենիքը, Քիւրդիստանի և Հայաստանի վրայով:

(քրդերի) մասին, որոնք եօթն օրւայ ընթացքում աւելի տանջանք ու կորուստ պատճառեցին յոյներին, բան Վիւրոսի հսկայ բանակը Միջագետքի պատերազմներում: Քանի՛ բանի անյամ՝ իրենց շեշտակի նետերով այդ յարարումները՝ նեղն են ձգել յոյն զօրավարներին:

Քսենոֆոն հաղորդում է նաև, որ իր ժամանակում Վենարիլէս (*) գետի ամբողջ երկարութեամբ, որ բաժանում էր քրդերի երկիրը Հայաստանի սատրապուլութիւնից, հայկական եզերքը՝ սահմանից մէկ օրւայ սարածութեան վրայ մնում էր անբնակ, անապատ: Ոչ մի գիւղ չէր համարձակում հաստատել այդ շրջանի մէջ, ուր անդադրում արշաւներ էին գործում քիւրդ ասպատակող խմբերը:

Լեռնաբնակ քրդերը մի քաջ ժողովուրդ են, որ մնում են անկախ թագաւորից (պարսից): Մի անգամ վերջինը դրկել էր քրդերի երկիրը 12 միլիադ զօրք, և ոչ մի զինւոր չէր վերադարձել, կրկին դժւարութիւնների պատճառով *):

«Քաջ ժողովրդի» մասին մեր ֆէդայիները առիտ են յաճախ ոչ շատ նպաստաւոր վկայութիւններ: Յաճախ ենք լսել նրանցից, որ քիւրդը քաջ է միմիայն անզէն և անարի մարդու հանդէպ, բայց որ նա վեհերոս է և դիւրութեամբ նահանջող, երբ առջևը տեսնում է իսկական կուռղներ...

Հայ ֆէդային յաճախ է — անգիտակցաբար կամ նոյնիսկ գիտակցաբար, ստրատեգիկ նկատումներով, ժողովուրդը քաջալերելու մասհոգութեամբ — չափազանց-

*) Xenophon, *Expédition de Cyrus et Retraite des Dix Mille.*

րել, գերզնահատել սեփական ոյժն ու արիութիւնը և նսեմացրել հակառակորդին. այնուամենայնիւ, վերոյիշեալ վկայութեան մէջ կայ, անշուշտ, ճշմարտութեան բաժինը: Հնարաւոր է, որ սակաւաթիւ ֆէդայիներ, զինւած միանգամայն հրացանով ու գաղափարով, հզօր իրենց կոչման գիտակցութեամբ, աջողեն յաղթահարել և փախուստի մատնել իրենցից անհամատաւելի բազմաթիւ՝ քրդական վայրենի, անգաղափար խաժամուժը... Այդպէս է եղել քանիցս արդէն՝ մեր վերջին բառորդ դարու ազատագրական կռիւների մէջ:

Խաշնարածութիւնից դուրս՝ աւազակութիւնն ու թաւանը միակ պատուաւոր զբաղմունքներն են քրդերի մէջ: Եւ ոչինչ չկայ այդտեղ նւաստացուցիչ ցեղի ու անհատի համար. թաւանը, ուրիշի գոյքը բռնութեամբ յափշտակելը, անգամ գուհիկ գողութիւնը ոչ միայն չեն ստորացնում քիւրդ ասպետի արժանապատուութիւնը, այլ և համարում են «արիստոկրատ», ազնւական ցեղին միակ վայել պարապմունք: Երկրագործութիւնն է — նրա համար անպատիւ արհեստ: Այդ սև, չարբաշ աշխատանքը նա թողնում է «սայաներին», թողնում է իր ճորտ ու ստրուկ, քիւրդ ու հայ գիւղացիութեան *):

*) Հետաքրքրական և մինչև օրս առեղծւածային մի երևոյթ է այդ «քիւրդ» կոչւող երկրագործ գիւղացիութիւնը, «սահախիւր» քիւրդ է նա արդեօք իր ցեղային հանգամանքով, իր ծագումով: Ոմանք, օրինակ Գիւհուսէ (Houssel), պնդում են, որ չկան ֆիզիկական տարբերութիւններ այսպէս կոչւած աշիրէիւների (իշխող, հրամայող

Մէլիքզադէն գրում էր «Մշակ»-ին 1872 թւի իր ուղևորութեան միջոցին՝ թիւրք-պարսկական սահմաններում.

Քրդերը ներկայացնում են մարդկութեան առաջին ժողովուրդը: Աւազակութիւնը, մարդասպանութիւնը ոչ միայն մեղք չէ համարվում նոցա մէջ, այլ և գերազասվում է, որպէս ազնիւ քաջագործութիւն: Մարդու արիւնով իր թուրը չր ներկած տղամարդը և յափշտակութեան, կողոպուտի անընդունակը համարվում է ծոյլ և երկշտ մարդ *):

տարրի) և հողագործ զանգուածի միջև, որը շատ աւելի բազմաթիւ է, քան առաջինները: Սակայն, այն բոլոր գիտնական հետազոտողներն ու մխտանարները, որոնք ապրել են երկար ժամանակ քրդերի աշխարհում, միաբերան հաստատում են, որ թէ Պարսկաստանի և թէ Ասիական Թիւրքիոյ ընդհանուր ժողովուրդների մեծամասնութեան մէջ կան երկու խիստ տարբեր դասակարգեր, որ ծագում են հուանականաբար տարբեր ցեղային արմատներից: Այդ երկու կաստերն են՝ քերմանի կամ աշիրէթի, որ ասել է ազնւական, և գուրան կամ գիւղացի Պնդում են, որ այդ վերջինները մնայորդն են երբեմն յաղթւած և աշիրէթների ձեռքով ստրկացած մի ազգի... Էլիզէ Ռեկլիւ նոյնպէս յարում է այդ կարծիքին (Régus. Asie Antérieure): Նրանք, այդ յաւիտենական յաղթւածները, ճորտեր են, որ երբեք չեն կարող բարձրանալ մինչև պոտերազմիկ ու ազնւակտն դասի շարքերը, այլ հարկադրւած են միշտ հողը հերկել իրենց տէրերի համար, որոնք պահպանում են նրանց վրայ կեանքի ու մահուան իրաւունքը:

Ռիշի վկայութեամբ՝ Ֆիզիկական գծերը տարբեր են տիրող և ստրուկ դասակարգերի մէջ: Ստրուկների դէմքերը աւելի մեղմ ու կանոնաւոր և ընդհանրապէս աւելի գեղեցիկ՝ մտնում են յունական տիպարին:

*) «Մշակ», 1872 թ. № 29:

Քիւրդ ցեղը ոչ միայն աւել է և տալիս է աւազակներ, այլ և արտադրել է աւազակի կլասսիկ տիպը, և դժւար թէ երկրագնդի որևէ այլ ցեղ կարողանայ մրցել նրա հետ այդ ասպարէզում: Համեմատել են նրան ալբանների, չերքէզների, ամերիկեան հնդիկների հետ. ոչ մէկը սակայն չի կարող հասնել նրան՝ աւազակային արհեստի մէջ:

Իմ հինգամսայ ուղևորութիւնների ընթացքում Աֆրիկայի և Ասիոյ մէջ—ասում է Մօրից Աւագներ—ես շատ եմ տեսել աւազակաբարոյ ժողովուրդներ, բայց ոչ մէկի մօտ, ոչ իսկ թաթարների ու չերքէզների, ոչ Բերբերոտանի կաբիլների մէջ՝ աւազակային հակումը (Raublust) այնքան խոր արմատներ չի ձգել, ինչպէս քրդի մէջ *):

Եւ այդ սարսափելի ու արկածալի արհեստը զարգացրել է այն անսովոր ճարպկութիւնը և այն դաժան, վագրային անգթութիւնը, որ տակաւին ժամանակակից քրդի յատկանիշն է և որոնցով նա վերջին երեսուն տարւայ ընթացքում սասանեցրեց հայ աշխարհը, ողջ Եւրոպան...

Գողանայու, փախչելու և թաղնւելու մի անօրինակ հրմտութիւն, սողալու, մազլցելու, դէպի լեռ բարձրանալու մի արտակարգ ճարպկութիւն—ասում է նոյն Աւագներ:

Դուք տեսնում էք յանձին քրդի՝ մարդ-զապանի ամենանուրբ տեսակը, ճարպիկ, զգաստ, արթուն, իր թափանցող, սև, ածխագոյն աչքերով, որոնք պաղ են ու դաժան, ինչպէս վագրի աչքերը (... eyes as cool, cold and cruel as that of a tiger).—այդպէս է նկարագրում ամերիկացի Գրինը (The Armenian Crisis...):

*) Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden.

Անգութ ու բարասիրտ՝ նաև ընտանեկան իր յարաբերութիւնների մէջ:

«Քիւրդը ցոյց է տալիս անհամեմատ աւելի բնքշու-թիւն ու բարեացակամութիւն դէպի իր ձիերը, քան դէպի իր կինը» — ասում է Չէյմս Կրէյգ, որ երկու հատորներ է գրել քրդերի ու հայերի մասին *):

Իր գիտնային նախածքով (*the cadaverous-looking Koord*)... նա կ'երթայ քարուքանդ կ'անէ անպաշտպան գիւղեր, կ'ը կոտորէ, կ'ը յափշտակէ, կ'ը սրբապղծէ... Նորա միակ առաքինութիւնն այն է, որ խարդախ չէ:

Այդպէս է բնորոշում Թոմբրա Կրրզօն, որ ճանաչել է բրդերին Հայաստանում, «հայկական սարսափներից» շատ առաջ, անցեալ դարու 50-ական թւականներին **):

Քրդի տարերքը պատերազմն է, որի համար նա մարզոււմ է օրօրոցից ***):

Աւագակութիւնը նոյնքան էական մի գիծ է բրդի բնութեան, որքան պատերազմը — ասում է մի այլ ճանապարհորդ, Իզաբելլա Բիչօպ, որ 1891-ին, հայկական շարժման արշալոյսին հրատարակել է մի գեղեցիկ ու սուսմասիրութիւն Լօնդօնի մեծ հանդէսի մէջ «Քրդի սոււերը» վերնագրով ****):

«Եւ որովհետև իր կրօնը անսուրբ բան չի համարում քրիստոնէի գոյքն իւրացնելը, ուստի և նա կողոպտում է հայ ու ասորի գիւղացիութիւնը՝ հանգիստ, մաքուր խղճով: Կողոպտել բռնի կերպով, շորիել քրիստոնեաների ունե-

*) James Creagh, *Armenians, Koords and Turks*, Տրատ. Լօնդօն 1880 թ.:

***) Robert Curson, *Armenia, A year at Erzeroum*. Տրատ. 1854 թ.:

****) B. Fraser, *Travels in Kurdistan*.

*****) Mrs. Bishop, *The Shadow of the Kurd*, *The Contemporary Review*, 1891. May and June.

ցածը ամսէ-ամիս, տարեց-տարի, մինչև որ նրանք իսպառ աղքատանան, սպանել, եթէ դիմադրեն, թողնել մի առժամանակ, որ նրանց գոյքը նորէն ածի, թողնել — ըրդական արտադրութեամբ — մինչև ոչխարի բուրդը նորէն բանի, ապա վերստին կողոպտել — այս է ասիւ պարզ պատմութիւնը քրդի ու քրիստոնիայի յարաբերութեան:

Կողոպտարի մի անբուժելի սէր, անփոյթ ու կարծրասիրտ՝ երբ պետք է թափել ուրիշի արիւնը, գիշատիչ և նենգ... Քրդի սոււերը — խաւար ու դաժան — ընկած է Փոքր Ասիոյ արևելեան նահանգների վրայ...»

Եւ ասիւ այդպիսի անօրինակ, գերազանցապէս բացասական գծերով բեռնաւորւած մի ցեղի հետ է, որ անողոք պատմութիւնը կապել է հայի ճակատագրը... Քրեթէ ոչ մի հետք կուտուրայի, գրականութեան, պատմութեան, եթէ չհաշուենք ժողովրդական մի քանի երգեր, ուր երգում, փառաբանում են բնութիւնը, լեռներն ու հերոսները...

Մի առաջադէմ, քաղաքակիրթ, կամ թէկուզ կիսաքաղաքակիրթ պետութիւն կարող էր չէզոքացնել այդ գազանային ու աւերիչ արամ-գրութիւնները իր հպատակ ժողովրդի մէջ, կարող էր անվնաս դարձնել վագրի ժանիքները, ընտանեցնել, նստակեաց գոյութեան վարժեցնել թափառական հօրդաները և մղում տալ նրանց հոգեկան և իմացական առաջադիմութեան: Լաւ, բարեկարգ ռէժիմի տակ, արդարև, քրդական բնաւորութեան մի քանի դրական գծերը՝ բնածին պարզութիւնը, հպարտ անկախութիւնը, ազատասէր ոգին կարող էին զարգանալ յօգուտ ընդհանրութեան, բոլոր դրացիների, կարող էին դառնալ մի իրական գանձ ընդհանուր կուտուրական պրօգրէսի համար:

Սակայն, ի մեծ դժբախտութիւն հայի, տաճկի և նոյնիսկ բրդի՝ պետութիւնն ինքը մնում էր քարացած ամբողջ դարերով, մնում էր իբրև գերազանցապէս անշարժ, յետամնաց մի ոյժ, որովհետև այդ պետութեան կրողը, թիւրք իշխող տարրը, իր ցեղային ու կրօնական ազդեատուր տարկանոնութիւնների շնորհիւ—որոնց մասին հանգամանօրէն խօսել ենք արդէն մեր առաջին յօդւածների մէջ—թիւրք տարրը անընդունակ էր իւրացնելու քաղաքակրթութեան բարիքները և տարածելու նրանց հպատակ ցեղերի մէջ: Թիւրք պետութիւնը, ընդհակառակը, եղել է միշտ բաջալերող աւազակային հօրդաների, նա ինքն է յաճախ նիւթել անարխիա և միջցեղային հակամարտութիւն:

Ունեցել է արդեօք օսմանեան կառավարութիւնը բրդերի վերաբերմամբ քաղաքականութեան մի որոշ գիծ. . .

Երբ դարեր առաջ թիւրքերը հաստատուեցին Փոքր Ասիոյ և Եւրոպայի իրենց նւաճած երկիրներում, նրանց ընդհանուր հրամանատարի առաջին հոգսերից մինն եղաւ—ինչպէս արդէն յիշել ենք մեր նախընթաց յօդւածներում—ջնջել հպատակ ցեղերի մէջ ֆէօդալական ազնւականութիւնը և ստեղծել սուլթանական ջինջ, անխառն միահեծանութիւն: Ջնջեցին այդ ազնւական յարաբերութիւնները Բօսնիայի, Մօլդաւի-Վալաքիայի մէջ, սակայն հեռաւոր Բիւրդիստանում և Անատօլիոյ արևելեան նահանգների մէջ, ուր նոյնպէս վաղուց գոյութիւն ունէր աւատապետական Դ Ե ր Ե Բ Ե յ ու

թիւնը, շարունակեցին այդ հնադարեան ճորտատիրական կարգերը, թիւրքը չուզեց կամ սիրտ չ'առաւ բռնանալու քիւրդ աշիրէթների այդ հինաւուրց իրաւունքների վրայ, վախենալով թերևս ահաւոր հակահարւածներից:

Հասաւ, սակայն, մի վայրկեան, երբ բրդական ըմբոստութիւնը սկսեց արտայայտուել կարող ցեղապետների բացարձակ ապստամբութեամբ ու սոսկալի կոտորածներով, երբ օսմանեան կառավարութիւնը որոշեց կարուկ ու ազգու միջոցներով խոնարհեցնել ահարկու աշիրէթապետներին, չէզոքացնել բրդական վտանգը: Անցեալ դարու 30-ական թւականների վերջերում էր, որ հաշակաւոր Բ Ե ր Ե Բ Ե յ Ե իր արիւնարբու հօրդաներով սկսեց ջարդի ու թալանի վաղուց չտեսնւած մի արշաւանք անպաշտպան բրիստոննայ ցեղերի դէմ—նեստօրականների ու հայերի—կոտորեց մօտ տասնեակ հազար, աւերեց ամբողջ գաւառներ:

Բ. Գուռը, դրդուած մասամբ իր սեփական շահերից, մասամբ էլ Անգլիայի ու ֆրանսիայի ձնշման տակ, կազմակերպեց մի ուժեղ հակաարշաւանք, զրկեց բանակ Բ Ե ր Ե Բ Ե յ Ե անի դէմ, տեղի ունեցան արիւնահեղ կռիւներ, քիւրդերը ջարդ կրեցին, սարսափելի աշիրէթապետը փախաւ, ապստանեց իր լեռնային գղեակներից *) մէկուս, ապա շուտով գերի բռնեց, տարան նրան Ստամբուլ, ուսկից արսորեցին կրետէ, ուր և մեռաւ: Յաղթած դէրէբէյի ահագին գերդաստանի մի մասը սրի անցուցին,

*) Այսօր տակաւին կանգուն են քիւրդ աւատականների հինաւուրց և կիսաւեր գղեակները:

միւսները բշեցին Աֆրիկեան Տրիպոլիտա և ուրիշ տեղեր արգելեց միանգամ ընդմիջտնրանց մուտքը Գիւրգիստան:

Խորտակեց ամենաճօր քիւրդ Դէրէբէյի *) իշխանութիւնը: Դուռը, սահայն, հետևողական չ'եղաւ իր ընթացքի մէջ, նա չուզեց կամ սիրտ չ'արաւ արշաւելու բոլոր աշիրէթների գէմ, խորտակելու բրդական դերէբէյութիւնը, որ իբրև անկախ մի իշխանութիւն թիւրք կայսրութեան սահմաններում և սոգորած ասելութեամբ գէպի գերիշխող տարրը, մի մշանջնաւոր սպառնալիք էր այդ վերջինի համար:

Այնուամենայնիւ, Բեդրիսանի օրերից ի վեր սկսեց սաստիկ ու սխտեմատիկ հալածանք քիւրդ տարրի դէմ, որ յարասեց մի առժամանակ:

Եկաւ այլ շրջան: Նոր հովեր և նոր բաղաբականութիւն: Քրիստոնեայ ազգերի ըմբոստացումները կայսրութեան մէջ միշտ աւելի յաճախացան և սպառնացին կործանել ամբողջ պետութիւնը: Մին-միւսի ետևից անջատեցին Եւրոպական թիւրքիոյ մի շարք բրիտանեայ երկիրներ և... դժգոհութեան ու խմորումի ալիքները կամացկամաց անցան նաև—Փոքր Ասիա, Հայաստան: Աւթսունական թւականներից արդէն իսկ ծայր էր աչիս նաև „Հայկական վասնգը“... Ապստամբութիւն և փայլուն ճակատամարտներ Զէյթունի մէջ, ժողովրդական ցոյցեր և Պոլսում և ընդհանուր վերածնութեան մի շարժում բովանդակ հայ աշխարհում... Հեռապատկերը

*) Դ է ր է ք է յ նոյն իմաստն ունի, ինչ որ Ֆէօզալ, աւատապետ: Գերէ—հովիտ. գերէբէյ—բառացի՝ հովտի իշխան, հովտի պետ:

պարզ էր և Պոլսի վարիչների համար. նրանք արդէն ընդնշմարում էին մօտիկ ապագայի մէջ թիւրքահայաստանի անջատումն ևս, „Մօսկօվի“ նոր արշաւանքը... Ո՞րն էր այն պատնէշը, որ պիտի դէմ դուէր այդ սպառնացող վասնգներին, ո՞րն էր այն ոյժը, որի միջոցով կարելի էր աստիճանաբար և առանց դրսի ուշադրութիւնը հրաւիրելու, ճարակել հայ տարրը, նւագեցնել նրա թիւը և այդպիսով վերջ տալ միանգամ ընդմիջտ հայկական խնդրին:

— Գ ի ւ ր զ ն է ր :

Պէտք էր ուրեմն վերստին սիրաշահել և բաջալերել այդ հզօր աշիրէթապետներին, պէտք էր կառուցանել հայկական խնդրի հողի վրայ բրդական ճնշումների մի յատուկ սխտեմ...:

Պառուցեց այդ սխտեմը մի դիւալին հնարագիտութեամբ և հասաւ իր կատարելագործման՝ սուլթան Համիդի օրով, պսակեց 90-ական թւականների սկզբներում մի դժոխային, ոճրանիւթ հաստատութեամբ, որի անունն է՝ „Համիդիէ Հեժեւաղօրք“...:

Տեսանք արդէն, թէ ինչպէս—60-ական թւականներից իսկ — Բ. Դուռը մի ձեռքով շոյում էր ինտելիգենտ հայութիւնը, տալիս էր նրան Սահմանադրութիւն, մի տեսակ պարլամենտ և այլ հնչուն, շլացուցիչ ընծաներ, միւս ձեռքով աւերում էր բուն Հայաստանը, մաշում ու հիւծում էր միլիոնաւոր հայ ժողովուրդը բրդական խափիրութեան և սեփական պաշտօնէութեան ճիրաններում...:

Դարձեալ.—մի խելացի և շատ թէ բիչ բաղաբակիրթ

պետութիւն ա յ լ միջոցներ ի գործ կը դնէր՝ հայկական և նման վտանգների առաջն առնելու, — նա կը դիմէր հիմնական ռէֆորմների, կը կանխէր արտաքին միջամտութիւնները, կը սանձէր միաժամանակ այդ բիւրդ աւազակաբարոյ հօրդաները, որոնք ոչ միայն իրենց ուրոյն ֆէօդալական յիրաւակարգով, իրենց յատուկ տուրքերի ու իրաւասութիւնների սխտեմով մի յարատե վտանգ էին կայսրութեան համար, այլ և իրենց շարունակական արշաւներով, թալանի ու սպանութեան ամենօրեայ ոճիրներով դատարկում էին երկիրը արդիւնաբերող ձեռքերից, անապատ էին դարձնում ամբողջ գաւառներ, խափանում առևարի ու արդիւնաբերութեան ձեռնարկները, թշուառացնում հարկատու ազգաբնակչութիւնը և այդպիսով ցամաքեցնում տուրքերի, հասոյթի, պետական հարստութեան աղբիւրները:

Ինչպէ՞ս էին հ ա յ-բ ո ղ ա կ ա ն յարաբերութիւնները...

Ի՞նչ կարող է լինել ճորտի և տիրոջ, գառան ու գայլի յարաբերութիւնը մի այնպիսի բաօսային իրաւակարգում, ուր բորենիները ընկերակցում են գայլերին՝ պետական պաշտօնեայի համազգեստի տակ...

Եղել են, կան այսօր ևս բիւրդ ցեղեր, համեմատաբար աւելի հանգիստ, խաղաղասէր ու լաւ տրամադրուած դէպի հայերը: Եղել է ժամանակ, երբ այդ հանգիստ բիւրդ համայնքների պետերը խնդրել են նոյնիսկ հայ հոգևոր առաջնորդների ու եֆէնտիների պաշտպանութիւնը ընդգէմ թիւրքական կամայականութիւնների կամ թէ ուրիշ, գիշատիչ բիւրդ ցեղերի:

Հայ աղաներն ու հարուստ վաճառականները սիրով կատարում էին այդ խնդիրքը, ի գործ էին դնում իրենց ազդեցութիւնը վալիների ու փաշաների մօտ՝ խաղաղասէր բիւրդ ցեղերին հովանաւորելու համար. և այդտեղ նրանք ղեկավարում էին պարզ նիւթական հաշիւներով: Հայ վաճառականները շարունակ առևտրական յարաբերութեան մէջ էին այդ խաշնարած, մեղմաբարոյ և համեմատաբար աւելի աշխատասէր քրդերի հետ, մատակարարում էին նրանց կենսական մի շարք անհրաժեշտ պիտոյքներ, կտաւ, չիթեր և այլն և փոխարէնը առնում էին հում բերքեր՝ իւղ, պանիր, բուրդ և այլն *):

Մասամբ այդ հանգամանքը ստեղծեց հայերի և որոշ քիւրդ ցեղերի միջև բաւական սերտ բարեկամական յարաբերութիւն: Աւերջապէս, յայտնի է, որ բացի ոչ-

*) Շատ չի անցել այն օրերից, երբ այդ վայրերի մէջ թագաւորում էր այսպէս կոչուած բ ն ա տ ն տ ե ս ու լ-թ իւ ն ը (Naturalwirtschaft). Այդ մասին մի քանի հակիրճ տողեր ունի Մ է լ ի ք գ ա դ է ն դ ե ու 1872 թ-ի իր պարսկական թղթակցութիւնների մէջ («Մշակ» 1872 թ.): Թիւրք-պարսկական սահմանագծի վրայ, ասում է նա, վաճառականութիւնը սոսկ նիւթերի փոխանակութիւն է, առանց դրամի շրջանառութեան: Վաճառականութիւնը հայերի և հրէաների ձեռքումն է. հայերը քաղաքների մէջ մանրավաճառ են և արհեստաւոր՝ հիւան, դերձակ, ոսկերիչ և այլն. իսկ գիւղերի մէջ հայ կանայք գործում են բրդից վերարկուներ (ապայ, շալվարներ, կապերոններ և այլն): Հայ վաճառականները տալիս են քրդերին կտաւ, չիթեր և այլ հագուստի ու ուտեստի պիտոյքներ և առնում են նրանցից հում բերքեր, բուրդ, իւղ, պանիր, սշխար և այլն:

մահմեդական «եզդզի» աղանդաւորներին, շրջաւարտներից—այլ և այլ տեղերում գոյութիւն ունին քիւրդ համայնքներ, որ երբեմնի հայեր են, այսօր իսլամացած և քրդախօս, որոնց մէջ ժամանակ առ ժամանակ խօսել է անշուշտ արիւնային ազգակցութեան ձայնը յօգուտ իրենց մայր ցեղի *): Այսպէս թէ այնպէս՝ մենք

*) Տեղատեղ, այս՝, ամբողջ համայնքներ կան քրդախօս հայերի ինչպէս կովկասեան վրացախօս հայերի մէջ, այնպէս նաև թիւրքահայաստանի այդ քրդախօս հայ շրջաններում, նորստեղի, շնորհիւ հայ դպրոցների, սկսում է արդէն հայերէն բառբառել և պէտք է յուսալ, որ ոչ հեռու ապագայում այդ օտարացած հայութիւնը կը վերածնուի, կը վերադառնայ մայր-զանգւածի գիրկը: Մեր ընկեր Ք. Շահպատ, որ Սահմանադրութիւնը հռչակելուց յետոյ, իբր շրջիկ պրօպագանդիստ, պտոյտ է արել Տիգրանակերտի շրջանում, հետեւեալն է հաղորդում մեզ՝ քրդախօս հայերի մասին.

«1909 թւականի մայիս ամսուն, Տիգրանակերտ, կը թափառէինք Տիգրիսի ափերուն, երբ իմ՝ ընկերը կանգ առաւ յանկարծ և սկսաւ քրդերէն խօսիլ քրդական տարազով, ապա, տափատ և ոտքերնին տրեխ հագնւած երկու անձերու հետ, որոնց տրեխն այրած պղնձագոյն դէմքերուն վրայ խոշոր սև աչքերը կը փայլէին թաւ և մռայլ կամարներուն տակ:

Տիգրանակերտ քիւրդեր շատ կան, ուստի ես չզարմացայ իմ ընկերոջ քիւրդ ծանօթներ ունենալուն և առաջին հետաքրքիր նայածքներէ յետոյ արդէն աչքերս շուռ կուտայի դեպի այն կողմ, ձախ եզերքը մեր հեզահամբոյր Տիգրիսին, ուր աւազը կը լեռնանայ և կ'ամրանայ պարիսպներու բարձրութեամբ—և ասա ընկերս խնդրեց ինձմէ ծանօթանալ մեր «հայրենակիցներուն» հետ...

Այդ վայրկեանին է, որ ես մեծ ապշութեամբ լսեցի, որ

սեսնում ենք երբեմն-երբեմն քիւրդ ցեղեր հային դաշնակից, սեսնում ենք նոյնիսկ քրդական միջցեղային պատերազմներում՝ հայերի մասնակցութիւն:

երկու անձերը քիւրդեր չէին, այլ «Փլաներ», «սարուկներ»՝ հայեր՝ լուսաւորչական հայեր երկուքն ալ, իսկ մէկը մինչև անգամ քահանայի ազգական—տէրտիրոջ տղայ՝—ինչպէս կ'ըսէ մեր ժողովուրդը...

Այնուհետև ես հետաքրքրելով իմացայ, որ Տիգրանակերտի հիւսիս-արևելեան հողամասերուն վրայ, այն շրջանին մէջ, որ կը կոչուի Ալիվան, մեր դժբախտ ազգը ունեցած է ժամանակին բարեբեր հողերու տէր բազմաթիւ և հարուստ գիւղական բնակչութիւն մը և որ ժամանակի ընթացքին, ի միջի այլոց, նոյնպէս կործանւեր, փշուր, քանդակ է—շատերը այդ երբեմնի հայերէն գաղթեր են, անյայտացեր, թողնելով իրենց խրճիթներն ու տնակայքը և արտերը հասնող իսլամ հօրաններուն,—ուրիշները պահելու համար իրենց ֆիզիկական գոյութիւնը կրօնափոխ են եղեր և հպատակւեր Մօհամետի հրահանգներուն,—իսկ փոքրամասնութիւն մը 40—45 գիւղի շափ—ընդամենը 10—15,000 բնակչութեամբ, կարողացել են դարաւոր արհաւիրքներուն դիմադրաւել, ճիշտ է, աղքատացեր են, տանջուեր են, կորսնցուցեր են իրենց լեզուն, իրենց ազգութիւնը, իրենց բարբերը, իրենց պատմութիւնը, բայց անխախտ պահեր են իրենց հաւատքը, մնացեր են լուսաւորչական...

Բացի Մուֆարդինէն, որ այդ գիւղատեղումքի մայրաքաղաքը կարելի է նկատել և ուր հայութիւնը չէ մեռեր բոլորովին, մնացեալ բոլոր այդ 15,000 հայերը դարձեր են քրդախօս ու քրդակեաց... Ոչ մէկ կապ հայութեան միւս մասերուն հետ, ոչ մէկ մշակոյթ, ոչ մէկ գիտակցութիւն, բացի անկէ, որ իրենք Փլաներ, այսինքն սարուկ, այսինքն

Աղբակայ, Շատախի, Բուլանքի, Մսկայ երկրի և Սա-
սունի հայերը ունէին իրենց դաշնակից քիւրդ ցեղեր —

ոչ-խկական բուրդ և այդ՝ այն պատճառին համար, որ
խլում չեն, այլ լուսաւորչական քրիստոնեայ...

Քիւրդերէն լեզուով կ'աղօթէ իրենց բահանան, քիւրդերէն
կը բարոզէ ան՝ անոնց՝ Քրիստոսի բարոյականը—*anomalie*
մը, այլանդակութիւն մը որքան ցաւատանջ, նոյնքան և խռո-
վեցնող ու շահեկան՝ արդիւնք հայկական պատմութեան
Տրէշաւոր իրադարձութիւններուն...

Օսմանեան սահմանադրութեան հռչակումով ստեղծւած
համեմատաբար ազատ պայմաններուն շնորհիւ Հայ Յեղ.
Դաշնակցութիւնը սկսաւ լուրջ ուշադրութիւն դարձնել այդ
կորուած հոյութեան բեկորներուն և նոյն տարին (1909)
Տիգրանակերտի մէջ գումարւած Շրջանային ժողովի մը ըն-
թացքին լուրջ ուսումնասիրութեան ենթարկեցան բողո-
ցած հայերու դրութիւնն ու ապագան, աւելեցան կարգ մը
որոշումներ, որոնց հիման վրայ կազմակերպութիւնը յանձն
առաւ այլ ևս չթողուլ անտէր մեր այդ թշուա եղբայրներն
ալ և հնարաւոր չափով տանել անոնց լոյս և սփոփարար
համերաշխութեան հաւաստիք:

Տարի մը յետոյ, շնորհիւ մեր բրած դիմումներուն, Եգիպ-
տոսի Հայոց Բարեգործական Միութիւնը բացաւ այդ շրջա-
նին մէջ 15-ի չափ վարժարաններ — ծիշտ է շատ համեստ
պուտժեով—իւրաքանչիւրը տարնկան գրեթէ 15 օսմ. ոսկի
ծախքերով միայն, բայց հիմա, հագիւ երեք տարի յետոյ,
կ'իմանամ արդէն ուրախութիւնոր, որ մեր ջանքերը սկսած
են արտադրել պտուղներ. — Սլիվանի քիւրդ-հայերուն մէջ
սկսած է վերածնունդ մը, մանկտիքը այժմ կը թոթովեն
հայերէն և կը հեքեն հայերէն, իրենց մայրենի բարբառով,
կ'երգեն հայ երգեր և կասկած չկայ, որ եթէ չ'ընդհատուի
աշխատանքը, պիտի գոյանայ բարբար արդիւնք, պիտի
փրկւին կորուստէ և ազգային դաղափարի հրապոյրը պիտի
վայելեն նաև մարդկութեան այդ անիրաւուած գաւակները՝:

ասում է Բաֆֆի—որոնց հետ միացած շատ անգամ կուում
էին ընդհանուր թշնամու հետ: «Եզրդի» աղանդին պատկա-
նող քրդերը, միշտ հալածուած լինելով իրենց մահմեդական
ցեղակիցներից, հայերի հետ պահպանում էին բարեկամա-
կան յարաբերութիւններ, Հայերն այն աստիճան հաւատար-
մութիւն ունէին դէպի այդ ցեղը, որ իրենց անասունները
յանձնում էին դրանց հովիւներին պահելու, հայերի տան
սպասաւորները, աղախիները, երկրագործական մշակները
մեծ մասամբ եզրդիներ էին: Գրանք կատարում էին հայերի
մի քանի կրնական արարողութիւնները, պահում էին ս.
Ստրգաի, ս. Գեորգի պատերը, զոհ էին մատուցանում հայոց
նշանաւոր ուխտատեղիներում և ս. Գրիգոր Աւսաւորչին ու
Գաւթի մարգարէին համարում էին Աստուծոյ ընտրեալների
ամենազխաւորը: Եզրդիները համարեայ բոլորը գիտեն հա-
յերէն խօսիլ...

Մի կողմ թողնելով հայ-քրդական բարեկամութեան
այդ սպորադիկ արտայայտութիւնները — երկու ժողո-
վուրդները իրենց ամբողջութեան մէջ կանգնած էին
դէմ առ դէմ իբրև անհաշտ հակոտնեաներ և մասնա-
ւորապէս հայ տարրը միշտ եղել է տոգորւած մի խոր,
աւանդական ասելութեամբ դէպի քրդութիւնը:

Խ ա փ ի Ր ու Թ ի ւ ն ը *) Ինքնին արդէն մի սար-
սափելի չարիք էր, որ հնուց ի վեր ծանրացած էր երկու
դրացիների յարաբերութեան վրայ, տալով մեկին տիրոջ,
հրամանատարի ախողոս, միւսին՝ ծառայի, սարկի Խա-
փիրութիւնը, ֆէոդալական հարկաւումութեան սխտեմը
Հայաստանի մէջ համատարած մի երկույթ չէր, սակայն
այն ընդարձակ հայ գաւառներում, ուր տիրում էր նա,
հայ աշխատաւոր ժողովուրդը դրւած էր մի անել, դժո-
խային կացութեան մէջ, ենթակայ խափիրառու քիւրդ

*) Խափիր—ապօրինի տուրք:

բէյերի անսահման կամայականութեանց: Այդ բէյերը իրենք իրենց տէր էին համարում ու այնքան կեանքին ու ստացածքին: Հայ աշխատաւոր շինականի բոլոր այլազան բերքերից — հացահատիկներ, բուրգ, ոչխար, մեղր, կարագ, ապա և ձեռագործ արգիւնքներ, գուլպա, կապերա, վերարկու և այլն — բոլորից էլ բաժին ունէր քիւրդ ազան, բոլորից նա առնում էր տուրք՝ կամ դրամով կամ թէ բնական բերքով, *in natura*:

Այդպէս էին սահմանուած հայ-բրդական յարաբերութիւնները այնքան դարերից ի վեր: Արայ հասաւ ուսուսանական պատերազմը 1878-ին, որ մի ահարկու, մի չտեսնուած ծաւալ տւեց բրդական վայրագութիւններին՝ ընդդէմ հայ անպաշտպան ռայեայի: Արգիւլ Համիդի կառավարութեան դիւային սադրանքներով վառւեց կրօնական մոլեռանգութիւնն ևս նոյնազ, արիւն-նուշտ խաժամուծի մէջ և սա իր հոգևոր առաջնորդների — Շէյխ Ջէլալեդդինի, Շէյխ Իբրահիմ Լաճի — հրամանատարութեամբ էր, որ տասնեակ հազարաւոր հրօսակներով գրոհ էր տալիս Տէր Ղուկասովի գնդերի դէմ: Բայց այդ մասին կը խօսենք յետոյ:

V

ՎԵՅԱԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Հայկական ենդիրը վարժապետանի օրով. — Թիւրքամոլ քոչաբեականը. — Պատասխանատուներ. — «Թիւրքսէր» և ուստեսաց նոսանք սանկահայ հասարակութեան մէջ. նրա պատկանելիք. — Հայ երեսփոխանների նառերը օսմանեան առաջին պարլամենտում. — Թուոսաիրութիւնը գաւառական ժողովրդի մէջ. — «Հիմէթի հիւֆիւմէթ». — Ազգային քաղաքականութեան երեք քոչաններ. — Սան-Ստեփանո և յուսախարութիւն. — Իէպի Քերիւն. — Հայկական ազգացիա Լօնդօնում. — Մի անազանով վեհաժողովի նախօրեակին. — Այն ժամանակ և այսօր. —

Խորմեանից յետոյ — վարժապետեան:
«Հարստահարութիւնների Տեղեկագիրը» մի բանի տարի արշիվներում՝ մրափելուց յետոյ՝ վերստին հանդէս եկաւ 1876-ին, Ներսէսի պատրիարքութեան օրով:

Ցարին հարուստ էր քաղաքական անակնկալներով ու փոթորկոտ դէպքերով: Թիւրքիան նորէն ապրում էր իր գոյութեան օրհասական վայրկեաններից մինը: Ընդհանուրապէս ասած ժողովուրդը պայթել էր Բալկաններում *) և «Մօսկովի»

*) Սկսեց նա Բօսնիա-Հերցեգովինում և թոյլ արձագանք գտաւ Բուլղարիոյ մէջ, ուր, իբրև հետեանք այդ ըմբոստացման՝ թիւրք զօրքերը, գլխաւորապէս բաշխօզուները սարքեցին արիւնալի նախճիրներ — պատմութեան մէջ յաւերժացած բուլղարական սարսափները:

ուրուականը սպառնափն ցցել էր հոգեվարքոս Մահիկի դիմաց: Փոթորիկը պայթել էր — և ներսուս մալաական մի արիւնոս յեղաշրջուով՝ Արգիւլ Համիդ բազմել էր սուլթանական գահի վրայ, յաջորդելով իր եղբայր Մուրադին: Եւ դիպլոմատ, չարահանձար խալիֆը, երկրի ղեկին տիրանալով, սկսել էր արդէն ի գործ դնել իր դիւային հնարքները՝ թէ արտաքին և թէ ներքին սագնապներին դիմագրաւելու համար:

Ռուսական վտանգը չքացնելու նպատակով՝ նա նեւեց Եւրոպային մի հանդիսաւոր ազդարարութիւն, որով խոստանում էր անյապազ իրագործել յընդհանուր ռեֆորմներ՝ ամբողջ կայսրութեան մէջ: Նա դրդեց միաժամանակ յոյներին ու հայերին՝ նոյնպէս ասպարէզ գալ իրենց ուրոյն ազգային պահանջներով՝ հանդէպ սլավ ցեղերի, որ պարզիլ էին ապստամբութեան դրօշը: Նա զրկեց, վերջապէս, եւրոպական դահլիճներին պատճէնը «Օսմանեան Սահմանադրութեան» (1876 թ. գեկտեմբեր), որ մի նոր դարագլուխ էր ազդարարում թիւրքիոյ համար, յնոր հաստատութիւններ, հիմնւած ազատութեան, արդարութեան ու հաւասարութեան վրայ»...

Բ. Գրան խաբեբայ ազդարարութիւնները յընդհանուր ռեֆորմներին՝ մասին հետամուտ էին երկու նպատակի.

1. յիտոզ փչել եւրոպական պետութիւնների աչքին.
2. Բաժանել, հակադրել իրար թիւրքահայատակ քրիստոնեայ ազգութիւնները, սլավոնների դէմ հանել հայերին ու յոյներին, շահել վերջիների համակրանքը և

մօտալուտ պատերազմի համար՝ ձեռք բերել նրանց սիրայօժար գործակցութիւնը:

Առաջին նպատակից նա վրիպեց, իսկ վերջինը իրագործեց վարպետօրէն: Յոյնը արդէն տրամադրւած էր սլավոնների դէմ, թիւրքը շահեց և հային:

Հայոց պատրիարքը — ներսէս Արժապետեան — որ Խրիմեանից ստացել էր Հայկական խնդիրը, իբրև մի սուրբ ու արիւնոս ժառանգութիւն, որ եղել էր նախագահը Հայաստանի հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովի, որ քանիցս ցոյց էր աւել ըմբոստ ոգի թիւրքական ռէֆիմի հանդէպ՝ հրապարակ եկաւ յանկարծ մի արտառոց կոնդակով — ուղղւած հայ ժողովրդին — ուր պարզապէս խունկ էր ծխում օսմանեան կառավարութեան և գրգռիչ, թշնամական ակնարկներ էր նետում Ռուսաստանի հասցէին.

Այն օրէն ի վեր — ասում էր այդ կօնդակը — որ հայոց ազգին ամենամեծ մասն օսմանեան հզօր տէրութեան հպատակաւոր քաղցր հովանւոյն ներքոյ մտաւ, իր հինգ դարուց պատմութիւնը կը զուցնէ թէ ինչ մեծամեծ շնորհներ իրեն պարգևած է այս հզօր տէրութիւնը: Եթէ այսօր թիւրքիոյ մէջ կը տեսնենք հայ ազգը, որ կը պահէ իր կրօնը, իր եկեղեցին, իր լեզուն, իր պատմութիւնն ու աւանդութիւնները և վերջապէս եթէ այսօր հայ ազգը կը գոյս իր էութիւնը, նոյն բարեխնամ տէրութեան շնորհաց արդիւնք են:

Ստոյգ է թէև, որ հայ ազգը մերթ ընդ մերթ գաւառներու մէջ բարեխնամ տէրութեան կամաց հակառակ, հարստահարութեանց ենթակայ եղած ալ է, հարստահարութիւնը, որոնք միայն մարմինը կը փնասեն և հեռի են այն տեսակ հարստահարութիւններէն, որոնք ոգին և մարմինը միանգամայն կը փնասեն և ազգին գոյութեանը կրպակունան, սակայն վերջին օրերս ձեռք առնւած միջոցներով... Մեծ յոյս ունինք, որ այնպիսի մասնաւոր ճնշման ու անկարգու-

ի՞նչ ասի Տիմա'յան բարեկարգութեամբ առաջքը պիտի առնուի...

Արդ՝ հայ ազգն... չի կրնար անտարբեր մնալ օսմանեան տէրութեան դտնուած արդի ծանրակշիռ պարագայից մէջ, այլ պարտաւոր է... անկեղծ օժանդակութիւն մատուցանել. (օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյնիսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, սուրբ, բնտանիքը և պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է *).

Ահա էական յայտարարութիւնները այդ ծանօթ շրջաբերականի: Դա առաջին օղակն էր եղբրական շղթայի՝... Եւթուուն, անյար (incoherent), հակասական ձեռնարկների մի շղթայ՝ որ ձգուում է այդ տխուր կօնդակից մինչև Բերլին և այնտեղից—Վիժման անդունդ... Ըստպէս, սակայն, մեկնաբանել և ճշտել:

Այն ժամանակեայ և յետագայ հայ պատմական քննադատութիւնը, ի դէմս մի շարք գրողների, դատափետեց Վարժապետեանին ամենածանր մակդիրներով: «Դաւաճան» բառն իսկ չի նայեցին նրա հասցէին: Չափազանցութիւնն, անտարակոյս, մեծ մասին ունի այդ յախուուն գնահատումների մէջ: Ոմանք իսպառ զատեցին ան ձը մի ջա վ ա յ ը ի ց և առաջինի վրայ բարդեցին պատմական իրողութիւնների բովանդակ պատասխանատուութիւնը: Սխալ մեթօդ և անարդար: Անարդար մասնաւորապէս Վարժապետեանի նկատմամբ, որ իր բոլոր թերութիւններով հանդերձ՝ նոր, «երիտասարդ Հայաստանն» է մարմնացնում իր ըմբօստ ու անընկճելի խառնածքով, իր գործօն և անձնագոհ արիւթեամբ, այն Վարժապետեանի՝ որ ընդունակ էր ձեռնոց նետել

*) «Մշակ». 1876 թ. № 33:

օսմանեան բռնապետին և պատասխանել նրա սպառնալի պահանջներին.

— «Աւելի շուտ ես կը համաձայնիմ կախել պարարբարանի դրան վրայ, քան թէ յետ կոչել հայկական պատգամաւորութիւնը Բերլինից»:

Անշուշտ, երիտասարդ, բաղաբականապէս անփորձ պատրիարքի անձնաւորութիւնը, նրա սուրճկափ վշուշը, նրա վառվռուն ու սաստիկ տեմպերամենտը իրենց դերն ունին այդ բոլոր ձեռնարկների, նաև այս առաջին թիւրբամոլ և հակառուս կօնդակի յղացման ու խմբագրութեան մէջ: Ներսէսին մենք տեսնում ենք դեռ 1865-ի Ազգային Ժողովում Ռուսաստանի դէմ թունոտ խօսքեր արտասանելիս: Ռուսական ռէժիմի ոտնձգութիւնները հայ եկեղեցու, կրօնի, լեզուի, ազգայնութեան դէմ, ռուսացման յամառ ու սխտեմատիկ ձգտումները այնքան խորն էին խոցողում հայրենասէր և ջերմօրէն լուսաւորչական Ներսէսին, որ նա դրա հանդէպ մի վայրկեան պատրաստ էր ջատագովել օսմանեան ռէժիմը, պատրաստ էր նոյնիսկ—արամբանութեան կանոնները ոտնահարելով—յայտարարել, որ թիւրբական իրաւակարգը այն պատճառով է գերադասելի, որ նա հայի «մարմինը միայն փասելով», հոգին ազատ, անփաս կը թողնէ, ուրիշ խօսքով—ըստ Ներսէսի—Փիղիկական բնաջնջման գերեզմանոցում հայ «հոգին» ու «ազգայնութիւնը» դեռ կարող են ապրել ու բարգաւաճել...

Սակայն, Ներսէս միահեծան ու անպատասխանատու հեղինակը չէ այդ թիւրբասէր և ռուսատեաց ծանուցումների նա ինքն ասում է նոյն կօնդակում, որ խոր-

Տըրդակցել է Ազգային Վարչութեան խառն ժողովի հետ: Թիւրքասիրութեամբ և ուսաստեցութեամբ համակ-
 ւած էր գրեթէ ամբողջ Թիւրքահայ հասարակութիւնը,
 նաև գիտակից գաւառացիք, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ
 հայ գաւառական երեսփոխանների ճառերից՝ Թիւրքիոյ
 առաջին պարլամենտում: Թիւրքահայ *élite*-ի ուսաստեցու-
 թիւնը—որ Սան-Ստեֆանօից յետոյ միայն սկսեց մեղմա-
 նալ—նոյնքան և գուցէ աւելի անկեղծ էր, քան նրա Թիւր-
 քասիրութիւնը: Երկգլխեան հզօր արծիւը, որ սեղմել էր իր
 բռնաւոր ճանկերի մէջ մի բուն ցեղակիցներին, աւելի ևս
 ահարկու, վտանգաւոր էր Թիւրքահայ մտածողի տան-
 ջակոծ երևակայութեան մէջ, քան Թիւրքը և քիւրդը:
 Պօլսոյ և գաւառի մէջ չէին մոռացել Ներսէս Աշտարակեցու
 և կովկասահայոց վարած մեծ ճակատամարտները յօգուտ
 ուսասական տիրապետութեան—և նոյնքան մեծ յուսա-
 խարութիւնները: Կեռ Թարմ էին յուշերը Միքայել
 Նալբանդեանի եղերական նահատակութեան՝ Պետրօ-
 պօլլօսկի զնդանում: Հայ վաղամեռ բանաստեղծի
 անունը բերնէ բերան հոլովում էր Կ. Պօլսում ու այլ
 հայկական կենտրոններում, նրա նկարը թաղմութիւ օրի-
 նակներով ցուցադրում ու վաճառում էր պօլսահայ
 գրախանութներում, ցուցադրում էր, իբրև մի տեսակ
 սէնթօլ, խորհրդապատկեր զուտ ուսասական, ինկվիզիտօ-
 րական հալածանքի...

Այնպէս որ, երբ Թիւրքահայոց հոգևոր պեալը,
 ուս-տաճկական պատերազմի նախօրեակին, խորհրդակ-
 ցելով ազգային պատշաճ մարմինների հետ, հրատարա-
 կում էր յանուն Թիւրքահայ ժողովրդի իր լոյսալ

(loyal) հպատակութեան և դոսմանեան հայրենասիրու-
 թեան՝ հրովարտակը, — նա անում էր այդ՝ ոչ թէ
 միայն երկիւղի, «փօլիթիկի», խոհեմութեան նկատու-
 ներով, ոչ թէ միայն այն պատճառով, որ պատերազմի
 ելքը անորոշ էր, որ հայերի թշնամական կամ նոյնիսկ
 փոքր ինչ պաղ ընթացքը կարող էր կատաղեցնել իշ-
 խանութիւնը, գրգռել մահաբերական խուժանները և
 աղէտներ յարուցանել, այլ նա անում էր իր Թիւրքա-
 սեր, ամենահպատակ ծանուցումները և այն պարզ գի-
 տակցութեամբ՝ որ օսմանեան ուձիմը իր բոլոր արատ-
 ներով հանդերձ՝ նրա աչքում գերազանցելի է ուսաս-
 կան ազգայնակուլ տիրապետութիւնից:

Չմոռանանք մանաւանդ այն, որ պօլսական մթնոլորտը
 սոգորւած էր այն ժամանակ դէֆօրմի՝ զրոյցներով, որ
 «Երկրասարդ Թիւրքիան» կատարում էր արդէն իր
 ցնցող Թատերամուտը, որ պետութեան ճակատագիրը
 ղեկավարում էր Միթհաթ փաշան, որ հայազգի Օտեանը
 նրա ինտիմ խորհրդակիցն էր և նրա աջ բազուկը, որ
 նոյն Գրիգոր Օտեանը միաժամանակ հայ հասարակու-
 թեան և հայկական ճակատագրի ղեկավարներից մինն
 էր, որ ուրիշ հայ կառավարական պաշտօնեաներ ևս
 մասնակցում էին Ազգային ժողովի նիստերին, տալիս
 էին շարունակ իրենց հրահանգները, արամադրում
 էին մարերը ի նպատակ օսմանցիութեան և այլն և այլն:

Միջավայրի, շրջապատի և պատմական վայրկեանի
 այդ բոլոր աւելաները ուշադրութեան առնելով, մենք
 չափազանց և ծայրայեղ պիտի գտնենք մի շարք բնա-
 դատութիւններ ու ամբաստանութիւններ, որ տեղացել

են Վարժապետեանի հասցէին, նրա համբաւաւոր կօն-
դակի առթիւ, որի գլխաւոր պակասութիւնը՝ իր ձևն է,
իր անզգոյշ ու անտակոտ ոճը, յատկանիշ մի խակ, միա-
միտ, անշրջանկատ խմբագրութեան:

Գրիգոր Արծրունին պարզապէս անւանում է այդ կօն-
դակը «խայտառակ և ամօթալի»^{*)}: Նա խօսք չէր գտնում
իր զգանքն արտայայտելու Ներսէս պատրիարքին.

Այո՛, ասում է նա, դա յատկանիշ է ամենասուոր, ամե-
նասնբարոյական, ամենալիրբ կղերականութեանը *...^{*)}

Արծրունուն ամենից աւելի հրում է այն հանգա-
մանքը, որ հայ լուսաւորչական հովիւր գերագասում է
մասնագրական տիրապետութիւնը քրիստոնէականից (ուս-
սականից).

Մենք միշտ համոզած էինք—ասում է հռչակաւոր հրա-
պարակախօսը իր փոքր ինչ կոշտ բառբառով — որ... միայն
քրիստոնէութեան միջոցով կարելի է մարդկութեանը հաս-
նել լայն, ընդարձակ, բարոյական, հասարակական և բարո-
քական զարգացմանը **...^{**)}

Ներսէս, կրկնում ենք, հնազանդւել է իր շրջա-
պատից ու քաղաքական վարկեանից ստացած մղում-
ներին: Տխուր է, այո, 1876-ի պատրիարքական շրջա-
բերականի երևոյթը, վրդովեցուցիչ են այդ փքու-
ռոյց ներքոնները օսմանեան տիրապետութեան հասցէին,
բայց այդ կօնդակի յղացման և գուցէ նաև խմբագրու-
թեան պատասխանատուութիւնը թերևս աւելի ծանրա-
նում է Օտեանների վրայ — որոնց ջերմ, ըմբոս ու
ազատամիտ հայրենասիրութիւնը նոյնպէս վեր է ամեն

*) «Մշակ», 1876 թ. № 33:

**) «Մշակ», նոյն համարը:

կասկածից—նա ծանրանում է հայ դժբախտ, այլան-
դակաժ իրականութեան վրայ, որ զուրկ ամուր նե-
ցուկներից, հակազդեցութեան, դիմադրութեան սեփա-
կան միջոցներից, ապաւինած հջորների կամքին ու
խոստումներին, մոլորեցնում է երբեք ժողովրդասէր,
լուսամիտ և լաւագոյն գործիչներին, դատապապարտում
է՝ գնալ յաճախ մանուածապատ ճամբաներով, մերթ
դէպի աջ, մերթ դէպի ձախ, նայեած թէ որ կողմից
կը գան վարդագոյն, խոստումնալի «պատրանքները»...

1896 թւականը չէր այդ... Օրմանեանի օրերը չէին:

Մե՛ծ էին դեռ պատրանքները 1876 թւականին,
դիւրին էր դեռ խաբւիլ սուլթանից, թիւրքերից այն
պատմական և փոթորկոտ օրերում, երբ ծնւում ու
կերպարանւում էր թիւրքիոյ մէջ սահմանադրական,
բարենորոգչական հոսանքը, երբ հիմնւում էր օսմա-
նեան պարլամենտը, երբ դեռ Վարմիր Գազանը — նոր
միայն բազմած սուլթանական գահի վրայ — չէր ցոյց
աւել իր ահաւելի ժանիքները, երբ դեռ հայի հայրենիքը
չէր տեսել զանգւածային ջարդերի ուրապանը...

Այնուամենայնիւ, Ներսէսի շրջաբերականը բուռն
դժգոհութիւն յարուցեց որոշ հայ շրջաններում: Եւ
յարձակումներն ուղղւեցին պատրիարքի անձնաւորու-
թեան դէմ: Իսկ կառավարական շրջանների մէջ, ինչ
ասել կուզէ, խիստ գոհ էին... Գոհ էր առհասարակ
Աբգիւլ Համիդը հայոց պատրիարքի ու պօլսահայերի
բռնած ընթացքից և աւելի ևս խրախուսելու համար
այդ նպաստաւոր տրամագրութիւնը՝ նա որոշեց հան-
դիսաւոր ժեստով յայանել հայ ազգին իր արքայական

համակրանքը. մի օր կանչեց Ներսէսին պալատ և կախեց նրա կրծքին օսմանիէ ականակուռ պատուանշանը: Պառաւ աղուէսը սկսեց դրանով իր դժոխային հնարքները... Խովիչ լեզուով նա յուսադրում էր հայոց պատրիարքին. «Թո՛ղ, ասում էր, պատերազմը վերջանայ, ես գիտեմ, թէ իմ սիրելի, հաւատարիմ հայ ազգիս ինչեր պիտի անեմ»...

Այդ ականակուռ շքանշանը առաջին անարգանքն էր, որ հայութեան ապագայ դահիճը հասցրեց հայ ժողովրդին...

Խրիմեան չկարողացաւ զսպել իրեն և խօսելով Ալաշկերտի սպանութիւնների ու աւերածի մասին — «Հայգոյժ»-ի մէջ — ականարկեց սուլթանական ընծայի վրայ.

Ոչխարներու ուկորներէն մանեակ շինեցին և հովիւն վզէն կախեցին...

Եւ սակայն, Լ. Մզիւլ Համիդի այդ սիրալիր ուշադրութիւնը խանդավառութիւն յարուցեց հայ Ազգային ժողովի մէջ և որոշեցին նոյնիսկ շնորհակալութեան ուղերձ ներկայացնել սուլթանին... Ահա թէ որտեղ են ճշմարիտ պատասխանատուութիւնները. Ասրժապետեանի երբեմն վարած թիւրքամուլ քաղաքականութեան և նրա մի շարք «վրիպումներին» համար... Անհատական չէին այդ վրիպումները, այլ հաւաքական: Եւ թիւրքահայոց այդ հակառուս ու տաճկանպատարամարդութեան գերագոյն արտայայտիչն էր Ամենայն Հայոց Վաթողիկոսը, Գևորգ IV, որ մինչև վերջ մնաց իր խոր ու անհաշտ ատելութեամբ դէպի ռուսական ռէժիմը, հրաժարեց օգնութեան կոչ անելու Ռուսսա-

տանին, անգամ 1878-ին, երբ Թիւրքաց Հայաստանը ծայրէ. ծայր մասնւել էր քրդական հրոսակներին, երբ Թիֆլիսի հայերը փոխարքայի միջոցով դիմում էին ցարին, միջամտութիւն աղերսելով և երբ Մատթէոս Իզմիրլեան, պատրիարքի ու ազգայինների յանձնարարութեամբ, եկել էր Էջմիածին (1878 թ. մարտի սկզբներին), դրդելու կաթողիկոսին, որպէս զի նա ցարի հովանաւորութիւնը խնդրէ կործանող Հայաստանի համար...

Մի ուշագրաւ երևոյթ է թիւրքահայոց այդ ռուսատեաց արամարդութիւնը, որ հասնում էր երբեմն վնասակար ծայրայեղութիւնների, որոնց աղբիւրը, առհասարակ, ոչ այնքան անկեղծ թիւրքասիրութիւնն էր, որքան ազգայնական, հայրենասիրական խոր բնազդը. Ռուսաստանը, իր լուր առաւելութիւններով հանդերձ, թիւրքահայերի աչքում էապէս ազգայնակուլ միոյժ էր և կովկասեան հայութիւնը, նրանց կարծիքով, գատապարտուած էր վաղ թէ ուշ իսպառ կորցնելու իր ազգային կերպարանքը և ձուլելու ռուսութեան, օրթօթօթութեան գրկում: Եւ թւում է թէ այդ *profession de foi*-ն, հակառուսական այդ ներշնչումները արիւում էին աւելի թիւրքահայ առաջաւոր ու գիտակից աարների մէջ — բուրժուազիայի, մաւերականութեան — որոնք, բնականաբար, աւելի են մշակւած հայրենիքի գաղափարով, աւելի են զգայուն ու նախանձախնդիր ազգայնական ստացւածքների վերաբերմամբ — բայց միւս կողմից նոյն ռուսատեաց հոգեբանութիւնը, թւում է թէ, ընդհանրապէս խորթ էր բուն թիւրքահայ, գաւառական ժողովրդին, որ, ինչպէս գիտենք, միշտ էլ ջերմ խանդավառութեամբ է դիմաւորել ռուսական դրօշակին,

Թէ 1828-ի օրերում, երբ ռուսաց զօրքը առաջին անգամը Պասկեվիչի հետ մտնում էր Վարին, և թէ 1878-ին, երբ երկրորդ անգամ նոյն ռուս զօրքը յաղթական մուտք էր գործում նոյն քաղաքի մէջ, Լօրիս-Մէլիքօվի հրամանատարութեամբ:

Ռուսասէր էր ընդհանրապէս Թիւրքահայ ժողովուրդը, գիւղացիութիւնը, ռուսասէր էր նա վաղեմի, դարաւոր աւանդութիւնների զօրութեամբ, աւանդութիւններ՝ որոնց մէջ պատրաստ էր հետ միասին կար և խոշոր, անուրանալի ճշմարտութիւն (ռուսական տիրապետութեան առաւելութիւնները՝ մահաբերական աւերիչ ու բարբարոս լուծների հանգէպ...) — բայց միև կողմից՝ ռուսաստեաց էր միջին Թիւրքահայ ինտելիգենտը, բուրժուան, վաճառականը, ռուսաստեաց էր շատ թէ քիչ գիտական ու աչքաբաց Թիւրքահայը:

Խիստ հետաքրքրական և կարևոր են այդ հակառուս մտայնութեան և այդ «Թիւրքասէր» զգացումների լուսաբանութեան համար՝ այն մի շարք յայտարարութիւնները, որ արին Թիւրքահայ երեսփոխանները օսմանեան անդրանիկ պարլամենտի մէջ — յայտարարութիւններ՝ որ պէտք է համարել ինքնայորդոր, յօժարակամ և ոչ բռնադատեալ: Աւանդական «փօլիթիկն» ևս, անտարակոյս, որոշ դեր ունէր հայ պատգամաւորների այդ խանդավառ ճառերի մէջ, բայց և անշուշտ, նրանց ռուսաստեաց և Թիւրքասէր շեշտերը *au fond* անկեղծ էին:

«Մասիս» ամսագրի 1877-ի ապրիլ 28-ի համարում արձանագրուած է օսմանեան պարլամենտի մի նիստը

պատերազմի խնդրի վերաբերեալ: Խօսում են Ռուսաստանի դէմ նաև հայ պատգամաւորները: Խօսում է ամենից առաջ Հալէպի երեսփոխան Խարաջեան էֆէնտի. յայտարարում է ՚իւր ազգակցած և մասնաւորապէս զինքն ընտրող գաւառին հայ ժողովրդեան կողմէ, թէ Ռուսիոյ պաշտպանութեան բնաւ պէտք չունին, այլ գոհ են իրենց ճակատագրէն և թէ պատրաստ են ամեն զոհողութիւն ընել՝ իրենց երկիրն ու վեհապետը Ռուսիոյ յարձակման դէմ պաշտպանելու համար»:

Մաքսուտեան Սեպուհ էֆէնտի հաստատում է Մանուկ էֆէնտիի ասածը:

Ապա խօսք է առնում Կարնոյ երեսփոխան Պալլարեան էֆէնտի: Յայտարարում է, թէ ՚ինք, որ հայ է և Կարնոյ գաւառին երեսփոխան, այսբան կըսէ, թէ հայերն իրենց իշխանութիւնը կորսնցնելէ ետև, հինգ հարիւր ասրիէ ի վեր իրենց կրօնքը, լեզուն և ազգութիւնը պահած են օսմանեան իշխանութեան ներքև»:

Պալլարեան էֆէնտիի այդ խօսքերը հաստատում է Կարնոյ միև հայ երեսփոխանը, Դանիէլ Խարաջեան, աւելացնելով, որ ՚կարնեցիք, հայ և իսլամ եղբարք ի միասին զինուորած են. ինքն ալ, որ տէրութեան աստիճանաւոր մ'է, իր ազգակցած օրինակ տալու համար՝ հասարակ զինուորաց կարգը մտել է՝ և այլն:

Նոյն հակառուսական յայտարարութիւններն արեց և Ագրիանուպօլսի հայ երեսփոխան Ռուբէն էֆէնտի:

Ինչ ասել կուզէ, պարլամենտի իսլամ մասը ցնծում է, ծափահարում, առաջարկում է բոլոր լեզուներով թարգմանել ու հրատարակել այդ ճառերը, որպէս զի

աշխարհը տեսնէ, թէ ինչպէս թիւրքիոյ հայ ու այլ քրիստոնեաները (մի քանի յոյն պատգամաւորներ ևս խօսեցին նոյն իմաստով) հակառակ են Ռուսաստանի հովանաւորութեան: Հաշտակի հայ երեսփոխանը խանդավառած, վերստին բեմ է ելնում և «յանուն քրիստոնեայ երեսփոխանաց շնորհակալութիւն է յայտնում իսլամ երեսփոխաններին՝ նրանց եղբայրական զգացմանց համար»... Եւ խորհրդարանը նորէն թնդում է բուռն, երկարատև ծափերով...

Երկու ամիս յետոյ—այլ տեսարան: Նոյն «Մասիս»-ը իր յունիս 19-ի համարում տալիս է արձանագրութիւնը մի այլ նիստի, ուր խօսում է նոյն կարնոյ երեսփոխան Համազասպ Էֆէնտի Պալլարեանը: Խօսում է բողոքովին տարբեր նիւթի—քրդական հարստահարութիւնների մասին: Պատմում է, թէ ինչպէս աշիրէթաւ պեաները անպատիժ նիւթում են ամեն տեսակ սոսկումներ և վախերից ու միւթեատրիֆներից շատերը գործակցում են քրդերին...

Երբ կը հարցնէի կուսակալներուն, թէ ինչու քիւրդերը չեն պատժուիլ, որոյ համար երկու վաշտ զրբ բաւական է, և այսպէս անպատիժ թոյլ կը տրուի, որ շարունակեն իրենց շարագործութիւնները, բն ձի կը պատասխանէ ին, թէ «այս գործին մէջ հիբ մէթի հիւքիւ մէթ» կայ (պետական գաղտնիք): Աերջէն խելամուտ եղայ, ի՞նչ է եղեր այդ պետական գաղտնիք բաձնին. այդ հիբ մէթը սա է եղեր ի՞նչ կուսակալութիւնն անոր համար այդ վիճակին մէջ կը պահէ եղեր քիւրդերը, որ եթէ հայերը Հայաստանի մէջ ապստամբական շարժում մ'ընեն, քիւրդերը զանոնք զսպին և մէկ մ'ալ, որ քիւրդերը, երբ պատերազմ բացւի Ռուսիոյ դէմ, սոմանեան բանակին իբրև կամուր զօրը, օգնութիւն պիտի ընեն եղեր...

Երկու նիստերի այդ տխուր կոնտրաստը, հայոց երկու յայտարարութիւնների այդ աղաղակող հակադրութիւնը այնքան բնորոշ է այն անել, յուսահատ, ողբերգական կացութեան համար, որի մէջ գտնել է բանիցս թիւրքահայ հասարակութիւնը, ստիպւած՝ մի կողմից վախով ու կսկիծով մերկացնել թիւրք ռեժիմի դիւային «հիբ մէթները» Հայաստանի մէջ, միւս կողմից ընդունել ու փաստաբանել հանդիսաւոր ձևերով, ի լուր ամբողջ Եւրոպայի՝ այդ նոյն չարագործ, ազգայնաջինջ ռեժիմի յարաբերական բարիքները... հանդէպ մի այլ քրիստոնեայ ռեժիմի, որ սպառնում էր արշաւել դէպի Հայաստան և որ աւելի կարծր էր, գաժան, աւելի մահառիթ ու ահաւոր այդ թիւրքահայ իդէօլոգների աշքում, որորհեաւ նա, ճիշտ է, խնայում է ազգի մարմինը, պահպանում է նրա ֆիզիկական գոյութիւնը, բայց դրա փոխարէն՝ սպանում է «ազգութեան հոգին»...

Եւ այդ «հոգին» փրկելու համար էր, որ պատրիարք ու Ազգային Ժողով բռնեցին սկզբում բացարձակապէս թիւրքանպաստ ու հակառուս բաղաբականութեան մի գիծ:

Դա առաջին շրջանն էր ազգային վեհերոս, ճակատագրորէն ախտաւոր ու սայթաքուն բաղաբականութեան:

Բայց ահա ռուսաց զօրքը իր յաղթական ընթացքի մէջ հասաւ Սան-Ստեֆանօ և ցարական թնդանօթի գոռ որոտը սասանեցրեց թիւրք կայսրութեան հիմքերը... Եկէն ի մէկ յեղաշրջեց թիւրքահայ հաս-

սարկուլթեան տրամադրութիւնը, մէկէն ի մէկ ուս-
 սասիրութիւնը դարձաւ կարգախօս և Ներսէս
 պատրիարքը, Տնազանդեւոյ գարձեալ ընդհանուր, հա-
 ւաքական կարգախօսին, բռնեց տրամագծօրէն հակառակ
 ընթացք, ուղեւորեց «Գէպի Գանօսա», դէպի
 Սան-Ստեֆանօի ուսական բանակատեղին՝ հայցելու
 համար մեծ իշխան հրամանատարի և նրա միջոցով ցարի
 հովանաւորութիւնը: Երկրորդ շրջանն էր այդ՝
 հայկական քաղաքականութեան *):

Արդիւնքը—16-րդ յօդուածը...

Աւելին էր սպասում հայութիւնը: Նա այնքան զո-
 հաբերել էր ուսական յաղթանակներին և այնքան
 զրկանքներ ու աղէտներ էր ապրել պատերազմի միջո-
 ցին... Քիւրդ ու թիւրք՝ հեղեղի պէս թափել էին վրէժ-
 խնդրութեան իրենց թոյնը հայ բրիստոնեայ անպաշա-
 պան ժողովրդի վրայ, որ չէր թագցրել իր համակրանքը
 ուս յաղթական բանակին. անթիւ գիւղեր աւերել ու
 հրդեհել էին, բնակիչները կոտորել, տաճարները սրբա-
 պղծել և դեռ բանի՛ աղէտներ էին սպառնում պայթել
 այդ ժողովրդի վրայ, եթէ ուսաց զօրքը բաշէր,
 առանց հիմնական բարենորոգումներ մտցնել տալու

*) Մեր նպատակից դուրս է՝ արձանագրել մանրամասնօ-
 ղէն պատմական դէպքերը այդ տազնապալի օրերու: Ըն-
 թերցողը կը գտնէ այդ մանրամասնները պ. Սարուխանի
 վերջերս հրատարակած գրւածքի մէջ — «Օսմանեան Հայոց
 Սահմանադրութիւնը և Հայկական Խնդիրը» — որ մի խրդ-
 ճամիտ հաւաքածու է փաստերի և մի գնահատելի երևոյթ
 հայ քաղաքական գրականութեան մէջ:

երկրի մէջ... Միւս կողմից ամենքն էլ գիտէին, թէ
 Թիւրքիայում և թէ Ռուսաստանում, թէ ինչ անգնա-
 հատելի ծառայութիւններ էր մատուցել ուսներին
 կովկասահայ ժողովուրդը, մի շարք փայլուն հայ զօրա-
 վարները, որոնք իրենց ռազմագիտական տաղանդով,
 յանդգնութեամբ ու ծանօթութեամբ տեղական պայ-
 մանների՝ մեծապէս նպաստել էին ուսաց զէնքի աջո-
 զութեան:

Այդ բոլորը գիտէին և Պետերբուրգում... Ե՛րբ են
 սակայն ուս վարիչները արդարօրէն գնահատել ու
 վարձատրել հայ տարրի անբաւ զոհողութիւնները...
 Յիշենք դարձեալ 1826-28-ի մեծ դրաման, հայ ժողովրդի
 մասսային զինուորագրութիւնը ցարական դրօշակի տակ,
 Ներսէս Աշտարակեցոյ խանդավառ մասնակցութիւնը և
 ի վերջո՛) դառն, աղէկտուր յուսախաբութիւնը...

Յուսախաբ մնաց և միւս Ներսէսը: Դժգոհ մնաց
 հայութիւնը 16-րդ յօդուածից, որ շատ հեռու էր հայ-
 կական ինքնօրինութեան երազներից և որ լոկ տարտամ
 բառերով խոստանում էր իրագործել սալ ինչ որ բա-
 րեննորոգումներ տեղական պէտքերին համեմատ...

Դրական երաշխիք էր արդեօք—Հայաստանի բարե-
 նորոգման համար — ուս զօրքի ժամանակաւոր ներ-
 կայութիւնը երկրի մէջ: Ուզում էր արդեօք Ռուսաս-
 տանը անկեղծօրէն և լրջօրէն բարենորոգել այդ եր-
 կիրը, — թէ՛ նրան միայն հետաքրքրում էր ապագայ
 գրաւուածի նախագիծը...

Այսպէս թէ այնպէս, թիւրքահայերը՝ յանձին նոյն
 իրենց առաջաւոր տարրերի՝ յուսախաբեցին Ռուսաս-

աանից և ապաւինեցին... նրա ռիսերիմ հակառակորդ Անգլիա յի նոսրէն կացութեան փոփոխութիւն— նորէն *rotte-face*... Ակաւեց դրանով հայ քաղաքակա- նութեան երրորդ շրջանը, որ պիտի վերջանար աւելի ցաւագին յուսախաբութեամբ:

Անգլիան արգէն պատմական այդ ահաւոր տագնապի մէջ ճիգ էր թափում պահպանելու թիւրքիոյ ամբողջութիւնը, ընդդէմ՝ ռուսական արշաւանքի, որով միանգամայն վտանգւած էր տեսնում իր Հնդկաստանի ճանապարհը: Անգլիան, Լորդ Բիկոնսֆիլդի չարաղէտ ներշնչումով, հոգին էր այն բոլոր դաւերի, որոնք նպատակ ունէին բաժանելու և իրար դէմ հանելու թիւրքիոյ քրիստոնեայ ժողովուրդները, տրամադրելու հայերին ի նպաստ թիւրքերի և ընդդէմ ռուսների, սնուցանելու հայերի մէջ սին, չարաշուք պատրանքներ, օրօրելով նրանց՝ բրիտանական հովանաւորութեան լայնալայն խոստումներով... Անգլիան կանգնեցնում էր Ռուսաստանին Պոլսոյ ճանապարհի վրայ, իր ահարկու նաւատորմը նետելով դէպի Դարդանէլ: Անգլիան, վերջապէս, հարկադրում էր Եւրոպային՝ վերաքննութեան ենթարկել Սան-Ստեֆանօի դաշնագիրը և կոչում էր Ռուսաստանին համաւերոպական արէօպագ... Անգլիան ժամանակի ամենահզօր պետութիւնն էր և դէպի նա յաւեցին Վ. Պօլսի հայ ազգայինների յուսափառ ու աղերսող աչքերը... Սան-Ստեֆանօի դաշնագրի վերաքննութեան առաջարկը գոհունակութիւն պատճառեց և հայկական շրջաններին: Ակաւեց մի տենդային ագիտացիա, Ներսէս պատրիարքը լարեց իր բոլոր ճիգերը, ի գործ դրեց իր

բոլոր հնարքները՝ հայկական հարցը Եւրոպայի մէջ յուզելու համար և բերլինի վեհաժողովից աւելի ն ստանալու, քան թէ տեղ էր Սան-Ստեֆանօի դաշնագիրը: Փրանսերէն ու անգլիերէն լեզուներով հրատարակում են յօդաճոններ ու բրօշուրներ, հրատարակում է Ներսէսի թելադրութեամբ և ընդարձակ տեղեկագիր Հայաստանի կացութեան մասին:

Արգէն իսկ Լօնդօնի, Սանչեստրի հայ գաղութները գործում էին եռանդով՝ հայութիւնը և հայ դատը ճանաչել տալու Եւրոպային, մասնաւորապէս Անգլիային: Անգլոսիրութեան, աւելի ճիշտ անգլօմոնոլութեան մի կատարեալ տենդ էր, որ բորբոքեց հայերի մէջ: Եւ կարելի է ասել, փոխադարձաբար, անգլիացիների մէջ ևս բորբոքեց մի ճշմարիտ տենդ հայասիրութեան և հայկական հայցասիրութեան: Ահա «Սասիս»-ի այն ժամանակայ մի թղթակցութիւն, որ պարզ գաղափար է տալիս՝ մեզ համար յուզիչ ու պատմական այն վայրկեանի մասին.

«Հայոց հարցը — գրում էր «Սասիս»-ի լօնդօնեան թղթակիցը— Բաւական շարժում է առաջ բերել Լօնդօնի մէջ. շարունակ հայ ազգին և նրա ապագային մասին կը խօսին: Այս յուզումն առաւել ևս զգալի եղաւ, երբ Ռուսիա Հայաստանի մէկ մասը սեփականել որոշեց: Շատ քաղաքագէտ անձինք Ռուսիոյ դէպի եփրատայ հովիտը յառաջանալուն մէջ մեծ վտանգ կընդնշմարեն»...

Թղթակցի ասելով, անգլիական թերթերը շարունակ հրատարակում էին յօդաճոններ ոչ միայն Հայաստանի մէջ

կատարող հարստահարութիւնների, այլ և հայոց պատմութեան, լեզուի, կրօնի մասին, պատկերազարդ թերթերը հրատարակում էին հայ թագաւորների ու հոգևորականների պատկերներու լոյս և տեսնում «Դեսպանաժողովը և Հայք» վերնագրով մի տետրակ, որ ցրում է պարլամենտի անդամներին, մինիստրներին, թագուհուն, լորդերին... Լաւ ընդունելութիւն է գտնում կղզւորների ու եկեղեցական շրջանների մէջ... Ամեն սեղ ջերմ համակրանք հայերի համար: Մասնաւոր հետաքրքրութիւն են ցոյց տայիս՝ Արգայի դուքսը և Ջէյմս Բրայս: Վերջինս հրաւիրում է իր տուն իր անգլիացի բարեկամներին և Լոնդոնի ու Մանչեստրի ականաւոր հայերին՝ խորհրդակցելու համար հայկական դատը առաջ մղելու միջոցների մասին: Ժողովին մասնակցում են քսանի չափ ծանօթ անգլիացի գործիչներ, մեծ մասամբ պարլամենտի անդամներ:

«Սեղանի մը վրայ Հայաստանի աշխարհագրական ընդարձակ քարտէզ մը գրւած էր և ամեն ոք նրա դիրքը կը զննէր»... Խօսում են հայկական ավտօնօմիայի ու նրա հնարաւորութիւնների մասին: Անգլիացիներից ոմանք առաջարկում են Լիբանանի պէս մի ուէժիմ սահմանել Հայաստանում... Որոշում է, վերջապէս, մի պատգամաւորութիւն ղրկել լորդ Դերբիին (արտաքին գործ. նախարար) և ներկայացնել նրան յիշատակագիր, խնդրելով, որ հայկական խնդիրը գրւի առաջիկայ Դեսպանաժողովի առջև:

Հայ թղթակիցը ի վերջոյ խանդավառ ուրախութիւն է յայտնում հանդէպ «ագնիւ ու վեհանձն ազգին

զաւակներուն, որոնք հայ անւան ցոյց տւած կարեկցութեան և սիրոյն համար՝ համայն հայոց երախտագիտութեան արժանի են» *)...

Հետաքրքրական է 1878-ի ապրիլին Լոնդօնում հրատարակւած մի բրօշուր «The Eastern Question and the Armenians» (Արևելեան հարցը և հայերը) խորագրով, որ մի ուշագրաւ ժարգարէութիւն է և մի սեւակ ահազանգ Բերլինի Վեհաժողովի նախօրեակին.

Ներկայ պատերազմը պիտի բերէ՞ արդօք վերջնական լուծումը—հարց է տալիս անանուն հեղինակը: Եւ պատասխանում է վճռականապէս—ոչ: Որովհետև, ասում է նա, թիւրքիայից սպասել վերանորոգում, ուէֆօրմ—անկարելի է: Եւ քանի որ Եւրոպան ստանձնել է իրաւարարի պաշտօն, ապա պէտք է լուծուին տայ Արևելեան խնդրին ոչ միայն եւրոպական, այլ և ասիական կողմից. պէտք է ազատագրէ ոչ միայն Բուլգարիան, այլ և Հայաստանը... Ջգո՛յշ—ասում է նա, դիմելով պետութիւններին — եթէ Արևելեան հարցը լուծէք միմիայն Եւրոպայում և մոռացութեան տաք Ասիան, դուք դրանով կը փոխադրէք միայն խնդիրը, բայց չէք լուծի վերջնականապէս...

Եթէ եւրոպական թիւրքիոյ իլօտը բուլգարն է, ասիական թիւրքիայինը—հայն է: Շատ խօսեցին վերջերս բուլգարների մասին և դա միանգամայն հասկանալի է, շատ էին յուզել բուլրին Բուլգարիոյ մէջ կատարւած «թիւրքական սարսափները»:

Սակայն, եթէ կարելի լինէր ուրուագծել հայ ժողովրդի տառապանքների պատկերը՝ նա շատ աւելի ծանր պիտի լինէր բուլգարականից: Բուլգարները գէթ շրջապատւած չէին այնպիսի վայրենի հորդանքով (քիւրդ, աւշար, չէլքէզ), որոնք շարունակ թալանում, սպանում ու սրբապղծում էին անպատիժ կիւրդի: Այդպէս էր հայոց վիճակը պատերազմից առաջ. նա աւելի ևս ծանրացաւ պատերազմից յետոյ: Մասնաւոր դէպքերը ընդհանրացան: Բաւական չէ, որ 20—30

*) «Մասիս», 1878 թ. 6 ապրիլ:

հազար հայ պատերազմի ատեն լուսնային իբրև ճշմարիտ գրաստներ՝ թնդանոթներն ու ռազմավիճերը հեռու փոխադրելու և առհասարակ ամենածանր աշխատանքներ կատարելու համար, բաւական չէ, որ միայն հայ ժողովուրդը կողոպտեցին, առան նրանից ամեն ինչ՝ պատերազմի ծախքերը հոգալու համար, այլ և պարզապէս մատնեցին այդ ժողովուրդը քիւրդ հրոսակներին, որպէս զի նրանք իրենց կամուսը մանակցու թեամբ ուժեղացնէին օսմանեան բանակը: Եւ ամբողջ ճանապարհի վրայ, որ անցել են հրոսակները մինչև պատերազմի դաշտ — ոչինչ չի մնացել կանգուն: Հսկայական է թիւը այրւած դիւղերի, սրբապղծւած ու թալանւած եկեղեցիների ու վանքերի, մեծ է քանակը և սպանւած հայերի...

Բայց ամենէն զարհուրելին, որ սարսուռ է ազգում իւրաքանչիւր քիչ թէ շատ մարդասէր անհատի վրայ — այն է՝ որ պատերազմի վախճանը դեռ վախճան չէ հայկական այդ սարսափների ընդհակառակը. բոլոր այդ մահամեղան ցեղերը — չէրքէզ, պոմակ և այլն — ոտնոց բռնել է Ռուսիայի ուս յաղթական բանակը, պիտի նետւին ասիական վիշալէթների վրայ, լի ատելութեամբ ու վրէժխնդրութեամբ և պիտի քաւել տան Ասիոյ քրիստոնեաներին... Ահա թէ ինչ է սպասում հայերին ապագայում...

VI

Վ Ի Ժ Ո Ւ Ս Ը

«Պասասխանասուքեան» խնդիր. — Շփոթը հայ ազգային բաղաձայնութեան մէջ. — Վերջինի հիմնական արտաք. — «երկաթն» արհամարհող սպոր արհամարհեց աշխարհից. — Իզնասիվի խօսքը. — Հայութիւնը ամենալ սար» Հայաստանի մէջ. — 61-րդ յօդուածը, այնուամենայնիւ, վասակ էր. — Նրա առաջին սպարորութիւնը — Արմուրնի, Կեւեկը, Բաժի. — Ներսէսի ինքնաբարսացումը. — Կացութիւնը աւելի ծանցաւ Ռեյից յետոյ. — Հայկական դիմումները եւ սպորագամի պասսախանը. — Անգլիական *colle-face*-ը. — Համբերութիւնը. —

Ձո՛ւր, միամիտ ինքնամարկում...

Երբ այնքան վառ յոյսերից ու ակնկալութիւններից յետոյ, յաղթական «Սօսկովը» հրամեցնում էր թիւրքահայերին — Հայաստանի ինքնավարութեան տեղ — Սան-Ստեֆանօի լղարիկ ու տարտամ յօդուածը, մեր հայրենակիցներից շատերը վերագրում էին այդ ֆիասկօն հայկական քաղաքականութեան վրիպումներին: Եւ երբ բերլինեան արեօպագի մէջ ևս... յիշուր մուկ ծնեց, երբ 61-րդ յօդուածն ևս, մի վայրկեան բերկրանք ու խանդավառութիւն տարածելուց յետոյ՝ գնաց վիժելու

արեան ու աւերածի անդունդներում, — դարձեալ մեր իմաստուն կրիտիկոսների աչքում հայկական „ձախորգ քաղաքականութիւնն“ էր յանցաւոր...

Այդպէս է միշտ տրամաբանել մեղկ ու լալկան անձարը 1895—96 թւականներում, երբ վիժեց ժամանակաւորապէս հայ յեղափոխական շարժումը՝ հայրենիքի վիժխարի զուլուժների հանդէպ նոյն հայկական անձարութիւնը մէկ յանցաւոր և մեկ միայնակ պատասխանատու էր ճանաչում — հայ յեղափոխականին:

1878-ին և այնուհետև երկար ժամանակ՝ քառութեան նոխազ էին Ներսէս պատրիարքը և իր աշխարհական ու կղերական գործակիցները: Հայոց ռեֆորմների ու ինքնավարութեան ծրագիրները վիժել էին — ըստ այդ անողոք կրիտիկոսների — որովհետև Ներսէսը, Խրիմեանը իրենց անխոհեմ քայլերով գրգռել էին ուսանելին, որովհետև հայկական խնդիրը անշնորհք ձևով էր ներկայացրել Եւրոպային, որովհետև պատրիարքը գործել էր ինքնագլուխ և „Ազգային հաւաքական կամքը չէր յայտնել պետութիւններին“, որովհետև Ներսէս, Խրիմեան, Նարպէյ, Չերազ եղել են վատ, անփորձ դիւանագետներ և այլն և այլն:

„Դաւաճանութիւն կայ գործի մէջ և կամ խաբւած է պատրիարքը“, — գոռում էին մի շարք երեսփոխաններ Ազգային ժողովում, 1878 թ. յուլիս 21-ի փութորկայոյզ նիստի միջոցին, երբ 12 անդամներ հարցապնդում էին ուղղել պատրիարքին „հայկական խնդրի առթիւ“, իսկ այն ընդհանուր յուսախաբութեան, որ

առաջ էր բերել 61-րդ յօդւածը: Եւ Պէկեան էֆէնտի արտասանում է իր մեղադրական ճառը, ամեն վայրկեան ընդհատելով և ծանր վիրաւորանքներ ստանելով տաքարիւն ու անզուսպ վարժապետեանից:

Ազգային հաւաքական կամք մը պէտք էր յայտնել Եւրոպիոյ օրինաւոր և հանդիսաւոր կերպով (*légalement et solennellement*), ժողովրդական հանրագիրներ պէտք էր հաւաքել և այլն... Եթէ պաշտօնապէս և ազգովին բողոք երթար, հայոց հարցը վիճարանութեան կ'ենթարկէր Բերլինի մէջ... Մինչդեռ ոչ մի վիճարանութիւն չ'եղաւ *)...

Խնդիրը վիժել է, ըստ Պէկեան էֆէնտի, որովհետև

Պատրիարքը, առանց անգամ Ազգային Ընդհանուր Ժողով գումարելու, գործել է մինակ, իր մի քանի խորհրդականներով... Եւրոպան չի ընդունել Պատրիարքի ձայնը, իբրև ազգի ձայն...

Եւ քսան տարի յետոյ՝ անգամ Նուպար փաշայի պէս դիւանագէտ գործիչը իր հեղինակաւոր խօսքով նւիրագործում էր Պէկեանների անհեթեթութիւնը: Ներսէս պատրիարքը, նրա ասելով, գլխաւոր պատասխանատուն է մեր բոլոր դժբախտութիւնների, նաև 1895—96-ի ջարդերի **):

Այդպէս է գրւում պատմութիւնը... Ներսէսն էր, ուրեմն, որ փոխարինել աւեց Սան-Սանֆանօի 16-րդ

*) Ատենագրութիւնը Ազգային Ժողովոյ, 1878 թ.:

***) Մի այդպիսի յայտարարութիւն արել է, ըստ երևոյթի, Նուպար փաշան պ. Չոպանեանին: (Տես վերջինի յօդւածը «Պատասխանատուութիւնները» խորագրով, «Անահիտ», յունւար 1899): Պէտք է ստոյգ համարել պ. Չոպանեանի այդ վկայութիւնը, ևս առաւել, որ վերոյիշեալ յօդւածը հրատարակւած է փաշայի կենդանութեան օրով:

յօդւածը Բերլինի 61-րդ յօդւածով: Ներսէսն էր և ոչ լօրդ Սօլսբիւրին, որ յետ մղեց Ռուսաստանի հովանաւորութիւնն ու ապագայ գրաւումի ծրագիրները և յօրինեց ընդհանուր եւրոպական հովանաւորութիւն... Ներսէսն էր և ոչ Անգլիան, որ ռուսական առաջնադասութիւնը արգելելու նպատակով՝ խլեց Թիւրքաց Հայաստանը Մօսկօվի ձեռքերից և մասնեց վերստին սուլթանական թռնապետութեան... Որքա՛ն հզօր և ազդեցիկ է եղել այդ ներսէսը:

Ce n'est pas sérieux!...

Անշուշտ, եղել են վրիպումներ ու սխալներ: Անշուշտ, պատմական վայրկեանի բարձրութիւնից շատ և շատ վառ են եղել 1878 թւականի գրեթէ բոլոր դերակատարները, — թէ՛ ներսէսը, որի կրակոտ ու սուտոտուն խառնւածքին միանգամայն անծանօթ էր չափի ու սակտի զգացումը, թէ՛ Խրիմեանը, որի պարզ, նահապետական հոգու վրայ կատարել էին մի վրդովեցուցիչ բռնութիւն, հագցնելով դիպլոմատի ծիրանի և զրկելով Եւրոպայի սալօնները, ուր նրա զմայլելի *humour*-ը սրախօսելու և զւարճաբանելու անսպառ նիւթ էր գրտնում, առանց սակայն յարմարւելու դիւանագիտական արհեստի ամենապարզ պահանջներին. թէ՛ Խորէն Նարպէյը, որ իր լեզւական ու հռետորական ձիրքերին չէր միացնում բաւականաչափ լրջութիւն, և թէ, վերջապէս, երիտասարդ Չերազը, որ անգամ իր ամենահասուն շրջանի մէջ, տարաբախտաբար, շատ բիչ է համապատասխանել իր կոչման, իր դժւարին բարոզական

պաշտօնին՝ Եւրոպայի հասարակական կարծիքի առաջ *):

Ցարօրինակ էր, անշուշտ, Վարժապետեան պատրիարքը, երբ նա մի ձեռքով սիրաշահում էր ռուսներին, միւս ձեռքով դաւել էր սարբում նրանց դէմ, մի կողմից զրկում էր Նարպէյին Պետերբուրգ և Եզմիրլեանին Էջմիածին (Սան-Ստեֆանօի դաշնագրից յետոյ), որպէս զի դիմումներով ու աղերսներով ձեռք բերէին հայկական ավտօնօմիա Ռուսաստանի հովանաւորութեան տակ, միւս կողմից, Պօլսի անգլիական դեսպանի ազդեցութեանը ենթարկւած՝ շարունակում է հակառուսական գրգռիչ յայտարարութիւններ անել նրան, մերժում է իր հօտի անունից Ռուսաստանի «ազգակուլ և կրօնակուլ» հովանաւորութիւնը և իր բուռն համակրանքն է յայտնում Թիւրքիոյ բարեկամ Անգլիային, նրա աջակցութիւնը հայցելով... Եւ այդ բոլորը տեղեկագրւում է Լօնդօն ու հրատարակւում «Վապոյա Վրքի» մէջ, իլուր աշխարհի:

Իսկ այնտեղ, Լօնդօնում, դիւանագէտի ծիրանի հագած «Վասպուրականի Արծիւը», նոյն Անգլիայի աջակցութիւնը ստանալու մտահոգութեամբ, մոռանում էր իր «Վանգոյժը», մոռանում էր տաճկական ռեժիմի դարաւոր սարսափները և լօրդ Սօլսբիւրիի հետ տեսակցութեան միջոցին փաստաբանում էր թիւրքերի դատը, օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը, և ասում էր,

*. Պ. Մինաս Չերազ՝ մօտ քսան տարւոյ իր բողոքական հրապարակագրութեամբ՝ փաստակել է իր համեստ տեղը հայկական ինչոր պատմութեան մէջ, որ մենք իմերևս կը բնորոշենք յետադայում:

որ հայերը տառապում են սոսկ քրդական հայածանք-
ներէց *)

Տարկանոնութիւններն ու հակասութիւնները անհաշիւ
են մեր պատմութեան այդ նշանաւոր դրագի մէջ: Հայ
քաղաքական գործիչները, իմանալով, որ դիւանագիտա-
կան արհեստը ինքնին արդէն կեղծիք է, երկդիմութիւն
ու խարդախութիւն, իրենք ևս իւրացրել էին նոյն *cache-
cache*-ի ու խաբէութեան մեթոդը. Սակայն, կրկնում
ենք, ծայրայեղորէն միամիտ ու անարդար կը լինէր՝ այդ
տարօրինակութիւններին ու հակասութիւններին վերա-
գրել հայկական դատի բռնած ընթացքը և նրա վերջ-
նական ֆիասկօն:

Աս ենք դարձեալ — այդ դ ու ա լ ի զ մ ը, երկու-
թիւնը միմիայն Ներսէսի ու նրա խմբի քաղաքակա-
նութեան մէջ չէր, այլ ամբողջ հայ մասաւորականու-
թեան մէջ: Այսին դեռ Խոսրոստանի թեւարկութեան
եռանդուն կողմնաչիցներ նոյնիսկ թիւրքահայ մտաւո-
րականների շարքերում, իսկ կովկասեան հայութիւնը,
ի դէմս իր առաջադէմ տարրերի, տեսնում էր միակ
փրկութեան խարխիւր՝ նոյն ուսական թեւարկու-
թեան մէջ:

Շփոթ, հակասական մտքերի ու տրամագրութիւն-
ների յորձանքի մէջ տարուբերում էր սղգային բա-

*) Խրիմեան յետոյ տեսէ էր, որ ինքն այդպիսի յայտա-
բարութիւն չի տրել լօրդ Սոլսբիւրիին: Եթէ հանգուցեալ
կաթողիկոսի յիշուութիւնը չէր խաբում իրեն՝ պէտք է
ենթադրել, որ թիւրքիմայութեան հեղինակը իր թարգմանն
է, պ. Չերազը:

ղաքականութեան նաւակը, սակայն... այդ յորձանքները
չէին, որ անդրադարձան հայոց հարցի եւօլիւսիօնի վրայ,
նրանք չէին, որ որոշեցին Հայաստանի ճակատագիրը
Բերլինում, լօրդ Սոլսբիւրիի և Շուվալօվի քաղցրաթեթու-
բանակցութեան միջոցին, և նրանք էին պատճառը՝ որ
Բերլինի վեհաժողովի նախօրեակին ցարն ու իր մինիս-
տրները Պետերբուրգում քաղաքավարի մերժումով պա-
տասխանեցին Խորէն Ղարպէյի ներկայացրած հայկական
ափսօնօմիայի առաջարկին: Միջպետական դիւանագի-
տութիւնը աւելի հիմնական գրգռիչներ ունի, նա չի
կախած այդքան փոքրիկ պատահարներից...

Չարիքը հայկական դիւանագիտութեան ա յ ս կ ա մ
ա յ ն ձ և ի ու վրիպումի մ է ջ չ էր, այլ նոյն այդ
դիւանագիտութեան եռութեան մէջ: 1878-ի հայոց վար-
դագոյն երազների խորտակման պատճառն այն էր, որ
հայութիւնը իր դատը առաջ քշելու համար դիմել էր
դիւանագիտական միջոցներին և մի-
միայն նրանց: Հիանալի էր այն եռանդն ու
աճապարանքը, այն տանդային ու համերաշխ գործու-
նեութիւնը, որ տիրում էին այդ պատմական վայր-
կեաններում հայ բուրժուա ու ժողովրդական տարրերի
մէջ, ընդհանուր, համազգային դատի շուրջը, սակայն
չկար այդտեղ և նոյնիսկ արհամարհած էր ամենաեա-
կանը, — ժողովրդի պատրաստութիւնը, նրա իրական-
գիմարական ուժը: Չկար «երկաթէ շերեփը», որի
բացակայութիւնը այնքան դառնօրէն ողբում էր Խրի-
մեան Հայրիկ, իր վերագարձին Բերլինից...

1878-ի հայ սերունդը (բուրժուազիան, ղեկավարող մտաւորականութիւնը) հարազատ յաջորդն ու շարունակողն էր 60-ական թւականների հայ «սահմանադրական» սերնդի. նոյն միամիտ խանդավառութիւնը «կուլտուրական» նւաճումների շուրջը (դպրոցների, վանքերի, հոետօրական ազատ մարզանքների և այլն) և նոյն ատավիկ, անդամանելի սարսափը՝ ոչ-օրինական, ապրստամբական միջոցների առջև: Քսան տարին ոչ մի փոփոխութիւն չէր բերել այդ ողբալի, կրաւորապաշտ մտայնութեան մէջ, մինչդեռ շուրջը ամենուրեք, օսմանեան տիրապետութեան հօրիցօններու, սթափել էին քրիստոնեայ համայնքները և ըմբոստացման ճանապարհով դիմում էին դէպի ազատութիւն...

«Ներկայիս» արհամարհող ազգը՝ ինքն ևս արժանացաւ դիւանագիտական արհամարհանքին: Լօրգ Բիկօնսֆիլդ չի էլ ուզում ընդունել հայկական պատգամաւորութիւնը Բերլինի մէջ. Խորէն Նարայէին բաղաբաժարի ճամբայ են ձգում Պետերբուրգից, հասկացնելով, որ 16-րդ յօդուածից աւելին պահանջել աններելի յանդգնութիւն է, իսկ Իգնատիեւ, ամենից *franc* ու շիտակ և գուցէ ամենից լաւ տրամադրուած դէպի հայ դատը, ասում էր պարզապէս Ռուսճուգլեան վարդապետին—որ եկել ներկայացել էր նրան, Ներսէսի հրահանգով (Ադրիանուպօլսում, ռուս-թիւրքական հաշտութեան բանակցութիւնների միջոցին) և խնդրում էր ռուս զօրքի գրաւած հայկական գաւառներին ևս շնորհել նոյն ազատութիւնը, որ պիտի տրւէր Բուլգարիային.

Թիւրքահայերը—ասում էր Իգնատիեւ—չպիտի կարենան

ստանալ բուլղարաց ազատութիւնը, քանի որ հայք անպատրաստ գտնւեցան և դարձած են մեռեալ տարրը Հայաստանի մէջ * ...

Ռուս լիազօրի այդ ուշագրաւ յայտարարութիւնը ամեն բան պարզում է՝ «յանցանքներն» ու «պատասխանատուութիւնները» որոնող կրիտիկոսներին: Այդտեղ է մատնանշուած բուն շարիքը, — մեղկութեան և անարգ կրաւորականութեան այն ինաւուրց տխտը, որով մինչև օրս էլ վարակած է հայ բուրժուազիան ու ազգի մեծամասնութիւնը և որ վերջին բառորդ դարու մէջ կաշկանդեց ազգային շարժման ծաւալն ու սլացքը, մատնեց ժողովուրդը անզէն ու անել յուսահատութեան, դատապարտեց ըմբոստ փոքրամասնութիւնները մի շափազանց անհաւասար, օրհասական պատերազմի, որը ի տեղի հարկադրելու և դէպի գրական գործ մղելու դիւանագիտութիւնը, առաջ բերեց մշտնջենական ֆիասկօներ և «զուլումներ»...

Ահա թէ որտեղ և ինչ ուղղութեամբ պէտք է գործադրւէր հայ պատմախոյզ կրիտիկոսի «ինքնամտրական» եռանդը:

Չլինէ՛ր հայը «մեռեալ տարր» 1878-ին, կամ յետագայ թւականներում, չլինէր նրա անսահման համակերպութիւնն ու դիակնային անշարժութիւնը հանդէպ քրդի ու թիւրքի անվերջ բռնութիւնների, չլինէր նա գէթ փոքր ինչ «մշակած» յեղափոխական բարոզով:

*) Տես Ադրիանուպօլսոյ առաջն. փոխանորդ Ռուսճուգլեան վարդապետի մէմուարները, հրատ. «Ռազմիկ»-ի մէջ, 1907 թ. (Մագալանի Հայկական Խնդրոյ):

ունենար նա՝ իր անթիւ դպրոցների ու վանքերի հետ՝ գէթ մի քանի «հէթերիական» կազմակերպութիւններ, որոնք 19-րդ դարի սկզբներում սուևկի պէս բսել էին սարուկ Գունաստանի մէջ, զուտ կրթական «զգային հաստատութիւնների ծոցում, — Անգլիան, հզօր ու յաղթական Ալբիօնը, այնպէս չէր վարւի հայութեան հետ և Լօնդօնի մէջ յանուն հայկական ինքնավարութեան սկսած ուժեղ պրօպագանդը չէր ունենայ այնքան ողբալի մի վախճան...

Գեռ զարմանալի է, որ այնքանը շահեցանք: Ջարմանալի է, որ առանց մի կամիլ յեղափոխական արիւն թափելու, լոկ «փայտէ շերեփ» ցուցադրելով, օսմանեան հայութիւնը ձեռք բերեց 1878-ին դիւնադիտական այն շնորհը, որ կոչոււմ է 61-րդ յօդուած և որ այն ժամանակեայ պայմաններում յիրաւի մի խոշոր վաստակ էր, յոյսերի ու ակնկալութիւնների մի բուլո-րովին նոր աղբիւր... Հայոց հարցը միջազգային բնոյթ էր ստանում, Թիւրքիան հանդիսաւորապէս պարտաւորոււմ էր ապահովել հայ տարրը անհրաժեշտ բարենորոգումներով և Լւրոպան նոյնքան հանդիսաւորապէս ստանձնում էր վերահսկողի պաշտօն, միանգամայն իրաւունք ու պարտաւորութիւն՝ միջամտելու հայկական գործերի և հայ-թիւրք յարաբերութիւնների մէջ: Ֆիասկօն յետոյ պիտի գար, իսկ անմիջական տպաւորութիւնը Բերլինի Վեհաժողովից յետոյ, հայկական աշխարհի մէջ՝ աւելի շուտ յաղթանակի տպաւորութիւն էր, քան պարտութեան: Գոհ Ճնացին անգամ նրանք, որոնք հանդիսացել էին ամենաջերմ պաշտպան-

ներ ուսական թեւակութեան և որոնց համար փրկութեան միակ խարխիւն էր Սան-Ստեֆանօի 16-րդ յօդուածը և Ռուսիոյ գրաւումը Գոհ Ճնաց այդ տրամադրութեան ամենամեծ *porte-parole*-ը, Գրիգոր Արծրունին: «Մշակ»ը յայտնում էր իր այդ գոհունակութիւնը պ. Չերազի «Թէ ի՞նչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն» անսուրբեան նախաբանի մէջ *):

Գոհ Ճնաց և կովկասահայ մտաւորականութեան միւս, պահպանողական կոչուած բանակը: Թիֆլիսի «Մեղու»ն բացայայտ կերպով խոստովանում էր, որ թիւրքահայերի համար բարեբախտութիւն է Լւրոպայի հաւաքական և մասնաւորապէս Անգլիայի խնամակալութեան ենթարկելը: «Անգլիան, ասում էր նա, ամենաքաղաքակրթուած ազգն է, հայերը նրա հովանաւորութեան տակ՝ թէ անտեսապէս կ'առաջադիմեն և թէ քաղաքականապէս կը զարգանան»...

Գոհ Ճնաց թիւրքահայ նշանաւոր վիպասան Ծերենց. «Մասիս»ի մէջ հրատարակած իր մի յօդուածով նա յանդիմանում էր այն հայ մտաւորականներին, որոնք յուսահատական ժեսսեր էին անում Բերլինի ֆիասկօի առթիւ.

Ի՞նչ տեղիք կայ յուսահատելու — բացականչում է «երկունք»ի հեղինակը — միթէ՞ Լէնկթիմուր դուռն է հասեր...

Ծերենց յոյս է յայտնում, որ հայ ազգը պատմական այնքան փոթորիկներից ողջ պրծնելով, Անգլիոյ հովանաւորութեան տակ չի կարող ջնջուիլ: Իսկ

*) 1878 թ. № 209:

երբ բոլոր յոյսերը կը կտրւին, այն ժամանակ, ասում է Ծերեռնց, Ռուսաստանին կը միանանք *)...

Միամտութիւն է բուրում վիպասանի հեռակեալ յայտարարութիւններէր.

... Ինչ որ քաջութիւնը չի կրնար բնել, համբերութիւնն ու յարատևութիւնը կրնան բնել... Այլ թէ գինուց քաջութիւնը կամ ապստամբական շարժումներն ազատութիւնն և կեանք բերին մաջառ ազգին, այլ համբերութիւնն ու ժամանակի պարագաներ **)...

Այդ միամիտ պատմափիլիսոփայութեանը կարծես մի գառն ու մտրակող պատասխան էին միւս ազգային վիպասանի, «Վայժներ»ի լացող ու կայծակող հեղինակի այս առնական խօսքերը.

Դասարկ յոյսերով ենք ապրում. Դիտակն էր լուսահամբերութիւն ունին... Ազատութիւն տրոււմ է այն ազգերին, որոնք իրենց ազատութիւնը սրով պաշտպանել գիտեն ***)...

Որ 61-րդ յօդուածը մի կարևոր նւաճումն էր այն ժամանակեայ պայմաններում թիւրքահայ ժողովրդի համար—դրան ապացոյց է և այն դժգոհութիւնը, որ նա յարուցեց թիւրք կառավարութեան մէջ: Վերջինս, ինչպէս տեսանք, սկզբներում խիստ գոհ էր հայկական խնդրի արժարձումով և նոյնիսկ ինքն էր յորդորում հայոց պատրիարքին՝ առաջադրել պետութիւններին այդ

*) «Մասիս», 1878 թ. յուլիս 23:

***) Մաջառները բացառութիւն չեն կազմել ազգերի պատմութեան մէջ. նրանք ևս արիւնալի կոխներով և մեծամեծ զոհերով են ձեռք բերել իրենց ազատութիւնը: Մ. Վ.

***) «Մշակ», 1878 թ. N: 22:

խնդիրը, արգելք չինել Հայաստանի գրաւման, ջնջել աւալ Սան-Ստեֆանոսի սպառնալից 16-րդ յօդուածը: Սակայն, երբ տեսաւ, որ հայերը Բերլինի մէջ կոնարօլ և դրական շեքաշխիքներ են ստանում Եւրոպայից իրենց երկրի ապահովութեան համար, Արդիւլ Համիդ կատաղեց և (սպառնալիքով հրամայեց պատրիարքին յետ կոչել հայոց պատգամաւորութիւնը Բերլինից): Այդ ժամանակ էր, որ Ներսէս արտասանեց իր խիզախ մերժողականը: Ահա թէ ինչպէս էր պատմում ինքը պատրիարքը Ազգային ժողովի 1878 թ. հոկտեմբեր 6-ի նիստի մէջ.

... Աստ սպառնալիք ու բարձրագոյն հրաման եկաւ ինձ Դունէն՝ պատգամաւորները Պերլինէն յետս կոչելու, որուն պատասխանեցի, թէ աւելի լաւ կը համարէի կախիլ պատրիարքարանէն *)...

Ինքը Վարժապետեան շատ լաւ կը գիտակցէր 61-րդ յօդուածի թերութիւնները: Յուլիս 21-ի իր պատմական ճառի մէջ նա ասում էր՝ ի պատասխան սկեպտիկներին ու յուսահատներին.

Տես՛րք երեսփոխանք... Մեր խնդիրը անմիջապէս և կատարելապէս չլուծուեցաւ... Եւ ո՞ր այդ կրցած է յանկարծակի կերպով իր բաղձանացն ի կատար հասնիլ... Ո՞ւր է, սակայն, կորուստը, ո՞ւր դժբախտութիւն, ո՞ւր յուսահատութիւն... Մեծ բան է արդէն, ինչոր ստացանք... Այլ մոռցուած չենք...

Դժուար է, արդարև, լուրջ առարկութիւններ հանել այդ բացատրութեան գէժ, նայելով իրերին ասոյն ժամանակաւ ակնոցներով.

Կանխաւեն անոնք, որ կ'ըսեն թէ ինչո՞ւ սկսանք, եթէ

*) Ատենադրութիւնը Ազգ. ժողովոյ. 1878 թ. էջ 181:

պիտի չյաջողէինք. զի օր մը յաջողելու համար՝ այս օրէն սկսելու էր. և զի եթէ ապահով կերպով գիտնայի ալ առաջուց թէ պիտի չյաջողիմք բնաւ, դարձեալ պիտի սկսէի և այն թո՛ղ գրէր ինձի ազգս ի դատապարտութիւն:

Եւ Ներսէս շարունակում է, միշտ աւելի բարձրատուն և պաթեթիկ.

Գո՛ւք, ազգային երեսփոխաններ, ըսէ՛ք, ազգին ինչի՞րը չէ՞, որ ներկայացուցիւ ըսէ՛ք, պիտի ներէի՞ք ինձ, որ այնպիսի պարագայի մէջ, որ թիւրքիոյ քրիստոնեայ ժողովրդոց բախտը պիտի վճռուէր, ձեր պատրիարքը անհոգ կենար. ըսէ՛ք, պիտի ներէի՞նք ինձ մեր նախնեաց հոգիք. Հայկէն մինչև վերջինն մեր Լեոն, Լուսաւորիչէն մինչև վերջինն Ներսէս, եթէ խոչ ու խուժ առ սան հարկանելով, մինչև Եւրոպա չըհասցունէի ազգին ազազակը: Ըսէ՛ք, ըսէ՛ք ձեր հանդիսաւոր քուէտփր, ըսէ՛ք ձեր միաձայն քուէտփր, զի միաձայն միայն կրնայ ըլլալ քուէն այս պարագայիս մէջ...

... Վասն զի առաջին անգամ հայոց ազգին անունն անցաւ հանդիսաւոր դաշնադրութեանց մէջ՝ ա՛յդ է կորուստը: Վասն զի հայոց ապագային սերմունքը գրեցաւ — ա՛յդ է մեր ջանից ապարդիւն ելնելը... Եւ վասն զի այս վայրկեանիս որ կը խօսիմ ձեզի թերևս մեծ ևս բեմերու վրայէն հարցումներ կուղղուին Եւրոպայի կառավարութեանց Հայոց նկատմամբ՝ ա՛յս է մեր լքումն ու յուսահատութիւնը...

Ահա և Թանօթ վերջաբանը այդ պատմական ճառի.

Իսկ մենք. Տիրք երեսփոխանք, մենք յարատեներ մեր սկսած գործի մէջ: Այսպիսի գործ ոչ մէկ օրւան մէջ, ոչ մէկ ժարգու ձեռքով կրնան կատարելու Պատրաստե՛նք մեր ապագային: Նախ՝ չկենանք հոս, Հայաստան երթանք. Հայաստան զրկենք, ինչ որ ունինք ազգին մէջ բանիբուն, տաղանդաւոր, ազգասէր, ուսումնասէր, եկեղեցասէր. Հայաստան երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվռուն երիտասարդներ: Հայաստան երթան մեր արեստագէտներ, վաճառականներ, Հայաստան երթան այնքան դժբախտ պանդուխտներ. ոչ ևս պիտի ըլլայ հոն սրածուծութիւն, ոչ ևս հարստահարութիւն, ոչ ևս կենաց և ընչից և պատուոյ առեւանգութիւն: Աւղիներ պիտի բացուին, ջրանցք-

ներ պիտի շինուին, գործարաններ պիտի կառուցուին, Անգլիոյ զրամատէրք հոն պիտի երթան իրենց գրամը գործածելու, թող երթան մեր զրամատէրք ալ, ընկերութիւններ կազմեն. ընկերութիւններ՝ ամեն քաղաք և գիւղ գպրոցներ հաստա-



Ն Ե Բ Ա Է Ա Պ Լ Ե Ր Ո Վ Ա Յ Ի Տ Ե Մ Ի

տելու համար, առևտրական յարաբերութիւններ, գործարաններ հաստատելու համար. Հնդկաստանէն, Հայաստանէն, Անգլիայէն, Թիւրքիայէն, Ռուսիայէն, Աւստրիայէն ու մինչև Պարսկաստանէն միասն, ձեռք ձեռքի տան բոլոր հայերը,

և այն ատեն՝ թերևս ես այլ ցաւագար ու անբուժելի հիւանդութեամբ վարակեալ ի գերեզման իջած ըլլամ արդէն. այլ տեսնելով այսքան ազգային միասիրտ, միահոգի աշխատութեան գեղեցիկ արդիւնքները, տեսնելով պսակած մեր այսօրեան բոլոր յոյսերը, հոգիս պիտի խայտայ գերեզմանիս մէջէն և պիտի բնդգրկէ մեր սիրելի նախնեաց հոգիները...

Խեղճ ներսէս... Կրկնում ենք, ո՞վ կարող էր այն ժամանակ լուրջ առարկութիւններ հանել այդ Լաւատես պատճառքանութեան հիմունքների դէմ, անձնատուել մռայլ յոռետեսութեան. ո՞վ էր այն մարգարէն, որ գուշակէր ապագան... Ամենքն էլ ընդունում էին, որ 61-րդ յօդաւածը, չլուծելով հանդերձ գորգեան հանգոյցը, այնուամենայնիւ մի խոշոր վատասկ էր:

Եւ Ազգային ժողովը իր լիակատար վստահութեան քէն տւեց ներսէսին: Ընտրած Յանձնաժողովը միառմի քննելով պատրիարքի բոլոր գաղանի թղթերը, եկաւ յայտարարեց համագումար ժողովին, որ ներսէսի բարեխղճութիւնը, անձնւիրութիւնն ու շիտակութիւնը վեր է ամեն կասկածից և որ նա «վարւած է ազգին շահուց համեմատ»: Աստահութեան բանաձևը ընդունւեց կարելի է ասել, միաձայն: Միակ ընդդէմ քուէարկողը Պէկեան էֆէնտին էր, որ մի բանի ամիս շարունակ ամբաստանել էր պատրիարքին, ուղղելով նրա դէմ ամենածանր մեղադրանքներ ու կասկածներ: Մի խումբ երեսփոխանների կողմից առաջարկ եղաւ հրատարակել նրան Ազգային ժողովից, իբրև խռովարարի և ինտրիգանի. բայց նա շտապեց ինքը զրկել իր հրատարականը *):

*) Ատենագր. Ազգ. ժող. 1878 թ., էջ 188.

Այո՛, ո՞վ կարող էր այն ժամանակ գուշակել... գալիքը: Ո՞ր դիւային հանճարը կարող էր նախատեսել այն հրէշաւոր դաւաճանութիւնը, որ պիտի սագրէր հայութեան դէմ սահմանադրական և ազատասէր Անգլիան:

Անգլիա և Ռուսաստան... Մէկի հովանաւորութիւն, միւսի—գրաւուծ: Որի՞ն ընտրէր թիւրքահայ հասարակութիւնը: Մինը տարածել էր դարերից ի վեր ազատութեան ու անհատականութեան սկզբունքը, ցանկ էր երկրագնդի բոլոր ծայրերում համեմատաբար ազատ ու ինքնավար համայնքներ, միւսը հոնդիսացել էր իր ամբողջ պատմութեան ընթացքում երգւեալ ոսոխ ազատութեան և ազգերի անհատականութեան: Որի՞ն ընտրէր: Ռուսաստանը՝ անգամ իր լաւագոյն, ազատամիտ թագաւորի օրով, հայ ժողովրդի անբաւ զոհողութիւններից, հայ զօրավարների անգնահատելի ծառայութիւններից յետոյ, մերժում ու արհամարհում էր հայ տարրի ամենահամեստ ինքնօրինութեան տենչանքները, տալիս էր նրան 16-րդ ողորմելի յօդաւածը, որպէս զի բիչ յետոյ հայկական նոր հողերի միացումով՝ շարունակէ ամբողջ հայութեան ազգազերծման և ուսացման պրօցէսը...

Ի՞նչ գարմանք՝ որ թիւրքահայ հասարակութեան համակրանքը թեքեց դէպի Անգլիա: Բրիտանական հովանաւորութեան երազը շատերին էր ոգևորում, — նաև ներսէսին, Խրիմեանին, Նարպէյին: Այդ հրապուրիչ երազի ազդեցութեան տակ էր, անտարակոյս, որ Խրիմեան 1878-ին Բերլինից «աւետիս» էր զրկում Կ. Պոլսի իր բարեկամին... «Հայաստան յերկունս է—գրում:

էր նա — միայն ծնելիք զաւակը մա՞նչ պիտի ըլլայ թէ աղջիկ, այդ չենք կրնար որոշել... Իսկ միւս պատգամաւորը, խորէն նարպէյ, գրում էր Պէկեանին 1878 թ. յունիս 24-ին.

Ա՛րեւի առայժմ, թէ Անգղիա կուզէ զմեզ իւր պաշտպանութեանը ներքեւ առնուլ, անգղիացի կառավարչի մը յանձնելով զՀայաստան... Ուրիշ միջոցներէ լաւագոյնն այս է, որով կը խալտիմք... բարբարոսութենէն և ուսաց համայնակուլ ազգեցութենէն: Մեր ջանքն այն է, որ մեր առանձին ինքնավարութիւնը ձեռք ձգենք. այլ եթէ այդ անկարելի լինի՝ հարկաւ պետք է զլուխ ձռենք և Անգղիոյ հովանաւորութիւնն ընդունինք, որ կրնայ մեր հայրենիքը բեղմնաւորել և բարեկարգել *):

Պատրանքը շուտով փարատուեց: Այդ նամակի թուականից քիչ յետոյ՝ հրատարակուեցաւ Աիպրոսեան անգլո-թիւրք դաշնագիրը, որին նենգաւոր Ալբիոնը պիտի զոհաբերէր հայոց դատը և հայ ժողովուրդը...

Յ1-րդ յօդուածը արագ արագ պիտի ընթանար այնուհետեւ դէպի վիժում... Հայկական դրամայի առաջին արարածի վարագոյնն էր, որ իջաւ Բերլինում:

* * *

Ազգութիւնը աւելի ևս վատթարացաւ Բերլինից յետոյ... Եւ երբ 1879-ի յունւարին խառն ժողովի մի պատգամաւորութիւն ներկայացաւ սագրազամին՝ յարաճուն հարստահարութիւնների մասին տեղեկութիւններ տալու և գանգատ բառնալու, սուլթանի վարչապետը

*) Ասենագր. Ազգ. ժող. 1878 թ.

պաղ, թշնամական ընդունելութիւնից յետոյ, ասաց ի միջի այլոց.

Օսմանեան ամեն կարգի հասարակութիւնները, հայ, արաբ և այլն, պարտաւոր են կառավարութեան ջանիցը օգնել և ոչ դժարութիւններ յարուցանել. դժբախտաբար, հայոց ազգը... այս միջոցին շեղած է սոյն շաւղէն, կը գիմէ օտար աղբիւրներու... Օտարը ի՞նչ կրնայ ընել... Հայոց ազգը պետք է օտարներուն գործիք ըլլայ *):

Իւ յայտնում է, որ Ասիական Թիւրքիայով զբաղուելու շատ ժամանակ չունի, հրահանգում է համբերել, խոստանում է երկու քննիչ յանձնաժողով ղրկել, մինը՝ բրիտանեայ նախագահով՝ Եւրոպական Թիւրքիա, միւսը՝ տաճիկ նախագահով՝ Ասիական Թիւրքիա...

Նորէն թագրիւններ, դիմումներ ու աղերսանքներ, ապա և պատրիարք Ներսէսի հրատարական...

Սակայն ոչ մի թագրիւր, ոչ մի ազգարարութիւն, ոչ մի հրատարական չէր կարող փոփոխել Բ. Դրան այդ պաղ, արհամարհոտ անտարբերութիւնը, որ հետեանք էր Յ1-րդ յօդուածն ստորագրող Եւրոպայի անտարբերութեան: Անգլիան արդէն մոռացել էր այդ յօդուածի «անյապաղ» բառը և լորդ Սոլսբերիի բերնով յայտարարում էր.

Մինչև որ Թիւրքիոյ ելեմտական վիճակը չբարւորի, Ասիոյ հիմնական բարենորոգմանց պետք է սպասել...

Եւ 1879-ի մայիս 11-ի նիստում, Ազգային ժողովի մէջ, նախագահ Իզմիրլեան արտասանում էր արդէն իր դամբանականը Յ1-րդ յօդուածի վրայ.

... Գիտեմ, որ ամեն երեսփոխան անհամբեր պիտի ուզէ


*) Ասենագրութիւնը, 1879 թ. էջ 345:

էր ուսասէր և Մօսկօվի յաղթական արշաւանքի մէջ էր տեսնում միակ ելքը իր դժոխային վիճակից... Թիւրքը նրանց համար — յաւիտեանական Քշնամին էր, որից բարիք երբէք յուսալի չէր: Գեռ նոր էր այդ թշնամու նենգ ձեռքերով բորբոքել Վանի սոսկալի Տրդեհը (1876 թ. 1 դեկտեմբեր): Պահապան զօրքերն ու ոստիկանները, միացած թիւրք խուժանի հետ, թալանի ու կրակի էին մատնել Հայաստանի ամենաճոխ, ամենաշէն քաղաքը...

Պատերազմի յայտարարութիւնը ազատութեան դողանջ էր բազմաշարժար երկրի համար: Յոյսերը թեւաւորւեցին, ժողովուրդը սիւտ առաւ. վերսկսեցին 1828-ի տեսարանները: Խանդավառութիւնը տասնապատուեց, երբ իմացան, որ հայ զօրավարներ են ցարական բանակի գլուխ կանգնած: Պատերազմի թատրը Հայաստանն էր և հայազգի գեներալները անցնում էին յաղթական թափօրով իրենց ցեղակիցների միջից, անցնում էին, նրանց խրախուսելով և յուսադրելով... Յնծութիւն էր թէ ուսահայոց և թէ թիւրքահայոց մէջ: «Հայասէր» էր ինքը փոխարքան, մեծ իշխան Միխայիլ Նիկօլայեֆիչ, «հայասէր» էր սպիտակ ցարը: Հայասիրական թռուցիկներ, պրօկլամացիաներ էին ուղղւում ուսաների կողմից հայ ժողովուրդին, ամեն հնարք ի գործ էր դրւում — ինչպէս 1826-ի օրերում, ռուս-պարսկական ընդհարման ժամանակ — սիրաշահելու հայութիւնը, վաստակելու նրա գործօն համակրանքը, որ այնքան անհրաժեշտ էր պատերազմական աջողութիւնների համար:

Հայ զօրավարները — Լօրիս-Մէլիքօվ, Տէր Ղուկասօվ, Լազարեֆ և այլն — մի գերազանց միջոց էին Պետեր-

բուրգի կառավարութեան ձեռքում՝ միւլնոյն նպասակի համար: Արշաւանքից մի քանի օր առաջ, Լօրիս-Մէլիքօվ իր հրամանատարութեան ենթակայ 28 հայ սպաների



Լ օ Ր ի ս - Մ է լ ի ք օ վ

հետ գնաց էջմիածին և հայոց կաթողիկոսի օրհնութիւնը խնդրեց: Լուրը կայծակի արագութեամբ տարածւեց ամբողջ Թիւրքահայաստանում և դիւրին է

երևակայել, թէ որպիսի բերկրանք յարուցեց սուլթանի հայ հպատակների մէջ:

Եւ իր ամբողջ ընթացքի միջոցին Ղարսից մինչև Էրզրում, յաղթական գեներալը ամենուրեք շեշտում է իր հայ լինելը, համոզում է բաղցրութեամբ թիւրքահայերին մտնել ցարի հպատակութեան մէջ, ուր նրանք պիտի տպրեն խաղաղ ու երջանիկ, ուր անխախտ պիտի պահպանեն նրանց լեզուն, կրօնը, ազգութիւնը:

Պոլսաց ցարը — ասում էր ամեն տեղ Լորիս-Մէլիքով, դիմելով հայ ու մուսուլման ազգաբնակչութեան — ձեզ չէ, որ պատերազմ կը յայտարարէ. նա բնաւ չի ուզում բռնանալ ձեր լեզուի, կրօնի ու սովորութիւնների վրայ: Ահա՛, օրինակ, ես ինքս. դուք գիտէք, որ ես ծագումով ռուս չեմ, այլ պատկանում եմ հայոց եկեղեցուն և որ իմ մայրենի բառբառը հայերէնն է: Սակայն այդ չ'արգիլեց ինձ՝ դառնալ ցարի զօրքերի հրամանատար: Որովհետև ցարը գնահատում է իւրաքանչիւրին իր արժանաւորութեանց համեմատ, առանց հաշի առնելու. թէ նա օրթօդօքս է, հայ է կամ մահադան: Ապրեցէ՛ք խաղաղ և ապահով. ոչ որ չպիտի դիպչի ձեր անձին, գոյքին, կրօնին ու սովորութիւններին: Չեզնից մէկ բան միայն կը խնդրենք — չընդդիմանալ մեր կառավարութեան և մեր զօրքին՝ *):

Եւ դ խօսքերը ելքարական հոսանքի պէս շրջան էին անում հայերի մէջ և հայազգի գեներալին Էրզրումի ու այլ վայրերի հայութիւնը դիմաւորում էր աննկարա-

*) *Tures et Russes, La Guerre d'Orient. Publ. 1877, Paris.*

գրելի ցնծութեամբ: Նոյն գրկաբաց ընդունելութիւնն էին գտնում և միւս հայ հրամանատարները: Հայկական դժոխքը թւում էր վերջացած և շատերը իրենց խանդավառ միամտութեան մէջ կարծում էին, թէ հայ



Լ ա զ ա Ր Ե Վ

գեներալների թեւերի վրայ «հայկական ավտօնօմիայի» գաղափարն էր արշաւում դէպի օսմանեան Հայաստանը...

Յայտնի է, թէ ինչ դառնաղէտ յուսախաբութեան փոխարկեցին քիչ յետոյ այդ վարդապոյն և սանձարձակ յոյսերը: Ռուսական զօրքի նահանջի հետ և տակաւին նրանից առաջ բռնկեց ահաւոր կատաղութեամբ մահ-

մեդական վրէժինդրութիւնը: Շէյխ Զեյլեդզիները հրապարակ նետուեցին և Ռժիրը շղթայազերծ ցիկլոնի պէս գնաց ճարակելու Հայաստանի տակաւին շէն, բարգաւաճ մնացող անկիւնները ..

Չենք պատմի մանրամասնօրէն պատերազմի հետևանքազէտները: Սով ու թշուառութիւն, ջարդ և թալան, հրդեհուած անթիւ գիւղեր, սրբապղծուած անթիւ վանքեր ու եկեղեցիներ, ընդհանուր համատարած սարսափ, խուճախ և գաղթ... Ամբողջ գաւառների դատարկում, ամբողջ մասսային, յուսակտուր գրոհ դէպի ռուսական սահմանը, ուր — ինչպէս 1828-ի օրերին, աւելի ևս հրէշաւոր ծաւալով — սպասում էր նրանց, այդ հազարաւոր և տասնեակ հազարաւոր գաղթականներին՝ սովի, անաէրութեան, համաճարակ հիւանդութիւնների պատուհասը...

„Իմ թող գրիչը անկարող է նկարագրել այն բոլոր սարսափները, որ նիւթեցին Հայաստանի մէջ բիւրդերն ու օսմանեան մանակի այլ կամաւոր վաշտերը“ — գրում էր 1877-ին անգլիական „Խայմզ“ թղթակիցը, Նօրման, որ ուղեկցել է թիւրք մանակին հայկական լեռնադաշտում և որ յետոյ հրատարակել է իր խիստ շահեկան թղթակցութիւնները մի խոշոր հատորով „Armenia and the Campaign of 1877“, „Հայաստանը և 1877-ի արշաւանքը“ վերնագրով: Հայ թղթակիցները, հայ մամուլն ու գրականութիւնը, Բաֆֆիներն ու Արծրունիները, վերջապէս նոյնիսկ ռուսական օրգանները կօրող էին չափազանցնել այդ շրջանում կատարուած քրդերի ու մաշիսօզուկների վայրագութիւն-

ները, կարող էին խառնել գոյները: Բայց հապիւ թէ այդպէս անէր պահպանողական „Թայմզ“ Ներկայացուցիչը, այն „Թայմզ“ և, որ ազդեցիկ օրգանն էր լօրդ Բիկօնսֆիլդի թիւրքասէր կառավարութեան:

„The subject is too painful to need any coloring“ (Նիւթը չափազանց ծանր է, որպէս զի պէտք ունենար գունաւորումի) — ասում է Նօրման:

Այդ հրէշների ձեռքով կատարուած սարսափների պարզ արձանագրումն իսկ բաւական է յարուցանելու նրանց դէմ արժանաւոր պատիժ: Բաւական է ասել, որ Բայազէդը, հիմնապէս կողպուելուց և աւելի քան 1100 բնակիչներ կատուելուց յետոյ՝ ներկայացնում է այսօր աւերակների մի կոյտ... Գազանութիւնների թաւոր են Վանի, Բիթլիսի և Ալաշկերտի շրջանները: Ամենուրեք լքուած գիւղեր, պարպուած, ամայացած քաղաքներ, առևտուրը դադարած, հունձքը սպասում է հնձուրներին, այրեր՝ որ սգում են իրենց անարգուած կանանց, ծնողներ՝ որ ողբում են իրենց խոցսողած զաւակներին...

Սարսափելի է հայերի վիճակը այն բոլոր վայրերում, ուսկից անցել է քիւրդ Իսմայիլ փաշայի բանակը: Ալաշկերտի դաշտում 122 հայ գիւղերից 113-ը կատարելապէս ամառցել են և այն փոքրաթիւ քրիստոնեաները, որ շեն կարողացել օգտել ռուսական հովանաւորութիւնից՝ բարբարոսաբար կատուել են Տէր Ղուկասովի նահանջի ատեն... Ամայացած է Բիթլիսը, ոչ մի բաց խանութ չուկայի մէջ... Մայիս 4-ին քիւրդ կամաւորները իրենց ցեղապետ Իսմայիլի հրամանով դիմեցին դէպի Վան՝ ճամբու վրայ — թալան, ջարդ ու աւերած: Ազուլի գիւղում հրդեհեցին եկեղեցին, ուր ապաստանած էին կանայք ու երեխաներ, ապա բռնաբարեցին բոլորին ու թողին մերկ: Նոյն վիճակին ենթարկուեց Մատուանցի (Վ) Շահբաղիի հայ բնակչութիւնը... Շէյխ Զեյլեդզիներ ճարակում էր ամբողջ տարածութեան վրայ, Վանից մինչև Ֆէէիք փաշայի բանակը, նետում էր իր հրոսակներով հայ գիւղերի վրայ և յափշտակում բոլոր կոյտերին ու մանուկներին, թալանում ու սրբապղծում եկեղեցիները... Սուրբ Բարդուղիմէոսի վանքը, որ շրջանի ամենահարուստն է,

ենթարկեց Ալի խանի ձիաւորների յարձակման. վանքի բուրի ինչքը կողոպտեց և բաժանեց աւազակների միջև: Շրջակայ գիւղերից եկել ապաստանել էր այդտեղ կանանց ու երեխաների մի խումբ. ամենից ցանկալիներին տարան իրենց հետ և քահանան, որ փորձեց պաշտպանել իր աղջիկը, տեղն ու տեղը սպանեց... Շէյխ Իբրահիմը մարդիկ մրցում էին ջելայեղդիների դրոշի տակ գործող իրենց բնկերների հետ... Մուշի շրջակայքում Մուսա բէյ անունով մի քիւրդ փոքրաթիւ ձիաւորներով աւերում ու հրդեհում էր հայ գիւղերը: Խարցի մէջ այդ ձիւաղները մտնում են հայ քահանայի տունը, որը նոր բերել էր իր հարսնացուին իր հօր տուն: Չարագործները պարանով կապում են մէկտեղ ծեր քահանային ու իր որդուն և նրանց աչքերի առջև բռնաբարում աղջկան. ապա հրամայում են սրի անցկացնել երեքին... Այլ ևս չեմ կարող գրել *)...

* * *

Ի՞նչ ասել երկրի տնտեսական վիճակի մասին՝ պատերազմից անմիջապէս յետոյ... Ի՞նչ տնտեսութիւն և ի՞նչ առևտուր քրդական խժոժութիւնների այդ անօրինակ յորձանքի մէջ: Ամեն ինչ կանգ էր առել: Հայ շինականը ոչ միայն իր անասուններն էր դնում թիւրքի արամադրութեան տակ պատերազմական պէտքերի համար, այլ և յաճախ նա ինքն էր լծուում եզան պէս կառավարական սայլին՝ փոխադրելու համար թնդանութներն ու ռազմամթերքը տեղից տեղ:

Տնտեսական կեանքը մարել էր. աւեր ու կործան էր եղել ոչ միայն աշխատաւոր գիւղացիութիւնը, այլ և հայ վաճառական դասակարգը: Փոքրաթիւ արկածախնդիրներ

*) Armenia and The Campaign of 1877. By C. B. Norman.

միայն յաջողում էին գլուխ դուրս բերել այդ սարսափելի ժամանակներում, գործի ձեռնարկել և հարստանալ:

1878-ի մարտ 3-ին Էրզրումից գրում էին *Levant Herald*-ին.

«Կարնոյ վաճառականութիւնը հոգեվարքի մէջ է... վաճառքները, մանաւանդ ուտելիքները այն աստիճան սղած են, որ մարդ փոքր ի շատէ կանոնաւորութեամբ ապրելու համար, բեռներով ուրլի պէտք է ունենայ Գինիին հօխան 10 ուրլի է, կօնեակի շիշը 10 ուրլի, մէկ լիմօնը կէս ուրլի, միսն ու հացն էլ ուրլիով կը վաճառուին»...

Բնութեան սովին, որ գրեթէ անխուսափելի հետևանքն է իւրաքանչիւր պատերազմի, շուտով աւելացաւ արհեստական սովը (1880 թ.): Հայերի բնաջնջումը նպատակ դարձրած՝ Արգիւլ Համիդի կառավարութիւնը ձգտում է լրացնել քրդական հրոսակների աւերածը. նա կաշկանդում էր ապրանքների ազատ փոխանակութիւնը, արգելում էր արտահանել հացահատիկները այն վայրերից, ուր նրանք համեմատաբար առատ էին: Ալաշկերտից ծայր տալով, սովը տարածեց հետզհետէ իր անխուսափելի ուղեկից — համաճարակ հիւանդութիւնների հետ և շուտով մի հսկայական բառաչիւն էր, որ աղեկտուր ելևէջներով բարձրացաւ թիւրքահայաստանից: Ջոհը բնականաբար միմիայն հայը չէր, այլ և մահմեդականը, քիւրդ ու թիւրք ժողովուրդները: Ազգային համերաշխութեան բնագոյր խօսեց այդ զարհուրելի տեսարանի առաջ, կովկասահայը օգնութեան հասաւ,

Թափւեցին նպաստները և հայութեան աւելի հեռաւոր հասւածներէց...

Հայ կեանքի և հայ հոգու կնճռաւոր հանգոյցները... Մինչ աշխարհի բոլոր ծայրերից ցիրուցան հայ համայնքներ, գիտակ ազգային միութեան ու համերաշխութեան, շտապում էին օգնելու օսմանեան դժոխքի մէջ հեծեծող արիւնակիցներին, մինչ վերջինները յուսահատ բառաչով դիմում էին դէպի սահմանը, մտնում գիւղ ու քաղաքներ և դռնէ դուռ նպաստ հայցում աւելի բարեբախտ ցեղակիցներից, մինչ ամբողջ հայութիւնը լուսաւոր մարդկութեան հետ կատաղաբար նզովում էր թիւրքի և քիւրդի աղէտաւոր գոյութիւնը, — անդին, սովի թագաւորութեան մէջ, խրիմեան Հայրիկ, իբրև մարմնացած գթութեան հրեշտակ, ազգային համերաշխութիւնը վերածելով համամարդկային եղբայրութեան, բաժանում էր իր ստացած նպաստները անխտիր բոլոր ցեղերի սովեաններին, բաժանում էր նաև երէկայ դահիճներին, բրդին ու տաճկին... Եւ միևնոյն ժամանակ Հայաստանի, Վասպուրականի լեռների մէջ լոյս էին ընկնում առաջին հայ ֆէդայիները, որ գալիս էին մաքաւելու քիւրդ ու թիւրք ոստիների դէմ... Եւ միևնոյն ժամանակ սահմանի այն կողմը սթափեցուցիչ որոտով հրապարակ էր նետւում Բաֆֆիի «Խենթը», որ գալիս էր իր ցասկոտ, արիւնազգեստ բառբառով վրէժ, կոխ քարոզելու հայ արթնացող սերնդին...

* * *

Ի՞նչ էր անում Լւերդան:

Մենք արդէն լսեցինք լօրդ Սօլսբիւրիի հանդիսաւոր յայտարարութիւնը: Թիւրքիան չպիտի կարողանայ ռէֆորմներն իրագործել, մինչև որ չշակին իր ֆինանսները—այսպէս էր հասկացնում ազնիւ լօրդը: Հանրային կարծիքը ժամանակ առ ժամանակ ըմբոստանում էր և պահանջում ի կատար ածել ընդունւած յանձնառութիւնները: Իսկ Հայաստանում կացութիւնը դառնում էր միշտ աւելի և աւելի ողբերգական: Եւ ահա բրիտանական կառավարութիւնը որոշեց—երևոյթը փրկելու համար—մի «ակտիվ» քայլ անել: Նրա բարեկամական թելադրութեամբ Դուռը 1879-ին առաջին փորձն արեց Հայաստանի բարենորոգման:

Ղրկւեցին երկու անգլիացի կոմիսարներ հայկական վիլայեթները, ինչպէս նաև Քիւրդիստան ու Սիւրիա: Բաբի Մաշա և Աբեդգիին փաշա: Նրանք պէտք է հիմնականապէս բարեկարգէին երկրի վարչական, դատաստանական, ոստիկանական կազմը: Սակայն, թիւրք կառավարութիւնը չտւեց նրանց որևէ գործադիր իշխանութիւն, այլ ուզեց գործել հին մեթօդով, ամեն բան դարձեալ կախւած էր Վրան քմահաճոյքից: Անգլիացի կոմիսարը երկար ամիսներ մնաց Վարոյ և Վանի վիլայեթներում և անկարող եղաւ պատժել մի հատիկ քիւրդ աւազակ: Նրա ձեռքը ոչ մի իշխանութիւն չկար: Աբեդգին փաշա և Մանաս էֆէնտին խորբերի և Դիարբէկիւրի վիլայեթներում կամեցան փոքր ինչ անկախութիւն ու կորով ցոյց տալ Դրան հանդէպ, կամեցան պատժել քիւրդ բէյերին, բայց դրա փոխարէն

իրենք պատժեցին: Թիւրք կառավարութիւնը յեա կանչեց նրանց, ղրկեց Արեգդին փաշային Սեբաստիա, իսկ այնտեղից նետեց Սալունի: Մանաս էֆէնտին նոյնպէս պաշտօնանկ եղաւ և կանչեց Պօլիս: Նոյնպիսի մի խաղաղիք եղաւ Գլրան ձեռքում և Բաբէր փաշան:

Դատական ռէֆորմների մանրամասն ծրագիր կազմեց օսմանեան մայրաքաղաքում: Սի քանի Հարիւր դատական պաշտօնեաներ նշանակեցին Հայաստանի Համար: Սակայն և ոչ մի Հայ նրանց մէջ, Նշանակած քանի մի Հայ պաշտօնեաներն էլ ղրկուում էին ոչ թէ Հայաստան, այլ Հեռաւոր ծայրերը...

Արգիւլ Համիդը այդպէս ցինիկօրէն խարում էր Հանրային կարծիքը և՛ ոչ մի լուրջ ազդարարութիւն Եւրոպայի կողմից: Անգլիան ի դէմս պահպանողական կառավարութեան և յանձին իր տիրահոլակ դեսպան Լալբերդի շարունակում էր իր քստմենքի հովանաւորութիւնը Դրան հանդէպ: Աւելի ևս. Թիւրքերի օրինակին հետեւելով, Անգլիոյ պաշտօնական «Վապոյս գիրքն» ևս սկսեց անւանել հայկական նահանգները «Քիւրդիստան»... Այդ եղաւ ամենաշօշափելի արգիւնքը Վիպրոսեան Դաշնագրի և բրիտանական հանդիսաւոր յանձնառութիւնների Հայաստանը Բիւրդիստանի վերածելով՝ լօրդ Բիկօնսֆիլդի անարգ կառավարութիւնը նւիրագործում էր Բ. Դրան վաղեմի ձրգտումը՝ դուրս մղել հայ տարրը իր հայրենիքից, բնակեցնելով երկիրը մահմեդական տարրերով, Թիւրքերով, կերբէզներով, Թերեքեմեններով, Լազերով: Այդպէս, Ալաշ-Երտի դաշտը հայերից դատարկւելով, տուեց բրդերին:

որոնք Դրան հաշուով պէտք է ծաւայէին ապագայում, իբրև պատնէշ ռուսների դէմ:

Անգլիական դաւաճանութեան այդ տխուր փաստերը պատմած են մանրամասնօրէն մի փոքրիկ ֆրանսերէն բրօշիւրի մէջ, հրատարակւած 1880-ին, հաւանականօրէն Ներսէսի խմբի ձեռքով, որ կրում է *La Question Arménienne* խորագիրը և ստորագրւած է P. B.

Գա մի դառն գանգատ է, ուղղւած «անգլիական մեծ ժողովրդին» և մի ամբաստանագիր նրա վատթար կառավարութեան դէմ:

Աւշագրաւ է, որ այդ գրքոյքի հեղինակները այն ժամանակ արդէն հասկանում ու խոստովանում էին, որ Թիւրք կառավարութեան նպատակն է իսպառ ջնջել հայ տարրը Հայաստանի մէջ: Այդտեղ բառացի ասւած է.

Այս բոլոր (գեղձուկներ, գանգառումներ) նեւեւնի է մ'ա ս'ու աւոր մի սիսէ մի, մակեալիկ մի քաղաքականութեան. օսմանեան կառավարութիւնը բոս երեւոյթին երկար տարիներից ի վեր տղարւած է այն մտով, որ հայ ունեղ ու բարգաւաճ մի ազգայնականութեան գոյութիւնը Հայաստանում կարող է վնասել նրա շահերին... Իս մի սխուր նեմարսութիւն է...

... Նորեւս արդէն «Վանի կուսակալը պարգապէս յայտարարեց, որ հայերի գաղթը օսմանեան երկրից՝ ուրախութիւն է պատկառում նրան...

Այդպիսի տխուր պարագաներում, Եւրոպայի, մասնաւորապէս Անգլիայի այդքան ցինիկ անտարբերութեան մէջ, բնականաբար, ոչ մի արժէք չէր կարող ունենալ Թիւրք կառավարութեան աչքում և այն հաւաքական յիշատակագիրը, որ 1880-ի սեպտեմբերի 7-ին վեց պատասխանատու պետութիւնները ուղղեցին նրան Հա-

յաստանի կացութեան առթիւ: Այդտեղ աւաճ էր ի միջի այլոց.

«Պետութիւնները չեն անգիտանում, որ օսմանեան կառավարութիւնը երկու յանձնաժողով է ղրկել Հայաբնակ գաւառները. սակայն նրանք հիմք ունին կարծելու, որ այդ միասիւնները ոչ մի հետեւանքի չեն յանգել...»

«Այ մի ապացոյց չկայ՝ ի՞նչ ունի բարեփոխում մտցրած լինի արդարադատութեան գործի մէջ: Հիւսիսային կողմից բազմաթիւ տեղեկագիրները հաստատում են, ընդհակառակը, որ ներկայ կացութիւնը ատեանների անկախութեան տեսակէտից նոյնպէս անբաւարար է—եթէ ոչ աւելի վատթար—ինչպէս անցեալում:

«Ոճիրների մասին Բ. Գրան տուած բացատրութեան ձևն իսկ հաստատում է, որ նա (Գրան) չի կամենում խոստովանել Հայաբնակ գաւառների մէջ տիրող անիշխանութեան աստիճանը, չի ուզում ընդունել ծանրութիւնը իրերի կացութեան, որի յարատեւումը ամենայն հաւանականութեամբ կ'առաջնորդէր դէպի քրիստոնեայ տարրերի լիակատար բնաջնջումը ընդարձակ գաւառներում:

«Պետութիւնները, անտարակոյս, գոհունակութեամբ կը դիմաւորեն լայն ռեֆորմների իրագործումը օսմանեան կայսրութեան բոլոր մասերում: Բայց նրանք կուզեն նախ և առաջ Բերլինի դաշնագրի լիակատար գործադրութիւնը... Այդ (Հայաբնակ) գաւառների մէջ քրիստոնեայ տարրը լինելով գերակշռող մեծ տարածութեան վրայ՝ իւրաքանչիւր ռեֆորմ, որ հաշի չի առնի այդ հանգամանքը, չի կարող յանգիլ գոհացոյցիչ արդիւնքի:

«Ներքոյ ստորագրողները կարծում են, որ պէտք է նմանապէս հաշի առնել այդ գաւառների մի այլ առանձնաշատկութիւնը: Գրանը ըստ երևոյթի կուզէ կիրառել միևնոյն ռեֆորմը հայերին և քրդերին: Հարկ է նախ և առաջ նրանց զատել վարչապէս, որքան որ այդ հնարաւոր է գործ-

նակնի մէջ, քան որ բացարձակապէս անհնարին է միևնոյն ձևով կառավարել նստակեաց ազգաբնակչութիւններն ու կիսաթափառական ցեղերը: Հետեւաբար, համայնքները և վարչական խմբումները ընդհանրապէս պէտք է այնպէս սահմանելն, որ ըստ կարելոյն աւելի ամփոփեն միապաղաղ, հօժօժեն տարրեր: Պէտք է այնպէս սահմանել, որ հայերը կամ ի՞նչ հարկին հայ ու թիւրք համախմբւած լինին մէկտեղ, առանց քրդերի:

«Թիւրք կառավարութիւնը յայտնում է, ի՞նչ «արդէն պետական ծառայութեան մէջ մտցրել է ազնիւ ու կարող պաշտօնեաներ, առանց դաւանանքի խտրութեան և որ այսուհետև այդ բանը աւելի ևս լայն գործադրութիւն պիտի ստանայ»: Այս յայտարարութիւնը ծայրայեղորէն անորոշ է և ներքոյ ստորագրողները անհրաժեշտ կը սեպեն ծանրանալ այդ կէտի վրայ, ևս առաւել, որ հայերը պնդում են, որ այն գաւառներում, ուր իրենք կազմում են շատ խոշոր թիւ, գրեթէ չկայ հայ պաշտօնեայ հանրային ծառայութեան մէջ:

«Գաւառական ժանդարմերիայի կազմակերպութիւնը նմանապէս չի համապատասխանում այն վայրերի տեղական պահանջներին, որոնց վրայ մատնացոյց է լինում Ներքոյ յօդուածը... Ցանկալի է, որ գաւառական ժանդարմերիայի մէջ, այսինքն հանդապահ հսկիչների (gardes champêtres) շարքերում, որոնք պիտի ընտրւին համայնքների ձեռքով իսկ: Այդ հանդապահները, որոնց կոչումը պէտք է լինի պաշտպանել զիւղերը քրդական արշաւանքների դէմ, կը մասակարարեն գաւառական ժանդարմերիային որոշ թւով մարդիկ, իւրաքանչիւր համայնքի ազգաբնակչութեան համեմատ: Եւ այդպէս, ընտրական սկզբունքը փոխարինելով գաւառական վարչութիւնների կամայականութեանց՝ պիտի լինի մի լուրջ երաշխիք՝ հանրային անգործութիւնը ապահովող ուժերի բարեւոք կազմակերպութեան համար:

«Անհրաժեշտ է թւում հաշի առնել հայ տարրի գերակշռութիւնը որոշ գաւառներում, և յատկացնել այդ տարրին

Համեմատական իր բաժինը արդարագատութեան կազմակերպման մէջ: Այստեղ ևս տրուում են մի շարք հարցեր, որոնց լուծումը չի նշմարել տալիս օսմաննան նոտան: Գատաւորները կենսատե՞ են, թէ պիտի նշանակին մի յայտնի ժամանակամիջոցի համար: Եւ ի՞նչ օրէնքի համեմատ պիտի դատեն նրանք. Շէրիի՞, թէ մի այլ օրէնագրքի: Ինչպէ՞ս արդեօք ոճրագատ ատեանները պիտի յարգել տան իրենց վճիռները քիւրզ կիսանկախ և վարենի ցեղերին: Այդ վերջին հարցը լիովին ապացուցում է, թէ որքան անհրաժեշտ է դուրս ձգել քրդերին այն ուէֆօրմների ամբողջութիւնից, որոնք պիտի սահմանեն Հայաստանի ազգաբնակչութեանց համար և տալ նրանց, քրդերին, զատ, յատուկ վարչութիւն, համապատասխան իրենց ուղղական և նախնական բարքերին: Այս առթիւ ներքոյ ստորագրողները համոզած ձևով կը պնդեն, որ քրդերի կողմից հայերին բռնադուրս բռնող կողմ բեգեթարները, որ բղխում են ոչ թէ իրաւունքի սկզբունքից, այլ հնարմատ մի ապօրինութիւնից, պէտք է վերացնեն:

„Նրանք կարծում են նմանպէս, որ ի նպաստ հայերի սահմանւած ուէֆօրմները պէտք է տարածւին արդարութեամբ նաև բազմաթիւ նեստորականների վրայ, որ ապրում են քիւրդիստանի կենտրոնական և հարաւային մասերում“ (Ջուլա-մերկի գազա):

Եւ այլն և այլն և այլն:

Որքա՞ն բանաւոր, դրական, կազդուրիչ պահանջներ ու յայտարարութիւններ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների կողմից .. տակաւին 1880 թւականին: Որքա՞ն միտիմարում, ուրախացնում էին նրանք իր ժամանակին այդ դժբախտ, յօշոտւած ազգաբնակչութիւնները: Եւ ի՞նչ գեղեցիկ պատկեր կունենար

Հայաստանը մեր օրերում, եթէ արդէն այն ժամանակ եւրոպական վատանուն դիւանագիտութիւնը հսկէր լրջօրէն ու իրագործել տար գէթ մի բանի կէտերը այդ ուշագրաւ հաւաքական յիշատակագրի, որ գալիս էր առաջին անգամը պարզաբանելու 61-րդ տարտամ յօդւածի պարունակութիւնը...

Ոչինչ չ'եղաւ սակայն: Բուռը այդ հանդիսաւոր ու խրոխտ գրութիւնն ևս թողեց անպատասխան:

VIII

ԱՐԵՒԵԼԱՆ ԽՆԴՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ԱՆԳՂՕ-ՌՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐՈՒ ՄԵԾԻ ԿՏԱԿՐ. — Ռուսական արքայազնի և բրիտանական ամառանոցի — «Պալատական ամրոցություն» ղեկավար XIX դարու մէջ. — Բաժանման ծրարները. — Արեւմտեան կոնկուրսները արեւելեան Գիսկի հանդէպ. — Վարդ Մարտի դիվանագիտ. — Անգլիա և Ռուսաստան. — Գաղթարարութեան երկու տարիքը մեթոդներ. — Գէպի ազատ ծով. — Եկեղեցի 1 և «Հիւանդ մարդը». — Լրիւմեան պատերազմ և պարիզեան Վեհաժողով. — Ռուսաստանի նամակներ և յարմարական վերադարձը. — Պատերազմ, Սան Սեբաստիոն և Բերլին. — Ալեքսանդր III և առժամեայ զինադպար. — Գերմանիայի բանակաւորները.

Ընդհատներ մի վայրկեան Հայկական Գրամայի պատմութեան թելը և դառնանք վերստին Արեւելեան մեծ Խնդրի էօլիստիոնը, որի հետ այնքան սերտօրէն կապուած է Հայոց Հարցի ճակատագիրը:

Մենք արդէն տեսանք *), թէ ինչպիսի պարագաներում դարեր առաջ ծնունդ առաւ այդ Խնդիրը, տեսանք, թէ ինչ դիրք էին բռնած դեպի Թիւրքիան

*) Հատոր 1, էջ 153—166:

քրիստոնեայ մեծ պետութիւնները, մասնաւորապէս Անգլիան և Ռուսաստանը: Քանի գնում՝ միշտ աւելի և աւելի էր արժարժուում շահերի հակամարտութիւնը, անտագոնիզմը այդ երկու պետութիւնների միջև, և Արեւելեան Խնդրի էօլիստիոնը 19-րդ դարու մէջ — նոյն անգլո-ռուս հակամարտութեան էօլիստիոնն է էապէս:

Անգլիան, Արեւմուտքի ամենահին սահմանադրական պետութիւնը, երկարատե ու յամառ ճիգերով ձեռք էր բերել Ասիայում հսկայածաւալ մի գաղութ — Հնդկաստանը — որ դարձել էր մի լայնարձակ շահաստան բրիտանական առևտրի ու արդիւնաբերութեան համար, այլ և գերազանց մի միջոց՝ համաշխարհային, ովկիանային տիրապետութեան: Ազգային փառքի ու հարստութեան այդ աղբիւրը՝ Մեծ Բրիտանիան ձգտում էր պահպանել ամեն գնով, ապահովել այն՝ միջազգային մրցակցութեան հաւաք կրկեսի մէջ: Ինչևէ 19-րդ դարը նա չունէր իր դիմաց զօրաւոր մրցակիցներ: Բայց ահա 19-րդ դարի սկզբից և նոյնիսկ աւելի առաջ, հանդէս եկաւ ազգերի մրցարանում «Մոսկովը», որ սկսեց արագ-արագ ծաւալել իր աշխարհակալող ազդեցութիւնը դեպի Հարաւ ու Արեւելք և սպառնալ Հնդկաստանին:

Լօնդօնը, որ մինչ այն իր «վեհափառ մեկուսացման» մէջ հանգիստ վայելում էր յաղթանակի դափնիները, սկսեց յուզելի ներվայնանալ «Ռուսական վտանգը» մասձել էր աւելիս: «Մոսկովը» Պետրոս Մեծի օրերից ի վեր յղացել էր նւաճութեան մի խօլական, նապօլէօնեան ծրագիր, որ պէտք է իրագործէր մաս առ մաս, աստիճան առ աստիճան:

Այդ ծրագիրը ամփոփւած է Պետրոս Մեծի հռչակաւոր կտակի մէջ, որ գրեթէ ամբողջ երկու դար հանդիսացաւ «քաղաքական հաւատամքը»՝ ռուս դիւանագիտութեան: Ահաւասիկ այդ վտակը իր էական կէտերով *):

Յօդ. Ա.—Ջինուորը միշտ պատերազմի վարժեցնելով և անոր ռազմական դիրք տալու համար, ռուս ազգը մշտնջենապէս պատերազմական վիճակի մէջ պահելու է:

Յօդ. Գ.—Եւրոպայի մէջ տեղի ունեցող աճէն գործերուն, հակառակութիւններուն և վէճերուն և ժամանակորայէս գերմանական երկիրներու ղէպքերուն միջամտելու է, որ ատեն որ առիթը ներկայանայ:

Յօդ. Գ.—Լեհական երկրին մէջ ներքին խռովութիւններ և մշտնջենական նախանձու ոգի սերմանելով, պէտք է երկպառակութիւններ յարուցանել և Լեհ ազգին երևելիները դրամի ուժով ծախու առնել. ու այս առթիւ կառավարական ժողովներու մէջ ռուսական ազդեցութիւնը առաջ բշել: Թագաւորի ընտրութեան պարագային ռուսական ազդեցութիւնը բանեցնել, կաշառքի գրութիւնը անհրաժեշտաբար գործադրել և Ռուսիոյ կուսակիցները վարչութեան գլուխ անցնել յաջողելէ ետք՝ զանոնք պաշտպանելու և վտանգէ զերծ կացուցանելու երևոյթով Լեհաստանի մէջ ռուսական զինուոր մտցնել և այսպէս առաջանալով ակնդէտ սպասել, մինչև որ ամբողջութեամբ կարելի ըլլայ տիրանալ այդ երկ-

*) Վառնայի «Իրաւունք» թերթը հրատարակել է այն իր 1911 թ. № 5-ի մէջ, քաղելով «Ժամանակ»-ից, որը իր հերթին քաղել է թիւրք դատական նախարար հանգուցեայ Զէվտէթ փաշայի «Օսմանեան Պատմութիւն»-ից: Ոմանք վիճելի են համարում այդ կտակի գոյութիւնը Պետրոսի թղթերի մէջ. ոմանք էլ պնդում են, որ այդ դօկումենտը խմբագրւած է 1812-ին, Բօնապարտի ձեռքով:

րին և զայն գրաւել. պէտք է ջանալ որ Ռուս զինուորները երկար ատեն մնան Լեհական երկրին մէջ. այս առթիւ եթէ սահմանակից տէրութիւններ հակառակելով դժուարութիւններ յարուցանեն, զանոնք լուծեցնելու համար Լեհաստանէն բաժիններ տալ իրենց, յետոյ նոր առիթներ ստեղծել և սահմանակից տէրութեանց տրուած բաժինները անոնց ձեռքէն ետ առնել և այսպէսով տէր դառնալ ամբողջ Լեհաստանի:

Յօդ. Ե.—Անհրաժեշտ է Շուէտի երկրէն կարելի եղածին չափ շատ տեղ գրաւել, և որպէս զի պարտութիւնը կատարեալ ըլլայ, պէտք է առիթներ ստեղծել, որ նախ Շուէտ պատերազմ հրատարակէ Ռուսիոյ դէմ ու առաջին յարձակումը անկէ սկսի:

Յօդ. Զ.—Անհրաժեշտ է միշտ խնամութեան կապեր հաստատել Գերման կայսրութեան հետ, Ռուսիոյ կայսերական ընտանիքին անդամներուն Գերման արքունիքէն աղջիկ առնելով, և այս ընտանեկան կապակցութեան և ամուսնական միութեան ու սերտ յարաբերութեանց շնորհիւ ազդեցիկ դիրք մը ունենալ Գերմանիոյ մէջ և այս երկիրը գործածել մեր շահերուն է նպաստ:

Յօդ. Ը.—Հիւսիսէն Պալթիկ ծովուն և հարաւէն Սև ծովուն եզերքներուն վրայ պէտք է ջանալ, որ Ռուսիա տարածւի օրէօր և շարունակաբար:

Յօդ. Թ.—Կարելի եղածին չափ պէտք է մօտենալ Կ. Պօլսոյ և Լնդկաստանի. «Կ. Պօլսոյ իշխողը ամբողջ տիեզերքիմ ճշմարիտ իշխամն է»՝ ասացուածին հետեւելով, պէտք է տեւական պատերազմներ ստեղծել մերթ օսմանեան կառավարութեան, մերթ ալ Պարսկաստանի հետ, և որպէս զի կարելի ըլլայ Սև ծովու մէջ նաւարաններ ունենալ, կամաց կամաց ջանալու է իւրացնել Սև ծովը, յետոյ մեր ծրագրին ամբողջութեամբ գործադրութեանը անհրաժեշտ առանցք մը ըլլալուն պատճառաւ՝ անհրաժեշտ է Պալտիկ ծովն ալ գրաւել, որպէս զի կարող ըլլանք մինչև Պարսից ծոցը եր-

թալ. պէտք է փութացնենք պարսկական կառավարութեան անկուճիւր և նւաճումը. յետոյ անհրաժեշտ է, որ ամեն ջանք ընենք արևելեան երկիրներու հին վաճառականութիւնը Բերաշամի ձամբուն վերագարձնել, որպէս զի կարողանանք տիեզերքի միջերանոցը համարուող Հնդկաստանը գրաւելու, որուն հետեանքով այլ ևս կը դարչինք կարօտ բլլալէ Անգլիոյ սուկիրներուն:

Յօդ. Ժ.—Աւստրիական կայսրութեան հետ դաշնակցելու և համաձայնելու եղանակով պէտք է ջանալ անոր գոյութիւնը անվթար պահել, առ երեսս զգուցելով յիշեալ կառավարութեան գերմանական երկիրներուն տիրապետելու գաղափարը, իսկ ներքնապէս ձեռքի տակէ միշտ պէտք է գրգռել աւստրիական ազգը կազմող այլազան տարրերը և հարկադրել զանոնք որ իւրաքանչիւրը զատ զատ սգնութիւն յուսայ Ռուսիայէն, և այսպէս ապահովել ապագային Աւստրիոյ վրայ տեսակ մը ռուսական պաշտպանութիւն և թեւարկութիւն:

Յօդ. ԺԱ.—Պէտք է աւստրիական կառավարութիւնը գրգռել որ թիւրքերը բուժելիէն հեռացնէ. այսպէս երբ Աւստրիա և Պոլիսն ալ գրաւելու ելլայ, կա՛մ եւրոպական հին տէրութիւնները գրգռել որ պատերազմին Աւստրիոյ հետ և կա՛մ Աւստրիոյ գրաւած տեղերէն իրենց բաժին մը ձգելով, անոր մրցակցութիւնը ու նախանձը մեղմել և յետոյ աստիճանաբար ասոնց ամենքն ալ ձեռքէն առնել:

Յօդ. ԺԲ.—Մաճառաստանի օսմ. երկիրներուն և Ղևհաստանի հարաւային կողմերը տարածւած յոյն օրթոտորք քրիստոնեաներուն ամենքն ալ որ Պապին հոգեւոր իշխանութիւնը կը մերժեն, պէտք է մեր շուրջը հաւաքենք և Ռուս կառավարութիւնը իրենց պաշտպան ու ապաստան ներկայացնելով, անոնց ամենուն վրայ տեսակ մը կրօնական իշխանութեան ազգեցութիւնը բանեցնելու համար, ամենէն առաջ պէտք է ջանանք կրօնական պետի իշխանութիւն մը

հաստատել (Պատրիարքութիւն). այսպէսով մեր թշնամիներուն իւրաքանչիւր երկրամասին մէջ Ռուսիոյ շահերուն ջեր մապէս ծառայող շատ մը օգնականներ շահած կ'ըլլանք:

Յօդ. ԺԳ.—Երբ վերոյիշեալ ծրագիրները գործադրուին Հուէտ խեղճութեան մատնւած կ'ըլլայ, Պարսկաստան ընկճւած և Ղևհաստան ալ դատապարտւած, և երբ Օսմանեան երկիրներն ալ գրաւուին, մեր բանակները տեղ մը կը կեդրոնացնենք և Պալթիկ ու Սև ծովերն ալ մեր ծովային ուժերով կը պաշտպանուին. այն ատեն ամբողջ աշխարհին տիրապետութիւնը մեր ձեռքէն քաշուցնելու կը ձեռնարկենք. նախ Ֆրանսական և յետոյ Աւստրիական կառավարութեան զատ զատ և խիստ գաղտնի կերպով կ'առաջարկենք այս բաժանումը, որոնց երկուքէն մէկը անպատճառ կ'ընդունի գայն, մենք կը ջանանք իւրաքանչիւրին ալ ընչաքաղցութիւնն ու երկրակալութեան զգացումը բաղցրութեամբ գգուել և մեր առաջարկը ընդունողը գայն մերժողին դէմ՝ կը հանենք իբր թշնամի. Իւ որովհետեւ Ռուս կառավարութիւնը ամբողջ Արևելեան երկիրները գրաւած կ'ըլլայ, եւրոպական երկիրներուն մեծագոյն մասն ալ այսպէսով իր ձեռքը կ'անցնէ և Ֆրանսական ու Աւստրիական տէրութիւններէն որր որ կանգուն մնացած ըլլայ, Ռուսիա իր ահագին ուժովը գայն իսկայն և զիւրաւ կրնայ ջախջախել:

Յօդ. ԺԴ.—Ենթադրենք որ հակառակ ամէն հաւանութեան ո՛չ Աւստրիա և ո՛չ ալ Ֆրանսա մեր վերի առաջարկը ընդունին, այն ատեն անհրաժեշտ կ'ըլլայ գժտութեան որո՞մ սերմանել ասոնց երկուքին միջև. այսպէս, երբ անոնք իրարու հետ լաւ մը բանին, մենք յարմար առիթ մը սպասելով մեր հաւաքուած բանակները իսկոյն առաջ կը մղենք նախ Գերմանիոյ վրայ, ուր մեր յարձակումը յառաջացնելով հանդերձ միւս կողմէ ալ Անատոլիոյ ալ և ալլցեղերէն կազմուած մեր անպարտելի զինուորները Ազախու շրջակէն և Հիւսիսային Սառուցեալ շրջակէն Արխանգելի նաւահանգիստէն գուրս

կլլալիբ նաւատորմիդներուն հետ գուգընթաց շարժումի մէջ կը դնենք Ան և Պալթիկ ծովու նաւատորմիդներուն ընկերակցութեամբ, և այսպէս Միջերկրականի և Հիւսիսային Դոնովու ճամբով կ'ողջունենք Փրանսիական նաւահանգիստը, երբ արդէն Գերմանիա ալ այս վիճակին ենթարկուած և ընկճուած կ'ըլլայ: Այսպէս, այս երկու ընդարձակ երկիրները երբ նուաճենք, Եւրոպիոյ մնացած մասերը շատ զիւրութեամբ և նոյնիսկ առանց պատերազմի բնական է որ գրաւենք: Հետևաբար երբ այս ծրագիրը ամբողջութեամբ գործադրենք, ա մ բ ո ղ ջ Եւրոպան Ռոմանական տիրապետութեան տակ անցուցած կ'ըլլանք:

Այդ կապի իմաստով շարժեց ուսական դիւանագիտութիւնը իր դարաւոր քաղաքականութեան մէջ: Արդէն իսկ Մեծն Պետրոս իրագործել էր նրա մի մասը, հարևած տալով շվեդներին ու թիւրքերին: Իր յաջորդների օրով լեհաստանը բաժանեց երեք բռնակալ պետութիւնների միջև և միև կողմից հեռացեալ սաստկացաւ Ռուսաստանի գրոհը՝ ընդդէմ Թիւրքիոյ և Պարսկաստանի: Թիւրքիոյ դէմ ծրագրած իր արշաւի մէջ՝ նա որոշել էր յենեւել գլխաւորապէս սլաւոնների ու յոյների վրայ, իսկ պարսկական առաջխաղացութեան մէջ — հայերի վրայ: Երկու ճամբաներով էլ՝ հիւսիսային «նօլօսը» դիմում էր իր գուրգուրած նպատակակէտին, ձգտում էր համաշխարհային տիրապետութեան: Մի կողմից՝ դէպի Ստամբուլ, միև կողմից՝ դէպի Քեհրան, որի գրաւումով ուսական դրօշը մօտենում էր Հնդկաստանի սահմաններին...

Ահա թէ ինչու հաւար գոռաց բրիտանական առիւծը:

Ահա թէ ինչու ամբողջ 19-րդ դարու ընթացքում նա յուսահատ միջոցներով մաքառեց Ռուսաստանի առաջխաղացութեան դէմ, երբեմն նոյնիսկ պատերազմի ու արեան գնով կանգնեցրեց «Մօսկօվի» յաղթական գրոհը:

«Թիւրք կայսրութիւնը այսօր նոյնքան թոյլ ու խաթուղ կացութեան մէջ է, ինչպէս մի ժամանակ Յունաստանը. բայց և այնպէս նա դեռ երկար կը շարունակէ իր գոյութիւնը, որովհետև եթէ որևէ իշխան, նաճողական ախորժակներով վտանգէ այդ կայսրութիւնը, Եւրոպայի երեք առևարական պետութիւնները, իրենց շահերը գիտակցելով, անմիջապէս պաշտպան կը կանգնեն նրան (Թիւրքիային): Նրանց բախտից է, որ Մուսուլթան է տեւլ այս աշխարհում գոյութիւնը այնպիսի ազգերի՝ որոնք անօգուտ կերպով տիրում են մի մեծ թագաւորութեան»...

Այսպէս է խօսում Մօնտեսկիօ, XVIII դարու հռչակաւոր ընկերաբանը, իր յայտնի գրածքի վերջին գլխում *): Ի՛նչ իմաստուն գուշակութիւն և սրպիսի թափանցող պատմափիլիսոփայական ակնարկ գալոց, հեռաւոր անցքերի վրայ... Յարձակումները արդարև տեղացին պարբերաբար «անօգուտ ձևով» թագաւորոց ազգի վրայ, բայց և ամեն անգամ միև, «առևտրական պետութիւնները» օգնութեան հասան և փրկեցին այդ «անօգուտ գոյութիւնը»...

Ռուսաստանի աշխարհակալող ծրագիրները խափանելու համար՝ Մեծ Բրիտանիան ամուր գրկեց քաղաքական մի արիւնոտ ու շարաշուք դօգմ — օսմանեան

*) Montesquieu, *Considérations sur les causes de la grandeur et de la décadence des Romains.*

երկրի ամբողջութեան գոգմլ: Միմիայն լօրդ Բիկօնս-
ֆիլդի օրով չէր, որ Անգլիան մոլեռանդ պաշտպան
կանգնեց Թիւրքիոյ ամբողջութեան գաղափարի. նոյն
ընթացքը մենք տեսնում ենք և նախկին, հեռաւոր
բրիտանական կառավարութիւնների օրով: Արբազնագոյն
գօգմ հռչակեց՝ թէ Թիւրքիոյ և թէ Պարսկաստանի
ամբողջութիւնը: Եւ Անգլիան կարողացաւ համախմբել
ուրիշ ցամաքային պետութիւններ ևս այդ բաղաբական
հաւատամքի շուրջը, ընդդէմ Ռուսաստանի նւաճողա-
կան արշաւանքի: Հայ ժողովուրդը ամենամեծ զոհն
եղաւ այդ անիծակոռ հակամարտութեան: Հայ յեղա-
փոխական շարժումը գալարեց նրա պողպատեայ օղակ-
ների մէջ և՛ դեռ նոր փթթեա՛ծ՝ ուժասպառեց: Արժէ
փոքր ինչ աւելի կանգ առնել այդ արհաւիրալի անտա-
գօնիզմի և այդ աղէտաւոր գօգմի վրայ՝):

*) 1907 թ. օգոստ. 30-ի դաշնագրութեամբ երկու պե-
տութիւնները սրտեցին, փոխադարձ զիջումներով, վերջ դնել
այդ դարաւոր հակամարտութեան: Ռուսաստանը ճանաչեց
Անգլիոյ նախնիխանութիւնը Տիբեթում ու Ալգանիստանում:
Ինչ վերաբերում է Պարսկաստանին, նա բաժանեց երկու
շրջանի. Հիւսիսային Պարսկաստանում ճանաչեց Ռուսա-
կան առևտրի ու ազդեցութեան գերակշռութիւնը, մինչդեռ
հարաւային Պարսկաստանի մէջ Անգլիան էր շեշտում իր
տիրական ազդեցութիւնը և Պարսից ծոցը, վերայիշեալ հա-
մաձայնութեամբ, դառնում էր մի տեսակ բրիտանական
լիճ. (Dr. Rouire, La Rivalité Anglo-Russe au XIXe
siècle, en Asie): Դժուար է, ի հարկէ, պնդել, թէ 1907
թւի դաշնագիրը—որ գլուխ եկաւ Էդուարտ VII-ի խղա-
զարար թագաւորի ջանքերով—միանգամ ընդմիշտ հարթում
է բոլոր կնճիռներն ու բախումի պատճառները Ասիոյ մէջ,
անգլօ-ռուսական ազդեցութիւնների շրջաններում:

XIX դարի սկզբներում ենք: Եւ արդէն հնչում է
ահագանգը Արևելքի վիթխարի Դիակի շուրջը: Ամեն որ
զգում է, որ այդ դիակը չի տարալուծելու վերջնա-
կանապէս, առանց արիւնոտ ցնցումներ պատճառելու
միջազգային խաղաղութեան: Ամեն որ գիտակցում է
Պօլսի, Բոսֆօրի եզակի գիրքը, նրա տիրական հրապոյր-
ները: Արպիսի կենտրոն համաեւրոպական ձգողութեան...
Եւ մի՛թէ նա բաժին պիտի ընկնի Հիւսիսի Արջին: Այդ
հարցումն են տալիս—գողացնող անհանգստութեամբ—
Արևմուտքի նշանաւոր հրապարակագիրները, բաղաբա-
գէտ-գրողները: Ստեղծւում է ընդարձակ գրականու-
թիւն՝ կազմալուծւող Դիակի շուրջը: Կառավարութիւն-
ները տենդային կերպով փոխանակում են կարծիքներ
ու յիշատակագիրներ: Յղացւում են Թիւրքիոյ բաժան-
ման մի շարք ծրագիրներ: Խնդիրը սաստիկ զբաղեցնում
է և Բոնապարտին, որ այն ժամանակ հասել էր փառքի
գագաթնակէտին: Բայց նա չի ուզում Պօլսը յանձնել
Ռուսաստանին: Sainte-Hélène-ի նապօլէօնեան յիշա-
տակարանի մէջ գրւած է.

„Ես կարող էի բաժնել Թիւրք կայսրութիւնը Ռու-
սաստանի հետ. այդ մասին մի քանի անգամ խօսք է
եղել մեր մէջ և Պօլսը միշտ փրկել է Թիւրքիան այդ
մայրաքաղաքը ամենամեծ խոչընդոտն է հանդիսացել.
Ռուսաստանը ուզում էր այն, բայց ես չէի ուզում նրան
յանձնել. դա չափազանց արժեքաւոր մի բանալի է.
Պօլսը ինքնին արժէ մի ամբողջ կայսրութիւն. ով որ
տիրէ նրան, կը կառավարէ ողջ աշխարհը“:

Նապօլէօն կրկնեց նոյն միտքը, երբ ուռնները ցանկու-
թիւն յայանեցին գրաւել Թիւրքիոյ մայրաքաղաքը... »Պօ-

լիսը—բացականչեց նա— դա աշխարհի բանալին է*):

Բաժանման մի նախագիծ էլ գրեթէ նոյն ժամանակները առաջագրել էր Մետերնիխ, Աւստրիոյ հռչակուոր նախարարապետը: Նա իրօք ամբողջութեան դօգմի կուսակից էր.

»Թիւրքիոյ գոյութիւնը — ասում էր նա — և նրա պահպանումը, որքան էլ անհաշտելի լինի քրիստոնէական բաղաքակրթութեան պահանջների հետ, այնուամենայնիւ մի բարիք է Եւրոպայի համար«:

Սակայն Թիւրքիոյ պահպանումը բաղձալով հանդերձ՝ Մետերնիխ նախատեսում էր արդէն նրա գալոց քայքայումը. և 1808-ին յայտարարում էր.

»Մենք չենք կարող փրկել Թիւրքիան, պէտք է ուրե՛ն նպաստել նրա բաժանման և աշխատել ձեռք բերելու ըստ կարելոյն խոշոր բաժին«:

1829-ին Մետերնիխ վերստին հրապարակ հանեց իր առաջարկը և այս անգամ թելադրում էր բաժնել Թիւրքիան առանց Փրանսիայի մասնակցութեան: Փրանսիական դահլիճն էլ առաջարկում էր տալ Ռուսաստանին՝ Մօլդավ-Վալախիան, Հայաստանն ու Տրապիզօնը, և, իբրև հատուցում, տալ Աւստրիային Բօսնիա-Հերցեգո, Սերբիան ու Խորվաթիան, Անգլիային՝ Տօլլանդական գաղութները, Պրուսիային՝ Սաքսոնիան ու Հօլլանդիան... Ոմանք առաջարկում էին Պօլիսը դարձնել ազատ քաղաք:

Բաժանման անվերջ ծրագիրները մեռնում էին, սակայն, թղթի վրայ, արևմտեան պետութիւնները ռիսկ չէին

*) T. Djurava, Cent projets de partage de la Turquie, p. 313.

անում ժօտենալ այդ դժւարին ու ցաւոտ կնճռին, չէին կարողանում ցանկալի կերպով տնօրինել Վ. Պօլսի ճակատագիրը և վերջի վերջոյ յարում էին Մեծ Բրիտանիոյ յղացած դօգմին.

»Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը անհրաժեշտ է միջազգային խաղաղութեան համար. պէտք է ամեն գնով պահպանել այն՝ Ռուսիոյ յարձակողական ընթացքի հանդէպ«:

Այդ հաւատամքը պիտի յարուցանէր ապագայում միջազգային ամենաարիւնալի բախուճներից մինը — Չրիմի պատերազմը... Աւղո՛ւց քրիտանական հրապարակագիրներն ու վարիչները բարոզում էին Եւրոպայի բազմազգային բռնապետական «Մօսկօփի» դէմ, ջարդել, յետ մղել Ռուսաստանը արևելեան թատերաբեմից և ապահովել միանգամ ընդմիշտ օսմանեան պատնէշի գոյութիւնը Ասիական մեծ ճանապարհի վրայ:

»Ամբարձէ՛ք Ցաճկաստանը—ասում էր մէկը նրանցից — և դուք ոչ միայն կը փրկէք այն, այլ և կը շտկէք նրա թուլութիւնից բղխող աղէտները: Դարդան էլով է, որ մանում են օսմանեան կայսրութեան սիրտը. Բօսֆօրօս է, որ պիտի երթայ մեր նաւատորմը՝ յարձակողին կանգնեցնելու համար« *):

Մի մոլորեցին ամբաստանագիր է Ռուկուարտի այդ հինաւորց ու հեղինակաւոր աշխատութիւնը՝ ուղղած ռուսական յաւակնութիւնների դէմ: Բրիտանական հանրային կարծիքը առանձնապէս յուզեց, երբ Ռուսաստանը, հայ

*) D. Urquart, Progrès et Position actuelle de la Russie en Orient, հրատ. 1836.

ազգաբնակչութեան աջակցութեամբ մղեց յաղթական պատերազմը Երանի դէմ և գրաւեց Երևանի ու Նախիջևանի խանութիւնները։ Ուրկուարտ գրում է.

«Այսօր արդէն Արաքս գետն է Ռուսաստանի հարաւային սահմանը, ուսկից նա դիւրութեամբ պիտի տարածէ իր հովանաւորութիւնը Պարսկաստանի վրայ... Միւս կողմից, Գիւլիստանի դաշնագրով (1814 թ.) Ռուսիան մերժեց է Պարսկաստանին իր նաւատորմն ունենալ Կասպից ծովի վրայ, որ այդպիսով դարձել է ռուսական ծով... Պարսկաստանի հետ իր հաշիւները մաքրելուց յետոյ, ահա Ռուսիան գրոհ աւեց Թիւրքիոյ դէմ... գրեց թաթը Մօլդաւ-Վալախիայի ու Սիլիստրիայի վրայ... Միւս կողմից Նիկօլայ 1-ի կառավարութիւնը ոչ մի առիթ չի բաց թողնում՝ յարաբերութեան մանելու ֆիւրդիստանի ցեղապետների հետ... Կաւերի, ինտրիգների մի երկար շարանով Ռուսիան ոչ միայն ձեռք ձգեց Թիւրքական հողերի մի ընդարձակ մասը Ասիայում ու Եւրոպայում, այլ և կատարելապէս անջատեց Յունաստանը Թիւրքիայից և արդէն անջատելու վրայ է նաև Սերբիան, Վալախիան ու Մօլդաւիան... Ահա վերջապէս Հոլանդացի-Սրբելեստիի դաշնագրութիւնը (1833 թ.), որով Թիւրքիան հռչակում է Ռուսիոյ դաշնակից և պարտաւորում է փակել Դարդանէլի անցքը օտար զրահանաւերի առջև... Ինքը միայն, հարկաւ, իբրև «դաշնակից», արտօնւած է իր ռազմանաւերը անցկացնելու Դարդանէլի նեղուցով... Եւրոպայի ազգերը չեն կարող թող տալ, որ Ռուսաստանը բռնութեամբ աիրանայ այդպիսի արտօնութեան... Ուշագրաւ է այդ պետութեան տակտիկը, այն ձևը, որով նա կատարել է իր ընդարձակ նւաճումները Պետրոս Մեծի օրերից ի վեր. նախ իր «հովանաւորութեան» տակ է առնում որևէ երկիր, ապա յարուցանում է նրա մէջ երկպառակում-

ներ, վերջապէս, միացնում է իր թագաւորութեան, որպէս զի «վախճան գրւի» այն խռովութիւններին ու անկարգութիւններին, որ նա ինքն է ստեղծել կամ հանդուրժել։ Այդպիսի մի հովանաւորութիւն է, որ Ռուսաստանն իրօք հաստատեց Թիւրքիոյ վրայ Հունքեար Սրբելեստիի դաշնագրով...

«Պարսկաստանի առևտուրը մի աննշան մասն է միայն այն կորստի, որ պիտի կրէ Անգլիան այն դէպքում, երբ Դարդանէլը կ'ընկնի Ռուսիոյ ձեռքը։ Անհաշիւ են այնտեղ մեր շահերը և նրանց կարևորութիւնն է ստիպել մեզ յայտարարելու, որ մենք պէտք է պաշտպանենք Թիւրքիոյ անկախութիւնը։ Եւ այդ պաշտպանութեան համար մենք ոչ միայն պարտաւոր ենք ստանալ երաշխիքներ Թիւրք պետութիւնից, այլ և պէտք է մեր կարողութեան չափ նպաստենք այդ կայսրութեան ներքին բարեկեցութեան, նրա ուժերի աւելացման։ Թիւրքիոյ բաժանումը չի կարող կատարել առանց արիւնհեղուութեան. ուստի խաղաղութիւնը ապահովելու համար միակ միջոցն է՝ օսմանեան ամբողջութեան պահպանումը» *)...

Ահա «բոգմը» և ահա շարժառիթները, Հարիւր տարւայ կեանք ունին նրանք և դեռ այսօր էլ կրկնում են նոյն ֆորմուլներն ու պատճառաբանութիւնը նոյնիսկ այն պետութիւնների կողմից, որոնք ամենաեռանդուն մղիչ են հանդիսանում Թիւրքիոյ յօշոտման...

«Սրբազան բոգմը» բազմաթիւ վարիանտներով կրկնեց անդադար Եւրոպայում, մասնաւորապէս Անգլիայում ու Ֆրանսիայում, մինչև որ Ղրիմի աւերիչ պատերազմը եկաւ ժամանակաւորապէս լուծում տալու

* Urquart, Progrès et Position actuelle de la Russie en Orient, p. p. 2—170.

Արևելեան կնճռոս պրօքլիփն: Արևմուտքի ամենաբազաքակիրթ, ամենաազատամիտ պետութիւնները պաշտպան էին կանգնում մի պետութեան, որ տիպիկ մարմնացումն էր ասիական բարբարոսութեան: Անգլիան և Ֆրանսիան զէնքի ուժով ու անհաշիւ զոհաբերութիւններով յարատեւում էին գոյութիւնը մի ռէժիմի, որ ամենակոպիտ բացասումն էր քաղաքակրթութեան և որ նշովք ու պատուհաս էր մասնաւորապէս թիւրքահայասակ քրիստոնեայ ժողովուրդների համար...

Այստեղ է նորագոյն պատմութեան խորունկ հակասութիւններից մինը, և — որ ամենից ուշագրաւն է — Թիւրքիոյ ամբողջութեան դօգմը ժողովրդական էր արեւմտեան եւրոպայի ամենաարմատական տարրերի մէջ անգամ, հանրապետականների ու կօմունիստների մէջ: Յիշենք թէկուզ միայն Վարլ Մարքսին, որ անցեալ դարու 50-ական թւականներին բաւական օրիժինալ ծրագիրներ էր առաջադրում Արևելեան խնդրի լուծման համար: Մարքսի մի շարք զինակիցներ ու աշակերտներ — Լիբկնեխտ, Հայնզման, Էարլ Լօնգէ և այլն — մինչև վերջին ժամանակները նոյն հինգած տեսակէտն էին պաշտպանում ամեն առթիւ, լինի կրետական, թէ հայկական կամ մակեդոնական ապստամբութեան ու տագնապի միջոցին: Նրանց լոզորի մղիչն էր՝ անհաշտ ու թունոտ ատելութիւնը դէպի ցարիզմը, և վերջինի արշաւանքի առջև պատնէշ դնելու համար՝ նրանք պատրաստ էին ծափահարել Թիւրքիոյ ամբողջութեան հաւատամբը, զոհաբերել նրան մորթուող ու մարտնչող թիւրքահայասակ ժողովուրդներին: Տա-

րաբախտաբար, Հայնզմանի և մանաւանդ Լիբկնեխտի յօգւածները աւելի բան բնորոշ են այդ կարճատես և կարճամիտ «օցիալիստական» տակտիկի հաւար: Ամեն մի շարժման մէջ — Հայաստանում, Կրետէում, թէ Մակեդոնիայում — նրանք տեսնում էին միայն ու միայն Ռուսաստանի մատը, «Ռուսական ինտրիգը»... «Ռուսական ռուբլին» *)...

Տարակոյս չկայ, Ռուսաստանի այդ ինտրիգներն ու ռուբլիները իրենց դերն են խաղացել արևելքի բազմաթիւ անցքերի ու վերիվայրումների մէջ. բայց մի բան, որ ծայրայեղօրէն թեթեւամիտ ու յանցաւոր էր — դա մարքսիստ քաղաքագէտների յախուռն ընդհանրացումն էր, որի զօրութեամբ հայ, մակեդոնական, կրետական կօմիսէներն ու շարժումները հանդիսանում էին ոչ թէ դժոխային իրականութեան ծնունդ-գաղափարական արտայայտութիւններ, այլ սոսկ ցարական դիւանագիտութեան գործիքներ **)...

*) 1896-ի օգոստոսին, *Vorwärts*-ում հրատարակած մի նօտի մէջ՝ Լիբկնեխտ հռչակում էր Քանկ (Ստոսմանի դաշնակցականներին, որպէս Ռուսական վարձու ազենտներ:

**) Մարքսիստական նորրնձաները, որոնց աչքում Վարպետը ամենագէտ և ամենակարող մի հեղինակութիւն է, տասնեակ տարիներից ի վեր պնդում են, որ Մարքս լուսագոյն լուծումն է տւել ոչ միայն ազգային ու ցեղական խնդիրներին, այլ և մեծ, չարատանջ Արևելեան Հարցին: Նորրնձայութիւնը մեզ յօտ ևս — աւելի մոյեռանդ և աւելի սիմպլիստ — ձգնում է նոյնը հաստատել: Իրողութիւնն այն է, որ Վարլ Մարքս լինելով հանդերձ անզուգական տնտեսագէտ, չի բմբռնել իրենց խորութեամբ ու հասողութեամբ՝

Այո, հակասութիւնը խոր ու ազդակող էր բաղա-
քակրթութեան պահանջների և բաղաբազիրթ պետու-

ու ազգային բարդ, արիւնստ կնճիւղները, որոնց աւել է այն-
քան յախուռն ու սիմպլիստ լուծում, ոչ էլ Արեւելեան
խնդիրը, որի լուծումն ևս առաջագրել է մի քանի շտապ ու
կարմիր ֆրագներով ամերիկեան «New York Tribune»-ի
մէջ: «Ապպիաալ»-ի հո շակաւոր հեղինակը չի ուզում, հարկաւ,
որ պահպանի status quo-ն թիւրք կայսրութեան մէջ, նա
գիտում է թիւրքերին, իբրև չափազանց յետամնաց մի
տարր, իսկ նրանց պետութիւնը դատապարտւած անխուսա-
փելի փտութեան: Ասկայն, մարքսեան խորհրդածութիւն-
ները այդ փափուկ նիւթի առթիւ յանգում են այնտեղ՝
որ նա էլ ի վերջոյ անգլիական դիւանագետների պէս, թե-
ւազրում է իւր ք և ակամայ՝ նոյն status quo ի պահպա-
նումը թիւրքիոյ մէջ: Նա ազգարարում է, որ Արեւելեան
խնդիրը ի շարք այլ բազմաթիւ խնդիրների, կը լուծուի միայն...
Ե ւ ր ո պ ա կ ա ն Յ ե դ ա փ ո խ ու լ թ ե ա մ ք :

Այդ լուծումը տալիս էր Մարքս անցեալ դարու 50-ական
թւերի սկզբում, Ղրիմի պատերազմի նախօրեակին: (Տես
Neue Zeit, 1910 թ. 1 ապրիլ համարի մէջ «Was soll aus
der Türkei werden?» ուշագրաւ յօդուածը, որ պատկա-
նում է կարլ Մարքսի գրչին): Դա այն շրջանն էր, երբ երի-
տասարդ կոմունիստը, հեգելեան «կործանարար» դեղա-
տոմար գրպանում և իր վառ երևակայութեամբ տարւած,
անդադար գուշակում էր մատուցու յեղափոխութիւններ ու
վիթխարի վերիվայրումներ, նախատեսնում էր ազգերի ու
ազգային պայքարների շուտափոյթ անհետացումը պատմու-
թեան բեմից, ազգարարում էր մատ ապագայի համար կա-
պիտալիզմի խորտակումը և սոցիալական կարմիր հանրապե-
տութեան ժամանումը... Շատ վաղ պիտի հասնէին այդ
համայնաշինչ փութորիկները, որովհետև կարլ Մարքսը ու-

թիւնների ընթացքի միջև, երբ նրանք, առանց մտածելու
թիւրքիոյ ներքին բարենորոգումների մասին, իրենց

սուճնասիրել էր, «անվրէպ կերպով ճանաչել» համաշխարհային
պատմութեան երկաթէ օրէնքները... Թողնենք, սակայն, որ
նա ինքը խօսէ իր հեգելեան բառբառով:

«Ով որ հիացմունքով գիտել է յաւիտենական փոփոխու-
թիւնը մարդկային ճակատագրի, ուր կայուն ոչինչ չկայ,
բացի անկայունութիւնից, ուր ոչինչ չկայ անփոփոխ, բացի
փոփոխութիւնից, ով որ հետեւել է պատմութեան պոպուլա-
տեայ բնթացքին, որի անխնւրր անկարեկիր գլորում են
լայնարձակ թագաւարութեանց փլատակների վրայ, անողոր-
մաբար տրորելով ամբողջ սերունդներ, ով որ գիտէ, որ ոչ
մի ամբոխագրդու կոչ ու թռուցիկ չի գործում այնքան
յեղափոխականօրէն, որքան մարդկային պատմութեան պարզ
ու մերկ իրողութիւնները, ով որ կարողացել է բմբռնել ներ-
կայ դարաշրջանի ահագին յեղափոխական բնոյթը, ուր շո-
գին ու քամին, ելիքտրականութիւնն ու տպագրական մե-
քենան իրարու հետ դաշնակցած, մեկ տարւայ մէջ աւելի
փոփոխութիւն ու յեղաշրջում են արտագրում, քան երբեմն
մի ամբողջ դար կարող էր նիւթել, նա չի կարող երկիւղ
կրել՝ այդ պատմական խնդիրը առաջագրելու... Առաւմա-
րութիւնները իրենց հնաձև դիւանագիտութեամբ երբէք
չպիտի լուծեն դժւարութիւնները: Ինչպէս բազմաթիւ այլ
հարցերի լուծումը, թիւրք ա կ ա ն հ ա ր ց ն և ս
պ ի տ ի լ ու ծ է ի մ ի ա յ ն Ե ւ ր ո պ ա կ ա ն
յ ե դ ա փ ո խ ու լ թ ե ա մ ք (ստորագծողը մենք ենք.
Մ. Վ.): Այս պնդումի մէջ խլգախ ոչինչ չկայ: 1789-ից
ի վեր Յեղափոխութեան սահմանները միշտ աւելի և աւելի
բնդլայնում են. նրա վերջին նշանաբարերն են՝ Ալարշավա,
Գերբեշին, Բուքրէշ. մատուցու Յեղափոխութեան ծայրա-
գոյն կէտերը պիտի լինին՝ Պետերբուրգ և Պոլիս... (Ա.
Marx: Was soll aus der Türkei werden?)»

քնքոյ Հովանաւորութեան տակ էին առնում Տաճկաստանը և սուրբ ու անբռնաբարելի Հռչակում նրա ամ-

Իսկ եթէ, դիպածով, պատմութեան անիւր փոքր ինչ դանդաղ թաւալի և Պետերբուրգում ու Պոլսում այդպէս շուտ չբռնկին ազատարար յեղափոխութիւնները, ապա այդ դէպքում կարլ Մարքս կ'առջարկէ՝ «Տիմեւի մի ազատ ու անկախ սլավոնական պետութիւն օսմանեան թագաւորութեան աւերակների վրայ, եւրոպական թիւրքիայում»...

Ահա Մարքսեան «լուծումը» Արևելեան Խնդրի: Ինչպէ՞ս պիտի Տիմեւի այդ ամբողջական սլավ պետութիւնը այնքան բազմերանգ և հակամարտ սլավ ցեղերի մէջ — այդ մասին լուծ է բնկերվարական մարգարէն (Տետաքքերական է, որ վերոյիշեալ յօդածի տակ կարլ կառուցկի մի ծանօթութեան մէջ վկայում է, թէ «սլավ», «քրիստոնեայ» բառերը հաւանօրէն մոցրեաւ են «New York Tribune»-ի խմբագրութեան կողմից, քանի որ —ասում է կառուցկի — «քրիստոնեայ» պետութիւններ Տիմեւելու գաղափարը խորթ էր Մարքսի սրտին, նա չէր սիրում բուրժուական ռամկավարութեան Ֆրազապանութիւնը): Եւ այն էլ միմիայն եւրոպական թիւրքիոյ ճակատագիրն է տնօրինում կարլ Մարքս, միմիայն սլավ ժողովուրդների մասին է հոգում, որոնց կուլտուրայի հնութիւնն ու բարձրութիւնն է դրւատում նա, առանց բնաւ կասկածելու, որ Ասիական թիւրքիոյ մէջ ևս կան ժողովուրդներ, շատ աւելի Տին և գուցէ ոչ նւազ բարձր կուլտուրայով, անհամեմատ աւելի ճնշւած ու ոտնահարւած բարբարոսներից: Նրանց գոյութեան մասին անգամ թերևս ոչինչ չգիտէ Արևելեան ազգերի բախտը որոշողը:

Ժամանակները չեն փոխւում այդ լուսատես գառանցողների համար: Մարքսիզմը ահագին էւօլիցիա կրեց, բայց այսպէս կոչւած օրթօգօքանների մտայնութիւնը նոյնը մնաց: 60 տարի յետոյ, ահա երիտասարդ աշակերտները նոյն թեզն են պաշտպանում, երբ խօսք է լինում թիւրքոց Հայաստանի ազա-

բողջութիւնը: Բայց ի՞նչ զարմանք... կապիտալիզմի ներքին սովորական հակասութիւններից էր այդ. այնտեղ, ուր կապիտալիստական աշխարհանւած բաղաքականութեան շահերն են վտանգւում, սովորաբար լուծ են կուլտուրայի ու բարոյագիտութեան ամենատարրական մասհոգութիւններն անգամ: Մաշւած, արիվեալ ճշմարտութիւն է, եթէ ասենք, որ «օսմանեան ամբողջութեան» դօգմի տակ տնտեսական շահերն էին խօսում բարձրաձայն, որ արեւմտեան ազատամիտ պետութիւնները և ամենէն ազատամիտը, Մեծ Բրիտանիան, թիւրքիոյ հանդէպ բռնած իր հովանաւոր դիրքի

տագրութեան մասին: Նոր վիճում էին Պետական գումայի մէջ Հայոց Հարցի առթիւ և ուղղադաւան մարքսիզմի երկու նէօֆիտներ — վրացի Չիենկելի և ռուս Սկոբելիզ — խօսք առնելով, կատաղութեամբ բողբոջեցին արտաքին միջամտութիւնների դէմ թիւրք կայսրութեան գործերի մէջ և յայտարարեցին, որ թիւրքահայաստանի բոլոր խնդիրները կը լուծէ ժամանակին... յաղթական պրօլետարիտար: «Քիւրք ու հայ աշխատուոր մաստաները, պրլետարիատի հանուր դրշակի տակ կը վարեն պայքարը տիրող բուրժուա դասակարգերի դէմ և կ'ազատագրեն իրենց ձեռքով»... Հեռու այտաքին միջամտութիւնները... կովկասահայ լիբերալների, «նացիօնալիստների» նպաստին է՝ թիւրքահայաստանը նւաճելով՝ բնդլայնել շահատանը կովկասեան կապիտալիզմի համար... և այլն և այլն... սովորական իմաստութիւնները: Սկոբելիզ և Չիենկելի հրահանգում են ուրեմն թիւրքահայերին՝ համբերել, ոպասել մինչև Սոցիալական Յեղափոխութիւնը...

Չափազանց կօմիկ ու զուեշտական կը լինէին այդ մարքսիստ բանդագուշանքները, եթէ շլինէին այնքան տխուր ու տաղտկալի...

մէջ զեկամարուում էր նորագոյն կապիտալիզմի դաժան պատգամներով:

Անգլիան աշխարհի ամենամեծ, ամենահարուստ արգիւնաբերական վայրն էր. նորագոյն խոշոր արգիւնաբերութիւնը ահագին թուիչք էր առել այնտեղ՝ մանչեստերեան հռչակաւոր լոզունգների, ազատ մրցման և ազատ առևտրի նշանակի տակ: Պէտք էին ընդարձակ շահաստաններ՝ բրիտանական ձեռագործը արտահանելու համար: Ոչ միայն իշխող և ունեւոր դասակարգն էր խորապէս շահագրգռուած դրսի ազատ շուկաների գոյութեամբ, այլ և ստորին, աշխատաւոր դասակարգերը, որովհետև արտահանող ձեռագործի քանակից կախած էր կերակրող բերանների քանակը: Ամբողջ թիւրքիան — ինչպէս և Ասիոյ մի շարք ուրիշ երկիրներ — բաց էր անգլիական կապիտալիզմի լեռնացած բերքերի համար. իսկ երբ Ռուսաստանը հաստատէր իր տարածներ՝ տիրապետութիւնը Գարգանէլի ու Բոսֆորի վրայ, նա պիտի սահմանէր միաժամանակ մաքսային հովանաւորող ու ճնշող սիստեմը, — և այնուհետև օսմանեան ահագին շուկան պիտի գոցուէր Անգլիայի առջև: Թիւրքիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի, ամբողջ Ասիայի շահաստաններին տիրելը, ինչպէս և մի շարք ծովերի ու նեղուցների տիրապետութիւնը կենսական, հրամայական մի պահանջ էր Մեծ Բրիտանիայի յարաճուն արգիւնաբերութեան և յարաճուն ազգաբնակչութեան համար: Ոչ մի այլ տեղ, կապիտալիստական ոչ մի ուրիշ երկրի մէջ այնքան սերտ չեն շաղկապուել քաղաքական

աշխարհակալութեան տենչանքները զուտ անտեսական, ստիպողական անհրաժեշտութեանց հետ:

Եւ դեռ վաղուց — երբ կար միայն առևտրական կապիտալը (ոչ ճարտարաբանական, industrial) — սկսել էր աշխարհի այլ և այլ ծայրերում բրիտանական գաղթարարութիւնը (colonisation), որ բոլորովին ինքնատիպ բնոյթ ունէր: Եւս զուտ առևտրական գաղթարարութիւն էր: Երբ զեկամարող սկզբունքն այն էր, որ վաճառականները իրենք իսկ հանդիսանում էին աշխարհակալողներ: Երանք տիրում էին շուկաներին, երբեմն նոյնիսկ հեռուոր երկիրների հարստութեան աղբիւրներին: Մեծ Բրիտանիան, «Մայրերկիրը» միջամտում էր միայն յետոյ, երբ անգլիական պատակ վաճառականները հանգիպում էին վարչական դժարութիւնների: Այդպէս են գոյացել Անգլիոյ հսկայ գաղութները և մանաւանդ նրա ասիական մեծ թագաւորութիւնը: Երանց սկիզբը դրել են անգլիացի քաղաքացիներ, առևտրականներ, որ գործել են անկախ կառավարութիւնից, սոսկ մասնաւոր նախաձեռնութեամբ, տիրել են երկրին տնտեսապէս. ապա հետևել է քաղաքական, զինւորական տիրապետութիւնը, որ սակայն միշտ շնորհել է նւաճած ազգերին մի յայտնի ինքնօրինութիւն կամ ինքնավարութիւն:

Ճարբեր էին Ռուսաստանի ծաւալման դրդապատճառներն ու մեթոդը: Կժւար է աւել, թէ ցարերի այդ դարաւոր և տենդային գրոհը դէպի հարաւ, արևմուտք ու արևելք, Պետրոս Մեծից մինչև Նատարինէ I, մինչև 19-րդ դարի 50-ական թւականները, պայմանաւորում

էր Ռուսիոյ առևտրի և նրա աճող արդիւնաբերութեան ու ազգաբնակչութեան պահանջներով, թէ նրա նպատակն էր՝ երկիրը, ազգը հարստացնել: Ռուսական գաղթարարութիւնը զուտ բաղաբական-նւաճողական բնոյթ ունէր: Պետերբուրգը չէր մտածում խաղաղ, մեթոդիկ, անտեսական «թափանցումի» մասին, նա չէր մտածում զրկել իր առևտրական գործակալները դէպի հեռու երկիրներ, նա չէր հոգում արժէքները փոխադրելու և փոխանակելու, մայր-երկիրը հարստացնելու մասին: Նա զաւթում էր բռնութեամբ ընդարձակ հողեր և բնակեցնում իր մուժիկներով, որոնց վրայ տարածում էր իր զինւորական հովանին: Զնջում էր նորանւաճ ցեղերի ինքնուրոյնութիւնը, ենթարկում էր նրանց իր կենտրոնական, բռնապետական իշխանութեան: Այդ կոպիտ, մեքենական ծաւալումը, որ հասնում էր մինչև Տիբէթ, Պարսկաստան, Աւղանիստան, յետոյ և մինչև Մանչուրիա, չէր բնաւ արգարացում մայր-երկրի տընտեսական կարիքներով, չէր բնաւ հանդիսանում, իբրև արդիւնք Ռուսաստանի բնականոն զարգացման, նա չէր կարող նպաստել այդ երկրի, ժողովրդի հարստացման: Ընդհակառակը՝ շատ յաճախ նորանւաճ երկիրները դառնում էին մի աղբււր ծախքերի ու կորուստների, պահանջելով խոշոր բանակների ներկայութիւն:

Ախալ ու միակողմանի է այն հայեացքը, որ մի-միայն անտեսական-արդիւնաբերական խաղերի մէջ է տեսնում համաշխարհային ծաւալումների, մըրցումների ու բախումների պատճառը: Կայ մի այլ խոշոր պատճառ՝ մարդկային բնութեան մէջ խորա-

պէս արմատացած, որ կոչւում է նիշէեան բառբառով *der Wille Zur Macht*, «տիրապետութեան տենչ» (կամք իշխելու, տիրապետելու): Այդ դաժան բնագործ է, որ այնքան հզօրապէս շեշտել է Մակեդոնացու, Կեսարի, Բօնապարտի և բոլոր նմանների աշխարհակալական յղացումների ու աշխարհասասան գործերի մէջ:

Երբ ցարերը Պետրոս Ա-ի օրերից ի վեր կատաղաբար ձգտում էին դէպի ազատ ծովը ու ովկիանը, երբ նրանք աւազուտ ու արևակէզ անապատներով դիմում էին դէպի Ասիոյ կենտրոնները, դէպի Հնդկաստանն ու Հնդկական ովկիանը—նուս լուրժուագիտի շահագրիտական տենչերը չէին նրանց խթանն ու ղեկավարը: Այդ տենչերը շատ ուշ արթնացան Ռուսաստանի իշխող դասակարգերի մէջ: Գաղութային, «կօլօնիալ բաղաբականութիւնը» այնտեղ միայն վերջին տասնեակ տարիներու ծնունդ է: Հարկաւ, «աւարելու» և հարստանալու ախորժակները, ինչպէս նաև լայն, համաշխարհային առևտրի, փոխանակութեան ծարաւը միանգամայն օտար չէին ցարերի այդ դարաւոր ծաւալումի էութեանը, բայց նրա գլխաւոր ու գերակշռող մղիչն է եղել, ապահովաբար, նապօքէօնեան աշխարհակալութեան տենչը: Տէր ահագին ու արգաւանդ հողերի Եւրոպայում և Ասիայում՝ ցարերը այնուամենայնիւ նախանձով էին դիտում արևմտեան պետութիւններէ, Անգլիայի, Ֆրանսիայի և նոյնիսկ աւելի մանր երկիրների, Սպանիայի, Պորտուգալիայի, Հօլլանդիայի ծովային տիրապետութիւնը և նրանց համարը աշխարհի այլևայլ բեռներում:

Դէպի ազատ ծով: Դեռ Թուսաստանը գոյութիւն չուներ, դեռ կար միայն Սօսկովի մեծ իշխանութիւնը, երբ հնչում էր այդ կոչը: Ի վան Ահեղն էր, որ աւելց ազդանշանը, միացնելով Աստրախանը 1556 թւին. Պետրոս Մեծը ձայնակցեց նրան, գրաւելով Ազով ծովը 1695-ին: Կատարինէ II շարունակեց սկսւած վարելքը. հիմնելով Օդեսսան և և ծովի ափերին 1795-ին. և այն ժամանակներից ի վեր գրեթէ անդադար վա՛ր ու վար իջաւ ցարիզը, աչքերը յառած դէպի էական նպատակէտը, հասաւ Կ. Պոլսի գոները Ալեքսանդր II-ի օրով 1877-ին և գրաւեց Մերֆի ու Պամիրը Ալեքսանդր III-ի օրով 1892-ին: Երեք դար անընդհատ ու կորովի յառաջնադարութիւն դէպի հարաւ, դէպի ազատ ծով ու ովկիան... և և ծով, կասպից ծով, Արաբեան ծով անցան մին միւսի ետևից ցարիզի դրօշակի տակ, բայց նրանք չափազանց փոքրիկ էին Հիւսիսային Կոլոսի շարժումների համար. նրանց սահմանափակ հօրիզոններում խեղդուում էր Տիտանը. նրան պէտք էր ազա՛տ ծովը — Միջերկրականը, նրան պէտք էր Հնդկական ովկիանը:

Մի ամբողջ դար մահադական կովկասը պաշարեց նա — և յամառ, անդուլ ու արիւնոտ ճիգերով ի վերջոյ խորակեց Իսլամի այդ ահարկու միջնաբերդը (1859 թ.), որ դարձրեց այնուհետև պատերազմական գործողութիւնների մի նոր ու գերազանց խարխալ ընդդէմ միջին Ասիայի, Թիւրքիայի ու Պարսկաստանի: Ի՞նչ ժամանակ լեհաստանից մինչև Չինական սահմանները, Ալաշի բարձունքներից մինչև

Կարպատեան լանջերը ձգոււմ էր անհասնում շղթայի պէս իսլամականութեան վիթխարի պատնէշը. կիրգիզներ, կալմուկներ, Թաթար ու խազար, ստեպանակ միլիոնաւոր Թափառականներ, բոլորն էլ Իսլամի դրօշակակիր—կազմում էին այդ կենդանի ու զարհուրելի պատնէշը Ալաշից մինչև Կարպատներ: Ետևում՝ անջառած և անկախ, բայց միացած կրօնքի ու ուխտաւորութեան հազար ու մի կապերով՝ բուն էին դրած հաւատակից թիւրքմէները իրենց սրբազան վայրերի շուրջը—Խիվա, Բուխարա, Սամարղանդ—ապա կովկասեան ապառաժների ու կիրճերի մէջ, Գաղստանի անառիկ լեռներում թառած էին արիւնուշա չերքէզներն ու մոլեռանդ տաճկութիւնը ստամբուլեան խալիֆի հովանիի տակ... Եւ ի՛նչ չմնաց այդ ահարկու պատնէշներից, ամեն ինչ խորտակեց մօսկովեան նոր խաչակիրների սասանեցուցիչ գրոհի տակ:

Այդպէս էր ընթանում Կոլոսը: Ինչպէ՞ս չյուզէր Արևմուտքը և ինչպէ՞ս չզարկէր ահարկունակը... Քանի դեռ Անգլիոյ դէմ Ասիայի մէջ կային միայն զուտ տընտեսական բնոյթ ունեցող մրցումներ, բրիտանական կառավարութեան հոգը չէր. այդ հողի վրայ նա դիւրութեամբ կարող էր յաղթահարել մրցակիցներին: Այլ բան էր, սակայն, եթէ մէկը այդ մրցող պետութիւններից մի օր հաստատէր Ասիոյ մէկ մասի վրայ իր քաղաքական տիրապետութիւնը, որի առաջին գործը պիտի լինէր՝ դուրս մղել բրիտանական առևտուրն ու ճարտարարւեստը: Անգլիոյ համաշխարհային տիրապետութեան հիմքն է «բաց դուռերի» սկզբունքը:

Իսկ ռուսական աշխարհակալութիւնը „փակ դռների“ սիրահար է: Ահա թէ ինչու Ռուսաստանի ծաւալումը այնքան լուրջ մասհոգութիւն պատճառեց Լօնդօնի կառավարութեան: Վարմիր ծովի եզրները, արաբական թերակղզու, Պարսկաստանի, Բելուջիստանի ամբողջ կողը պէտք է պատկանէ Անգլիային. ոչ մի պետութիւն չպէտք է ունենայ նուահանգիստ, ապրանքի դուռ այդ վայրերում: Այլապէս՝ վտանգւած է Հնդկաստանը: Եթէ ռուս կառավարութիւնը ձեռք բերէր, օրինակ, Բենդեր-Աբրասը Պարսից ծոցում և միացներ այն Ռուսաստանին երկաթուղային գծով, Շահն Շահի երկրի վրայից, — դա արդէն կը խորտակէր Մեծ Բրիտանիոյ ասիական զօրութեան ամբողջ սիստեմը: (Ահա թէ ինչու Անգլիան թոյլ չուեց Կերմանիային՝ տանել Բաղդադի երկաթուղին մինչև Պարսից ծոց և գրաւել այնտեղ որևէ նուահանգիստ):

Մեծ Բրիտանիան, սարսափահար, դեռ անցեալ դարու առաջին կիսում, շտապեց մի կերպ ապահովել Հնդկաստանի անմիջական դուռը—Պարսկաստանը: (1834-ի համաձայնագրով երկու պետութիւնները յանձնառու էին լինում պահպանել այդ երկիրը իբր անկախ պետութիւն... Այսօր արդէն նոյն երկիրը քարշ է տալիս մի ֆիկտիվ ու հաշմանդամ գոյութիւն՝ նոյն երկու պետութիւնների հովանու տակ): Բայց Մօսկօյն արդէն գրաւել էր Պարսկահայաստանի մեծագոյն մասը, նեւսել էր սահմանը մինչև Արաքս, ուսկից մնում էր ընդամենը մի 1000 քիլօմետր մինչև հնդկական սահմանը:

„Ռուսական վտանգը“ մի կէտում վայրկենաբար

չքանալով, լոյս էր ընկնում մի այլ կէտում, աւելի ուժեղ և սպառնական: Պարսկաստանի ճամբու վրայ արգելքի հանդիպելով՝ նա ուղղեց դէպի Թուրքեստան: Այնտեղից մղում էր դէպի Աւղանիստան, դէպի այն վայրերը, ուր Մեծ Բրիտանիան վայելում էր դարաւոր հմայք ու ազդեցութիւն: Պանգ առաւ սակայն, բրիտանական ծնշման տակ: Հաստատուելով Հնդկաստանի սահմաններում՝ ռուսները եթէ անգամ չ'աջողէին կատարել խիզախ օստիւնը դէպի այդ երկիրը, յամենայն դէպս պիտի կարողանային սովորական ինտրիգներով խռովութիւններ ձգել նրա մէջ և անդարմանելիօրէն վտանգել բրիտանական պրեստիժն ու տիրապետութիւնը: Այդ հանգամանքն էր սաստիկ մատանջում Անգլիայի քաղաքագէտներին, որոնք դիւրին չէին համարում Հնդկաստանի նւաճումը ռուսների ձեռքով:

* *

Հասաւ, վերջապէս, 1853 թւականը, այնքան նշանակալի և վճռական՝ թէ՛ Ռուսաստանի, թէ՛ Թիւրքիայի ու Արեւելքի համար: Պարտութեան ու նահանջի թւականն էր խիզախ ու միշտ յաղթական Յիտանի համար: Եւրոպական մթնոլորտն արդէն տոգորւած էր ռազմի շշուկներով: Ամեն ոք զգում էր, որ ռուսական սրարշաւ գրոհը Արեւելքի ճամբու վրայ անպատիժ չպիտի անցնի և որ պատերազմը անխուսափելիօրէն պիտի պայթի „Ծովերի Թագուհու“ և „Հիւսիսային Կօլօսի“ միջև, կամ ինչպէս ասում են սիմբօլիկ տրտաշայտութեամբ՝ Կէտ ձկան ու Փղի միջև:

Պատերազմը, արդարև, պայթեց — Ղրիմի արևելահեղ պատերազմը, ուր «Փիղը» երկար ժամանակ քոթոթներէ հետ յաղթականօրէն պատերազմելուց յետոյ, առաջին անգամը չափուում էր մեծ, կազմակերպած բանակների հետ: Կուսակնձորը Թիւրքիան էր, որին ցարիզմը պատարասուում էր հասցնել վճռական հարւածը:

1853 թ. յունւար 9-ին Պետերբուրգի մի երեկոյթի մէջ, Նիկոլայ I կայսրը մօտեցաւ անգլիական դեսպանին և ասաց նրան հետևեալը.

«Tenez, nous avons sur le bras un homme malade, un homme très malade: ce serait, je vous le dis franchement, un grand malheur, si, un de ces jours, il devait nous échapper, surtout avant que toutes les dispositions nécessaires fussent prises».

«Մենք ունինք մեր ձեռքերի վրայ մի հիւանդ մարդ, մի շատ հիւանդ մարդ: Անկեղծօրէն ասում եմ ձեզ, մեծ դժբախտութիւն կը լինի, եթէ նա այս օրերս խուսափելու լինի մեզնից, մանաւանդ նախ քան բոլոր անհրաժեշտ կարգադրութիւններին ձեռնարկելը»:

Մի քանի օր յետոյ, կայսրը նոյն դեսպանի հետ զրուցելով, աւելի է որոշում իր ցանկութիւնը.

«Դուք գիտէք մեր Վատարինէ I-ի երազներն ու ծրագիրները: Նրանք սերնդէ սերունդ հասել են մեր օրերին: Մեզնից շատ մօտիկ գտնուում է Թիւրքիան: Այդ կայսրութեան մէջ կան մի քանի միլիօն բրիտանացիներ, որոնց շահերի վրայ ես հսկելու պարտաւորութիւն ունիմ... Այժմ Թիւրքիան, աստիճանաբար ընկնելով, հասել է այնպիսի զառամութեան, որ, ինչպէս ասացի Ձեզ մի քանի օր առաջ — որքան էլ մենք տրամադիր լինենք երկարելու նրա գոյութիւնը — նա կարող է մեռնել յան-

կարծ և մնալ մեր թուերի վրայ: Մենք չենք կարող յարութիւն տալ մեռելներին... Ահա թէ ինչու ես հարց եմ տալիս Ձեզ. աւելի լաւ չէ՞ արդեօք միջոցներ ձեռք առնել մի այդպիսի անցքի հանդէպ, քան թէ մասնւել քասօսի, շփոթութեան և եւրոպական պատերազմի ստոյգ վտանգին... Ես կուզեմ խօսել Ձեզ հետ, որպէս բարեկամ և ջէնտրմէն: Եթէ Անգլիան և ես համաձայնութեան գանք այդ խնդրի առթիւ, մնացած պետութիւնները քիչ կը հետաքրքրեն ինձ... Ես անկեղծօրէն և որոշապէս ասում եմ Ձեզ, որ եթէ Անգլիան միտք ունի երբեիցէ հաստատուելու Կ. Պօլսում, ես այդ չեմ հանդուրժի... Ես ինքս կը պարտաւորեմ հաստատուել այնտեղ միմիայն ժամանակաւորապէս»:

Անգլիական դեսպանը, յուզւած, անմիջապէս տեղեկագրում է այդ զրոյցը իր կառավարութեան և իր կողմից աւելացնում է.

«Երբ մի վեհապետ այդքան յամառութեամբ պնդում է մի դրացի պետութեան անխուսափելի անկման վրայ, աւարակոյս չկայ, որ նա իր մտքում որոշել է այլ ևս չսպասել այդ պետութեան քայքայումին, այլ ինքն իսկ յարուցանել այդ քայքայումը: Նիկոլայ կայսրի նպատակն է՝ ձեռնարկել Թիւրքիոյ բաժանման Լօնդօնի ու Վիեննայի հետ միասին, դուրս թողնելով Քրանսիան»:

Աւելի ուշագրաւ են Նիկոլայ I-ի հետևեալ խօսքերը.

«Իս չեմ ուզում, որ Կ. Պօլսը երբեիցէ գրաւէ Անգլիան, ոչ էլ Քրանսիան, ոչ էլ ուկէ այլ մեծ պետութիւն: Ես երբէք չեմ թող տայ նաև, որ փորձեն վերականգնել մի Բիւզանդական կայսրութիւն և կամ որ Յունաստանը ընդլայնի իր սահմաններն ու գառնայ

հզօր պետութիւն: Եւս առաւել չեմ կարող հանդուրժել, որ Թիւրքիան բաժնւի փոքրիկ հանրապետութիւնների, որոնք ապաստան կը դառնան կոչուսների, Մաձիսիների ու Էւրոպայի այլ յեղափոխականների համար *) ..

Ցարը առաջարկում էր Անգլիային գրաւել Եգիպտոսն ու Կրեաէն, իսկ իրեն վերապահում էր հովանանաւորութիւնը Մօլդաւ-Վալախիայի, Սերբիայի ու Բուլգարիայի վրայ և ժամանակաւոր գրաւումը Կ. Պօլսի:

Ակզբից իսկ Լօնդօնի կառավարութիւնը վճռական դիրք բռնեց: Կա յայտարարեց Նիկօլայ կայսրին, որ մերժում է Թիւրքիոյ բաժանման առաջարկը և որ Անգլիան չի թող առ գրաւել Պօլիսը:

Կացութիւնը միշտ աւելի և աւելի լարելով՝ հասցրեց ընդհարումի: Կապօլէօն ||| միացաւ Անգլիային՝ Թիւրքիոյ ամբողջութիւնը պաշտպանելու համար: Երկու դաշնակիցները պահանջեցին ցարից հեռացնել ռուսաց զօրքը Մօլդաւ-Վալախիայից և մերժումի հանդիպելով, յայտարարեցին պատերազմ: Թիւրքիան հրաւիրւած էր աջակցել դաշնակիցներին: Կապօլէօն ||| թելադրեց ռաքի հանել կովկասն ու Լեհաստանը: Անգլիան աւելի նպատակաւորմար տեսաւ արշաւել Ղրիմի վրայ. միացեալ նաւատորմերը գրոհ տւին Սեվաստապօլի դէմ: Յեղը չէ պատմելու մոնրամասները այդ աւերիչ պարեմազմի, որ այնքան սուղ նստեց արեւմտեան դաշնակիցներին և նետեց ռուս կայսրութիւնը մի արհաւիրի սագնապի մէջ:

*) Djurava, Cent projets de Partage de la Turquie.

Գումարեց Պարիզի նշանաւոր վեհաժողովը (1856 թ.), գրեթէ բոլոր պետութիւնների մասնակցութեամբ: Կա պէտք է հարձեր միանգամ ընդմիշտ Արեւելեան Խնդրի կնճիռները: Ամենից առաջ հռչակեց Թիւրքիոյ ամբողջութեան դօգմը և պետութիւնները յանձնառու եղան երբէք չմիջամտել Թիւրքական գործերին: Եւ ծովը յայտարարեց չէզոք և ոչ մի պետութիւն, ոչ իսկ Ռուսաստանը, չպիտի պահէր այնտեղ զինարաններ ու զրահանաւեր: Մօլդաւ-Վալախիան դարձաւ ավստօսմ, ինքնավար երկիր: Թիւրքիան ցնծում էր: Կա հանդիսաւոր կերպով ընդունում էր մեծ պետութիւնների շարքը, մինչ աւանդական, երդւեալ Ոսոխը յետ էր նահանջում պարտւած, յուստխարձ՝ քաղաքակիրթ պետութիւնների ներդաշնակ գրոհի տակ: Իբրև հատուցում, սուլթանը առաջագրում էր իր փրկիչ քրիստոնեայ պետութիւններին մի նոր Խաւատը Հումայիւն, որով յանձնառու էր լինում բարեւաւել իր հպատակ քրիստոնեաների վիճակը, «հաւասարեցնել» քրիստոնեայ և մահմեդական հպատակներին ..

Երկար չտւեց զիւանագիտութեան այդ արեւստական կառուցւածքը: Կենդանի Գիակը իր Թունաւորիչ ու մահացնող ազդեցութիւններով միշտ նորանոր առիթներ էր ընծայում արտաքին միջամտութիւնների համար: Քրիստոնեաների կացութիւնը աւելի ևս վատթարացաւ Ղրիմի պատերազմից յետոյ: 1860-ին պայթեց Լիբանանի կոտորածը: Կաթօլիկ մարօնիտների մասսային բնաջնջումը հարկադրեց Գրանտիային միջամտել և ազատութիւն նւաճել Լիբանանի համար: Պարիզի դաշնագիրը

և օսմանեան ամբողջութեան դօգմը խախաւում էին այդպիսով: 1866-ին բռնկւեց Կրետէի պատամարտութիւնը և որովհետև բրիտանեայ պետութիւններէց ոչ որ չմիջամտեց, շարժումը խեղդուեց գազանաբար: 1875-ին տեղի ունեցան բուլղարական ջարդերը...

„Մօսկօվը“ հսկում էր ու հետապնդում: Նա յետ էր նահանջել Ղրիմից ատամները կրճատացնելով և պատեհ առիթ էր փնտրում վերստին գահափոխելու իր որսի վրայ: Պատերազմը անթիւ չարիքների հետ՝ բերեց Ռուսաստանին և անհուն բարիք: Նա գիտակցեց իր ախաւոր կողմերը, իր երկրի, բանակի յետամնաց վիճակը և վճռականապէս մտաւ բարենորոգման, եւրոպանացման ճանապարհը: Շտկեց արագութեամբ իր քայքայած օրգանիզմը և նոր, թարմ ուժերով յորձանք տւեց Հարաւի ու Արևելքի մահմեդականութեան դէմ: Ղրիմից յետոյ էր, որ ցարիզմը վերջնականապէս նւաճեց Կովկասը:

Status quo-ն, „օսմանեան ամբողջութիւնը“ մի ողբալի պատրանք էր: Նա դեռ երկար պիտի տրորէր ռուսական սանդալների տակ: 1877-ին Մօսկօվը նորէն ծառայաւ Կիսայրուսնի դէմ և այս անգամ ահարկու սպառնալիքի պէս ցցւեց Պոլսոյ դռներին: Նորէն ահազանգ լօնդօնում, ամբողջ Եւրոպայում, նորէն բրիտանական սպառազինում հիւսիսային Ախոյեանի դէմ: Փոքր ինչ տարբեր էր մթնոլորտը: Բուլղարական սարսափները ցասման որոտ էին յարուցել Արևմուտքում և Գլադստօն ահեղ ոճով խարանել էր թիւրքերին, ան-

ւանել էր նրանց „*anti-human specimen of humanity*“ (մարդկութեան հակամարդկային անսակը):

Անգլիոյ կառավարութիւնը, սակայն, այլևս Գլադստօնի ձեռքը չէր—որ բարոզում էր դուրս քշել թիւրքերին դէպի Ասիայի խորքերը—այլ նրա հռոմեայի՝ Գիզրայէլիի (չորդ Բիկօնսֆիլդ): Բրիտանական իմպերալիզմի ու ծաւալումի համոզած ուսմիտայ և մոլեռանդ պաշտպան թիւրքիոյ ամբողջութեան՝ այդ հրէազգի դիպլոմատը խորին անհանգստութեամբ էր դիտում Ռուսիոյ նոր յաւաքխաղացութիւնը արևելեան թատերաբեմի վրայ: Ասիական թիւրքիոյ մէջ ռուսաց զօրքը Լօրիս-Մէլիքօվի առաջնորդութեամբ, յաղթանակից—յաղթանակ հասել էր մինչև Էրզրում, իսկ եւրոպական թիւրքիայում՝ Ռուսաստանը ազատագրել էր բալկանեան ջեղակիցներին և նոյն յաղթական թափորով հասել էր Սան-Ստեֆանօ, ուսկից սպառնում էր Կ. Պօլսին: Վայրկեանը հանդիսաւոր էր և յուզիչ: Պետրոսեան Կատկի, Ռուսաստանի դարաւոր քաղաքականութեան կենտրոնական անչանքը մօտ էր իրականացման: Սան-Ստեֆանօի դաշնագրով Ռուսաստանը պահանջում ու ստանում էր—անկախութիւն Ռումանիայի, Սերբիոյ ու Մօնտենեգրօի, անկախութիւն Բուլղարիայի, ավտօնօմիա Բօսնիայի համար: Ռուսաց զօրքը պատրաստուում էր գրաւելու Պօլիսը:

Լօրդ Բիկօնսֆիլդի դահլիճը որոշեց կանգնեցնել ցարիզմի աշխարհակալող ձեռքը: Անգլիական նաւատորմը մտաւ Դարդանէլ, հակառակ սուլթանի բողոքին: Ռուսաստանն զգաց, որ հասել է Կէտի ու Փղի նոր ու խօշական ընդհարման ժամը և տեղի տւեց, երկու կա-

ուսկարուծիւնները ընդհանուր համաձայնութեամբ որոշեցին յանձնել վիճելի բոլոր խնդիրները համաեւրոպական մի արեօպագի: Եւ գումարեաց շուտով Բերլինի Վեհաժողովը, որ ինչպէս տեսանք, յեղաշրջման ենթարկեց Սան-Ստեֆանօի դաշնագիրը: Եւրեւ հակակշիռ Ռուսաստանի ասիական նւաճումների՝ Անգլիան կապեց գաղտնի դաշնագրութիւն սուլթանի հետ, որով յանձնառու էր լինում այնուհետև պաշտպանել Ասիական թիւրքիոյ ամբողջութիւնը: Եւ—ինչպէս 1856-ին, Պարիզի կոնգրէսում—այդտեղ ևս, Վիպրոսի հռչակաւոր և արիւնոտ համաձայնագրի մէջ՝ Նենգաւոր Ալբիոնը «պարտադրեց» սուլթանին մտցնել անհրաժեշտ բարենորոգումներ Ասիական թիւրքիոյ քրիստոնեաների վիճակի մէջ:

Սակայն, ինչպէս Պարիզի դաշնագիրն էր մեռած ասու մնացել, նոյնպէս և Վիպրոսեան համաձայնագիրը մնաց ասանց որևէ բարերար հետևանքի՝ թիւրքահայ ազգաբնակչութեան ճակատագրի վրայ: Ընդհակառակը, Դուռը, քաջալերւած անգլիական հզօր հովանաւորութեամբ, այնուհետև աւելի ևս մղում տւեց թալանի ու արեան քաղաքականութեան՝ Հայաստանի մէջ:

Երկրորդ անգամը թիւրքիան իր բարբարոս, անորակելի ուժեղմով ազատուում էր ստոյգ մահից, շնորհիւ Մեծ Բրիտանիայի աջակցութեան: Վիպրոսը դարձաւ գերեզմանը հայ ուժօրմների: Անգլիան — մանաւանդ Վիզրայէլի վարչութեան օրով—միանգամայն ազատ զգաց ամեն պարտաւորութիւնից հանդէպ հայութեան. ինքը ոչինչ չձեռնարկելով հայ երկրի լուրջ բարենորոգման

համար, նա միւս կողմից, Վիպրոսեան դաշնագրով, արգելք էր դնում ուրիշների միջամտութեան առջև, ապահովում ու սրբագործում էր Ասիական թիւրքիոյ ամբողջութիւնը: Ալբիոնի այդ պատմական դաւաճանութիւնը ուժեղ ոճով նշաւակեց յետագայում բուն իսկ անգլիացիների կողմից, մասնաւորապէս Արգայլեան դքսի «Our Responsibilities for Turkey» աշխատութեան մէջ: Հանրային կարծիքն ու կառավարութիւնը սթափուեցին, խղճի խայթ ունեցան: Ինքը նոյնիսկ պահպանողական կառավարութեան ներկայացուցիչը, լօրդ Սօլսբերի որոտաց, սպառնաց սուլթանին, փորձեց վերջապէս դիմել ճնշողական միջոցների, փորձեց այդ առթիւ համաձայնութեան գալ Ռուսաստանի հետ, բայց այժ էլ Ռուսաստանն էր — դերերի մի չարաշուք փոփոխութեամբ—մերժում ճնշողական միջոցները և պահանջում հանգիստ թողնել սուլթանին... Միւս պետութիւններն էլ հաշիւ չէին այլ ևս եւրոպական արեօպագում: Քրանսիան, որ ուներ ազատագրական աւանդութիւններ Արևելքում, սարսափելի ջարդ էր կրել 1870-ի պատերազմի մէջ, նրա հմայքը ընկել էր օսմանեան աշխարհում և նրա տեղ այնուհետև բարձրանում էր աստիճանաբար Տէտօնեան աստղը, մի նոր նեցուկ յաւիտենական Դիակին, մի նոր ոսոխ բազմաչար «ուսյա» ի համար...

Իսկ Ռուսաստանը... Եթէ ցարիզմը նոյնիսկ կամենար Բերլինի կոնգրէսից յետոյ, 80-ական թւականների մույլ ու արհաւիրտ շրջանում, ազդուօրէն միջամտել Հայաստանի մէջ, նա պիտի հանդիպէր նոյն անգլիական

rolle-ին, նոյն կիրոսեան դաշնագրութեան յօրինած արգելքներին: Իրողութիւնը, սակայն, այն է՝ որ Ռուսաստանն այնուհետև այլ ևս չէր կամենում միջամտել ի նպաստ հայոց, չէր հետաքրքրուում հայոց հարցով:

Ռուսական քաղաքականութեան մէջ տեղի ունեցաւ մի բեկանում, մի սարսափելի *rolle-face*, որ պիտի ունենար անհաշիւ ու ազէտաւոր անդրադարձումներ հայկական ճակատագրի վրայ:

Մերձաւոր Արևելքից — ուր ամեն բայլափոխում սպառնական ցցում էր նրա առջև Մեծ Բրիտանիայի մտրակը — նա կամաց-կամաց ուղղեց իր ուշադրութիւնը դէպր հեռաւոր Արևելք: Եւ — որ գուցէ ամենէն ծանրակշիռն է — փոխեց Ալէքսանդր III-ի գահակալութեամբ՝ երկրի ներքին քաղաքականութիւնը, որի հետ միշտ սերտօրէն կապած է արտաքինը: Չբացան Լորիս-Մէլիքովեան սահմանադրական հոփերը, չքացաւ կովկասեան փոխարքայութեան հրապուրիչ շրջանը, երբ նա այնքան, համեմատաբար, լաւ էր արամադրուած դէպի հայկական դատը կովկասում, թէ Թիւրքիայում.. Նոր վեհապետը, իր ծնողի չարաչար սպանումից յետոյ (1881-ին, յեղափոխականների ձեռքով) սարսափահար և մոլեգնած երես դարձրեց նախորդ ուժի մի քանի լուսաւոր, ազատական արտայայտութիւններից և անողորպատեբրազմ հրատարակելով յեղափոխութեան դէմ, սկսեց հալածել նաև բոլոր այլացեղ ու այլադաւան, ոչ-ռուս ազգերին, իբրև նոյնպէս յեղափոխական և թշնամի ռուս „ուղղափառ պետութեան“ հանդէպ:

Լորիս-Մէլիքովին յաջորդեց Պօբեդոնոսցեւ — Ս. Սինօգի դաժան նախագահը և նոր կայսեր դաստիարակիչը — յաջորդեց, իբրև անպաշտօն վարիչ լայնածաւալ կայսրութեան ճակատագրի: Իւ առաջին օրերից խկ դրեց ներքին քաղաքականութեան վրայ իր հզօր ու բռնաւոր դրոշմը, մղեց վերստին ամբողջ Ռուսաստանը դէպի Նիկոլայ I-ի զարհուրելի, մահաշունչ օրերը, վերահաստատեց միահեծան բռնապետութիւնը իր բացարձակ, ասիական, ազատասպան ձևով:

Հալածանք՝ ամեն տեսակ ազատական, արևմտեան գաղափարների դէմ, հալածանք նաև ազգային ինքնուրոյնութեան ամենահամեստ բաղձանքների դէմ.. Լեհերի, ֆինների, լատիշների, մօլօրօսների ու այլ բազմաթիւ տարրերի հետ՝ հայ տարրն ևս դուրեց օրէնքից դուրս, մասնեց բացառիկ օրէնքների, իբրև „անբարեյոյս“, վտանգաւոր՝ ներկայում կամ ապագայում: Իւ կարելի է ասել — ամենից աւելի կատաղութեամբ պօբեդոնօսցեւեան ուժի մը ժալթքեց իր թօյնը փոքրիկ, անպաշտպան հայութեան վրայ, որ այնքան ակնկալութիւններ ունէր քրիստոնեայ ցարիզմից, փոխան իր գարաւոր ծառայութիւնների *).. Ասես Պետերբուրգի հզօր կամայապետը ցասումով վրէժ էր տունում կովկասեան փոքրիկ համայնքից այն „անբաւ չարիքների“ համար, որ հասցրել էր Ռուսաստանին Ղարսի Հիւրոսը, „սահմանադրական զառանցանքների“ առաջին խիզախ

*) Տես Հայկական շարժման Նախապատմութիւն, Հատոր I, էջ. 187—228:

կիրարկողը Ռոուսաստանում, «նոր հովերի» ու «նոր վարչական մեթոդների» հեղինակաւոր ազգարարը — Լօրիս-Մէլիքով...

Այսպէս թէ այնպէս՝ միջնադարեան օբսկուրանտիզմի և ասիական բռնակալութեան մի հողմ էր, որ փչեց կովկասեան հայութեան բոլոր ազգային հաստատութիւնների վրայ, և որ աստիճանաբար սաստկանալով, ի վերջոյ իսպառ անդամալուծեց ազգային ինքնուրոյնութեան բոլոր օրգանները՝ դպրոց, եկեղեցի, բարեգործական, հրատարակչական ընկերութիւններ և այլն: Պասկեւիչի օրերն էին վերագառնում... Այն ժամանակ՝ ցարիզմը հայ ժողովրդի զինւած, մասսային աջակցութեամբ նւաճել էր Պարսկահայաստանի մեծագոյն մասը և ի տեղի որոշ իրաւունքներ տալու այդ ժողովրդին, սեղմել էր նրան Երկգլխեան Արծաւ ճիրաններում. այս անգամ էլ՝ հայազգի մի շարք գեներալների ու ռազմագէտների հրամանատարութեամբ և ռուսահայ ու թիւրքահայ ժողովուրդների աջակցութեամբ մղել էր նագոռ, յաղթական պատերազմներ Ցաճկաստանում և հայկական վայրերին տիրելուց յետոյ՝ դարձեալ թողնում էր հայ ժողովուրդը երեսի վրայ... աւելի ևս՝ մատնում էր նրան իր խաւարակուռ և ազգահալած ուժի մի հարւածներին: Դաւաճանութիւն այն ժամանակ, դաւաճանութիւն — և այս անգամ:

«Հայը յանցաւոր է, անբարեյոյս — ոչ միայն կովկասում, այլ և Թիւրքիայում և ամեն տեղ»... Այսպէս տրամաբանեց պօթեղօնօսցեպետան նոր կուրսը: «Յանցաւոր էր նա և վտանգաւոր կայսրութեան ամբողջութեան

համար», բանի որ աճում էր հետզհետէ, իբրև իմացական, ինքնագիտակ ազգայնութիւն, բանի որ արտագրում էր իր միջից մարի և զինու հանձարներ, բանի որ կարող էր մի օր թերևս ստեղծել կովկասեան սահմանների վրայ մի նոր «գաւաճան» պետութիւն, նման Բուլղարիային, — այն Բուլղարիային, որ ազատագրել էր ցարիզմը, բայց որը չէր կամենում կուլ գնալ իր ազատարարի աշխարհակալող ախորժակներին, այլ մնում էր խորապէս նախանձախնդիր իր անկախութեան:

Եւ ահա երբ հնչեց Ցաճկահայաստանից տանջող հայութեան խուլ մրմունջը, երբ միջազգային դիւանագիտութիւնը վերստին հրապարակ նետեց հայոց հարցը Պետերբուրգը շտապեց յայտարարել իր նոր նշանաբանը.

— «Մենք չենք ուզում մի երկրորդ Բուլղարիա մեր սահմաններին կից»... Իսկ քիչ յետոյ հնչեց և լօբանօվեան ամարդի կարգախօսը.

— «Մենք կուզենք Հայաստանը առանց հայերի»: Խօսքեր՝ որոնք բացարձակ խրախոյս էին սուլթանի հայաջինջ բաղաբանութեան...

Այո. ցարիզմը — միշտ նոյն պետրոսեան կտակը շալակած — փորձել էր բալկանեան ազգերն ազատագրելով, կլանել նրանց, կամ թէ պահել իր մշտական ու անմիջական «հովանաւորութեան» տակ. նա կամեցել էր ստեղծել այդ նորանւաճ սլավոնական երկիրներից մի մի է տապ իր բողձալի ճանապարհի վրայ՝ դէպի Բօսֆօր ու աւելի հեռուն, բայց նա շուտով յուսախաբ եղաւ. ազատագրւած ձագուկները, թէև համակւած

երևադրուածեան ամենաբունն զգացումներով դէպի իրենց դայեակը, չ'ուզեցին նրա փոքր ինչ ճնշող խնամակալութիւնը և գերադասեցին ապրել անկախ ու ազատ, սահմանադրական կեանքով: Եւ բալկանեան երկիրների այդ ըմբոստութիւնը ոուսական յաւակնութիւնների հանդէպ՝ շեշտեց միշտ աւելի և աւելի:

Ռուս կառավարութիւնը ոչ միայն այլևս չ'ուզեց ստեղծել իր սահմաններին կից ինքնավար երկիրներ, այլ նա սկսեց մի նոր բողոքականութիւն օսմանեան Արևելքում: Նա վճռեց պաշտպանել Յաճկաստանի ամբողջութիւնը, սպասելով պատեհ ժամանակի, երբ կարող էր վերստին մեկնել իր թաթը և խել սուլթանների կայսրութիւններից համեղ պատառներ, թէկուզ հէնց թիւրքահայաստանը: Այդ նպատակի համար նրան ձեռնտու էր պահպանել թիւրքահայ գաւառներում մշտնջենական բաօս, մի յարատե անիշխանական վիճակ, որը կարող էր առիթ լինել շահաւետ միջամտութիւնների: Ռուս դիւանագիտութիւնը դարձաւ սուլթանի յջերմ բարեկամը՝, ձգտեց գրուել նրա վստահութիւնը և տարածել իր հովանին օսմանեան լայնածաւալ հողերի վրայ:

Սակայն—վրիպեց, Սիրաշահելու և հովանաւորելու այդ տակտիկը աջողեց մի այլ պետութեան, որ ձգտում էր վարպետորէն օգտագործել Ռուսաստանի վրիպումները: Այն ժամանակ, երբ ցարիզմը, յոգնած ու յուսահատ իր բօսֆօրեան դարաւոր ուղեորութիւնից ու խարխափումներից, աչքերը դարձրեց դէպի հեռաւոր Արևելք, դէպի աւելի հրապուրիչ Չինաստանը, Մանջուրիան, —

նրա դրացին, Գերմանիան, յամառ, անդուլ պայքարով դուրս մղեց աստիճանաբար Բօսֆօրից Ռուսաստանի երբեմն հզօր ու տիրական ազդեցութիւնը, չէզոքացրեց բոլոր մրցակից ուժերը, հմայեց թագաւոր Չարագործին և յղացաւ նոր ծրագիր՝ նեխած Կիակը վերականգանացնելու, թիւրք կայսրութեան ամբողջութիւնը փրկելու համար:

Այն էլ, սակայն, վրիպեց: Եւ այսօր Արևելեան Խնդիրը կանգուն է դեռ, նորանոր ցնցումների անվախճան հնարաւորութիւններով...

IX

ԵՐԻՑԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱ
ԵՒ
ՀԱՄԻՍԱՍՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

«Եր անսինի» էությունը.—Ազատության և հասարակական նշանակությունը՝ սոսկ դիմակ. — Ասկյուրից դեպի Երուսաղ. — Օգիստ Կոնստանդնուպոլսի առաջնորդներ.—Պանիսլավոնիկ՝ մեծ-քիւրական սեղծագործություն. — Լուսավորչի և արքայի ամեն զիտություն. — Միջին ասիայի և Օսեանի էվանջիլ. — Թիւրք հայրենասերների մանիֆեստ. — Պանսլավոնիկ դատարանի և Արքայի Ազգիկի սպանում. — Մուսուլմանական վրայ. — Համիլլոն՝ վարսապարի էսե. —

Մի անօրինակ տեսարան էր: Թիւրքիոյ յօշոտումն ու տարրալուծումը առաջ էր գնում, որպէս մի Փաստալ, ճակատագրական պրօցէս, որի հանդէպ Խալիֆն ու հաւատացեալները մէկ դարման միայն գիտէին — կոյր, մեքենական ու երամական դիմադրութիւն: «Հիւանդ մարդը» իրօք մի Լէշ էր, մի վիթխարի և զազրելի Լէշ, որ շարունակ ծւատում էր գիշակներնորից: Գրեթէ արդէն երկու դար էր, ինչ տեւում էր յօշոտման այդ գործողութիւնը, վարժւել էին Մահմեդի երկրպագու-

ները, ընտելացել էին, միանգամ ընդմիշտ համակերպել «ղսմէթ»ին, ճակատագրին՝ այն կոյր ու խորունկ Փաստալիզմով, որ ինչպէս տեսանք *), իսլամ մարդկութեան տիրական գիծն է: Բռնապետութիւնը — սանձարձակ, արիւնարբու — շղթայազերծում էր անդադար պատերազմներ ու զուլուճներ, առաջնորդում էր անդադար տասնեակ հազարաւոր մարդկանց դէպի սպանդանոց, աւերում էր երկիրը տնտեսապէս, ցանում ամենուրեք թշուառութիւն ու արտասուք — և մարդկային նախիրը տանում էր այդ բոլորը անմոռնչ զանգւածի պէս, մի սրտաշարժ համբերութեամբ հետեւում էր իր խելագար հրամանատարին, նետում էր ամենաուերիչ արկածների մէջ, միշտ նոյն բառերը շրթունքներին — «Փաղիշահըմ շօք եաշահ», առանց երբէք բողբոջու, գանգատելու, հեծեծալու... Այդպէս էր ոչ միայն ժողովուրդը... Նախիր էր և թիւրքական «հասարակութիւնը» և թիւրքական «մտաւորականութիւնը»:

Թիւրքիոյ գորշ, միակերպ, անապատական Փօնի վրայ — այնքան փոթորիկներից և աղէտներից յետոյ անգամ — չէին երևում հոսանքներ, չէին ծնում թէկուզ միայն մի քանի հզօր, ազդեցիկ անհատներ, որոնք զինւած ժամանակի քաղաքակրթութեան զէնքերով, մաքառէին կործանարար ուժերի դէմ, ամրապնդէին Տաճկաստանը ներքուստ, հաստատէին մարդավայել ուժեղ և փրկէին գահավիժող պետութիւնը:

«Անհատները» երևացին, վերջապէս, առաջ եկաւ և

*) Հայկ. Շարժ. Նախապ., հատոր 1:

մի ամբողջ հոսանք — այսպէս կոչւած «Երիտասարդ Թիւրքիան» — բայց նա շինւած էր նոյն խմորից, շնչաւորւած էր նոյն գաղափարով, որը կազմում էր բուն էութիւնը պառաւ, զառամեալ Թիւրքիայի, նա եկել էր փրկելու հայրենիքը, մտցնելով այն եւրոպական քաղաքակրթութեան աւազանի մէջ, նա հրապարակ էր գալիս ազատութեան ու հաւասարութեան նշանաբաններով, բայց իրօք կռիւ էր յայտարարում Եւրոպային, ընդդիմադրելով իսլամութիւնը քրիստոնէութեան, Ղուրանը Աւետարանին. նա գալիս էր բարձրաձայն պահանջելու, որ այլևս ոչ մի զիջում չ'արի «գիւղուրներին», որ եւրոպացիք հեռացւին երկրի վարչութիւնից, ոչնչացւին Թանգիմաթն ու բոլոր նման պայմանագրերը.. Լցւած թիւրքական գոռոզ ու տարամբոժ հայրենասիրութեամբ, սիրահարւած մանուաւնդ Ղուրանի վրայ՝ նա պահանջում էր, որ Թիւրքիան վերականգնի մեն մենակ, իր սեփական ուժերով, առանց Եւրոպայի աջակցութեան.. Փոխ առնելով արեւմտեան լոզունգները, վերցնելով պատճէնը եւրոպական ազգերի սահմանադրութեան, «նոր Թիւրքերը» ուզում էին միայն դարձնել նրանցից կ ու ի գ ո Ր ծ ի ք ընդդէմ նոյն Եւրոպայի և յարատեւել Թիւրք տարրի հեգեմոնեան՝ իրաւազուրկ «սայեա» ի վրայ.. Վերջապէս, «նոր հոսանքը» բեմ էր նեւաւում համիլաժութեան ռազմաշունչ նշանաբանով, սոգորւած նոյն բնագոյնի ատելութեամբ դէպի «գիւղուրը», որոշած՝ համախմբել մեկ դրօշի տակ բոլոր իսլամ ցեղերը, անողոր կռիւ մղել քրիստոնեայ աշխարհի դէմ և վերագարձնել Իսլամին իր կորուսած հողերը..

Ահա «Երիտասարդ Թիւրքիայի» հաւաքատ պատկերը՝ անցեալում, ներկայում, ուպագայում: Եւ ի՞նչ զարմանք... Յեղը ձուլ է հաւատարիմ իր դարաւոր կոչումին, իր սրբազան աւանդներին. նա չի կարող սովորական ազգերի պէս ստեղծագործել խաղաղ, քաղաքակիրթ Համայնակենցազ, հողերի սւ արհեստների մշակումով, նիւթական ու մտաւոր առաջադիմութեամբ. նա չի կարող կառավարել ոչ-իսլամ ազգութիւնները հաւասարութեան ռէժիմի տակ, չի կարող հրաժեշտ տալ Ղուրանի ու Շերիի սրբազնագոյն պատւիրաններից. նա անզօր է յղանալու ներքին վերանորոգման ճշմարիտ ու փրկարար ծրագիրներ, նա պէտք է միշտ տիրէ, հրամայէ, պատերազմէ... Դարեր առաջ հողմի պէս սլանում էր երկրէ երկիր, Մարգարէի դրօշը ծածանելով և գիւղուր ժողովուրդներ ստրկացնելով ու սրորելով յանուն կրօնի, Ղուրանի... Նոյն չարաշուք հանճարը ապրում է դեռ Օսմանի հեռաւոր յետնորդների մէջ — երիտասարդ թէ պառաւ: Եւ աննօրմալ ոչինչ չկայ, որ «նոր Թիւրքիոյ» ռահվիրաներն ևս հանգէս եկան ոչ թէ իրօք քաղաքական ու քաղաքացիական ազատութեան, այլ սոսկ միայն կրօնական, ղուրանական նշանակի տակ:

Երիտասարդ Թիւրք կուսակցութիւնը ծնունդ է առել անցեալ դարու 60-ական թւականներին: Սկզբում մի աննշան խմբակ էր, ապա հետզհետէ — գլխաւորապէս մայրաքաղաքում ու արտասահմանում — անց դժգոհների այդ խումբը, իր վրայ կենտրոնացնելով կառավարութեան ու Եւրոպայի ուշագրութիւնը: Ազա-

սամիտ էին «երիտասարդները», նրանք սիրով իրենք զիրենք հռչակում էին արևմտեան լիբերալիզմի ջերմ կողմնակիցներ, մինչև իսկ իրենց գաղտնի օրգանի մէջ— «Իբրեւ» անունով— պաշտպանում էին 1871-ի պարիզեան «կոմունան», Արեւուտքի ամենածայրայեղ, կոմունիստական հոսանքը. փիլիսոփայութեան ու սօցիալ-լոգիայի մէջ նրանց մտաւոր առաջնորդները Օգիւստ Կօնտի հետևող էին, պօզիտիւզիստ, դրապաշտ, խանդավառ ջատագով կօնտեան յայանի նշանաբանի— «*Ordre et Progrès*», «կարգ և Առաջադիմութիւն»:

կուսակցութեան յետագայ էւօլիսիօնը ցոյց տւեց, սակայն, որ նոր Թիւրքիոյ իդէօլօգները, անգամ ամենէն հեղինակաւորները, չունէին պարզ հասկացողութիւն ոչ կօնտիզմի ու պօզիտիւզիզմի, ոչ էլ եւրոպական լիբերալիզմի էութեան մասին: Փիլիսոփայական-ընկերաբանական ֆրագէօլօգիան մի սոսկ շպար էր, մի դիմակ, որի տակ թագնւած էր սովորական թիւրք մասնութիւնը: Երիտասարդները ոչ նւազ թիւրք-ֆանատիկոսներ էին, քան ծերերը: Նրանց մատանջութեան ու դժգոհութեան պատճառը ոչ այնքան օսմանեան սանձարձակ բռնակալութիւնն էր, որքան արտաքին, եւրոպական միջամտութիւնները և հայրենիքի անգամահատումը: Չլինէր եւրոպան իր յաւիտենական միջամտութիւններով, իր հարկադրած կապիտալիստիօններով ու թանգիմաթներով, չլինէր «*Մօսկօվը*» իր յարաճուն սպառնալիքներով ու արշաւներով, չլինէր օսմանեան կայսրութիւնը անկախ, ազատ այդ արտաքին, նւաստացուցիչ միջամտութիւններից ու խնամակալութիւնից — անկախ, ազատ,

թէկուզ և ներքին ախտավարակ, գարշատիպ, բռնապետական մի վարչութեամբ— հազիւ թէ «երիտասարդ Թիւրքիան» ծնունդ առնէր 60-ական, 70-ական թւականներին, իր «ազատութեան ու հաւասարութեան» դաւանանքով:

Այդ դաւանանքը, տարաբախտաբար, կեղծ էր հիմնականապէս, կեղծ էին «երիտասարդների» բոլոր ազդարարութիւնները ճշմարիտ պարլամենտարիզմի և իսլամի ու բրիտանեայի ճշմարիտ իրաւահաւասարութեան մասին:

Թիւրքիան, իրաւ է, Արդիւլ Ազիզի թագաւորութեան օրով ներքին սոսկալի ճգնաժամ էր ապրում, երկրի ընդհանուր կացութիւնը և մանաւանդ ֆինանսների անօրինակ աւերածն ու սնանկութիւնը յարուցել էին համատարած դժգոհութիւն: Բայց Արդիւլ-Ազիզի կառավարութիւնը ատելի էր երիտասարդ թիւրքերին ոչ այնքան իր այդ ներքին աւերածով, այլ աւելի իր թուլութեամբ, զիջողութեամբ գէպի Եւրոպան, Ռուսաստանը, գէպի «գիւլուրը»: Եւ նրանք վճռեցին տապալել իշխող սուլթանին, գահ բարձրացնել նրա եղբայր Մուրադին, որ համարուում էր Ռուսիոյ թշնամի և կողմնակից Անգլիայի, այն Անգլիայի, որը ինչպէս տեսանք, մի բանի անգամ փրկել էր Թիւրքիան վերջնական անկումից. նրանք բարոզում էին ուժեղացնել Տաճկաստանը, աճեցնել նրա զինուորական— ոչ, ի հարկէ, ներքին կուլտուրական, արդիւնաբերական— կարողութիւնները, որպէս զի ի վերջոյ հնարաւոր լինէր կանգնեցնել թիւրքութիւնը, Իսլամը, իբրև յաղթական, անխորտակելի մի պատնէշ ընդդէմ արշաւող բրիտանեանութեան...

Պանիսլամիզմը էապէս ժէօն-թիւրքական ստեղծագործութիւն է: Մէկը «երիտասարդներից» 1875-ին Տրատարական իր բրօշուրի մէջ — «Իսլամի միութիւնը» կորագրով — քարոզելով երկրագնդի հարիւր միլիօնաւոր մահմեդականներին համախմբել մէկ դրօշի տակ, ձեռնարկում էր արագուցել, որ իսլամը գերագոյն աղբիւրն է ամեն գիտութեան ու բարեկրթութեան և որ նրանից դուրս՝ իշխում է միայն ագիտութիւնն ու բարբարոսութիւնը *): Բայց Արդիւ Համիդն է, որ պիտի դառնայ յետագայում պանիսլամիզմի զօրեղ կուռնը: Նա էր, որ պիտի զրկէր հարիւրաւոր շէյխեր ու ագիտատօրներ դէպի մուսուլման երկիրները՝ Եգիպտոս, Հնդկաստան, Մարօկ, Տունիս, Ալժիր, Վոլկաս, քարոզելու և հրահրելու միլիօնաւոր հաւատացեալներին՝ համախմբել, կենտրոնանալ իսլամի և ստամբուլեան միակ խալիֆի դրօշակի տակ ու պատերազմ յայտարարել քրիստոնեայ մարդկութեանը:

Այդպիսով, պանիսլամիզմի գաղափարը ինքնին մի յանդուգն պրօֆօկասիօն էր, մի ձեռնոց նետաձգ քրիստոնեայ պետութիւններին, Անգլիային, Ֆրանսիային, Աւստրիային, Ռուսաստանին, որոնք ունին բազմամիլիօն մահմեդական հպատակութիւն, մանաւանդ Անգլիան ու Ֆրանսիան (Հնդկաստանում, Ալժիրում): Հարկ կա՞ր բացատրելու, որ Երիտասարդ Թիւրքիայի յղացած համիսլամութեան ծրագիրը մի սին, անկայուն բանդագուշանք է, ու տ օ պ ի ա: Այնքա՛ն

*) Ա. Տեպլով, Մուլ Շըջան և Պալատական յեղափոխութիւն և Պօլսում. Պետերբուրգ, 1897 (սուրբէն):

տարբեր են իրենց բարբերով ու դաւանանքներով, իրենց պատմական աւանդութիւններով՝ այդ մահմեդական համախմբութեանը — Հնդկաստանից մինչև Ալժիր ու Ռադստան... Այնքա՛ն ուժեղ է հակամարտութիւնը հէնց միևնոյն թիւրք կայսրութեան երկու խոշոր տարրերի միջև — տաճիկների և արաբների, — արաբների՝ որոնք հպարտ իրենց պատմական անցեալով, ճշմարիտ հիմնագիր Իսլամի չեն ուզում ճանաչել սուլթանի խալիֆութիւնը, ուզում են հիմնել, աւելի շուտ, վերականգնել իրենց սեփականը և երկար տարիներից ի վեր բացարձակ ըմբոստութեան մէջ են, ծայրէ ծայր առգորւած անջատական ձգտութեանով և մի օր օսմանեան տիրապետութիւնը թօթափելու յուսով... Նոյն անտագօնիզմն ու ատելութիւնը թիւրք վարչութեան դէմ՝ Սիւրիայի մահմեդական ազգաբնակչութեան մէջ:

Հնարաւոր չի թւում երբևիցէ գլուխ բերել մի այդպիսի միահամուռ կամք, համաձայնութիւն և մի այդպիսի անօրինակ Ջօրաշարժ — սոսկ կրօնական նշանակի տակ — մահմեդականութեան այդ վիթխարի զանգուածների մէջ որ հաշոււմ են հարիւր միլիօններով: Եւս առաւել որ մի բանլսը այդ մահմեդական երկիրներից, շնորհիւ արեւմտեան քրիստոնեայ պետութիւնների հովանիին, մտել են արդէն կուլտուրական վերածնութեան ճանապարհը, հասել են նիւթական մի յայտնի բարգաւաճման, որ նրանք երազել անգամ չէին կարող օսմանեան խալիֆի իշխանութեան տակ: Մի հոյակապ երազ է պանիսլամիզմը — բայց միայն երազ: Նա կարող է վարակել մուսուլմանների սահմանափակ շրջաններ, բայց ոչ զանգուածներ:

Այնուամենայնիւ, «Երիտասարդ Թիւրքիան» ամուր կառչել էր այդ ուսուցիչին, որով կուզէր երիտասարդացնել հայրենիքի զառամ օրգանիզմը... Եւ երբ նա հրապարակ իջաւ պրօպագանդի համար, երբ սկսեց դաւել Աբդիւ Ազիզի դէմ, Թիւրքիոյ «վերակազմութիւնն» ունենալով կէտ-նպատակ, նա խանդավառ աջակցութիւն գտաւ ուղեմաների ու սօֆթաների, զուրմանկան աստուածաբանութեան ուսանողների մէջ:

Կային թերեւս այդ երիտասարդ-Թիւրք շարքերում մի միջանհատներ, որոնք ցանկալի և հնարաւոր էին գտնուում կրօնի անջատումը պետութիւնից, համոզուած՝ որ միմիայն այդ կերպ Թիւրքիան կարող է դուրս գալ միջնադարեան ամենամուայլ օրսկուրմանտիզմի շրջանակներից և քայլել դէպի բարձր, եւրոպական քաղաքակրթութիւն: Դա կը լինէր ինքնին մի հակայական յեղափոխութիւն. ինչպէս արդէն երկարօրէն պարզեցինք մեր առաջին հատորի մէջ, իսլամական հաւատամբը անհաշտելի է նորագոյն քաղաքակրթութեան պահանջների հետ և Թիւրքիոյ բոլոր վերանորոգչական փորձերը վիժել են, զարնելով այդ հաւատամբի բոլորին:

Սակայն, այդ ազատախոհ անհատները խիստ հազուագիւտ պէտք է լինէին «Երիտասարդ Թիւրքիայի» մէջ, եթէ եղել են երբևէիցէ: Դիւրին էլ չէր՝ մէկ հարաւածով ոչնչացնել թէօկրատիկ դարաւոր իշխանութիւնը, որի զօրութեամբ սուլթանը միանգամայն խալիֆ էր, աշխարհիկ և հոգևոր իշխանութեանց մարմնացում և որի հրահանգով մահմեդականութիւնը միշտ պէտք է

ունենայ հեգեմօնիա, առանձնաշնորհեալ, տիրապետող դիրք «ուայիա»ի հանդէպ:

Երկու իշխանութիւնների անջատումը, Թիւրք պետութեան կատարեալ աշխարհականացումը միահաւոր ուսկէր, որ չուզեց անել ինքը Միթհատ փաշան, Երիտասարդ Թիւրքիոյ և սահմանադրական շարժման հռչակաւոր պարագլուխը: Ոչ միայն չկարողացաւ, այլ և չուզեց: Եւրա յօրինած Սահմանադրութիւնը, չնայած Օտեան էֆէնտիի մտերմական խորհրդակցութեան և այլ դրական ազդեցութիւններին, նպատակ չունէր մարդավայել ուժեղիմ հաստատել երկրի մէջ, հաստատել ճշմարիտ իրաւահաւասարութիւն քրիստոնէի ու մահմեդականի միջև, այլ միայն «թող փչել» Եւրոպայի աչքերին... Ճիշտ այդպէս, 32 տարի յետոյ 1908-ին, Միթհատի աշակերտները ազատութեան ու հաւասարութեան մարտակոչերով թնդացրին Ստամբուլը, բայց իրօք նրանց նպատակն էր միայն՝ սահմանադրութեան վերահաստատումով յետ մղել Մակեդոնիայի վրայ տեղացող սպառնալիքը, առաջն առնել Թիւրքիոյ նոր անդամահատման:

Թէ 1908-ին և թէ 1876-ին Երիտասարդ Թիւրքիոյ հեղինակած Սահմանադրութեան մէջ չկայ անկեղծութիւն, հաւասարութիւնը և համասոմանեան եղբայրութիւնը լոկ շլացուցիչ բառեր էին. «Թիւրք» անուն տեղ «սոմանցի» անունը հռչակելով (այդպէս էր առաջադրում Միթհատ փաշայի քաղաքական իմաստութիւնը) չէր փոխուում «ուայիա»ի ստորագրեալ վիճակը. չէր թաքցուում սրբազնագոյն և տիրական օրէնքն

էր, իսլամիզմը դարձեալ հռչակուում էր, իբրև պետական կրօն... Այդպէս են արել Երիտասարդ Թիւրքերը՝ Միթ-հատ փաշայից մինչև Ահմեդ ՚հրզա և Խալաֆ բէյ Երբէք նրանք չեն կամեցել փոքր ինչ համարձակ դիրք բռնել դէպի անցեալի խաւարակուռ աւանգուածիւնները, ընդհակառակը, իրենք ևս որդեգրել են նրանց և այդպիսով դասապարտել են երկիրը յաւիտենական անշարժութեան: 1876-ին գումարած պարլամենտը իր կազմով արդէն ճշմարիտ հայելի էր Երիտասարդ Թիւրքիոյ իզձերի ու ծրագիրներին: Ընտրական «յասուկ» սիստեմի շնորհիւ, պատգամաւորների ճնշող մեծամասնութիւնը կառավարութեան մարդիկ էին—ինչպէս այժմեան իստիհասթական ռէժիմի տակ — մարդիկ, որոնք ծափահարում էին դահլիճի բոլոր յայտարարութիւնները և այդ պատճառով ստացել էին ժողովրդից արժանաւոր անուն՝ «էվէթ էֆէնարմ» *):

* * *

Չնայած այդ բոլոր ներքին արատներին, չնայած իր արևեստական և հակասական հաւատամքին՝ Երիտասարդ Թիւրքիան իր ժամանակին մի ուրախալի նորութիւն էր Թիւրքահայաստակ ճնշւած, իրաւազուրկ ցեղերի համար, մասնաւորապէս հայ ցեղի համար: Մի նոր տարր էր հրապարակ գալիս — թէկուզ և թոյլ, վեհերոս — այն արիւնալի պայքարի մէջ, որ մղում էին ժողովուրդները օսմանեան բարացած բռնապետութեան

*) Ed. Engelhardt, *La Turquie et le Tanzimat*, t. II, p. 170.

դէմ և՛ որովհետև քրիստոնեայ համայնքները այն ժամանակ դեռ չունէին մեր օրերի փորձառութիւնը, ուստի և անվերապահ ցնծութեամբ էին դիմաւորում մահմեդականութեան մէջ ծայր տւող նոր, դիմագրական հոսանքին: Դեռ իր գաղտնի, իլլէգալ շրջանում՝ երիտասարդ-Թիւրք կուսակցութիւնը գրաւել էր արդէն նաև քրիստոնեայ անդամներ, որոնց մէջ ամենաականաւորն էր՝ հայազգի Օտեան էֆէնտին: Նրա դերը այնքան խոշոր էր սահմանադրական շարժման մէջ, նրա ազդեցութիւնը այնքան ուժեղ երիտասարդ Թիւրք շերտաններում և նոյնիսկ Միթհատ փաշայի վրայ, որ ոմանք նրան են վերագրում Միթհատեան սահմանադրութեան յղացումը: Դշանակալի մի երևոյթ է և ուշագրաւ մի զուգադիպութիւն՝ որ գրեթէ միաժամանակ, երեք տարբեր երկիրներում—Ռուսաստան, Թիւրքիա, Եգիպտոս—երեք հայեր, հեղինակուոր և ազդեցիկ, հանդէս էին գալիս, իբրև եւրոպական կարգերի համոզւած ռահվիրաներ և առաջնակարգ դեր էին խաղում այդ յետաձեաց երկիրների վերածնութեան գործի մէջ... Լօրիս-Մեիլքօվ, Կրիգոր Օտեան, Դուպար փաշա...

Հերցեգօվինայի ապստամբութիւնը և նոր ռուսական արշաւանքի հեռապատկերը սասակացրեց սկըսւած խմորումը և 1876-ին Ստամբուլը մի ընդարձակ դաւադրութեան թատերաւայր էր: Մարտ ամսում ահարկու շուինգով հրապարակ նետուեց «Թիւրք հայրենասէրների» անանուն հրովարտակը, որ վերագրում են Միթհատ փաշային և Օտեան էֆէնտին: Դրկւեցին այդ մանիֆեստի օրինակները այլ և այլ

երկրների պետական մարդկանց (բացի Ռուսաստանից և Աւստրիայից, որոնք դիտուում էին իբր Իսլամի թշնամիներ), Վիգորայելիին, Մակ-Մահոնին, Թիեռին, Գամբետային, Բիսմարկին: Թիւրք Տայրենասէրները գրում էին այդտեղ, այդ հանդիսաւոր մանիֆեստի մէջ, որ երբ Տաճկաստանը կը վերակազմւի արեւմտեան ազատական սկզբունքներով, երբ կը սահմանափակւի սուլթանական միահեծանութիւնը, կը հաստատուի սահմանադրութիւն ու պարլամենտ, այն ժամանակ կը վերանան բոլոր շարիքները և Թիւրքիան կը բռնէ իրեն պատշաճ տեղը եւրոպական պետութիւնների շարքում:

Եւ Լերտասարգ Թիւրքիան—որ սրտի խորքում կատաղի հակառակորդ էր արտաքին միջամտութիւնների—կոչ էր անում նոյն եւրոպային, Թիւրքիոյ „բարեկամ“ պետութիւններին, հայցում էր նրանց աշակցութիւնը՝ իր ծրագիրն իրագործելու համար... Նա գիտէր, որ „օսմանեան յեղափոխութեան“ համար թիւրք ժողովուրդը պատրաստ չէր տակաւին, պատրաստ չէր և բանակը:

Զինւած, մասսային ապստամբութիւն անհնարին էր պէտք էր դիմել նպատակին զուտ դաւադրական ճանապարհով: Եւ դաւադիրները որոշեցին առաջ բերել պաշտական յեղաշրջում: Դժգոհութիւնը աճում էր հետզհետէ և դրա հետ միասին արագ-արագ բարձրանում էր սահմանադրական շարժման ռահվիրայի՝ Միթհատ փաշայի աստղը: Արդիւ Ազիզ տեսնելով այդ, որոշեց նրան հրաւիրել մինիստրութեան մէջ: Կուզէր այդպիսով կանխել փոթորիկը, բայց չ'աջողեց: Մի գիշեր, դաւադիր-տերորիստները ներս խուժեցին սուլթանական ննջա-

ւանը և յայանեցին Արդիւ-Ազիզին, որ նա այլ ևս սուլթան չէ: Եւ քիչ յետոյ — խեղդեցին գահընկեց փատիշահին:

Մուրադը յաջորդեց նրան գահի վրայ: Բայց նա պիտի իշխէր մի քանի ամիս միայն: „Նոր դարագլուխ“ էր, որ պիտի սկսէր—շատերի կարծիքով—այդ մեղմ, քաղցրաբարոյ, սահմանադրական սուլթանի օրով: Սակայն ամիսները սահում էին, առանց ուէ փոփոխութիւն առաջ բերելու Թիւրքիոյ կացութեան մէջ: Սահմանադրութեան երազը մնում էր երազ: Եւ շուտով յայտնեց, որ նոր սուլթանը տառապում է նիարդային-ուղեղային ծանր հիանդութեամբ: Այդ հանգամանքը առաջ բերեց ընդհանուր իրարանցում: Արտասահմանից հրաւիրւած ժիշկը, գանելով հանդերձ հիւանդութիւնը խիստ ծանր, յայտարարեց, սակայն, որ անբուժելի չէ: Բայց ժամանակը չէր սպասում: Պէտք էր ձեռնհաս, հեղինակաւոր, ամուր մտքի ու կամքի տէր մի սուլթան՝ այդ ալէծուփ շրջանում: Երիտասարդ Թիւրքիան վերստին սկսեց յուզել մտքերը և հրահանգեց վարդնել նաև Մուրադին: Վարագոյրի ետևը անհամբեր, սրտաւարով սպասում էր այդ ագիտացիայի ելքին Մուրադի եղբայրը—Արդիւ Էամիդ...

Հիւանդ սուլթանը փակեց Զրաղանի պալատում և նրա տեղ գահ բարձրացաւ շուրով ու հանդիսաւորութեամբ այն մարդը, որ պիտի իսպառ կործանէր Տաճկաստանը և որի դժոխային արարքները աշխարհ պիտի սասանեցնէին:

X

Ա Ր Դ Ի Ի Լ - Յ Ա Մ Ի Դ

Չարագործ հանցար պատմութեան մէջ.—Բնաւորութեան գծեր.—Մեծա-
 մուլ. — Կասկած եւ երկիւղ. — Քէն ու վրիժառուութիւն. — Ապրել՝ ինչ
 գնով էլ լինի. — Հալածանք եւ սերտ. — Հալածողական մտքիւս —
 Բռնակալի դասական տիպը.—Բացարձակ կենսօճացում եւ անձնական
 ռէժիմ. — Անտօյն աշխատասիրութիւն. — Արդիւ-Համիդի հաւատոյ
 հանգանակը. — Համիտականութիւն եւ համաքրիստոնէութիւն. — Բռնաւորի
 յուսատեսիլը. — Կախարդական օրհանգիծը. — Խելացի՞ էր Արդիւ Հա-
 միդը. — Ախտաւոր իմացականութիւն. — Կարմիր սուլթանը երիտասարդ
 թիւրքիայի հանդէպ.—Միքնազ փառայի ողբերգական վախճանը.—

Գրիչը մի վայրկեան կանգ է առնում այս շարաշուք
 անւան հանդէպ: Կանգնին տասնեակ ու հարիւրաւոր
 տարիներ, ժամանակը շատ վերքեր կը բուժէ, կը սպիտ-
 ցնէ, շատ կրքեր ու ատելութիւններ կը մեղմէ, բայց
 հայ պատմագրողը միշտ էլ անզօր կը լինի լիակատար
 պաղարիւնով յօտենալու այդ դէմքին, նա միշտ էլ
 ակամայ սարսուռ կը զգայ՝ այդ մարդու պատկերն ու
 գործերը նկարագրելիս:

Ինչպէ՞ս չխօսել Արդիւ-Համիդի մասին: Հայ ժողո-
 վուրդը բնան անգամ դարաւոր իր գոյութեան մէջ շատ

է տեսել արիւնարբու դահիճներ, հայ ազգը շատ է
 ունեցել իր կեանքի աղբիւրները ցամաքեցնող, իր թան-
 կագին արիւնը լափող թորենիներ, — այս մէկը ապահո-
 վաբար գերազանցում է բոլորին: Հայ դատը և հայ-
 կական շարժումը չեն ունեցել աւելի ահեղ հակառա-
 կորդ, աւելի դաժան, կործանարար խոչընդոտ՝ իրենց
 երկար ու արիւնաներկ ճամբու վրայ: Ո՞վ է ասում, թէ
 անհատը մեծ դեր չունի պատմութեան գահափոխող
 յորձանքի մէջ, թէ նա միայն «ծառայ» է, սպասուող է
 առարկայական, անտեսական ուժերի: Արդիւ-Համիդ
 խնդաց այդ ձախչիկ ու անկայուն թէօրիայի վրայ, ինչպէս
 որ նա խնդաց հարիւր հազար հայկական դիակների վրայ:
 Արդիւ-Համիդ ապացուցեց, որ կան անհատներ, որոնք
 իրենց չարաշուք, դիւային հանձարով կարող են խոր-
 տակել «առարկայական ուժերը» — դասակարգեր ու
 դասակարգային հակադրութիւններ, անտեսութիւն,
 առեւտուր ու արդիւնաբերութիւն, մտաւոր և նիւթա-
 կան պրօգրէս — կարող են կանգնեցնել պատմական էւօ-
 լիւսիօնի անիւը ամբողջ ասանեակ տարիներով — և ոչ
 միայն հայ ազգային էւօլիւսիօնի, այլ մի ամբողջ կայս-
 րութեան:

Հայ նորագոյն շարժման պատրաստութեան մէջ, նրա
 ծնող-պատճառների ու մղիչների շարքում այդ մարդը
 առաջնակարգ տեղ ունի իր ստեղծած անօրինակ ռէ-
 ժիմով, իր նիւթած ահեղի ոճիրներով: Հարկ է, ուրեմն,
 փոքր ինչ կասգ առնել նրա վրայ:

Իր եղբայր Մուրադի հակապատկերն էր: Որքան մէկը

սեղմ էր բնաւորութեամբ, թոյլ, միամիտ ու կամազուրկ, այնքան միւսը դաժան էր, խարդախ և կամակոր, իշխելու, տիրապետելու անսանձ ախորժակներով:

«Ատիտ, նիհար ու ջղուտ, նուրբ ու նոյնիսկ ազնւական արտաքինով՝ նրա դիմագծերը աւելի հայի գծեր են, բայն թիւրքի — ասում է Շարմ *): Նայւածքը միշտ անհանգիստ, ասես շարունակ փնտրում է այս ու այն անկիւնում թագնւած դաւադիրներ, մարդասպաններ: Գէմբի արտայայտութիւնը մատնում է մտքի յարասե ճիգ, կամքի մշտնջենաւոր լարումն: Մի բան կայ այդ արտայայտութեան մէջ, մի տարօրինակ խռովք, որ թարգման է ուղեղային-հոգեկան խանգարումի, որից զերծ չէ ոչ մէկը Օսմանի դերդաստանից: Մենամոլութիւնն ու վախը նրա մօտ հիւանդութեան կերպարանք ունին և տարօրը, մշտնջենաւոր ահաբեկման վիճակը, յաճախ դարձնում է նրան գազանասիրտ... Անձնական քինականդրութիւնը անողոր է նրա մէջ, որովհետեւ նա ծնունդ է երկիւզի միշտ արթուն զգացումի **):

Նա, որին բաղաբակիրթ մարդկութիւնը որակել է «կարմիր գազան», «Մեծ Մարդասպան» անուններով, բնաւ չունի արիւնոռւշա բռնաւորների—մի Ատտիլայի, մի Լանկթամուրի—սովորական բաջութիւնը: Նա ամենահեղգ, ամենաերկչոտ արարածն է, որ անգամ ելլալով մզկիթ գնալիս առնում էր իր հետ կոբրի մէջ

*), Յայտնի է արդէն, որ Արդիւ-Համիդ մօր կողմից... հայ է:

**), G. Charmes, L'Avenir de la Turquie, 1883, p. 210.

ծեր, պատկառելի թիւրք գործիչներ կամ իր սեփական երեխաներին, յուսալով, որ նրանց պատճառով տերրօրիսաները գնդակ ու ռումբ չեն արձակի սուլթանական կոբրի վրայ: Նախապաշարւած և դիւահար՝ նա սարսափում է կայծակի առաջ, գալարւում է ու խօլ ճիչեր արձակում, աքլորի կանչն անգամ ջղաձգութիւններ է պատճառում նրան. կատուն, որ վազելով անցնում է պարտէզից, ահաբեկում է սուլթանին, սափում է նրան ամբողջ օրերով փակել սենեակում. «վատ նշան է՝ կատուի վազքը... Իսկ եթէ սև է կենդանին—նա մի բանի գիշեր չի քնում: Ատին ու կասկածը բռնում են ամբողջ էութիւնը: Ատենալով սպանելուց՝ նա շտապում է ինքը սպանել... և զարնում է առաջին հանդիպողին, լինի դա թէկուզ իր հարազատ զաւակը, բաւական է, որ այդ վերջինը կասկածելի երևայ նրան *):...»

Գահ բարձրանալով պալատական մի արիւնալի գրամայից յետոյ, նոր սուլթանի առաջին և տիրական մասհոգութիւնն եղաւ՝ ապահովել իր անձը, առաջն առնել նոր արիւնոտ «անակնկալների»: Երկրի բարօրութիւն, պետական տագնապ, միջազգային խռովայոյզ կացութիւն, անուն ու հմայք,—բոլորը երկրորդական, անարժէք էր թագակիր մանեակի համար. նախ իր անձնական բարօրութիւնը հոգաց նա և դրա համար շրջապատեց ինքզինքը լրտեսների ու տիրապաշտ առնառուների բանակով, անանցանելի պատնէշ դրեց իր և գրսի աշխարհի միջև: Ամբողջ կեանքը պաշարւած մնաց այդ յամառ

*) Sefer Bey, Abdul Hamid intime, La Revue 1 Dec. 1906.

idée fixe-ով — պահանջել, ապրել՝ ինչ միջոցով որ լինի:

Առաջին օրերից իսկ՝ սկսեց «ղաման» ու «ղատման» գործողութիւնը: Պէտք էր հեռացնել բոլոր ասպարէզներէն — վարչական, դատական, զինւորական և այլն — բոլոր նրանց, որոնք քիչ-շատ կասկածելի էին նրա աչքում և հրաւիրել վստահելիներին, հաւատարմներին: Եւ ասպարէզից «հեռացնելը» Աբգիւլ Համիդի բառառով յաճախ նշանակում էր պարզապէս ոչնչացնել Ղրկեց անթիւ «կասկածելի» պաշտօնեաներ շղթայակապ դէպի Աֆրիկեան Տրիպոլիս, դէպի Արաբիայ խորշերը, դէպի Բոսֆորի յատակը... Երկիւղի ու վրիժառուութեան շղթայազերծ ծարաւը չէր խնայում ոչ որի. հայրեր ու մայրեր, բոյրեր ու եղբայրներ, որ կուզէին իմանալ պատճառը իրենց դժբախտ հարազատների չարաչար նահատակութեան՝ զարնւում էին նոյնպէս անխնայ, գնում էին բաժնելու առաջինների ճակատագիրը, և հազարաւոր ոճիրները կատարւում էին մի ահեղ խորհրդաւորութեան մէջ, հեռու մեծ ճանապարհից ու հրապարակից, գիշերային թանձր խաւարում: Գահիճներ, հլու, անձայն խամաճիկների լէգէօնը գործում էր անդուլ ու անդագար, մահաւան ճիրանները նետելով բոլոր քիչ թէ շատ մտածող ու զգացող օսմանեան բաղաբացիներին, բոլոր նրանց, որոնց սոււերը երկիւղ էր ազդում սարսափահար դեսպօտին:

Մի նոր Բաստիլ բարձրացաւ Ստամբուլեան արուարձանում -- Երլըզ Բիօսկ անունով — այն տարբերութեամբ պարիզեան պատմական Բաստիլից, որ նրա մէջ

յօժարեկամ բանտարկեց մէկը միայն, բայց այդ մէկը աշխարհի և պատմութեան ամենամեծ Չարագործն էր, ամենահեղ «բաղաբացիան մահապարտը»... Եւ այնտեղից, երլըզեան այդ մենաւոր բարձունքից, ՅՁ տարի շարունակ կարմիր սուլթանը իշխեց ահագին կայսրութեան վրայ, իշխեց, որպէս տիպար-բնաւոր, միահեծան և ինքնակալ:

Ոչ մէկը նրանից առաջ չէր կարողացել իրագործել Թիւրքիոյ մէջ բռնապետութեան այդ դասական տիպը. նրանից առաջ մինիստրները, օսմանեան նախարարները շատ թէ քիչ գործօն ու վճռական դեր ունէին երկրի կառավարութեան մէջ. նրա օրով այդ մինիստրներն ևս մի մի անխօս ու անկամ խամաճիկներ էին, որոնց համար բռնաւորի կամքը միակ ու գերագոյն օրէնքն էր: Ոչ մի վճիռ չէին կարող տալ, ոչ մի հրահանգ արձակել առանց տիրոջ գիտութեան. «Բարձր Գուււր» ոչինչ էր, Երլըզը ամեն բան էր. ամեն բան մեկնում էր այնտեղից և ամեն բան վերադառնում այնտեղ: Ֆինանս, զօրք ու ոստիկանութիւն, ներքին ու արտաքին բաղաբացիանութիւն, պաշտօնեաների նշանակում ու փոփոխութիւն — ամեն ինչ անցնում էր միահեծանի ձեռքով. բոլոր գործերն ուսուճասիրում էր նա անձամբ և բոլորին ինքն անձամբ ուղղութիւն էր տալիս, զնելով իւրաքանչիւր ձեռնարկի վրայ իր խորունկ, դաժան, անագորոյն կնիքը:

Ի՛նչ վիթխարի աշխատատիրութիւն... Եւ դա գուցէ միակ առաքինութիւնն էր այդ սարսափելի մարդու մօտ: Շատ ուրիշ նախորդների պէս նա չէր հրապուրւում

եպիկուրեան մեղկ կենցաղով, չէր անձնատրուում հարեմական հեշտանքների գինովութեան, չէր գիտում ներօնեան խրախճանների, այլ վարում էր ընդհանրապէս ժուժկալ, չափաւոր կեանք, խորասուզուում էր անյատակ աշխատանքի մէջ, գծելով երկրի կառավարութեան ամենայնատին մանրամասները, դարձնելով միշտ իր զգաստ ու պրպըտող հայեացքը դէպի կայսրութեան բոլոր անկիւնները, Բալիկաններից մինչև Տրիպոլիս, հայկական լեռնադաշտից մինչև Պարսից ծոց:

Այդ մարդը, որ օժտւած էր մի անսովոր հոտառութեամբ, որ գիտէր արագօրէն թափանցել մարդկանց և իրերի էութեան մէջ, զուրկ չէր անձնական խորունկ համոզութեան: Նա գուցէ ամենակրթւած, ամենաներբամիտ դէմքն էր օսմանեան սուլթանների երկայնաձիգ շարանի մէջ: Մէկ համոզում, մի գաղափար իշխում էր տիրականօրէն նրա մտաւոր հօրիզոնի վրայ, — համիւլամ ու թիւրք և համաթիւրք ու թեան գաղափարը: Իրօք երկու գաղափար էին, բայց սերտօրէն դաշնակցած, գրեթէ ձուլւած Աբդուլ-Համիդի քաղաքական հաւատամքի մէջ. մէկը առանց միւսի ոչինչ է: Համիւլամութիւնը առանց թիւրքութեան չի կարող իրականանալ: հարկ է նախ թիւրքացնել օսմանեան ցեղերը, միացնել նրանց թիւրքական տարամբժ հեգեմոնիայի ներքոյ. ապա յաղթական ու միահեծան տաճկութիւնը պէտք է դառնայ կենտրոն, կորիզ՝ համախմբելու իր շուրջը, իր դրօշի տակ աշխարհի բոլոր իսլամադաւան ցեղերը: Թիւրքութիւնը՝ իբրև կրող համիւլամական գաղափարի և սուլթան-խալիֆը՝ իբրև գերագոյն զե-

կալար ու իրագործող այդ գաղափարի — ահա Աբդուլ-Համիդի տիրական բաղձանքը: Այդտեղ էր տեսնում նա օսմանեան երկրի փրկութեան միակ խարխիւր:

Թէ համիւլամ (panislamistev) և թէ համաթիւրք (panturquistev) գաղափարը — երկուսն էլ էապէս թշնամի են եւրոպականութեան կամ ուրիշ խօսքով՝ բաղաքակրթութեան գաղափարին: Եւ Համիդ գարշում էր այն բոլոր նորոյթներից, ռեֆորմներից, որ եւրոպական բաղաքակրթութիւնը կուզէր զօռով պատւաստել Թիւրքիոյ խարխուլ օրգանիզմի վրայ. նա գարշում ու սարսափում էր այն արտօնութիւններից, որ բրիտանեայ պետութիւնները կուզէին շնորհել աւլ թիւրքահայասակ բոլոր բրիտանեայ համայնքներին. նա ըմբռնում էր իր սուր հոտառութեամբ, որ այդ ռեֆորմները բարձրացնելով արագօրէն բրիտանեայ ցեղերի գիրքը, նրանց նիւթական ու կուլտուրական մակարդակը, պէտք է փորեն իշխող տարրի գոյութեան խարխիւները, պէտք է ջնջեն վաղ թէ ուշ այդ տարրի գերիշխանութիւնը, հեգեմոնիան, նա ըմբռնում էր, որ բարենորոգւած թիւրքիոյ մէջ թիւրք յետամնաց, ագէտ, անշարժ, նախապաշարւած տարրը պէտք է վաղ թէ ուշ շնչահեղձ լինի և նրա քաղաքական ազդեցութիւններն ու իշխանութիւնը պէտք է անցնին կամաց-կամաց աւելի շարժուն ու առաջադէմ բրիտանեայ տարրերին...

Ահա թէ ինչ է գրում Մեծ Մարդասպանը իր յուշատետրում, 1908 թ.-ի սահմանադրութեան և Երիտասարդ Թիւրքիոյ ազգարարած ռեֆորմների առթիւ.

Գուցէ յետագայում կր զղջան այն մարդիկ (...երիտասարդ

(թիւրքերը^{*)}), որոնք այսօր գինովցած են բարենորոգչական գաղափարներով. նրանք թերևս կը տեսնեն յետոյ, որ այդ նոր ճամբան, որի մէջ մտնում են իրենք, պիտի տանեն դէպի անդունդ: Պէտք է յուսալ, որ վերջին ժամին նրանք կըզգաստանան և կը խոստովանին, որ Թիւրքիան մէկ պայմանով միայն կարող է ապրել,—այն՝ որ բոլոր օսմանցիները կանգնած մնան հաւատարմութեամբ մեր սուրբ օրէնքի հինաւուրց ու ամուր պատւանդանի վրայ. այլապէս, մենք պիտի յօշոտինք քրիստոնեայ պետութիւնների ձեռքով, որոնք բոլորն էլ ձգտում են կործանել մեզ^{*)}:

Մի զարհուրելի կախարդական շրջագիծ... Եւ օսմանեան վարիչների քաղաքականութիւնը ասանեակ տարիներից ի վեր տարուբերել է այդ ֆատալ, եղբրական շրջագծի մէջ: Ռէֆորմներ տա՞ն, թէ՞ չտան քրիստոնեայ հպատակներին... Երկու գէպքում էլ՝ Թիւրքիան պէտք է ընթանար դէպի տարրալուծում ու քայքայում. երկու գէպքում էլ թիւրք տարրի գերիշխանութիւնը վաղ թէ ուշ պիտի խորտակէր: Ռէֆորմները մերժելով՝ ստեղծում էին ներսում արիւնալի բաօս, խռովութիւն, արտաքին միջամտութիւն ու յօշոտում: Ռէֆորմները շնորհելով՝ ստեղծում էին քրիստոնեայ ցեղերի համար բարեկեցիկ, առանձնաշնորհեալ դիրք ու վիճակ, զարկ էին տալիս նրանց ազգային ինքնօրինութեան օրինաւոր անշանքներին, ստեղծում էին այդպիսով խոր, անհանգուրժելի հակադրութիւն այդ գիտակից ու առաջադէմ քրիստոնեայ ընդհանրութեան և թիւրք յոռի, բար-

^{*)} *Pensées et Souvenirs d'Abdul Hamid. Le "Temps", 11 Avr. 1913.* Պարիզեան թերթը քաղել է մի քանի հատուած սուլթանական այդ ուշադրաւ յուշատետրից, հրատարակած „Nord und Sud“ գերմանական հանդէսի մէջ:

բարոս տիրապետութեան միջև,—մի հակադրութիւն, որ վաղ թէ ուշ պիտի բռնկւի կենտրոնախոյս ու կործանարար շանթերով, պիտի խորտակէ թիւրք իշխող փոքրամասնութեան ապօրինի յաւակնութիւնները, պիտի վերջ տայ սուլթանների ու վալիների արատաւոր վարչութեան...

Ահա այդ ֆատալ „շրջագիծը“: Սուլթաններ ու սադրազամներ, պառաւ ու երիտասարդ թիւրքեր տասնեակ տարիներից ի վեր օրհասական ճիգեր են թափել դուրս նեաւելու կախարդական շրջանից. — ապարդիւն: Նոր „երիտասարդ Թիւրքիան“, Թալաթների ու Զափիանների թիւրքիան, մի տեսակ սինթեզ արեց երկու հակամարտ ձգտումներից: Նա համադրում, հաշտեցնում է երկու ներհակ քաղաքականութիւնը: Նա էլ գիտակցում է, որ ռէֆորմները մահ են բերում թիւրք ցեղի աւանդական տիրապետութեանը, բայց որ ռէֆորմից խուսափելը աւելի ևս կորստաբեր է... Եւ նա քաղաքական մի գերազանց իմաստութեամբ՝ „սինթեզ“ է սնում. մի ձեռքով առլիս է ռէֆորմներ—հայերին, սիւրիացիներին, արաբներին—միւս ձեռքով յետ է առնում նա ուզում է ձգձգելով, խաբխրելով յարատեւել կայսրութեան գոյութիւնը: Այդ էլ, սակայն, չի փրկում:

Արդիւլ Համիդ անկեղծօրէն պաշտպան կանգնեց անհաշտ, „կենտրոնագիծան“ քաղաքականութեան. սկզբից մինչև վերջ նա յամառեց մերժողական, գիմադրական ընթացքի մէջ: Ո՛չ մի զիջում քրիստոնեայ հպատակների՛ն, ո՛չ մի ռէֆորմ ու եւրոպականացում: Իսլամը սէ՛ր է իր նւաճած հողերին, թիւրքը սէ՛ր է իր հաստատած ու դարբերով ժառանգած կայսրութեան, նա կը ձգտէ

Բոլոր տարրերը ձուլել թիւրքութեան մէջ և նա յեա կը նահանջէ միայն զինւած, յաղթական գրոհի առջև...

Այդպէս ուզեց կառավարել 20-րդ դարի ներքնը, բայց նա էլ ընկաւ, խորտակեց նոյն այդ տարածքը ու ոճրանիւթ բաղաբականութեան բեռի տակ...

* * *

Հնարագէտ էր և դիւանագէտ՝ ոչ եւրոպական, այլ ասիական իմաստով, մշակած, կատարելագործւած արեւելեան խորդախութեան դպրոցի մէջ: Ինչպէս որ գիտէր կուսցնել իր հպատակ բազմապիսի ցեղերին՝ իր բացարձակ տիրապետութիւնը յաւերժացնելու նպատակով, նոյնպէս և գիտէր սնունդ տալ յաւիտենօրէն քրիստոնեայ պետութիւնների հակամարտութեան, անտաօնիզմին՝ «եւրոպական համերգը» խանգարելու և թիւրքիոյ ամբողջութիւնը ապահովելու նպատակով:

Սակայն, կապ, սիստեմ, հետևողականութիւն չէր ճանաչում այդ հիւանդոտ, պաթոլոգիկ իմացականութիւնը: Նա գործում էր ցրիւ, անյար ու քմահաճ թռիչքներով: Բոլոր միահեծան բռնապետները, բացի մի բանի ներդաստիպ արքաներից, իրենց դաժան ու անձնական կառավարութեան մէջ մի յայտնի չափով ղեկավարել են երկրի շահերով, գէթ փոքր ինչ հոգացել են—յանուն իրենց սեփական շահերի իսկ—պետութեան բարգաւաճման ու հմայքի մասին: Սուլթան Համիդ ըմբռնեց միայն իր անձնական բարօրութիւնը և այն էլ վատ ըմբռնեց: Բոլոր կառավարութիւնները, մեծ, արիւնահեղ պատերազմներից ու պարտութիւններից յետոյ՝ ընդու-

նակ են եղել ժամանակաւորապէս համակերպել ու հանգիստ առնել, կենսասնունալ ինքնավար ու կորովի աշխատանքի մէջ, շակել, հաւաքել, վերակազմել ուժերը և խուսափել արտաքին ու ներքին բախուձներից. այդպէս վարեց անգամ բռնապետական Ռուսաստանը Ղրիմի ծանր պարտութիւնից յետոյ: Աբգիւլ-Համիդ 1877 — 78-ի աղէտներից յետոյ ևս շարունակեց աւերել, հալածել և գրգռել Գրգռեց դրսում և ներսում... Նոր ու նոր ընդհարումներ էր ստեղծում—այնքան ծանր հարածներ մարսելուց և Բերլինի դաշնագիրը ստորագրելուց յետոյ — իսկ ներսում սկսում էր արեան ու աւերածի աշտարհաստան բաղաբականութիւնը, որ պիտի յանգէր հայկական մեծ Եղեռնին մակեդոնական ու կրեական ճգնաժամերին և պիտի վերջանար իր մեծաշառաչ գահավիժումով... Ահա Աբգիւլ Համիդի յիսելքը՝, նրա «պետական իմաստութիւնը», նրա «դիւանագէտ հանձարը», այնքան յաճախ փառաբանւած վարձկան գրիչներով:

Ի՛նչ գեղեցիկ բաւեր էին մրմնջում նրա զազիր շրթունքները գահակալութեան օրը:

«Աստահելով Բարձրագոյնի աջակցութեան՝ մենք կը դիմենք դէպի մեր նպատակը, որ է՝ ամրապնդել կայսրութիւնը և մասնակցել տալ անխտիր մեր բոլոր հպատակները ազատութեան, խաղաղութեան ու արդարութեան բոլոր բարիքներին... Քանի որ սահմանադրական սիստեմը ազգերի առաջադիմութեան գլխաւոր գործօններից մին է, մենք ընդունում ենք կառավարութեան այդ ձևը, հաշի առնելով Շէրիտ օրէնքը և մեր երկրի սովորոյթները» *):

*) Midhat-Pacha, par son fils Ali Haydar Midhat bey, 1908, p. 72.

Միթճատ փաշայի թելադրածն էր: Առաջին օրերից իսկ բռնաւորի խօսքն ու գործը մասն աղաղակող հակասութեան մէջ: Սարսափելի էր ընդհանուր կացութիւնը. թիւրքիան ընկած էր հոգեվարքի մէջ: Բօսնիա-Հերցեգը ոտքի էր կանգնել, Բուլղարիան ու Սերբիան ալեկոծել և Ռուսաստանը սպառնում էր արշաւել. խռովութիւնն ու քաօսը իշխում էին ներսում: Նոր գահակալը սրեց նախ և առաջ իր անձնական ինքնապաշտպանութեան զէնքերը: Շատ չ'անցած՝ նա սկսեց անողոք արշաւանք նոյն երիտասարդ թիւրքերի դէմ, որոնց հովանիի տակ գահ էր բարձրացել: Նա չէր մարտում մանաւանդ «երիտասարդների» ամենաուժեղ ներկայացուցչին, Միթճատ փաշային, որին սագրազամ էր նշանակել ակամայ: Պէտք էր շտապել վերջ գնելու թէ երիտասարդ թիւրքիային և թէ «Սահմանադրութիւն» կոչւած կատակին: Եւ մի կողմից նա յանդգնութեամբ ձեռնոց էր նետում Ռուսաստանին, միւս կողմից անդադար հետապնդում էր «ներքին ոտիւն»: Նախ տապալեց սահմանադրութեան հեղինակին. 1877 թ. փետրուար 5-ին Միթճատ փաշա պաշտօնանկ եղաւ Լուրը ահագին դզրդոց հանեց Եւրոպայում և ասում են Աւստրիայի թագաւորը բացականչեց այդ առթիւ. «Յէր Ասաւած, այս թիւրքերը անուղղելի են»: Իսկ թիէո, Փրանսիացի հռչակաւոր պետական մարդը ասաց. «Թիւրքիոյ ամենաոտիւրիմ թշնամին անգամ դժւար կը յղանար մի այդպիսի դիւային խորհուրդ տալու սուլթանին»: 2 քաւում էին ռեֆորմի վերջին յոյսերը: Ռուսական «Պօլոս» թերթը գրում էր. «Ժամը հնչեց թիւրքիոյ վախճանի»...

Միթճատը հեռանալով, Սահմանադրութիւնն արգէն իսկ դատապարտւած էր: Մի քանիս ամիս յետոյ այն էլ ջնջեց Արդիւ-Համիդի բիրտ ձեռքերով... Մինչ այս



Մ ի թ ի ա տ փ ա ճ ա

մինչ այն՝ ռուս-թիւրքական պատերազմը վերջացաւ, յայտնի է՝ որպիսի կորուսաներով թիւրքիոյ համար: Միթճատ անցել էր Եւրոպա, ուր մտերմական յա-


րաբերութեան մէջ էր մի բանի մեծ պետական գործիչների, մասնաւորապէս Գիլրայէլի: Ըուտով յետ կանչեց. եղաւ ընդհանուր նահանգապետ Սիւրբայի, ապա Ջմիւռնիայի Նրա դահիճը, սակայն, հանգիստ չունէր. Միթհադի սուերն անգամ սարսափելի ու ատելի էր նրան: Եւ Երլըզլի մենաւորը պատեհ առիթ էր փնտրում՝ ոչնչացնելու իր ահաւոր ախոյեանին: Վրայ հասաւ մի անակնկալ, որ փութացրեց դաւադրութեան լուծումը: Պետերբուրգից լուր եկաւ, թէ Ալէքսանդր II կայսրը սպանւել է ՆիՏիլիսաների՝ յեղափոխականների ձեռքով (1881 թ. մարտի 1-ին): Արդիւ Համիդ սասնեց: Նա արդէն տեսնում էր մահու ուրուականը իր սեփական գլխի վրայ... Եւ որոշեց շտապել: Բռնի կերպով բերել աւեց Միթհասին Ջմիւռնիայից մայրաքաղաք և հրամայեց դատի ենթա. կել նրան, մեղադրելով սուլթան Արդիւ Ազիզի սպանութեան մէջ: Դատելը — դատապարտել էր: Եւ մի գեղեցիկ օր նաւը տարաւ օսմանեան սահմանադրութեան ռահիրային դէպի հեռու քստորավայր, դէպի Արաբիա: Մի ուրիշ օր էլ, 1883 թւականին, աշխարհն իմացաւ, որ Միթհաս փաշային գիշեր ժամանակ անկողնու մէջ խեղդել են չւանփի Գլուխը մի արկղի մէջ ամփոփւած, բերեց յետոյ Երլըզլ Բիսկ... Գ

Այդպէս սկսեց «Մեծ Մարդասպանը»: Յայանի է, թէ ինչպէս նա շարունակեց և թէ ինչպէս վերջացրեց:

* * *

ԲՈՒԼԳԱՐԻԱՆ ԱԶԱՏԱԳՐԻԱԾ.

Մինչ թիւրքիան Արդիւ Համիդի սեւաւոր ռէժիմի տակ գալարուում էր հոգեվարքի մէջ, մի այլ երկիր, քրիստոնեայ-սլաւօնական մի նոր ազգ, ծնունդ էր առ-



Ա. Ե. Վ. Ա. Կ. Ի. Ի. մահաւանդ

նում նրա եւրոպական տիրապետութեան աւերակների վրայ, մտնում էր ազատ ազգերի գերգաստանը, կուլտուրայի ու առաջադիմութեան երաշխիքներով:

Բուլգարիան էր: Բարձրացաւ նա ստրկութեան ու

ոչնչութեան անդունդներից „Հիւսիսային Տիասնի“ ուսերի վրայ, ազատագրւեց ցեղակից ու հաւատակից Ռուսաստանի ձեռքով: Բայց նախ բան այդ ցեղակցի օգնութեան հասնելը, փոքրիկ ազգը ի դեմս իր գաղափարական տարրերի, մտել էր արդէն ըմբոստացման ծանապարհը, զ ո հ ա բ ե ռ ե լ է ի — Թէև քիչ, համեմատաբար—իր թանկագին ազատութեան համար: Սարկաւագ Լեվսկիի անունն արդէն շրջան էր անում Բալկաններում, — Վասիլի Լեվսկին՝ որ պարզեց ալըստամութեան դրօշը իր իր բուլգար հայրենիքում, ունեցաւ ամբողջ 12 տարւայ բարողչական գործունէութիւն, վիրաւորեց ու գերի ընկաւ թիւրքերի ձեռքը, նետեց Սօֆիայի մույլ բանտը և ի վերջոյ կախաղան բարձրացաւ 1873-ին *): Նրա յետեից բայլեցին անձնուրացների ուրիշ շարքեր: Շարժման գաղափարը եռանդով արծարծոււմ էր բուլգարական գրականութեան մէջ, Բօտեվների ու Վազովների բերնով, որոնք մերայիների պէս և՛ բանաստեղծ էին և՛ հրապարակախօս, և՛ բարոզիչ, յեղափոխական: Եղան տեղատեղ ընդհարումներ բուլգար չեռանների և թիւրք կառավարութեան միջև:

Կրացի սլաւների ապստամբութիւնը թեւաւորեց Բուլգարիայի յոյսերը, բայց և նոր զարկ տւեց մահմեդական Փանատիկոսութեան: 1875-ի նոյեմբերին սկսեցին

*) Աւելորդ կը տեսնէ այսօր Բուլգարիայի մայրաքաղաքում այդ սքանչելի հերոսի ու նահատակի պարզ մահարձանը, որի առջևից իւրաքանչիւր բուլգար անցնում է պաշտառունքի խորունկ զգացումով:

„բուլգարական սարսափները“: Թիւրք կառավարութիւնը թափեց Բուլգարիայի վրայ արիւնարբու բաշիբօզուկներին: Մի շարք գիւղեր հիմնայափակ կործանւեցին և բնակիչները սրի անցան: Միմիայն Բատակի մէջ 7000 բուլգար բնակիչներից 5000-ը գազանաբար ջարդեցին: Իրենց եկեղեցիներում ամրացած՝ բուլգար կարիճները պաշտպանւեցին յուսահատ մոլեգնութեամբ, մինչև որ հիւսիսից հնչեց օգնութեան աղաղակը:

Բուլգարիան ազատագրւեց, ռուսական բազուկների վրայ յենւած, դարձաւ ազատ ու անկախ պետութիւն, — և այդ իրողութիւնն ևս ուժգին անդրադարձուամբ ունեցաւ հայկական ծակտափերի, հայ գիտակից տարրերի հոգեբանութեան վրայ...

1877—78-ի աղէտալի օրերից ի վեր լսում ենք մերթ ընդ մերթ—աւելի յաճախ և աւելի որոշ ու հուժկու, քան առաջներում — բողոքի շեշտեր սուլթանական բռնակալութեան դէմ:

ԱՏՏ Ստեփան Փափազեանը, որ կրակ է կարում Ազգային ժողովի մէջ, երբ լուր է գալիս, թէ Սադրազամը պաղ, թշնամական խօսքերով է դիմաւորել և ճամբու դրել Խառն ժողովի պատգամաւորութիւնը (1879-ի յունւարին): Ինչպէս արդէն յիշատակել էինք նախօրդ էջերում, վերջինը գնացել էր «յարաճուն հարստահարութիւնների մասին տեղեկագիր ու գանգատ բառնալու»: Մեծ վեզիրը պատասխանում էր, թէ «Ասիական թիւրքիայով զբաղւելու ժամանակ չունի»... և թէ մտադիր է բննիչ կոմիսիօն ղրկել այնտեղ, թիւրք նախագահով:

Ազգային ժողովի վրայ, ի՞նչ ասել կուզէ, մի անգամ ևս պաղ ջուր է ցանում համիդեան սադրազամի այդ սպանիչ ցինիզմը: Ստեփան Փափազեան ամբիօն է բարձրանում և արտասանում է դարձեալ մի ուժեղ ու յանդուգն ճառ: Արհամարհանքով ժխտում է նա ղրկւելիք «կոմիսիօնի» արժէքը, քանի որ մինչ այն ղրկւածները ապարդիւն էին անցել, ապա ասում է.

Վառարկեն, թէ Բ. Գուռը երուպական հաճկաստանի գործերովը պաշարուած է և չունի ժամանակ Հայաստանի վրայ դարձնելու ուշադրութիւն: Այո՛, չունի ժամանակ Հայաստանի վրայ իր ուշքը դարձնելու, վասն զի եւրոպական հաճկաստանի մէջ ապստամբ և զինեալ ժողովուրդներ կան, փոխ ուրիշ կայ, մինչդեռ աստի՛ն, Հայաստանի մէջ անմեղ ու անզէն ժողովուրդ

XI

Ը Ս Բ Ո Ս Տ Ա Ց Ո Ւ Ս Ի Գ Ո Վ Ե Ի

Բացող բերանները. — Սեփան Փափազեան Ազգային ժողովի մէջ. — Ապստամբութեան անուղղակի հրաւեր. — Գործիչների փաղանգը 70-ական բւականներում. — Նուպար-Շահնագարեան սաները և «Երկրագունիս». — Փորթուգալեան և «Ասիա». — Արքայական ընկերութիւններ. — «Իէպի Հայաստան» կարգախօսք. — Գաւառական պայտօր հայ ազասանիս երիտասարդութեան դասի առջև. — «Արարեսեան» ընկերութիւնը. — Փորթուգալեան Վանում և թիֆլիզում. — Ռուսահայոց աջակցութիւնը. — Վանի վարժապետանոցը և նրա կարճատե գոյութեան արդիւնքը. — Գրականութիւն և մամուլ. — Ինքեկց և իր վէպերը. — «Իունց»՝ ժամադրավայր ազասատէ մատուակամութեան. — Խոռովութիւններ Զէյթունի մէջ. — Յարութիւն Զաւրեան. —

Հայ լեզուներն ևս բացւեցին: Երկրի յարաճուն տագնապը, պատմական փոթորկալի վայրկեանը, ուսուսաց յաղթական արշաւանքը, որ շատերի աչքում ազատարար հողմն էր, կոչւած վերջ աւուր միանգամ ընդմիջու նիսալուսնի տիրապետութեան, վերջապէս, տասնեակ տարիներից ի վեր հնչող աղերսների և գանգատների ամուրթեան գիտակցութիւնը, — այդ բոլորը չէր կարող չվառել թիւրքահայ մտաւորականութեան գէթ մի բանի զգայուն ներկայացուցիչներին. և ահա

մը կայ, բրդաց բարբարոսութեան և սպտազէն հրոսներուն մատնած, որ կրսպաննեն, կը բանդեն, կը յափրշտակեն և կը մնան ազատ ու անպատիժ, շնորհիւ անպիտան պաշտօնակալաց: Եթէ բարենորոգմունք մեծ ծախսոյ կը կարօտին, ի՞նչ դժարութիւն կայ, սակայն, որ գէթ զէնք շին տար հայ ժողովրդին, որ զինքը պաշտպանէ... Ինչո՞ւ շին փոխեր ու պատժեր գէթ պաշտօնատարներն, երբ իմաց կուտանք... Եւրոպական Տաճկաստանի մէջ և այլ տեղեր յունազգի պաշտօնակալներով լեցուեցին և տակաւին հայ պաշտօնեայ մ'անգամ չգրին Հայաստանի մէջ... Եւրոպական Տաճկաստանը սպտամբութեան դիմելով, կրցաւ կորզել այդ իրաւունքը, իսկ Վսիոյ հայ ժողովուրդը, վասն զի աղերսական կերպով կը խնդրէ, անոր կը զլացուի ամեն հաւասարութեան իրաւունք" *)...

Ապստամբութեան անուղղակի կոչ էր Ազգային ժողովի բեմից...

* * *

Ստեփան Փափազեան, որ 1878-ի Անհատողովի միջոցին պատրիարք Արթուրեանի կողմից Բերլին էր ղրկւած, իբրև խորհրդատու հայ պատգամաւորութեան, մէկն էր ժամանակի ականաւոր դէմքերից:

70-ական թւականներին տեսնում ենք Պօլսոյ մէջ երիտասարդ գործիչների մի փաղանգ, — Շահնազարեան, Փորթուգալեան, Մինաս Չերազ, Արփիարեան, Տէմիրճիպաշեան և այլն — որ վերանորոգչական ձգտումներով սոգորւած, եռանդով արծարծում էին Ազգային Գաղափարը, թէ մամուլի ու գրականութեան մէջ և թէ դպրոցական ասպարէզում: Եւ այդ գաղափարը նրանց երիտասարդ ու թարմ աշխարհահայեացքի մէջ անբա-

*) Ատենագր. Ազգ. ժողովոյ, 1878 թ. էջ 351-52:

ժան կերպով կապւած էր Միութեան ու Ազատութեան գաղափարի հետ: Հայ առաջադիմական բանակն էր այդ, թիւրքահայոց մտաւորական elite-ը, որ ձուլւած բոլոր տարրերից, առանց դաւանանքի խարութեան, — լուսաւորչական, կաթօլիկ ու բողոքական — ցաւով ու ցասումով էր դիտում Հասունեան ու հակահասունեան պայքարներից առաջացած անդունդը: Կատարութեամբ յետ էր մղում բոլոր պառակտիչ ինտրիգները, «Ազգը» վեր, բարձր էր դասում բոլոր կրօններից ու դաւանանքներից և ազգային գերագոյն դատի շուրջը բարոզում էր միութիւն ու եղբայրութիւն, ներշնչւելով անմահ Պէշիկթաշեանի այս յաւերժաթարմ ու զմայլելի սողերից.

Տո՛ւր ինձ բու ձեռքդ. եղբայր եմք մեք
Որ մըրբրկաւ էինք գատուած.
Բաղդին ամէն ոխ չարաննդ
Ի մի համբայր ցրուին ի բաց.

... Մեկտեղ լացինք մենք ի չընում.
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսը և ըզխընդում
Որ սագմարդին ըլլայ մեր ջան:

Երբ ալեւոր Մայր Հայաստան
Տեսնու գորդիք իւր քովէքով,
Սրբտին խորունկ վերբըն դաժան
Քաղցր արտասուց բուժին ցողով:

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն:

Շատերը այդ երիտասարդներից Ն. Ու. պար-Շահնազարեան դպրոցի սաներ էին: Դա միակ գիշե-

րօթիկ վարժարանն էր, որի աշակերտները մեծ մասամբ պատկանում էին հայ ունեւոր դասակարգին: Բացի այդ, կարև ամերիկեան Ռօբերտ Վօլլէջը, աւելի լուրջ կազմակերպութեամբ: Միջազգային էր, բայց իրօք միայն հայ ու բուլգար աշակերտներ ունէր: Հայ աշակերտների մեծամասնութիւնը գաւառներից էին, մասնաւորապէս Կեսաբիայից: Այդ դպրոցի մէջ ևս պատրաստում էին ապագայ հայ ազգային գործիչներ: Վերջապէս, Վենետիկի Ռաֆայէլեան վարժարանից գալիս էին շարունակ ընթացաւարտ երիտասարդներ, շատ թէ քիչ լուրջ մասւոր պատրաստութեամբ, կաթօլիկ մեծ մասամբ, բայց մշակած ազգային գաղափարով, խանդավառած պատմական Հայաստանի յիշատակներով: Դրանց մէջ էր տաղանդաւոր հրապարակախօս Արփիար Արփիարեանը: Այդ սերունդն էր, որ ուզեց իր թւերի վրայ առնել Հայաստանի դաստիարակութեան ու վերածնութեան գործը: Կուպար-Շահնազարեան սաների ջանքերով դեռ 1870-ին հրատարակեց «Երկրագուն»-ը: Բոլորովին խակ, բայց խանդավառ երիտասարդներ էին գրողները. այդպէս էր և ամենամեծ աշխատակիցներից մինը — Կ. Մինաս Զերազ, որ չէր էլ զբաղւում «մարտական» հրապարակագրութեամբ, այլ աւելի տարած էր գրական ու լեզական մարզանքներով: Կուպար-Շահնազարեան սերունդը ուխտել էր «ազգասիրութեան ախոյեան ըլլալ»: Կա կուզէր գառնալ Պօլիս-Կենտրոնում ազգային քաղաքակրթութեան ու ազատութեան մի վառարան, որ պիտի ճառագայթէր դէպի ամեն կողմ: «Երկրագուն»-ի մէջ կարդում էք ամեն քայլափոխում հայ աշակերտ-

ների պաթեթիկ ձօնը մամուլին ու առաջադիմութեան... «Յառաջ, դէպի լոյս... Անտարբերութիւնը մահ է: Շարժի՛նք»... և այլ նման բացականչութիւններ: Արծարծում են ազգի ու հայրենասիրութեան գաղափարը, երգում են Հայրենիքը, դրւատում են Ազատութիւնն ու Արդարութիւնը:

Յառաջ, ո՛ր հայ երիտասարդութիւն, յառաջ, գաւառացոցն սրտին գոգելով սիրտդ միութեան... Այժմ՝ ճշմարիտ գործելը կրսկսի, նախապաշարումը զինաթափ և սկզբունքը յաղթական կը հանդիսանայ, ժողովրդական ձայնը աշնան ցուրտ հողմէն գետին ընկած սաղարթին պէս... այլ ևս ոտից կոխան չըլլար, ուր անձնական շահը գերեզման կ'իջնէ և հասարակաց շահը կը փթթի... Աստի կրսկսի վերակենդանութիւնն Հայոց:

Հայաստանի մէջ... ոչ ճարտարութիւն և ոչ ստացուածոց ապահովութիւն կայ... Հոն իրաւունքը հզօրագոյնին ձեռքը և ամեն վայելք կեղեքողին *)...

Հայրենիքը իւրաքանչիւր ազգի նախահարց գերեզմաններու վայրն է և ծննդոց խանձարուր... Հայրենաց սիրոյն արիւն թափելը ու մեռնիլը նոր կեանք ու անմահութիւն է հայրենասէրին (էջ 258):

Քիչ դէնը, սակայն, գրւած է.

Հայրենիք դիւցազուններ շուգեր, հանճարեղներ կուզէ: Հայրենիք զինու զինուր շուգեր, լուսոյ զինուր կուզէ...

Վգապեան և Շահնազար վարժարաններն լուսոյ այն զոյգ արգանդներն են, որոնցմէ պիտի ծնանին Մաղամ՝ Ղր Ստայլներ, Լամարթիներ, Հիւկներ, Լավուազիէներ... Աշխատեցէք անդուր. անիծեալ էք, եթէ թերանաք ձեր պարտուց մէջ: Ա՛լ ժամանակն է, որ ասեղները գրչի վերածէք (էջ 473—74):

Եւ ամեն տեղ Փրանսիական մտքի ու գրականութեան ազդեցութիւնն ենք տեսնում, նոյնիսկ հաս ու կտոր ուսուսական գաղափարներ.

*) «Երկրագուն», 1870 թ. էջ 131—150:

Այո՛... ազատութիւնը մարդկային ազգին ամենամեծ ճակատագիրն է. Աստուած ազատ ստեղծեց զմարդ (էջ 365):

... Հասաւ ժամանակը, (Տնչեց այն երջանկաւէտ ժամը, ուր Միտքը ա՛լ անցնելով ամպրոպները, ինքը սկսաւ ամպրոպել գտիեզերքը: Մեծ Յեղափոխութիւն մը յանկարծ դրաւ ինչ զՏամայն ուշխարհ... Պարտուց և իրաւանց օրէնքները տակաւ ընդհանրացան: Զինուց և Վահանաց փայլը պահ մը մթադնեցաւ... Արեան պետերուն առջև ամօթապարտ ընկան, Ազատութեան զգացումը ամեն սրտերու մէջ կենդանութեան ցնցում մ'ըրաւ...)

Եւ մինչ երիտասարդ նորընծաները պաշարած էին փիլիսոփայական ու ընկերաբանական խոհերով, բանաստեղծ Ֆէլէկեան գրում է իր «Եփրատայ հառաչանքը», որ տեղ-տեղ յիշեցնում է Պատկանեանի «Մայր Արաքսին»:

Հայկ, գերեզմանդ իզուր ես բացեր, դեռ չի արշայոյս,
Ելեր դիչերանց ու քաջերդ ի լոյս, կր կանչես ի դուրս
Շիրի՛մը ցրտագին՝ մեր հարց դիւցազուն ինչո՞ւ բացուեր էք,
Դեռ ահա հսկէ լուսնակն ի վերէն զձեզ, բնացէք՝

Մինչև որ դառնայ հայոց նոր տարին
Իւր Մասեաց սարին:

Տեսէ՛ք, թէ ինչպէս Եփրատայ եզերք լին և տխուր,
Ալիքն են պղտոր, փրփուրք վշտածին, նուազք թափուր
Իւր սրգոց քաղցրիկ պահած յիշատակն այնպէս դարերով
կարօտն ի սրտին հոսի գլխակոր, կերթայ դեռ յուսով՝

Թէ մի օր, անշուշտ, դառնայ նոր տարին
Իւր Մասեաց սարին:

* * *

1873-ից ի վեր այդ երիտասարդ և հայրենասէր շարքերի մէջ մէկը առանձնապէս գրաւեց հանրային ուշադրութիւնը իր շիտակ ու անվախ բնաւորութեամբ,

իր տաք, յեղափոխական խառնածքով: Մ կ ր տ ի չ փ ո Ր Թ ու գ ա լ ե ա ն ն էր, որին վիճակած էր յետագայում հիմնել առաջին հայ յեղափոխական կուսակցութիւնը և դառնալ ուսման հայ նորագոյն շարժման 1873-ից նա սկսեց հրատարակել Պօլսոյ մէջ իր թերթը «Ասիա» անունով, որ մի բանի ամիս կեանք միայն ունեցաւ: Հայ միջավայրը, որքան էլ փոթորկած բողոքի նշանաբաններով, այնուամենայնիւ չհանդուրժեց նոր, երիտասարդ առաքեալի կծու լեզուն, նրա շիտակ, անվերապահ խօսքը: Փորթուգալեանը չափազանց ըմբոստ ու արմատական երեւաց իր շրջապատին և վերջինը դաւեց նրա դէմ ու խափանել տւեց թերթը: Ըստ երևոյթի, որոշ դեր էր խաղացել այդ բնութեան մէջ ինքը Ներսէս պատրիարքը, որին երկիւղ էր պատճառել փորթուգալեանի ըմբոստ գրիչը:

Բայց շուտով վրայ հասաւ գործունէութեան աւելի հրապուրիչ մի շրջան ազատասէր երիտասարդի համար: Հիմնեց Արարատեան ընկերութիւնը:

Բարեգործական և կրթական անւան տակ հիմնած ընկերութիւնները թիւրքահայերի մէջ նշանաւոր դեր են կատարել ազգային ինքնագիտակցութեան հասունացման տեսակէտից: Մենք արդէն յիշատակեցինք նախընթաց գլուխներում առաջին ընկերութիւնները, հիմնած 60-ական թւականներին: «Անձուէր» ընկերութիւնը, ինչպէս տեսանք Մկրտիչ Տատեանի մի յօդուածից, Պօլսի հազարաւոր հայ պանդուխտներին գրել ու կարդալ էր սովորեցնում և գաւառները ճամբուով Երկրորդ խոշոր ըն-

կերութիւնն էր Բ արեգործականը: Նրա նպատակն էր Կիլիկեան վարդապետները:

Հանգուցեալ Արփիարեան վկայում էր, որ այդ ընկերութիւնները ազատական ծրագիր ունէին, որ նրանց վարիչները ուշք չէին դարձներ դաւանական խտրութիւններու վրայ և խղճի կատարեալ ազատութիւն կը պահանջէին: Արփիարի ասելով, Բարեգործական կամ Կիլիկեան ընկերութեան ակումբի մէջ մի անգամ խօսել է և Միքայէլ Նալբանդեանը: Վաթօլիկ Կերենցը, բաւականաչափ դրամ հաւաքելով Կիլիկիա էր գնացել, ազարակ գնելու և երկրագործական վարժարան հիմնելու: Սակայն շուտով ծայր տւեց հայկական դաւաճումը: Պապական հայ պատրիարք Հաստուը՝ թէ Հոսի և թէ իր շահերի համար վտանգաւոր գտնելով կաթօլիկ հայ երիտասարդութեան միաբանութիւնը լուսաւորչականների հետ, սկսեց ինտրիգներ և թիւրք կառավարութեանը մատնելով, խափանեց ընկերութեան բարգաւաճումը *):

70-ական թւականների հայ առաջադէմ երիտասարդութիւնը աւելի բարեբախտ վիճակի մէջ էր կրօնական-դաւանական անտագոնիզմի տեսակէտից: Հակամարտութիւն դեռ կար, անշուշտ, հայութեան այլադաւան հաստատների միջև:

Մինչդեռ հռոմէական հայերը ամենաստուար մեծամասնութեամբ ազգութիւնին կուրանային կրօնական մոլեռանդութեան մէջ սուղելով, լուսաւորչական հայերն այ կը հռչակէին ինչ «արտաքոյ հայ եկեղեցւոյ չիք Հայութիւն»... Հայ հռոմէական և հայ լուսաւորչական հասարակութիւն-

*) Նոր կեանք, 1 յուլիս, 1899 թ.:

ները բով քովի կապրէին, առանց իրարու հետ ունէ մտերմական յարաբերութիւն ունենալու, ամեն պարագայի մէջ շատ աւելի բիշ յարաբերութիւն ունենալով, քան իրենցմէ անձնուրբ իրենց բնակակից Թիւրքին, Յայնին, Հրէային կամ Եւրոպացիին հետ *):

*) Ա. Չոպանեան. Պէշիկիթաշեանի կեանքն ու Գործը՝ էջ 203—204:

Կենսագրական և քննական այս գեղեցիկ գրածքի մէջ պ. Չոպանեան բնորոշում է թիւրքաձայ մեծ բանաստեղծի դերը դաւանական այդ քստմենքի և ազգակործան պայքարների ընթացքում:

«Չարիք մը վիթխարի, պողպատաձև, վեց եօթ դարէ ի վեր հայ ազգին հոգւոյն ու մարմնւոյն փաթթած, անոր արիւնք բաժող, էութիւնը քայքայող... Այդ շարիքին դէմ մաքառեցաւ Պէշիկիթաշեան»:

... «Բոլոր այն բնկերութեանց մէջ, որոնց գործակցեցաւ, բոլոր երեկոյթներուն, հանդէսներուն, ժողովներուն մէջ, որոնց մասնակցեցաւ, ազգային եղբայրութեան այդ մեծ սկզբունքին տարածիչն եղաւ ամեն բանէ առաջ իր ծառերուն մշտական յանկերգը կը կազմէ ազգասիրական համբարաշխութեան փառաբանումը. և որքան իր բառերը բաղար են ու դաշն՝ երբ միութեան, ազգասիրութեան վրայ կը խօսի, այնքան կատաղի կը դառնայ իր ոճը, երբ ազգատեսչաներուն, ազգուրայներուն դէմ իր զգանքը կը յայտնէ:

«Ազգատեսչութիւնը — ասում էր «Գու զո՞վ խնդրես»-ի անմուռանալի հեղինակը իր մի ծառի մէջ, ակնարկելով ազգութիւնն ուրացող մոլեռանդ հռոմէականների վրայ — բիրտ, զզւելի, վնասակար ու տգեղ է. ազգատեսչը կը սիրէ օտարին խաբեբայ փետուրներովը գարգարելի ու անով պարծիլ օտարներուն առջին. սղորմելին չի գիտեր, որ վերջապէս անոնք կը փետտուին ու ինքը կը մնայ մերկ ու խայտառակ. հարցնենք մէյ մը այդպիսին, թէ ինքը ի՞նչ ազգ է. Հայ չէ՞՛ վասն զի ոչ Հայութիւն կը խոստովանի, ոչ այ անոր լեզուն»

Այնուամենայնիւ, ժամանակի ոգին ևս աւելի ուժեղ էր, նախորդ սերունդի ազատամիտ ներկայացուցիչներին— Սկանների ու Պէշիկթաշլեաններին— քարոզները ապար- գիւն չէին անցել, կրօնական անտագոնիզմը մեղմացել էր: Տարբեր դաւանանքի հայ երիտասարդներ միացան, լծւե- ցին ազգային ընդհանուր վերածնութեան գործին: Երեք ընկերութիւններ կազմւեցան. Արարատեանը, Գպրոցա-

կրնդունի. բայց չի կարծէ, որ օտարը կրնդունի գայն, որ բուն իր ազգը շուգեր ճանչնայ: Ուրեմն այդպիսին անհա- րազատ կամ խորթ զուակ մըն է, որ շուտով պէտք է հա- լածել. շուտով կտրելու է ան փտտած անգամը, որ բոլոր մարմինն ալ չ'ապականէ²:

«Այբայր եմք մեք» երգին մէջ է, որ Պէշիկթաշլեան խոտ- ցուց գերագոյն արտայայտութիւնը իր բոլոր այդ ազնիւ զգացմանց... «Այբայր եմք մեք» հայկական միութեան Մարտէյեէզը եղաւ. Այդ երգը հրաշակիրս մըն է ոչ ձևի բացարձակ կատարելութեամբ, այլ զայն ոգևորող զգացման զմայլելի բնքութեամբ, խորութեամբ և անկեղ- ծութեամբ. այդ շորս տունին մէջ բանաստեղծը բսած է ամեն ինչ որ անհրաժեշտ էր բսել՝ այդ կնճոռոտ, ցաւագին վտանգաւոր հարցին վաղնջական ժանտ մթութեանը մէջ հաշտութեան ըստ յաղթական տարածելու համար... Չկան հոգ պատմական ակտութիւններ, պատճառաբանութիւններ, ծանր ու երկայն խորհրդածութիւններ. սրտի աղաղակ մըն է պարզապէս... Այդ երգը ելեքարականացուց հայ սրտերը, հալեցուց սառույցը, որ դեռ կը մնար հստակեանքի ու լու- սաւորչական հայոց միջև, ամենէն սիրական երգը դարձաւ, ամէն երեկոյթի, ժողովքի, հանգէսի մէջ հնչեց ու հոգե- ներուն վրայ խաղաղութեան, կղբայրութեան, սիրոյ արև մը քաղցրաշող ծագեցուց³: (Էջ 205—206):

սիրաց-Արևելեանը և Կիլիկեանը *): Նշանաւորը Արա- րատեան ընկերութիւնն էր, որին աջողեց բաւական սերտ կապ հաստատել թիւրքահայերի և ռուսահայերի միջև, շնորհիւ այն կենդանի յարաբերութեան, որ ստեղծւեց Գրիգոր Արծրունու և այդ ընկերութեան երկու գլխա-ւոր վարիչների—Փորթուգալեանի ու Արփիարի—միջև:

Արփիարի—որ, ըստ Փորթուգալեանի, նոյնիմբը յղա- ցագն է ընկերութեան գաղափարի — պատմում է այն օրերի ժողովներն ու խորհրդակցութիւնները ՚նոր կեանք⁴ի մէջ: Հինգ-վեց հոգի են ընկերութիւնը հիմնողները, մեծ մասամբ Մուրատ-Ռաֆայէլեան վար- ժարանի նախկին սաներ: Ոմանք առաջարկում են նալ բան դեան անունը աալ նրան, ի յիշ շ տակ ռուսահայ մեծ յեղափոխական նահատակի.. Այդ առաջարկն արդէն շատ բան էր ասում հիմնադիր երի- տասարդների հոգեկան տրամադրութեան մասին: Ը- րոտսներ էին նրանք տիրող կացութեան հանդէպ և կրթական-դաստիարակչական նպատակներ հետապնդե- լով, սրտի խորքում Հայաստանի ազատութեան գաղափարն էին փայփայում ու երազում:

Փորթուգալեան արդէն յայտնի կարիէր ունէր: Ու- սուցիչ էր եղել Թոգատի մէջ, ուր ձգտել էր ներշնչել հայ ժողովրդին իր իրաւունքների գիտակցութիւնը,

* Յետագայում (1880 թւին) երեք ընկերութիւնները վերածւեցին Միացեալ Անկերութեան: Տես այդ առթիւ Մ. Փորթուգալեանի «Պոլիս և Հայաստան» խո- րագրով յոգւածաշարքը, «Արմենիա» 1900 թ. դեկտեմբերից մինչև 1902 թ. յուլիս:

պատրաստել էր նոր, գաղափարական երիտասարդութիւն, կռիւ էր մղել աղայականութեան ու բռնութեան դէմ և այդ պատճառով շղթայակապ բանտարկել էր Քոզասուժ, ապա քըստընել որոշ ժամանակ Սեբաստիա: Պօլիս, իր ծննդավայրը վերագառնալով, նւիրել էր օրագրութեան, իր «Ասիա»-ով, որի վախճանը տեսանք արդէն:

«Ամուր, պինդ մէկը կը տեսնէի—ասում է Արփիար, իր յիշողութիւնների մէջ «Ամէնիա»-ի Կապալ խըմբագրի մասին—յստակ համոզումներու, որոշ գաղափարներու տէր: Զգացի, որ այսպիսի նկարագրի տէր անձերով է, որ կարելի պիտի ըլլայ զօրեղ գործեր ընել» *):

Տարաբախտաբար, նոյնքան ուժեղ չէին իրենց նկարագրով «Արարատեանի» միւս վարիչները...

Փորձուգալեան յանձն առաւ գնալ Հայաստան, իբրև նորակազմ ընկերութեան գործակալ: Մի գեղեցիկ առաքելութիւն՝ նոյնքան գրաւիչ, որբան և դժւարին այն ժամանակաշրջանների մէջ: Հայրենասէր երիտասարդը զւարթ սրտով յանձն առաւ ամեն զրկանք, դիմեց դէպի Հայաստանի սիրտը — լուսաւորութեան ռահվիրայի իր պաշտօնով և իր երգը շարունակելով՝

Ազատութեան ես անձնուէր
 Ախշտ, ցաւ սիրով եմ յանձն առեր:

Գնաց վ.ան 1876-ին, շրջագայեց երկար, ուսումնասիրեց հողը կրթական հաստատութիւններ հիմնելու համար: Նրա օրինակը բարի նախանձ ու մրցում առա-

*) «Նոր կեանք», յուլիս 1899:

ջացրեց միւս պօլսական ընկերութիւնների մէջ, «դէպի Հայաստան» կոչը դարձաւ կարգախօս, ինչպէս մի ժամանակ ռուս ինտելիգենցիայի «դէպի ժողովուրդ»-ը: Գպրոցատիրաց ընկերութիւնն էլ Մուշի գաւառը ընտրեց



Մ Կ Բ Ե Ի չ Փ Ե ր Ե ր Գ Ե Լ Ե Կ Ե Կ

իբրև գործեւաւայր և զրկեց Սարըբանը, իբրև Տարօնի կրթութեան տեսուչ:

Արարատեան ընկերութիւնը կամաց-կամաց մեծացաւ, անդամների թիւն աճեց. պակասում էր սակայն ամենագլխաւորը—գրամը: Պօլսական բուրժուազիան սիրտ

չունէր գաղափարական ձեռնարկների համար և մեծ դժ-
ւարութեամբ էր տալիս մի բանի գրօշ. իսկ լոկ փոքրածիւ-
մտաւորականների ամսականներով չէր կարող գործել մի
ընկերութիւն, որ այնքան լայն նպատակ էր դրել իր առջև:

Ռուս-թիւրքական պատերազմի միջոցին Փորթուգա-
լեան ուղեւորեց դէպի Վովկաս, մօտեցաւ Պրիգոր Արծ-
րունուն, մնաց միառժամանակ նրա եռուն արհեստանո-
ցում, աշխատակցեց նրա թերթին և ձգտեց ուսա-
հայ մտաւորականութեան ուշադրութիւնն ուղղել դէպի
Պօլսի ու հեռաւոր Հայաստանի մէջ սկսող գործը: Փոր-
թուգալեանի այցը ուսահայերին՝ բերեց շուտով իր
պառնշները: Արծրունին ուժեղ կերպով հետաքրքրեց և
խոստացաւ նպաստ հաւաքել «Արարատեանի» համար:
Արծրունու թելագրութեամբ, թիւրքահայ երիտասարդ-
առաքեալը ներկայացաւ կովկասեան իշխանութեան և
թոյլտուութիւն ստացաւ հանգանակութիւն բանալու:

Փորթուգալեանի միջոցով կապեց «Մշակ»-ի հետ
Ճայկակ-Արփիարը, ու և սկսեց կանոնաւորապէս թղթ-
թակցել թիֆլիսեան այն ժամանակ առաջադիմական
օրգանին: Իր յուշերի մէջ Արփիար գրում է.

Օր մը թիֆլիզէն մեզի հասաւ թերթերու ծրար մը, գոր
Փորթուգալեան կը խրկէր: «Մշակ» անունով թերթ մըն էր,
խմբագիրը Պրիգոր Արծրունին էր: Երկու անուններն այն ան-
ժանոթ էին մեր շրջակայներուն * : Մենք միայն «Մեղու
Հայաստանի» լսած էինք, անոր մէկ թիւը միայն որ մը դիպ-
ւածով ձեռք բերին անցած էր: «Մշակ»-ը շատ ախորժանքով
կարդացինք: Գաղափարներու ազատականութիւնը, կտրուկ
ոճը հաճելի երևցան մեզի:

«Մշակ»-ը արդէն 5—6 տարուց ի վեր գոյութիւն ունէր և
դեռ անձանօթ էր պօլսեցի մտաւորականներին...

Հանգանակութիւն սկսեց ի նպաստ «Արարատեանի»
— և նոյն Արփիարի ասելով, պօլսեցիների համար մեծ,
ուրախալի անակնկալ էր, երբ ուսահայերը առաջին
անգամ Արծրունու միջոցով փոխադրեցին նոր ընկերու-
թեան համար հազար ոտաւլի Պօլսեցի հարուստները
բաջալերում են և իրենք ևս սկսում են օգնել:

Փորթուգալեան վերագրում է Վան, բաջալերած
Արծրունու հեղինակաւոր աջակցութեամբ, մշակած նրա
գաղափարներով: Եւ հիմնում է Վանի մէջ, 1878-ի
աշնան, իր համբաւաւոր Վարժապետանոցը,
որ պէտք է դառնար մի տեսակ կենտրոնական վառա-
րան ամբողջ հայրենիքի վերածնութեան համար: Արծ-
րունու ներշնչւումով՝ դնում է վարժարանը ամենա-
լայն հիմքերի վրայ, հրաւեր է կարգում նոյնիսկ թիւրք
ու քիւրդ զրացիներին՝ դպրոց ղրկելու իրենց զաւակ-
ները: Բանակցութեան մէջ են մտնում նոյն նպատակով
և նեսաօրական կաթողիկոսի ու քիւրդ բէյերի հետ:
Համերաշխութեան այդ մեծ ժեստերը արդիւնք չունե-
ցան և ինքը դպրոցի հիմնադիրը շատ չէր հաւատում
հայ-թիւրք-քիւրդ համերաշխութեան գաղափարին: Այդ
սկեպտիցութիւնը յետագայում տիրական գծերից մէկն
էր «Արմէնիա»-ի խմբագրի յեղափոխական հրապարա-
կագրութեան:

Արարատեան Անկերութեան գործունէութիւնը այդ-
պիսով փոխադրուած էր Պօլսից Հայաստան:

Տեղը չէ երկարօրէն խօսելու Փորթուգալեանի զուտ
կուլտուրական գործունէութեան վրայ: Վարժապետա-

նոցը մի քանի տարի ապրելուց յետոյ, կառավարութեան հրամանով փակեցաւ Հայի մատը դարձեալ խառն էր բռնակալական այդ հարածի մէջ: Դաւ, գաղտնասուբ, զրպարտութիւն: Երիտասարդ առաքեալը իր ազատամտութեամբ և շիտակ ու անկախ բնաւորութեամբ յարուցել էր, բնականաբար, դժգոհութիւն ու թշնամանք հայ «աղգայինձիների» բանակում: Բամբասեցին նրան, ձգտեցին արատաւորել նրա բարոյականը: «Վարժապետանոցը անկրօնութիւն կը քարոզէ» — ձայնում էին սեւազգեստ դաւադիրները: Մի վարդապետ եկեղեցու բեմից ամենացած ձևով գրգռում էր ժողովուրդը «անհաւատութիւն սորվեցնող» Վարժապետանոցի դէմ: Խռովութիւն, յուզմունք Վանի մէջ... Լուր տարածեցին, վերջապէս, թէ Փորթուգալեան կուլտուրականութեան վարագոյրի տակ իրօք իր ըմբոստ, յեղափոխական գաղտփարներն էր սերմանում Վասպուրականի հայ երիտասարդութեան յրջաններում: Ճշմարտութեան բաժինը կար, անշուշտ, այդ դաւաճան ալարմի մէջ: Տեղեկագիր տեղեկագրի ետեւից թափեցին Պօլիս, Պատրիարքարան, գուցէ և այլ տեղեր *): Եւ համակրելի ձեռնարկը խափանեց: Փորթուգալեանին արգիլեց ծնալ Վասպուրականում, նա նորէն դարձաւ աքսորական, վերադարձաւ Պօլիս: Սակայն այնտեղ էլ մթնոլորտը չափազանց խեղ-

*) Ինքը Փորթուգալեան—ինչպէս մի որ պատմում էր գրքիս հեղինակին—ոչ մի կասկած չունի, որ յիբաւի Վարժապետանոցի փակումը հայ դաւադրութեան արգիւնք էր: Նա նոյնիսկ համոզուած մասնացոյց էր լինում որոշ անձերի վրայ:

դուկ էր՝ ազատասէր քարոզչի համար և մի քանի տարի յետոյ, նա ինքզինքը նետեց Լուրպա, հաստատուեց ընդմիշտ իր յեղափոխական տպարանով Մարսէլի մէջ: Վարժապետանոցը իր կարծաւու գոյութեամբ իսկ չափազանց արգիւնաւոր եղաւ: Փորթուգալեան պատրաստեց ստրկութեան որրանի մէջ մի նոր սերունդ, ազատասէր և մարտական տրամադրութեամբ, — Աւետիսեանների սերունդը, որ գրկեց խնդրավառութեամբ Հայաստանի ազատութեան դրօշը և գնաց դէպի բանտ ու կախաղան. . .

«Փորթուգալեանը ազատութեան շունչ մը փչեց ամբողջ Վանի վրայ, ասում է Արփիար, առանց Յեղափոխութիւն բառը արտասանելու, պատրաստեց յեղափոխական սերունդ» *):

*) Վան հանդիպած եւրոպացի հռչակաւոր ճանապարհորդներ զարմանքով էին դիտում Հայաստանի հեռաւոր անկիւնի մէջ հաստատուած այդ բարձրատիպ վարժարանը: Ահա թէ ինչպէս էր խոսում նրա մասին Լիւնի մեծանուն գիտնական Էրնեստ Շանտր.

«Մեր Վան համեկուն հետեւայ օրը գնացիմ ու ուսական հիպոստո, հայազգի կամասրակների տներ... Խնդրեցիմ իմմ, որ նախ ևս առաջ ցոյց տայ մեկի Հայոց Վարժապետանոցը: Ան հիանալի կերպով կազմակերպում է մեր այցելութեան միջոցին 60-ից ավելի աւակերներ ուներ: Այդ բոլոր պատանիները կ'երեւային լուրջ, կարգապահ և մտնաւանդ աշխատակեր: Հասկի անակնկալ էր մեզ համար՝ տեսնել այնքան բազմաթիւ պատանիներ: Բայց սակայն մեծ եղաւ մեր գանձակերպիւնը, երբ պատանիքն ու աշխատակերպն վրայ մեր տած հարցումներին՝ մի նախի աւակերներ ցուց լաւ պատասխանեցին մտանքերն լեզուով... (De Beyrouth à Tiflis, par M. Ernest Chantre, Paris 1889):

Ահա և Խրիմեան Հայրիկի մի շրջաբերականը, որ մի այլ

Հարունակներ թիւրքահայ Բողոքի պատմութիւնը: 70-ական թւականների վերջերունքն ենք, Վիժ ու մի ցաւոտ վայրկեաններուն Ըմբոստացման բարոզը—մերթ թոյլ ու երկչոտ, մերթ զօրաւոր և յանդուգն—շարունակում էր հնչել թիւրքահայոց մամուլի ու գրականութեան մէջ:

Ծ ե բ ե ն ց—Շիշմանեանը, հակառակ իր խիստ չափաւոր, ոչ յեղափոխական խառնածքին, լոյս է ընծայում մի շարք վէպեր, որոնք Երզնկեանի ու Բաքմիի երկերի հետ գալիս են հարստացնելու մեր «հերոսական» վիպագրութիւնը: «Թորոս Լեւոնի», «Թեոդորոս Ռշտունի» և «Երկունք» կոթողում են մեր ազգային գիտակցութեան արթնացումի շրջանը, զարկ են տալիս իրենց հերթին հայ ռազմական ինքնաճանաչութեան, արծարծում են կուրի, ըմբոստացման անհրաժեշտութիւնը, նկարագրելով, վերաբարձրելով գեղարեսնական հուժկու էջերի մէջ մեր պատմութեան հազազհետ, դիւցազնական դրագները, ուր առանձնապէս փայլել է հայ ցեղի կենսական կորովը, նրա գործօն ինքնապաշտպանութեան ճիգը:

խօսուն վկայութիւն է Վարժապետանոցի ծանրակշիռ կարևորութեան մասին: Վարագի մէջ տպւած այդ շրջաբերականով խորմեան յորդորում էր հայ հասարակութեանը՝ օգնել նիւթապէս Վարժարանին:

... Փորձագրական Էմբոսի ընդի պոլսեցի է, բայց իւր բուն հայրենախորտեան ոգին գիցնէ վարեւ է ի Հայաստան և ինքն իրեն անխոնջ մտակ կր սկնի, կ'աւելանի մեր հայրենաց յառաջադիմութեան համար: Ուսի ուսումնասիր ազգայնոց ներսական պարսկն է, որ ձեռն ան, Բազալեւն գիցնէ իւր ձեռնաւորութեան մէջ, գիտնալով, որ Կեդրոնական դպրոցը մի ամենակարեւոր հաստատութիւն և միջոց է Վանայ ազգայնոց յառաջադիմութեան: («Արմենիա», 1902 թ. № 44):

Պարբերական մամուլի մէջ 70-ական թւականների վերջերում, «Փունջ»-ն էր ժամագրավայրը հայ մարտական երիտասարդութեան: «Պարտ և Մարտ» խորագրի տակ Տէմիրճիպաշեան գրում էր ազատաշունչ այլարանութիւններ:

Քսաներորդ դարը—ասում է նա Միլլիօսի ուրուականի բերնով—պիտի բերէ ի շարս այլ ազատութիւնների՝ նաև հայոց ազատութիւնը: Նա պէտք է լինի «դարերի մեծագոյնը»...

Ընդ բարոյական սկիզբներ, որք կ'ոտնահարին այսօր, պիտի վեհապետեն այն վեհագոյն դարին մէջ: այն ժողովուրդներ, որք մի անմիտ ինամակալութիւնի տակ են այժմ, շափահաս պիտի լինին և ինքնազուլե պիտի վարեն իւրեանց ճակատագիր: այն ժողովուրդներ, որք կր հեծ են լուծի տակ, պիտի փշրեն իւրեանց շղթաներ... Չե՞ն նշմարեր այն արշալոյս, որ կր ծառագայթէ Մասիսի գագաթին վրայ *...

Ապա յիշենք վերստին Երզնկեան վարդապետի խորխոս ու ցասկոտ հրաւերը նախ «Փունջ»-ի մէջ:

Հայոց ազգի անմիտ երկչոտութիւնը մինչև այն աստիճան հասած է, որ իւր թշուառ վիճակին վրայ խոսվելու նշան անգամ չի յայտնել: Երբեմն իւր յոյսերը Մահամադրութեան վրայ դրած էր, այսօր այ իր բոլոր ակնկալութեանց կեդրոն բռած է դպրոցները և կըսպասէ, որ դպրոցներէն գտնէ ազատութիւն: Բայց միթէ՞ դպրոցին մէջ կր սորվի հայն արիւն ու շաքիւրդին թուրը ջանջախել... Պաշտպանել պէտք է ազգութիւնը, ինչ միջոցով ալ բլլայ, եթէ բարոյական ազդեցութեամբ, եթէ բռնութեամբ, եթէ յեղափոխութեամբ, միայն թէ հայրենիք փրկի *):

* * *

*) «Փունջ», № 1877 մարտ 10:
 **) «Փունջ», 1878 թ. ապրիլ 29. Կ. Պոլիս:

Եւ կարծես ի պատասխան այդ խուլ կոչերի ու ըմ-
բոստացման յորդորների՝ լուր եկաւ 1878-ի վերջերին,
թէ զէ յ թ ու ն ց ի ք ա պ ս տ ա մ բ ե լ են: Ընդհա-
նուր զօրաշարժ չէր հայ հերոսական լեւնավայրում,
ինչպէս 1862-ի յիշատակելի օրերին: Փոքրիկ խլրտուճն
էր: Բայց անգամ այդ փոքրիկ, խմբական ընդվզումը
ահագին շփոթութիւն ու իրարանցում առաջ բերեց
կառավարական շրջաններում, ուր լաւ գիտէին, որ
Զէյթունը մեծ Հայաստանը չէր, որ նրա հետ դժւար
էր կատակ անել:

Ի՞նչ էր պատահել... Յարաբախտաբար, դէպքը շատ
հակիրճ և կցկտուր ձևով է նկարագրւած ժամանակի
հայ մամուլի մէջ: Քննութիւնը ցոյց տւեց—այսպէս է
գրւած «Փունջ» ի էջերում—որ «զէյթունցիք կը գան-
գատին ամենէն առաջ տուրքերի ծանրութեան և պաշ-
տօնեաների խստութեան մասին»: Ըստ երևոյթին, եղել
են և հայ ագիտատօրներ: Դէպքից յետոյ ձերբակալեցին
ու Պօլսի բանտ տարան երեք հոգի, իբրև «պատասմ-
բապետներ»: Զօլագ Յարութիւն վարժապետ, Իզմիրցի
Ղուկաս Փափագեան և Նիկողոս վարդապետ, ֆունուզի
վանահայրը:

«Մասիսի» մէջ (5 դեկտ. 1878 թ.) դէպքը այսպէս
է ներկայացւած.

«Հոկտեմբեր 27 առտուն Զէյթունցի չօլաբ վարժա-
պետ Յարութիւն, գլուխը խել մը անձինք ժողոված, կը
յարձակւի օսմանեան զօրքի վրայ: Մարաչէն իսկոյն
քանի մի գուժարտակ գալով կը հրաւիրեն հայերը հնա-
զանդութեան»: Ի պատասխան — հայերը կրակում են

զօրքի վրայ. վերջինս էլ արշաւում է ապստամբների
դէմ: Սրանք նահանջում են դէպի լեւները. քիչ յետոյ
պաշարւում և ի վերջոյ անձնատուր լինում: 30-ի չափ
զէյթունցիներ Զօլաբ վարժապետի և Փրնուզի վանահայր
հետ ձերբակալելով Զէյթուն են տանում և այնտեղից
էլ առաջուց բանտարկւած ուրիշ 90 հայերի հետ՝ տա-
նում են Մարաչ: Ընդամենը, «Մասիս» ի ասելով, մօտ
200 զէյթունցի այդ դէպքի առթիւ բանտարկւած էին
Մարաշում:

«Փունջ» ի վկայութեամբ, հարիւրաւոր հայ խոովա-
րարներ ապաստանել էին բարձր լեւները և երկար
ժամանակ թիւրք կառավարութիւնը փնտրում էր ու
չէր գտնում նրանց:

Երբ խլրտուճից յետոյ Մարաշի միւթեսարըՔը զօրքի
և քրիստոնեայ համայնքների 1-ական ներկայացուցիչ-
ների հետ Նիլիկիոյ Մկրտիչ կաթողիկոսին միջնորդ են
ձգում, որպէս զի հնազանդութեան հրաւիրէ զէյթուն-
ցիներին, վերջինները աղաղակում են.

«Մենք ապստամբ չե՛նք, այլ ցաւեր ունինք, որոց դար-
ման տարուիլը խնդրած ենք մեր բարեխնամ տերու-
թենէն» և իբր արագոյց՝ 20-30ի չափ եկեղեցական ու
աշխարհական դիմում են դէպի օսմանեան բանակա-
կենտրոնը և յանձնւում թիւրք կառավարութեան: Վեր-
ջինը, փոխանակ իր խոստումները կատարելու, սկսում է
մի շարք բռնութիւններ:

Հալէպի վային, մանրամասն տեղեկագիր ղրկելով Բ.
Դրան, Զէյթունի անցքերի մասին, յորդորում էր զին-
ւորական դատի յանձնել խոովարարներին, ապա թէ ոչ,

ասում էր, «գէշ օրինակ» պիտի լինին և ապագայում հայկական նոր, աւելի մեծ ապստամբութիւններ պիտի ծագին...

Այնուամենայնիւ, սուլթանի կառավարութիւնը, վախենալով թերևս ապստամբութեան ծաւալումից, չհամարձակեց իր սովորական դրահօնեան միջոցներով պատժել հայ լեռնականների այդ նոր թռիչքը: Հարիւրաւոր բանտարկեալները շուտ արձակեցին: Փորթաթիւ «վարիչները» միայն երկար բանտ մնացին:

«Չօլաբ վարժապետը», որ ըստ երևութին կարևոր դեր է խաղացել զէյթունեան այդ խռովութիւնների մէջ և որ շղթայակապ նետել էր Մարաշի բանտը, այն նշանաւոր Յարուութիւն Չաբըրեանն էր, որ 90-ական թւերի ս'լզբում, ողէյթունցի իշխան» անունով լոյս էր ընկել կովկասեան մեր շրջաններում: Ապատարիներ յետոյ, նա հաստատեց Բուլգարիայի Առոնա քաղաքում, ուր պարապում էր օրագրութեամբ: Մեռաւ 1899-ին Բուքրէշի մէջ:

* * *

Ըմբոստացումի հոյները սաստկանում են հետզհետէ, քարոզչական ձայներին միշտ աւելի և աւելի հզօր արձագանքներով պատասխանում են կեանքի մէջ գործնական բայլեր ու ժեստեր... 1882-ին բացւում է կարիւրում առաջին մեծ դաւադրական ընկերութիւնը և զէնքի առաջին պահեստը: 1885-ին Փորթուգալեան հիմնում է Մարսէլի մէջ իր «Արմենիա» և բիչ յետոյ,

ստեղծւում է «Հայոց Հայրենասիրական Ընկերութիւնը», քիչ ևս յետոյ, հիմնում է «Հնչակ» ու Հնչակեան Կուսակցութիւնը: 1890-ին պայթում է նոյն կարնոյ մէջ հայ անդրանիկ ու արիւնոտ ցոյցը օսմանեան բռնակալութեան դէմ: Նրան հետևում է Գումուգարուի ցոյցը Կ. Պօլսում: և նոյն 1890 թւականին հիմնում է Հ. Յ. Գաշնակցութիւնը, կառարւում է Կուկունեանի ծանօթ արշաւանքը...

Այդ մի շարք իրողութիւններով սահման է դրւում հայկական շարժման «նախապատմութեանը» և սկսւում է նրա «Պատմութիւնը»:

Բայց նախ քան դիմելը այդ Պատմութեան՝ մենք պարտաւոր ենք ուրուագծել հայ ազգային գիտակցութեան, հայ ազատագրական մտքի ընթացքն ու խարխափումները 11-ուսահայոց մէջ, սկսած Արոյկեանի օրերից մինչև Նալբանդեան—Բաֆֆի—Պատկանեան—Արծրունի: Որովհետև, մեր պատմութիւնը չի ընդունում զատ-զատ շարժումներ — թիւրքահայ, կովկասահայ, պարսկահայ — այլ մէկ ընդհանուր, ամբողջական Շարժում, մէկ ընդհանուր ազգային-ազատագրական Գրամա, որի արարւածները թէև կատարւում են տարբեր դաշտերում, բայց ներշնչող Գաղափարը մէկ է, ազբիւրները նոյնն են, նպատակը նոյնը, իսկ դերակատարների լէգէօնը կազմւած է ամենուրեք հայութեան բոլոր հատւածներին պատկանող գաղափարական զաւակներից:

Թիւրքահայ շարժման էութիւնն ու ընթացքը անկարելի է հասկանալ, առանց ցուցադրելու ընդարձակ

մասնակցութիւնը ռուսահայերի՝ որոնք բերել են այդ շարժման մէջ ձեւակերպող ու ղեկավարող միաք, ապա և զինւորական ու նիւթական անբաւ ուժերը: Նմանապէս, կովկասահայ և պարսկահայ շարժումները, ուղղած մերթ բռնակալութեան, մերթ դրացի, յՎանդէական՝ խուժանների դէմ, անկարելի է պատմել ու լուսաբանել, առանց ցուցադրելու թիւրքահայ ազգակիցների խմբական մասնակցութիւնը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

|

ՎԱԹՍՈՒՆԱԿԱՆ ԹԻԱԿԱՆՆԵՐ

Գարագալս. — Ազգային Սահմանադրութեան բացումն. — Մկրտիչ Աղաթօն և Արվիլէն Էփէնթի. — Հայ Առաջադէմ մտաւորականութեան *credo*-ն. — Ռուսահայեր և քիւրճահայեր — Էօրիս-Մէլիօլ Կ. Պօլսում. — Կովկասեան քղրակցութիւններ. — Պօլսանայ մամուլը և Հայաստանը. — Այսեղ հանդէսներ ու խրախումբ, այնքան որ արցունք ու նամաստիութիւն. — Հայ վեժի արծազանճները պօլսական մամուլի մէջ. — Գսմնեցոցի ճիւղներ և կառավարական անհոգութիւն. — Չէյքունի ապստամբութիւնը (1862 թ.). — Պատմութիւն. — Չէյքունցոյ նկարագիրը ըստ Լանգուսի. — Դուրս կուզէր Բարուհանց անել հայ արձիւնների բոյնը. — Ազիլ վաշայի աւօրայի նամակը. — Չէյքունի անգլերէր պօլսանայ մամուլի մէջ. — Ապստամբութեան անգրագրւածները ազգային կացութեան վրայ. — Հայ ժողովրդական ցոյց՝ Կ. Պօլսում. — Սահմանադրութիւն. — Երսրգական և սօւրային կողմերը. — Զարկ կրթական առաջադիմութեան. — Իբլան Տաւեան և Հախստաւզէն. — Սահմանադրութիւնը և հայկական գաւառը. — Ողորմելի պալլիստիվ. — Եմացական և ռազմական մտայնք. — Եղերական նախադրութիւնը Երկուսի միջև. — Օսմանեան մակեալէիզմ. — Սահմանադրութիւնը, իբրև դիվերսիօն. — Աղէտս որ պատմեցներ. — Մի անգամ ազգարարութիւն

3 — 45



Հ.Յ.Գ. ԲԻԻՐՈՅԻ
ԳՐԱԳԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

II

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԳՐԻ ԾԱԳՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԷՋ

Խրիմեանի չուն Մոյ դաւսից դէպի Պոլիս. — Ժողովրդական «կեցցէներ» եւ յոյսեր. — Խրիմեան-պատրիարքը եւ գաւառական հարստահարութիւնների խնդիրը. — «Ժողովրդական հանրագրութիւն» — Երկիւղ եւ Բազմապիսի Ժողովի մէջ. — Էժէնսիների եւ ջոջերի ինքիզը. — Հայաստանցու զանգասները Ազգային Խորհրդարանում. — Կորովի հատեր. — 1870-ի Տեղեկագրքը. — Չարիներ եւ դարմաններ. — Տուրքերը Թիւրքիոյ մէջ. — 1871-ի հոկտեմբերեան պատճառն Երասր. — Ըմբոս յայտարարութիւններ. — Ս. Փափազեան եւ Գր. Օսեան. — Ս. Փափազեան եւ Մարկոս Աղաբէգեան. — Գաղափարական փոքրամասնութիւն եւ երկչոտ մեծամասնութիւն. — Հայկական հարցը զարեւում է ազգայական չկամութեան. — Անվերջ ձգձգումներ. — Խրիմեանի յուսանաս ժեսերը. — Ըմբոս վեղարաւորներ. — Քաղաքական Ժողովը ընդդէմ ժողովրդական պատրիարքի. — Խրիմեանի փորձերը Սահմանադրութիւնը վերանկենլու. — Ֆիասկո եւ հրաժարական. — «Երբայս բարեա՛ւ, Արծուի» . . .

ԵՋ

46 — 72

III

Ն Ե Ր Ք Ի Ն Ո Ս Ո Խ Ը

Հ Ա Յ Կ Ե Ղ Ե Զ Ի Զ Տ Ա Ր Ր Ե Ր Ը

Աղա, սարաճ, վաճխառու. — Գիւղական ջանուէրներ եւ զանազան պատճոհներ. — Լրօես, մասնիչ, դաւա

ԵՋ

նան. — Հայ ունեւոր դասակարգերը օսմանեան ռէժիմի սակ. — Կղեր եւ վանառականութիւն. — Մօրից Վազների վկայութիւնը. — Հայ բուրժուազիան ազատագրական պայքարի հանդէպ. — Պատմական դատանանութիւն. — Բրիտանացի դասասանը. — Հայկական շարժումը չ'եղաւ ազգային, այլ ժողովրդային. — Անտիքեզի աղէտաւոր եւ նպաստաւոր կողմերը

73 — 94

IV

ՔՐԻՍՏԱՆԻ ՊԱՏՈՒՀԱՍԸ

Պետութիւն՝ մէջ պետութեան. — Երկու խարազան. — Քրդական դրացիութեան աղէտաւոր հանգամանքը. — Պատճառներ՝ ճնշեալական, բաղաժանեան եւ կրօնական. — Երկու սարքեր կենցաղածէ. — Նաստիկալի եւ նոմալի նախապատեան բաղաժանեան. — Պարագլուխի դրոշմը ցեղային բարոյականի վրայ — Քիւրդութեան ընդհանուր պատկերը. — Յիւր-զան համայններ՝ առանց ունէ ազգային գիտակցութեան. — Հովուական դարաւերջանի առաջինութիւններ. — Քսենոփոնի եւ Աստուրի ժամանակներում. — Հայ ժողովրդի կարծիքը երգի արժուութեան մասին. — Բաժժիի վկայութիւնները. — Քիւրդ երկրագործ դասակարգը. — Աւերակներ. — «Մարդ-զազանի ներպայն ճեսակը». — Ինքնիմի պատասխանատւութիւնները. — Քիւրդական բաղաժանեանութիւնը երգերի հանդէպ. — Գերբարեկարգութիւն. — Բարեկարգութիւնը եւ նեւտանքը. — Նոր հովիւ. — Քիւրդ որդւոյ զայնակ հայ ազատագրական շարժման դէմ. — Հայ երգական խարազանութիւններ. — Խաճիւրդութիւն

95 — 122

V

ՎԵՀՍՃՈՂՈՎԻ ՆԱԽՈՐԵԱԿԻՆ

Հայկական ննդիրը Վարժապետանի օրով. — Թիւրքաճապարկներ. — Պասախանասուներ. — „Թիւրքաճապարկներ“ եւ ռուսաստեաց նոսանքի սանկանայ հասարակութեան մէջ. նրա պատճառները. — Հայ երեսփոխանների նառերը օստանեան առաջին պարլամենտում. — Թուրքաճապարկները գաւառական ժողովրդի մէջ. — Հիմնական հիւսիսներ. — Ազգային բաղաձայնութեան երեք օրհաններ. — Սան-Սեփանո եւ յուսախարութիւն. — Գէլայի Բերլին. — Հայկական ազիտացիա Լոնդոնում. — Մի անազանը՝ Վեհաժողովի նախորեակին. — Այն ժամանակ եւ այսօր

Էջ
123—144

VI

Վ Ի Ժ Ո Ւ Մ Ը

«Պասախանասուներ» խնդիր. — Շփոթը հայ ազգային բաղաձայնութեան մէջ. — Վերջինի հիմնական արտաք. — «Երկաթ» արհամարհող ազգը արհամարհուեց աշխարհից. — Իգնասիելի խօսք. — Հայութիւնը «մեռնող սարը» Հայաստանի մէջ. — Եւրոպայի յօդուածը, այնուամենայնիւ, վաստակ էր. — Նրա առաջին սպառնալիքները. — Արձրոնի, Ներեւեց, Բաժմի. — Ներսէսի ինքնազոհութիւնը. — Կարգաբաշխի անկի ծանր Բերլինից յետոյ. — Հայկական դիմումները եւ սպառնալիքները պատասխանը. — Անգլիական *rotte-face*-ը. — Համբերութիւն.

145—164

VII

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆԴՐԱԳԱՐՁՈՒՄՆԵՐԸ

ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁ

«Ազատութիւնը» — Հայ դատարանները գաւառական բանակի գլուխ. — Լորիա Մէլիֆոլի սակսիկը. — Յնճուքիւն եւ յուսախարութիւն. — Ինչպէս 1828-ին. — Զէյթունի լիցենզիայի մասին. — «Թարգման» բարձրագոյն դպրոցը. — Տնտեսական վիճակը պատերազմից յետոյ. — Բնական եւ արհեստական սով. — Եւրոպայի դիմումը. — Անգլիական փորձ բարենորոգման. — Արեւելի եւ Բալկանի փոփոխութիւն. — Վիճում. — 1880-ի հասարակական յիշատակագիրը. — Գարնայի վիճում

Էջ
165—181

VIII

ԱՐԵՒԵՂԵԱՆ ԽՆԴՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ԱՆԳՂՈ-ՌՈՒՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Պետրոս Մեծի կտակը. — Թուրքական արշաւանք եւ բրիտանական անազանը. — Օսմանեան արքայութեան զօրքը XIX դարու մէջ. — Բաժանման ծրագիրներ. — Արեւմտեան կոնստանտնուպոլիսի արեւելեան Դիակի նանդուկ. — Կարլ Մարտի դեկլարացիոն. — Անգլիա եւ Թուրքաստան. — Կարլ Բարաբարեան երկու սարքեր մեքոպներ. — Գէլայի ազատ ժող. — Նիկիտայ Է եւ «Հիւանդ մարդը». — Դրիման պատերազմ եւ պարիզեան Վեհաժողով. — Թուրքաստանի նախնային եւ յարձակողական վերազարթ. — Պատերազմ, Սան Սեփանո եւ Բերլին. — Ալեքսանդր III եւ առժամային զինապարհ. — Գերմանիայի բաւարարութիւնը.

182—223

IX

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԹԻԻՐԵԻՍ

ԵԻ

ՀԱՄԻՍԱՎՄՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

ԷԶ

„Նոր հոսանքի“ էութիւնը. — Ազատքեան և հաւասարութեան նշանաբանը՝ սոսկ դիմակ. — Ասկոթիւն դէպի Եւրոպա. — Օգիտւս Կոնսի անձնորհիւ աշակերտներ. — Պանիպիլիպի՝ ժեռն քիւրեական սեղծագործութիւն. — Ղուբանը, իբրև „սղբիւր ամեն գիտութեան“. — Միքհաս փառա և Օսեան էփէնի. — Թիւրք հայրենասէրների մանկեկոսք. — Պայտական դաւադրութիւն և Արդիւ Ազիզի սպանում. — Մարաղը զանի վրայ. — Համիլը՝ վարագոյրի ետև 224—237

X

Ա Բ Գ Ի Ի Լ - Հ Ա Մ Ի Գ


Չարագործ հանձարք պատճառքեան մէջ. — Բնաւորութեան զծեր. — Բենամոյ. — Կասկած և երկիւղ. — Քննու վրիժառութիւն. — Ապրել՝ ինչ զնով էլ լինի. — Հայրամանկ և սերրոր. — Հայրամոզական Մանիա. — Բռնակողի դասական ճիպը. — Բացարձակ կենտրոնացում և անձնական ռէժիմ. — Անտվոր աշխատասիրութիւն. — Արդիւ-Համիլի հաւասոյ հանգանակը. — Համիլայտութիւն և համարիւրութիւն. — Բռնաւորի յուստերից. — Կախարդական շրջագիծը. — Խելացի՝ էր Արդիւ-Համիլ. — Ախտաւոր ինտելեկտիւնութիւն. — Կարմիր սուլթանը Երեսասարդ Թիւրքիայի հանդէպ. — Միքհայ փառայի ողբերգական վախճանը 238—255

XI

ԸՄԲՈՍՏՈՅՈՒՄԻ ՀՈՎԵՐ

ԷԶ

Բացուող բերանները. — Ասեփան Փափագեան Ազգային ժողովի մէջ. — Արսաւրութեան անուղղակի նրաւեր. — Գործիչների փաղանգը 70-ական քաղաքներում. — Նուպար-Շաննագարեան սաները և „երկրագուն“ — Փորթուգալեան և „Ասիա“ — Կրթական ընկերութիւններ. — „Իւլի Հայաստան“ կարգախօսը. — Գաւառական պայքարը հայ ազատամիտ երիտասարդութեան դասի առջև. — „Արարատեան“ ընկերութիւնը. — Փորթուգալեան Վանում և Թիֆլիսում. — Բնասանալոց աջակցութիւնը. — Վանի Վարժապետները և նրա կարգաւեճը յոյութեան արդիւնք. — Իրականութիւն և մտնուլ. — ՄԵՐԵՆԵ և իր վեպերը՝ — „Փունջը“ ժամագրաձայն ազատաւոր մտաւորականութեան. — Խուովութիւններ Ալեքսանդրի մէջ. — Յարութիւն Չամբրեան 256—280



Մ Ի Բ Ա Յ Է Լ Վ Ա Ր Ա Ն Գ Ե Ա Ն Ի

Ա Շ Խ Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

-
1. Վերածնունդ հայրենիքը և Մեր Դերը (պատկերազարդ), 3 ֆրանկ:
 2. Հոսանքներ, 3 ֆրանկ:
 3. Համաժողովրդական բանակ, 30 սամտիմ:
 4. Ազգուստ Բէքէլ (մահւան անթիւ), 30 սամտիմ:
 5. Հայկական Շարժման Նախապատմութիւն (պատկերազարդ), հատոր I, 3 ֆրանկ:
 6. Հայկական Շարժման Նախապատմութիւն, (պատկերազարդ), հատոր II, 3 ֆրանկ:
 7. Սօցիալիզմը և Սօցիալական Շարժումը XIX Դարում, Վերներ Զօմբարտի (թարգմ. գերմաներէնից), 1 ֆրանկ:
 8. Կրօն և Գիտութիւն, 1 ֆրանկ:
-